



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





11762  
11763

331.96  
—  
2-19







ՀԵՂԻՆԷ

ԿԱՄ

Ի ԱՂՏՆԻՔ ՄԸ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

*Stypkauf` Zusauf` Zusauf`*

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Մ. Յ. ՉՕԼԱԳԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՋԵԱՆ

— 1869 —





2777

...плета...  
... к новым победам в ст...  
(Передовая «Правды» за 16 декабря



1901

39



Ի ՁԵՌՆ

ԼՍԵՄԱՇՈՒՔ ՅԱԿՈԲ ԷՓԷՆՏԻՒ ԿԻՕԶԻՆԱՆ

ՅՈՒ ՆՈՐԱՓԹԻԹ ՇԱՌԱԻԳՆ ԻԻՐ

ԱՆՏՈՆ ՎԱՇԱՆ ՂԱՅԱԶԱՏ

ՈՒՂԵՐԶ

Չիմ երկոց քրանաժատանի  
 Զգու զնաքեայ նախախայրիս  
 Նուիրել թէ չեմ ատակ  
 վեհազին Բարերարիս ,  
 Ներկայի ինձ Պայաղատ  
 Ողբեկիղ յանուն վրսեմ  
 Զարդարել զԳրոյս ճակատ ,  
 Չեւ յուսմունս նա առեալ զճեմ ,  
 Թէ յապոյս կանխապատրաստ  
 Ընդ այս վէպ հաճոյապի ,  
 Զհեղինակս յիշել նուատտ ,  
 Թող այս վարձ ինձ բաւ լիցի :



1850

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

1850

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

1850

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

1850

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

1850

2003



# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Եւրոպացի վիպասանութեանց թարգմա-  
նութիւնները տեսնելով՝ փափաք մ'ունեցայ,  
մեր ազգին մէջ ալ վիպասանական երկասի-  
րութեան մ'օրինակ ըլլալ: Բայց մեծ արգելք  
մը զիս շատ ժամանակ վարձանման մէջ կը ձը-  
գէր, այն է՝ գրչիս տկարութիւնը: Այսու ա-  
մենայնիւ սրտիս ըզձին գէմ չկրնալով կենալ,  
ՀԵՂԻՆԷ ԿԱՄ ԳԱՂՏՆԻՔ ՄԸ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ անուն  
եւամեայ աշխատասիրութիւնս 'ի լոյս ընծայե-  
ցի, որուն վրիպակացը համար կանխաւ ըն-  
թերցողաց ներողամտութիւնը կը խնդրեմ. և  
յուսամ որ աւելի հմուտ գրիչներ ազգին բա-  
րոյականին յարմար պատմութիւններ յօրինեն  
որոց համար ոչ նիւթ պակաս է և ոչ խրա-  
խոյս: Խօսքերնուս ճշմարտութեանը մեր գրա-  
նելիք ընդունելութիւնը պիտի վկայէ:

ՅԱՌՐ ՀԱՃԵԱՆ



3 0 0 0 0 0 0 0 0 0 0



The handwriting is extremely faint and illegible, appearing as ghostly impressions of text. The lines of text are roughly horizontal and span most of the page width.



# Հ Ե Ղ Ի Ն Է

## ՊԵՅԼԷՐ ՊԵՅԻ ԱՆՈՒՆ ՇՈԳԵՆԱԻԸ

Հ Ա.ՋԱՐ ութ հարիւր յիսուն և ութի դարունը Պատմորոսի ամիանց վրայ իւր շքնաղագեղ գեղեցկութիւնները ամուսնով նոր կեանք մը տուած էր անոր :

Կանաչաղգեստ լեռներն , հովասուն ձորերն ու հովիտները զուարթ կանաչութեամբ դարդարուած՝ ծաղկաւետ բուրաստաններուն և դալարաղեղ մարգագեղեցիներուն հետ կարծես թէ ձեռք ձեռքի տուած ակնախափող տեսարան մը կ'ընծայէին :

Մայիս ամսոյ վեցն էր , երբ ճաճանչաղեղ արփուոյն վերջին ճառագայթները մէկ կողմանէ լերանց արաւուանները և ծառոց կատարները օսկեգոյն կը ներկէին , և միւս կոմաղնէ շէնքերուն պատահանները բոցավառ կը վայլեցունէին : Ամսոյն զովարար զեփիւռն ոստախիտ ծառոց սաղարթներուն մէջէն մեղմիկ կը սօսափէր , թռչունք՝ բնական երածիշաններն , իրենց քաղցրանուագ դայլայիկներովը գողցես արեւուն հրաժեշտը կը տօնախմբէին : Որպիտի՛ սխրալի և ակնապարար տեսարան . . . խաղաղիկ և հանդարտ ծովն ու ընդ լանտէ շէր վըրդովէր բայց եթէ շողենաւ ու ց անխներուն շառաջուկ բաղխանէն , որոնք այս կապոյտ դաշտին վրայ անհետ ակօսներ կը պատուէին , ուր թողունք այն բաղմաթիւ նաւակներու և մակոյկներու թիակաց հեղիկ ընդհարումէն յօրինուած մանր կահակները : Ծովեզերքը գիլուած կանանց և արանց խուռն բազ-



մու թիւնը զարմանօք կը դիտէր այս վսեմ և միանգամայն զուար-  
ճալի տեսարանը :

Օրուան տասներորդ ժամն էր, երբ Շիրքէթի-Խայրիյէի Պէյլէր-պէյի անուն շողենաւը կամուրջէն բաժնուելով՝ հան-  
դիպելիք առաջին նաւամատոյցը՝ յՕրթադիւղ հասաւ. նա-  
ւուն մէջի խճողեալ բաղնու-թիւնն ալ քիչ մը թեթեւցաւ,  
Գարձեալ աղմուկն ու շփոթը չէր պակսէր. հոս բարձրաձայն կը  
խնդային, անդին եռանդով կը վիճաբանէին, ոմանք հանդարտ  
նստած բնու-թիւնը կը զննէին, մէկը լրագիր կը կարդար, ու-  
րիշ մը ականջ կը դնէր :

Այս բաղնու-թեան մէջ 'ի խելս նաւուն շնորհալի պատանի  
մը որ հաղիւ քսան տարեկան կար, մեկուսի նստած էր. որուն  
ժառի աչքերը, դեղնագոյն մազերը և լայն ու պաղպաղուն ճա-  
կատը դէմքին հրապուրիչ դեղեցկու-թեան կատարեալ ներ-  
դաշնակու-թիւն կ'ընծայէին :

Այս պատանուոյն աղնուական ձեւերէն ու շարժմունքէն կը  
կարծուէր թէ ինքը կամ աղնուատոհմ ընտանիքէ մը սերած  
ըլլալու է կամ աղնուական ընկերու-թեանց մէջ մեծցած :

Չեռքը լրագիր մը բռնած առանց կարդալու աչքը վրան  
կը շրջըրջէր թեթեւ գունատու-թիւն մը իւր դէմքը պատած  
և խորհուրդ մը իւր միտքը դրաւած կ'երեւէր :

— Բարեւ, ըսաւ իրեն հասակակից պատանի մը. բարեւ, Պ.  
Միհրդատ, ինչո՞ւ այդպէս տխուր կերեւիս. բաւական ժամանակ  
է որ դքեղ տեսած չեմ: Այս ըսելով ձեռքը անոր երկնցուց :

— Բարի տեսու-թիւն, Պարոն Գրիգոր, ըսաւ Միհրդատ մը-  
տերմու-թեամբ երիտասարդին ձեռքը բռնելով. շատ ուրախ  
եմ դքեղ տեսնելուս: Այս անիծեալ թերթը կը նեղէր զիս.  
վա՛նտ դրիչ, որ մէկ տոհմէ և արիւնէ սերեալ՝ մէկ եղբարց մէջ  
պառակատու-թիւն ձգել կը ճգնի :

— Անշուշտ թելադրիչ զօրու-թեամբ մը, ըսաւ Գրիգոր, և  
յարեց նաեւ թէ՛ ըստ իս աւելի լաւ կը համարիմ Պղնձէ ֆա-  
ղաք կարդալ քան թէ այդպիսի լրագիր մը... բայց բարե-  
կամ, կուզե՞ս որ դքեղ զբօսցունեմ:



— Ի՞նչպէս բարեկամ, հարցուց Միհրդատ :

— Օղիով, սլառասխանեց, վասնզի այս ս.քանչելի ըմպելւոյն նշանաւոր յատկութիւններէն մին է, մարդս զուարճացնել, տրտմութիւնը փարատել և շուրթերուն վրայէն անհետացած ծիծաղը նորէն յառաջ ածել :

— Ներեցէք, սիրելիս, ըսաւ Միհրդատ, օղի դ սրծածելու սովորութիւն չունիմ, վասն զի այնպէս կը հաւատամ որ թէ՛ նիս թապէս և թէ՛ բարոյապէս մարդուս փաստակար է, և . . . :

Գրիգոր Միհրդատի խօսքը ընդմիջելով : « Ոչ. ընդհակառակը Պարոն ընդհակառակը, ասիկայ այնպիսի ազդու, այնպիսի օգտակար ըմպելիք մ'է որ ըստ բաւականին զայն գովելու համար Գեմոսթենեսի և Կիկերոնի պերճախօսութիւնն ունենալ հարկաւոր է. վասն զի այս կենսաբուղիս հեղուկին ս.քանչելիքները շտաւ են, վերջապէս . . . :

Հեղնական ժպիտով Միհրդատ անոր խօսքն ընդմիջելով, « Սիրելիս, կը տեսնեմ որ գինեմոլութեան ջերմ պաշտպան մը էք. այս մասին ունեցած ճարտասանութիւնդ զիս կը հիացընէ. օ՛ն ուրեմն խմենք. աւելի լաւ է որ անձամբ անձին փորձեմ :

Գրիգոր անմիջապէս հոն գտնուող սպասաւորին դառնալով, « Մեզի քիչ մը օղի բեր աղէկ տեսակէն ըլլայ, դոչեց :

Նոյն վայրկեանին հրամանները կատարուելէն ետեւ երկու բարեկամները սկսան հետզհետէ դաւաթները պարպել :

— Օ՛ն, ըսէ տեսնեմ հարցուց Միհրդատ, օրիորդ Սննիկին հետ դործդ ո՛ւր հասաւ :

— Ամենագահացուցիչ է, ըսաւ գլանիկը վառելով, բայց դժբաղդարար, թէ որ հայրս լսէ, պիտի դժկամակի :

— Ինչո՞ւ. կարծեմ գեղեցիկ աղջիկ մ'է ձեր նկարագրութեան նայելով :

— Ինչո՞ւ ըսիր, ինչո՞ւ, ա՛հ բարեկամ, վասն զի սրտի հարբասութիւնը բաւական չեն համարիր այս անիծեալ դարուն մարդիկը . . . բայց ըսէ ինձ, որ դիւղը պիտի ելնես :

— Մարը-եար, ըսաւ Միհրդատ, ու դաւաթ մ'ալ պարպեց քիթը բերանը ծռմուկելով :



— Ռւրեմն կազաչեմ, ըսաւ Գրիգոր, այս դիշեր մեղի կեցի որ վաղը 'ի Հիւնքեար-սույի հանգերձ ընտանեօք դբօսալի ճաշ մ'ընենք Պօռտոյի գինւով :

— Սիրելիս ներսղամիս եղէք, ըսաւ Միհրդատ, վասն զի խօստացած եմ որ այս դիշեր անպատճառ քրոջս երթամ, որն որ ամիսէ մը 'ի վեր Սարը-եար է օգտիտիս թեան համար, ուստի այս պատճառաւ առաջին առաջակութեանդ չեմ կրընար դիշանիլ, իսկ վաղուան Պօռտոյի գինւով ճաշին յօժար սրտով պատրաստ եմ ձեզ ընկերանալու, որով խիստ զուարճալի օր մը պիտի անցունենք :

— Է՛հ . . . ըսաւ Գրիգոր, ուրեմն այդ մասին հակառակելու պատճառ մը չունինք. քանզի քոյրդ մեր աունէն մէկ տուն մը վեր կը բնակի և երկու ընտանեաց մէջ սերտ յարաբերութիւն մը սկսած է, որով կրնաք ընտանեօք մեղի դալ այս դիշեր, և դբօսնուլ. ( լորձունք մը արձակելով ) :

— Ռւրեմն թէ որ քոյրս պատճառ մը մէջ չ'ըբերէ, ձեր հրաւերը ընդունուած համարեցէք :

— Ռւստի, վաղը Պօլիս մ'իջներ որ Հիւնքեար-սույի երթանք և . . . :

Միհրդատ մէկէն Գրիգորին խօսքը ընդհատելով, « Բարեկամ, թող այդ խնդիրը, որուն վրայ գիւղ հասնելնէս վերջնալ կրնանք խօսիլ. առ այժմ տես սա դիմացի հրաշագեղ օրիորդը, ի՛նչ գողարիկ աչքեր ունի. ո՛րչափ սիրուն է իւր փոքրիկ բերանը. վարդագոյն այտերը նայողին գէմքը կը ներկեն, տես, տես :

— Բարեկամ, այնչափ խմեցինք որ աչքերուս տեսութիւնը խանգարեցաւ. ո՞ւր է, ո՞ր կողմն է. դեռ չ'տեսայ :

— Ահաւասիկ, դիմացի երկրորդ նստարանին վրայ, վերի կողմէն չորրորդը . . . տեսա՞ր :

— Այո՛, տեսայ արդարեւ խիստ դեղեցիկ է :

— Բայց բարեկամ, այդ կերպ մի՛ նայիր ըստ որում ինքնալ ղմեղ կը դիտէ :

— Գրիգոր հեզնական ժպիտով մը. ա՛հ, անհոգ եղիր, սի-



ընկա՛, ըսաւ, ես այն օրիորդը կը ճանչնամ. կուզե՛ս որ դքեղ իրեն ներկայացնեմ :

— Ձիւ շնորհապարտ կընես, պատասխանեց Միհրդատ :

— Ուրեմն եկու հետս :

— Ո՛ւր . . . բարեկամ, գոչեց :

— Օրիորդին քով, ըսաւ Գրիգոր . . . :

— Բայց կեցիր, բարեկամ, օրիորդն 'ի հարկէ մինակ չէ, հեար եղողը կարելի է ճանչէ՛ դքեղ :

— Այդ հոգը ինձ ձգէ, ըսաւ Գրիգոր փտահու թեամբ . . . :  
Երկու բարեկամ ձեռք ձեռքի տուած՝ յիշեալ օրիորդին կողմը գացին, որն որ պատանեաց իւր կողմը դալը տեսնելով, ժպտով մը քովի աթուակը առաջ քշեց :

— Բարեւ, օրիորդ Ատէլ, ըսաւ Գրիգոր ընտանեբար յառաջ գալով. ձեզ կը ներկայացնեմ այս պատանին որ աղնիւ բարեկամներէս մէկն է, և կը կոչուի Պարոն Միհրդատ Արունա որն որ ձեր բարեկամութիւնը ստանալու ջերմ փափաք մ'ունի :

Օրիորդը գլուխը ծռելով բարեւեց զՄիհրդատ :

Միհրդատ ալ փոխադարձ բարեւելէ վերջը աթուակին վըրայ նստաւ :

— Պարոնը ո՞ր դիւղը պիտի ելնէ, հարցուց Ատէլ :

— Սարը-եար պիտի երթամ, պատասխանեց Միհրդատ :

— Եւ վաղն ալ 'ի միասին Հիւնքեար-սուի, այնպէս չէ՞, Պ.

Միհրդատ, հարցուց Գրիգոր՝ իրենց որոշմանը հաստատութիւն մը տալու համար :

Ատէլ այս միջոցին Միհրդատը կը դիտէր, որուն գէմքը իւր սրտին մէջ հեշտ զգացմունք մը կը զարթուցանէր : Յանկարծ աչքերն իրարու պատահեցան և երկու հայեցուածքներու մէջ նկարուած անդննելի զօրութիւնը երկու սիրտերը իրարու հետ անխղելի կերպով միացուց. թեթեւ շառաղնութիւն մը երկուքին գէմքը պատեց և աչքերն իսկոյն խոնարհեցան : Բայց այս վայրկենական երկու հայեցուածքով ամեն բան լմացեր էր . . . ալ անկէ վերջը իրարու սիրելի էին :

Այս միջոցին շողենաւը Կամիրիէնի նաւամատոյցը կեցաւ և



հոն ելնող ճամբորդները թողելէ վերջը նորերը առնելով իւր ճամբան շարունակեց : Նոր եկողներուն մէջ յիսուն , յիսուն և հինգ տարեկան բարձրահասակ մէկը կար , որուն ինչ բնութեան տէր ըլլալը անկարելի էր գիտնալ . բայց իւր վեհ կերպարանքէն ազնուական մէկն ըլլալը կը յայտնուէր : Այս անձը հետաքրքիր աչօք չորս կողմը դիտելէ վերջը ծանրութեամբ Միհրդատին մօտեցաւ , և զայն քանի մը վայրկեան անքթիթ նկատելով , «չը խնդրեմ , զրուցեցէք , Պ. Միհրդատ Սրունտ անուն պատանին դ.մ.ք է.ք » :

— Այո , պարոն , ըսաւ Միհրդատ զարմանօք :

Անձանօթը սուանց պատասխանելու թղթապանակէն նամակ մը հանելով Միհրդատին տուաւ :

Միհրդատ օրիորդէն և Գրիգորէն ներումն խնդրելով , փոքր ինչ հեռացաւ , և նամակը բանալով մեծաւ զարմացմամբ հետեւեալ տողերը կարդաց :

« Պ. Միհրդատ .

« Իւր մեծութիւնը ինչ որ ալ հրամայէ , իմ հրամաններէս » վեր սեպուին : Սօֆեան Պէյ պիտի կոչես զինքը , պէտք չէ որ մէկը և դու իսկ գիտնաս անոր ով ըլլալը . իմ կողմէս » բայց վարկ ընդունած է , որչափ որ ստակ ուզէ՝ պէտք է որ » տրուի . . . » :

ԻՇԽԱՆ

Միհրդատ նամակը կարդալէ վերջը խորին ակնածութեամբ թղթաբերին դառնալով , « Ի՞նչ հրաման ունիք Տէր իմ , պատրաստ եմ Ձեզ կամակատար ըլլալու » :

— Ա՛ր գիւղը պիտի ելնես , հարցուց :

— Սարը-եար , մեծապատիւ Տէր , պատասխանեց Միհրդատ :

— Կրնաս արդեօք ինձ հետ Պէյիւք-տէրէ ելնել , ժամու մը չափ և ետքը դարձեալ նաւակով մը տեղդ հասնիլ :

— Եթէ հարկ է , պատրաստ եմ :



Անժանօթը ձեռքը Միհրդատին ուսին վրայ դնելով « Այո , հարկ է , ըսաւ : Եւ ծանր քալուածքով հեռացաւ Միհրդատէն , խոր ապշութեան մէջ թողլով զնա . . . »

— Ո՞վ է սա՞ կ'ըսէր ինքնիրեն Միհրդատ . ո՞վ է սա՞ որ նորին վսեմութեան բարեկամն ըլլայ , ու ես զինքը չճանչնամ և ըստ թղթոյն չհամարձակիմ ալ ճանչնալու : Մէկ մ'ալ Գրիգորին ձայնը զինքը իւր ապշութենէն սթափեցուց :

— Բարեկամ , ըսաւ , զիս սուտ պիտի հանես օրիորդ Ատէլի առջեւ , վասն զի զքեզ դոված ատենս յաւելցուցի թէ զուարթ բնութեան տէր սիրուն պատանի մ' է :

Միհրդատ անոնց մօտենալով , « Շնորհակալ եմ , սիրելիս , ըսաւ , զիս իմ արժանաւորութենէս աւելի պատուած ըլլալուդ համար :

— Պարոն , ձեր ազնիւ հանդամանաց վրայ որչափ դովեասներ ալ ըլլուի , դարձեալ անբաւական են , ըսաւ Ատէլ :

— Ձեր սրտին բարութիւնը չափազանց արժանիք մը կրն՝ ծայէ ինձ , օրիորդ , պատասխանեց Միհրդատ դուխը ծռելով :

Օրիորդին այտերը խկոյն շառագնեցան և իւր դէմքին վրայ նկարուած սրտին յուզմունքէն չմատնուելու համար աչքերը խոնարհեցուց :

Գրիգոր օղիէն զուարթացած՝ բարձրաձայն « Պ. Միհրդատ , Պ. Միհրդատ , օրիորդը իրաւունք ունի , դոչեց . մարդ կրնայ ձեզ նման բարեկամ մ'ունենալուն ինքզինքը երջանիկ չհամարիլ :

— Կը խնդրեմ , բարեկամ , ուրիշ նիւթի վրայ խօսինք , ըսաւ Միհրդատ , և օրիորդ Ատէլի դառնալով , մեր Պ. Գրիգոր բարեկամը դովելու մէջ չափազանց շուայլ է , արդէն ձեզի ծանօթ է իւր ազնուութեամբը , քանզի կարծեմ 'ի վաղուց ստացած է ձեր բարեկամութիւնը . . . »

— Ի՞նչպէս . . . տատամսելով բայց . . . »

Ամիջապէս Գրիգոր Ատէլի խօսքը ընդմիջելով , « Այո՞ , ճիշտ երկու տարի է որ իբրեւ քոյր եղբայր կը սիրենք մէկըմէկ . այդպէս չէ՞ , օրիորդ , հարցուց :



Ատէլ քաղցր ժպտով մը հաստատեց Գրիգորի խօսքը :

— Մտայց հարցնելու, Պ. Միհրդատ, այն անժանօթ մարդը ի՞նչ կուզէր ձեզնէ, հարցուց Գրիգոր :

— Տակաւին ես ալ չեմ գիտեր, սիրելիս :

— Օ՛, դարմանալի բան. չե՞ս գիտեր, ո՞չ իբրեւ իշխանի մը պէս յարգանք կը վարուէիր անոր հետ :

— Ինձ եղած յանձնարարութեան հրամանն այնպէս էր :

— Եւ ո՞ւսկից է ձեզ այդ յանձնարարութիւնը :

— Ներեցէք սիրելիս, պատասխանեց Միհրդատ, կարծեմ ներողամիտ պիտի ըլլաք այս մասին հետաքրքրութիւնդ չկըրնալ յագեցնելու համար :

— Ուստի ներեցէք սիրելիս անտեղի խօսակցութեանս, ըստ Գրիգոր, բայց լաւ գիտցիր որ յանցանքը սա անիծեալ հեղուկինն է զոր մարդս գործածելով քաղաքավարութեան կանոնաց այնքան ուշադիր չկրնար ըլլալ :

Այս միջոցին շոգենաւը թարապիս հասաւ : Ամեն մարդ աճապարանաց մէջ էր, մէկը իր սիրելին ժամ յառաջ տեսնելու մտքով նաւուն կողը կեցեր էր վստահ ըլլալով, ծովեղերքը գտնուած շրջավայրին վրայ ճեմելուն, ուրիշ մը անձկանօք իւր նորասի ամուսնույն քով գտնուիլ կը վախաքէր՝ ժամ յառաջ զրուցելու համար անոր այն քաղցր խօսքերը զորս մտքին մէջ պատրաստեր էր :

— Ամեն մարդ կեննէ, հայրիկ, գոչեց կայտառ տղայ մը, վերջը թէ որ նաւուն մէջ մնամք, ո՞հ, մայրս այս գիշեր վաճառման մէջ կը մնայ :

Եւ յիրաւի բաղմութիւնը գիրար մկերով նաւէն այնպէս կը պարպուէր որ կարծես թէ ամենէն յառաջ գորս նետուողը մրցանակ մը պիտի վաստկէր :

— Անհող եղիր, որդեակ իմ, հաս չենք մնար, ըսաւ տղուն հայրը, Հեղահեղէ ճամբորդներուն ելնելէն ետքը նա ը իւր ճամբան շարունակեց :

Ատէլ այս միջոցին նաւէն ելլողները կը դիտէր, բայց միտքը Միհրդատով կը զբաղէր. թէպէտ սրաին յուզմանքը ծած-



կերու համար ամեն հնարք 'ի դ ործ դ բաւ , բայց և այնպէս  
դէմքը լաւ դիտողը կրնար գուշակել , որ Միհրդատն իրեն  
սրտին տիրած էր , Սյուս ամենայնիւ Միհրդատ ալ տարրեր  
վիճակի մէջ չէր . սիրտը սիրահարութեամբ յուզեալ , միտքը  
խնդումէ և երկիւղէ շփոթեալ բոլոր մարմնոյն վրայ զգալի  
ներդործութիւն մը ընելը կրնար յայտնուիլ , սիրոյ կայծը  
հրահրած հուր եղած էր սրտին մէջ անմարելի կերպով , և  
այս հուրը որ Միհրդատի սրտին մէջ սկսաւ վառիլ , նախանձ  
մ'ալ միանգամայն յարուցած էր Գրիգորի դէմ , որն որ օրիորդ  
դին հետ ունեցած ընտանի և սերտ մտերմութիւնն պատճառ  
եղած էր :

Վերջապէս Պէօյիւք-տէրէ հասաւ նաւը , ուր բռնագատ  
եալ էր ելնել Միհրդատ անձանօթին հետ . դժուար էր Սյուս  
տելի տեսութենէն զատուիլ , ասոր համար Միհրդատ հազար  
անէծք կը կարգար այն ազնուականին , որուն հրամանին հնա  
զանդերու ստիպեալ էր :

Եւ հազիւ նաւաստիք սանձած էին նաւը Միհրդատ յան  
կարծ ետին դարձաւ , և տեսներով որ անձանօթը իրեն կը  
սպասէ , գլխովը ահա կուգամի պէս նշան մը ընելէ վերջը ,  
ձեռքը Գրիգորին երկնցուց , և « Հիմակու հիմայ զձեզ կը թո  
ղում , բարեկամք , մնաք բարով , ըսաւ . անակնկալ պատճա  
ռով մը պէտք է որ Պէօյիւք-տէրէ ելնեմ :

Ստէլ զարմացմամբ ակամայ շարժում մը ըրաւ :

Գրիգոր նաեւ զարմանալով , « Ի՞նչպէս , մեզի հետ մինչեւ  
Սարը-եար գալու խօսք չ'տուիք . այդ անկարելի է . Պէօյիւք-  
տէրէի մէջ գիշերն ո՞ր պիտի անցընէք . թող այս , միթէ ձեր  
քոյրը ձեզի չըսպասեր :

— Անհոգ եղիք սիրելիս , պատասխանեց Միհրդատ , ընթ  
րիքը դարձեալ քրոջս հետ ընելու միտք ունիմ :

Գրիգոր գլուխը երերցնելով , « Հը՛ . . . կը հասկընամ , կը  
հասկընամ Պարոն , ձեր հին բարեկամու հիները մէկ մէկ այցե  
լութեամբ պատուել կուղէք , շատ աղէկ , շատ աղէկ , ձեզի  
ընկեր կըլլայի . . . բայց . . . Ստէլը ցուցնելով :



Ատէլ այնպիսի ակնարկ մը յարեց Միհրդատայ վրայ, որ կարծես թէ կը յանդիմանէր զնա :

Միհրդատ Գրիգորին այս անպատեհ կատակէն շառագնեցաւ, վասն զի արդէն այս բաժանումն իրեն խիստ ծանր կը թուէր և եթէ անձանօթը զինքը չ'ստիպէր, անկարելի էր Միհրդատին հրաժեշտ տալ իւր բարեկամներուն :

— Ուրեմն Պարոնը խօսքի բռնելով շարդիլենք. կերելի որ բարեկամները տեսնելու անհամբեր է, ըսաւ Ատէլ :

— Ներեցէք օրիորդ, իմ Պէօյիւք-տէրէ երթալուս պատճառը բարեկամահեաց տեսն թիւնը չէ, չայլ այնպիսի մէկու մը որ ինձ ալ անձանօթ է :

— Կարծեմ քիչ մը յառաջ ձեզի նամակ մը տուող սլարոնը եղած ըլլալու է, ըսաւ Գրիգոր :

— Ճիշտ այդպէս է, աղէկ դուշակեցիք, բարեկամ . . . :

— Պարոն Միհրդատ, Պարոն Միհրդատ, դոչեց անձանօթը :

— Կը կանչէ զիս, ուրեմն մնաք բարով, բարեկամք, ըսաւ, և Ատէլի դառնալով՝ ներեցէք օրիորդ, կը ջաւ իմ որ ձեր տեսնութենէն այսպէս շուտ զատուելու դժբաղդութիւնը կ'ունենամ. սակայն կը յուսամ որ ձեր այցելութեամբը այս զիշերը զմեզ պատուել պիտի հաճիք :

— Եթէ արդեւք մը չի պատահի մեր ընտանեաց կողմանէ, խօսք կրնամ տալ, պատասխանեց Ատէլ :

Անձանօթը Միհրդատի մօտենալով, « Ձեզ կ'սպասեմ, Պարոն, ըսաւ :

— Ահա եկայ, պատասխանեց, յետոյ Գրիգորին և օրիորդին վերջին ողջոյնը տալով՝ անձանօթին հետեւեցաւ ու շուրհնաւէն դուրս ելան :

Ատէլ՝ Միհրդատի աներեւութանալը տեսնելով եզրօրը հարցուց թէ՝ « Ի՞նչ պատճառաւ զիս իբր՝ օտար ոմն ներկայացուցիր բարեկամիդ :

— Խաղ մը ընելու համար, պատասխանեց Գրիգոր. այսու ամենայնիւ դու ալ յաջողակութեամբ կատարեցիր քու դերդ :



Անձանօթն ու Միհրդատ Սրճարան Գաղղիոյ ըսուած պանդակը մտան և շողենաւ իւր ընթացքը սկսաւ շարունակել :

Այս խօսակցութեան ատեն՝ շողենաւն արդէն Սարը-եար հասած էր . քոյր և եղբայր ձեռք ձեռքի տուած տուն հասան : Մարիամ, Ատէլի մայրը շուրջ քառասուն տարեկան յաղթամարմին կին մ'էր, որ աղքատութենէ բախտով մը հարստացած ըլլալով՝ այս ալ այսպիսիներուն ընդհանրապէս կանոն եղած պարծանքատութեան ախտէն ազատ եղած չէր :

Այս կիներ տան և ութը տարեկան հասակին Մաաթէոս Տէրպէնտ անուն վաճառականի մը հետ ամուսնացած էր :

Ասոնք երկու որդի ունեցած էին որոնց մեծին անունը Գրիգոր և պղտիկինը Ատէլ էր, և մէկ ալ որդեգիր ունէին Մակար անուամբ որ այս միջոցին 'ի Տրապիզոն կը դանուէր գործով : Ժամը գրեթէ երեկոյեան մէկն էր՝ երբ զանդակի հրտերով ընթերելու կիջնէին, Ատէլ պատուհանին առջին նստած էր :

— Ի՞նչ կեցեր ես, աղջիկս, զանդակին ձայնը չի լսեցիր, ըսաւ մայրը :

— Անօթու թիւն չեմ զգար, մայր իմ :

— Է՛հ, դուն գիտես, կարելի է ծովուն տեւքովը կը կըշտանաս ըսելով սանդուխէն վար իջաւ . իսկ Ատէլ առանձին սենեակը՝ ձեռն 'ի ծնօտ պատուհանին առջեւ նստած մնաց :

Ատէլի նստած սրահը՝ շքեղ զարդարուած էր . մէջ տեղի ձուածեւ սեղանին վրայ՝ երկու արծաթեայ աշտանակներ կար՝ որոնց վրայ երեքական մամ կը վառէր . աջ և ձախ կողմի շքեղ գզրոյներուն վրայ յեցած հայելիները, ճրագներուն լոյսը անդրադարձնելով, սենեակին գեղեցկութեանը նոր վայլ մը կաւելցնէին . Աջ կողմի հայելոյն առջեւ թափծու պղնձէ ժամացոյց մը դրուած էր, որուն ճօճանակին ձայնը՝ սրահին ըստ թիւնը կը վրդովէր : Չախ կողմի անկիւնը գաշնակ մը դրուած էր, որուն շուրջը ցիրուցան եղանակի տեարեր կը կենացին . Ժամը մէկ զարկաւ և ձայնը բառական ժամանակ հնչիւն մը թողուց սրահին մէջ . . . : Ատէլ պատուհանէն քաշուելով, ս՛հ, մրմնջեց, մինչեւ հիմ.յ և ոչ նստակ մը անցաւ :


1901

39





հիմայ ինքը ո՛վ գիտէ որ տարիածու ին հետ ժամանակ կանցը-  
 նէ : Եւ թաշկինակը հանելով սկսաւ լալ . . . քիչ մը վերջը մէ-  
 կէն տեղէն ելնելով , « Բայց ի՞նչ տեսայ ըսաւ , ես այս երիտա-  
 սարդին վրայ որ մի անգամ տեսնելով զինքը սիրեցի . ես որ  
 անտարբեր ընաւ որու թեամբս շատերը սոսկացուցի . . . սիրահար-  
 եայները կը ծաղրէի , և հիմայ ես ալ ծաղրելի՛ պիտի ըլլամ . . .  
 Ա՛հ , ո՛չ ո՛չ , թնաւ երբէք , գոչեց . . . և դաշնակին առջեւ նրա-  
 տելով սկսաւ անոյշ եղանակ մը զարնել :



ՆԱԻԱՎԱՐ ԿԱՐԱՊԵՏ

Այս միջոցին ծովը հանդարտ էր հայերոյ մը պէս , լուսի-  
 նը կիսաբողոր դիրքով մը կը փայլէր և իւր ճառագայթները՝  
 բրդածեւ եռանկիւնի մը նկարած էին ջուրին վրայ , տեսնողը  
 կըսէր թէ՛ ծովուն այն մասը կը վառի . մանրիկ ալեաց գլուխ-  
 ները բեկբեկելով թրթրացող փայլիւն մը բոլոր ծովը լուսե-  
 դէն դաշտ մը ձեւացուցած էր , կրնար ըսուիլ որ Արամազդ-  
 արշալոյսին սրտակերը կը ծրագրէ : Սոխակներու քաղցրանուագ-  
 երգերն ամենը բաղխող հեղիկ ծփանաց կարկաչին հետ խառ-  
 նուելով , գիշերային լուսթեան մէջ , քաղցր ներդաշնակու-  
 թիւն մը կը կազմէին : Ճիշտ այս միջոցին նաւակ մը կը յառա-  
 ջանար դէպ ՚ի Սարը-եար , որն որ իւր յամր ընթացքովը այս  
 առանձնութեան Ռիկիանին մէջ առանց հողմի նաւու կը  
 նմանէր , որ ոչ ետ կերթայ և ոչ յառաջ , այսու ամենայնիւ այս  
 նաւակը անդդալի կերպով կը յառաջանար . մէջը երիտասարդ-  
 մը նստած էր . Միհրդատն էր այս , գլուխը ձեռքին յեցած ,  
 խոհուն կերպարանօք , խառնաչիտթ մտածութիւններով միտքը  
 ՚ի զուր կը յողնեցնէր . վերջապէս ուզելով այս տարտամ վե-  
 ճակէն ազատիլ , նաւավարին դարձաւ և հարցուց . « Մնունդ  
 ի՞նչ է բարեկամ :



Նաւաւարը առանց Միհրդատին երեսը նայելու, « իմ ա-  
նունս կարապետ և Հօրս անունը վասիլ է, պատասխանեց :

— Վասիլ . . . կարծեմ այդ Յոյնի անուն է, ըսաւ :

— Անշուշտ, չես հասկնա՞ր. Յոյն մը մօրս հետ ամուսնա-  
նալով զիս աշխարհ բերեր ու ձգեր դայեր է, չեմ գիտեր որ  
սատանային քով :

— Ուրեմն, դու կը ճանչնաս զՎասիլ, հարցուց Միհրդատ :

— Այո՛, պատասխանեց նաւաւարը. մայրս ճանչցուց զայն  
ինձ : Ես նոյն ատեն ու թ տարեկան էի, արդէն կրնաք ենթադ-  
րել թէ այն հասակին մէջ աղայ մը դադարար չը կրնար ու-  
նենալ խարդախութեանց վրայ. վերջապէս երկու տարի ետ-  
քը մայրս հիւանդացաւ և իւր մահամերձ վիճակին մէջ զիս  
քովը կանչելով, կարապետ, ըսաւ, անօգնական կը թողում  
դքեզ այս աշխարհիս վրայ. բոլոր կենացդ մէջ աշխատէ՛ դրա-  
նել զՎասիլ. և պարտք կը դնեմ քեզ որդեակ որ իմ վրէժս  
լուծես : Եւ այս պատուերէն քօնի մը վայրկեան վերջը հա-  
ղին աւանդեց. վերջապէս զձեզ չձանձրացնեմ, բարեսիրտ  
պարօնի մը պաշտպանութեամբ որ դեռ ինձ անժանօթ է, ու թ  
տարի Ս. Փրկչի վարժարանն ուսման պարապեցոյ, վերջը ու-  
սումնարանէն ելնելով՝ դորժ մը դանել աշխատեցայ՝ բայց  
ի դուր. ուր որ երթայի բախար կը խոժոռ էր ինձ, ուստի մտա-  
ծեցի աշխարհի յորձանքին խառնուիլ, զոր ինչպէս կը տես-  
նես նաւաւարութեան արհեստին մէջ նեւեց զիս :

— Կարգում՞ թ ես, հարցուց Միհրդատ :

Երկար հառաչանքով մը, « Այո՛, պատասխանեց, ու ետին  
դարձաւ նայելու, ինչպէս սովորութիւն է նաւաւարաց, թէ  
նաւուն զլուխը ( թէ՛ֆնէ պուռնիէն ) շեղած չըլլայ, և տեսնելով  
որ անխօտոր կը յառաջանար նաւակը, Միհրդատին դարձաւ  
և շարունակեց. « Ա՛հ, Պարօն, տասը տարի է որ կիսնս մե-  
ռաւ, ինձ ժառանգ թողլով՝ աղջիկ դաւակ մը, Հեղինէ ան-  
ուամբ, բայց պէտք էր հրեշտակ կոչուէր :

— Ըսել է դեղեցիկ է, հարցուց Միհրդատ :

— Այո՛ ալ խօսք է, յարեց աշխուժիւ նաւաւարը, անշուշտ



գեղեցիկ, մանաւանդ սրտի կողմանէ. դրեթէ վաստակիս կէսը աղքատներու կը բաժնէ, թէպէտեւ իմ աղքատութիւնս ալ դիտէ. տասն երեք տարեկան հաղիւ կայ և հասակը իմ ուսերուս կը հասնի:

Միհրդատ նաւախարին խօսքը ընդ միջևում, «կեցիր, կեցիր, ըսաւ, դաշնակի մը ձայն կառնեմ, հաճոյական եղանակ մըն է, կեցիր, միտ դնենք»:

— Այո՛, ըսաւ նաւախարը, Մատթէոս Տէրպէնտ վաճառականին առնէն է:

Միհրդատ հետաքրքրութեամբ, «ի՞նչպէս, ըսաւ, Մատթէոս Տէրպէնտ ըսիր, անոր առնը ո՞վ կայ դաշնակ զարնող»:

— Իւր աղջիկը, պատասխանեց:

Միհրդատ զարմանօք, «Սխալ ըլլալու է, ըսաւ, ինձ կը թուի թէ աղջիկ չունի. վաճակի Միհրդատ, թէ և քանի մը անգամ այցելութեան դացած էր Պ. Տէրպէնտի առնը, բայց պատահմամբ օրիորդը հոն չէր գտնուած, և Գրիգորին ալ ընտանեկան մասի բան մը հարցուցած չէր»:

Նաւախարը վստահութեամբ, «Պա՛հ, ըսաւ, ի՞նչպէս չունի, մինչդեռ ամեն կիրակի Պէօյիւք-տէրէի եկեղեցին տանողը ես, և իմ այս նաւակս է, այո՛, աղջիկ մը ունի, և լուսնայ պէս գեղեցիկ. բայց մայրը, ձգէ Աստուածդ կը սիրես, ըսաւ, և օձիքը բռնելով թսթվեց, մէկ ստակի համար ինձ հետ կռուելու կը դիմանի, ալ կրնաք մակարերել ինչ ըլլալը . . .»

Միհրդատ նաւախարին խօսքերուն ականջ չը դնելով՝ «Ռէրեմն, կըսէր ինքնիրեն, այն օրիորդը՝ որ ինձ իբր օտարական ներկայացուց Գրիգոր, իւր քայրն է եղեր, հող չէ, մրմնջեց, աւելի աղէկ. և նաւախարին դառնալով, ինձ նայէ բարեկամ՝ ըսաւ, նաւակդ այն Տէրպէնտ վաճառականին տանը առջեւ մօտեցոր. իմացար»:

— Եստ աղէկ Պարոն, ըսաւ նաւախարը, նաւը դէպ ՚ի այն կողմն ուղղելով, և քիչ ատենէն ծախիզըրը մօտեցան:

Միհրդատ աճապարանօք դուրս ցատկելով՝ ոսկի մը նետեց նաւախարին. նաւախարը կարծելով որ սխալմամբ տուած



է ոսկին, « Պարոն, գոչեց, արժաթի տեղ ոսկի տուիք :

— Յիրաւի սխալեր եմ, ըսաւ Միհրդատ, բայց կը խնդրեմ ընդունէ զայն՝ Հեղինէիդ շրջադրեալ մը շինելու համար :

— Շնորհակալ եմ տէր իմ, Աստուած երկար կեանք տայ, ըսաւ ամիշած, և ոսկին գաշկի՛նակին ծայրը կապելով, եթէ արիչ անդամ նաւակի պէտք ունենաք, նաւավար կարապետը չը մոռնաք, գոչեց Միհրդատայ ետեւէն :

— Շատ աղէկ, շատ աղէկ, ըսաւ Միհրդատ, և դէպ ՚ի քրոջը տանը ճամբան ուղղեց քայլերը :

Միհրդատին քոյրը Մաննիկ աղնիւ բնաւ որս թեան տէր կին մ'էր. նշան Արունտ հայրերնին մեռած ըլլալով՝ բաւական հարստութիւն թողած էր. հինգ տարի վերջը երբ մայրերնին ալ մեռաւ, Մաննիկ՝ ամուսնացաւ Պետրոս փունջ անուամբ սեղանաւորի մը հետ, զատուելով Միհրդատէն. թէպէտ շատ աղաչեր էր եղբօրը, որ մէկ տան մէջ բնակին, բայց Միհրդատ չէր հաճած. այսու ամենայնիւ մերթ ընդ մերթ այցելութեան գացած ատեն, մէկ երկու ամիս քրոջը քովը կը մնար : Պ. փունջ շնորհալի կերպարանքով մէկն էր, երեսուն և հինգ տարեկան, այր և կին շատ սիրով կապրէին, իրենց սրտին ամբողջ բաղձանքն՝ իրենց սիրոյն մէկ գրաւականը տեսնելն էր, բայց գժրախաւարար մինչեւ այն ատեն ծնողք չէին եղած :

Այս միջոցին երեկոյեան ընթրիքը կրնէին, Տիկին Մաննիկ կուրծքը գոց սեւ շրջադրեալ մ'էր հագեր, գեղազանգուր և քաջաթուխ մաղերը պարզ կերպով հիտուած էին, սեւ պրզ ասիկ խաչ մը ոսկի շղթայով՝ վիզէն կախուած էր : Ընթրիքէն վերջը Պ. Պետրոս սեղանէն ելնելով՝ տանը գրան առջեւ թիկ նախուի մը վրայ նստաւ գլանիկը վառած, և մինչդեռ սպասուհին սուրճ կը ներկայացնէր Պ. փունջի, « Հա՛, աղէկ միտքս եկաւ, ըսաւ Մաննիկի գառնալով, երէկ չէ առջի օրը Պ. եղբայրդ ինձ խոստացաւ այս գիշեր հոս գալ. անշուշտ կարեւոր գործ մը զինքն արգիլեց իւր խոստումը կատարելէ :

× — Ի՞նչպէս կրնայ ըլլալ այդ, ըսաւ Մաննիկ սեղանէն աճապարանօք ելնելով :



— Մի վրդովիր սիրելիս, ըսաւ Պ. փունջ, կարելի է որ իշխանին դացած է :

— Ամենեւին, յարեց Մաննիկ, Միհրդատ խոստմնապահ է, անշուշտ եւմ որ ձախորդութիւն մը պատահած է, եթէ ոչ դոնէ դրով մը կխմացնէր այս դիշերուան շը կրնալ դալուն պատճառը :

Պ. փունջ, սուրճի դաւաթը սպասուհւոյն տալով « Որչափ զղջացի եղբորդ խոստմունքը քեզ յայտնելուս, ըսաւ :

— Ինչո՞ւ, հարցուց Տ. փունջ յուզեալ :

— Քանզի մինչեւ վաղը երեկոյ հնհնուքի մէջ պիտի մնաս, վաղը անձամբ Պօլիս իջնեմ եւ հետս բերեմ :

— Ի զուր պիտի աշխատիս, եթէ ինձ համար է իջնալդ, ըսաւ Միհրդատ, դռնէն ներս մտնելով :

Այլ եւ կին ուրախութեան ճիշ մը արձակեցին, եւ Պ. փունջ Միհրդատի մօտենալով, « Եղբայր այս ատեն ո՞ր մնացիր, հարցուց :

— Ներեցէք, սիրելի Ֆեռայրս, դսրժի մը համար Պէօլիս քտէրէ երթալ հարկ եղաւ, այն պատճառաւ ու շացայ. եւ Տ. փունջի դառնալով, թեւերը բացած, « Ինչ քոյր իմ դրկէ զիս, ըսաւ :

— Ո՛չ, ես քեզի սրդողած եմ, պատասխանեց Տ. Մաննիկ կեղծ յանդիմանական ձեւով մը, ամլակ մը ՚ի վեր է զիս տեսնելու կարօտութիւնն երբէք չե՞ս զգար :

— Արդարեւ իրաւունք ունիս, ըսաւ Միհրդատ, համբոյր մը եւ հաշտուինք :

— Շատ աղէկ, հաշտուինք, պատասխանեց, եւ երկուքը իրարու դիրկ նետուեցան, սիրելի եղբայր այս որչափ զիրցեր ես, ըսաւ Տ. փունջ :

Միհրդատ ձեռքերը շփելով « Ի հարկ է, ըսաւ, կուտեմ, կը խմեմ, կը պտրախմ, սուրբ սրտով քոյր մի ունիմ, որուն ամուսինը իբր հայրս, եւ ես երջանիկ եմ :

— Շնորհակալ եմ սիրելիս, պատասխանեց Պ. փունջ, Աստուած զքեզ աւելի երջանկացնէ, եւ Տ. փունջի դառնալով, անշուշտ Պ. Միհրդատ անօթի է, հրամայէ որ կերակուր բերեն, ըսաւ :

— Ահ, իրաւունք ունիք, ուրախութենէս բոլորովին մոռցեր էի, երթամ, պատուիրեմ, ըսաւ Տ. փունջ անապարանօք :



— Քիչ մը բան կը բաւէ ինձ սիրելիս կաղաչեմ, ըսաւ Միհրըղ-աա, դու նստէ, թող Աննան երթայ: Եւ սպասուհւոյն դառնալով, գնա խոհարարին ըսէ որ ինձ ուտելիք տայ, անշուշտ եմ, որ ամենալաւ կերակուրները ինձ պահած է ծեր խաչօն:

— Աղէկ ժիտքս եկաւ, սիրելի եղբայրս, օղի՞ դործածել ձկնար, քիչ մը յառաջ բերանդ կը հոտէր:

— Հա՛, շողենաւ ին մէջ Պ. Գրիգոր Տէրպէնտի հետ էի, երկու երեք հատ խմելու բռնագատեց դիւ, որուն համար յուսամ թէ պիտի ներեա. անոնք ձեզ մօտ կը բնակին եղեր, խոստացայ այս դիշեր այցելութեան երթալ, եթէ Պ. Քեռայրս հաճութիւն տայ:

— Ամենայն սիրով, սրատառիտանեց Պ. Փունջ, թէպէտ Տիմիւնը՝ Տիկին Տէրպէնտի տեսութենէն բողբոլին կը խորշի:

— Այս դիշեր եղբայրս ինձ իրաւունք պիտի տայ տեսնելով այն կնկանը կոպտութիւնը, ըսաւ, և հազիւ աւարտած էր Տ. Փունջ իւր խօսքը, մէկ մ'ալ օրիորդ Ատէլ Գրիգորի թեւը մտած Պ. Փունջի տանը դռնէն ներս մտան. օրիորդ Ատէլ Պ. Միհրըղ-աաը հոն տեսնելով, ուրախութեան նշոյլ մը ցայտեց աչքերէն. Միհրըղ-աա որ նոյն միջոցին ընթրելու դրաղած էր, օրիորդ Ատէլը տեսնելուն՝ գէպ 'ի պնակը կարկառած ձեռքը անշարժ մնալով, երեսին դոյնը բողբոլին այլափոխեցաւ և այս յուղմունքը բազմականներէն աննշմարելի մնաց. բայց և այնպէս Տ. Փունջի աչքէն վրիպած չէր Միհրըղ-աայ գէմքին գունատութիւնը:

Պ. Փունջ և Տ. Փունջ ոտքի ելնելով, « Բարի եկաք աղնիւ գրացիներս, ըսին, մենք ալ կը պատրաստուէինք ձեզ գալ Պ. Միհրըղ-աայ խոստմանը համեմատ:

— Այո՛, ըսաւ Գրիգոր, մենք ալ եկանք զձեզ հրաւիրելու, Պ. Միհրըղ-աա ընթրիքը վերջացնէ երթանք:

— Ես ընթրեցի բարեկամք, օ՛ն երթանք, ըսաւ դու աթ մը գլինի խմելով:

— Բայց ինչո՞ւ կաճապարէք, ըսաւ Տ. Փունջ, Աննան սուրճ պիտի բերէ:



— Սուրճը մեր տունը կը խմենք, պատասխանեց Գրիգոր :  
Միհրդատ սեղանէն ելնելով՝ Գրիգորի մօտեցաւ և ակնարկով մը օրիորդ Ստէլը ցուցնելով, կը տեսնեմ որ, ըսաւ, օրիորդը իւր խօսքը պատուեր է :

— Այո՛, ըսաւ Գրիգոր և սկսան խնդալ Ստէլի հետ :  
Տիկին փունջ այս խօսակցու թե՛նէն բան մը չհասկնալով « Ի՞նչու կը խնդաք հարցուց :

— Կեցիր քոյր իմ պատմեմ, ըսաւ Միհրդատ, մեր Գրիգոր բարեկամը շոգ ենաւ ին մէջ աղէկ խաղ մը խաղաց ինձ առանց խնայնելու որ օրիորդը իւր քոյրն է, մինչեւ Պէօյիւք-տէրէ դիւ խաբեց, և այս կատակերդ ու թեան մէջ օրիորդն ալ իւր դերը ունէր :

Ամենքն ալ սկսան բարձրաձայն խնդալ :

— Չեմ կարծեր որ, ըսաւ Օրիորդ Ստէլ, եղբայրս իւր փառքիկ կատակովը ձեզ մնասած ըլլայ, իսկ ինձ գալով՝ ես չը խօսեցայ այնպէս չէ :

— Այո՛, չը խօսեցաք որ խաղը կատարեալ ըլլայ :

— Ստենը կանցնի, ըսաւ Գրիգոր, քիչ մ'ալ մեր տունը խօսինք :

— Ուրեմն երթանք, պատասխանեց Միհրդատ և Տ. փունջը թեւը առնելով դռնէն դուրս ելան :



## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Պ. Մատթէոս Տէրպէնա՝ իւր տանը դրան առջին, ծովուն գիմաց թիկնաթուռի մը վրայ նստէր էր՝ մինչեւ ոտքը սամուրենի մուշտակ մը հաղած, թէ և նոյն օրը օդը խիստ տաք էր. յամիկ երկար ծխափայտ մը կը ծխէր դրեթէ իւր հասակէն կրկնակի առաւելութեամբ՝ որուն սաթը խոշոր նարնջի մը կիտաղունդը կը կաղմէր :



Պ. Տէրպէնտի տարիքը յիսուսի մօտ էր, դ լու խը տախարակ, քիթը սուրականէն աւելի մեծ, երեսը ծաղկաւէր ու ճակտին կնճիռները գրչով քաշուած սեւ դ ծերու կը նմանէր և վերջապէս հասակը կարճ ու չտխազանց գեր ըլլալուն՝ անճուռնի տեսք մը ունէր. նոյնպէս նաեւ Տ. Տէրպէնտ գեղեցկութեան մասին իւր ամուսնոյն կրնար համապատասխանել, որն որ դիմացը նստած բարձրաձայն կերեժկտար և ամեն մէկ անգամին անհամբաւատ կերպով բերանը կը բացուէր. ձիշտ այս միջոցին էր հիւրերը հոն հասան. Պ. Տէրպէնտ առանց անդէն շարժելու, «Ս, յս ի՛նչ բարեբախտութիւն որ ձեր այցելութեամբը կը սրտաուէք զիս, ըսաւ:

— Ներեցէք Պարոն, որ միշտ մենք զձեզ անհանդիսաւ կը նեմք, պատասխանեց Պ. փունջ:

— Ի՛նչպէս էք Տիկին, հարցուց Պ. Տէրպէնտ, Տ. փունջը տեսնելով՝ որ Միհրդատայ թեւը մտած էր, կերեւայ թէ Պարոն եղբայրնիդ խիստ քիչ անգամ զձեզ կը յիշէ:

— Ա, յո՛, պատասխանեց Տ. փունջ, ամիսէ մը աւելի է զինքը տեսած չէի, ասոր համար քիչ մը առաջ փոքրիկ վէճ մը անեցանք մէջերնիս:

Պ. Տէրպէնտ խնդալով, «Ուրեմն դուք ալ փոխադարձ ամիս մը զինքը մի՛ թողուք, բայց ինչո՞ւ հոս կեցեր ենք, հրամեցէք վերի սրահը երթանք, ըսաւ և սպասուհւոյն դառնալով, Աղաւնի, սա մամերը վառէ, գոչեց ու տնտնալով ոտքի ելաւ դէպ ՚ի սրահը երթալ, որուն հետեւեցան ամենքն ալ:

Ա, յս այն սրահն էր որ քիչ մը առաջ Ատէլ պատուհանին առջին նստած Միհրդատայ գալտեանը կը սպասէր:

Պ. Տէրպէնտ եռանկիւնի բազմոցին վերի կողմը ցուցնելով Պ. փունջի, նստան. իսկ Գրիգոր Միհրդատայ հետ դաշնակին քով նստելով ծածկաձայն կը խօսակցէին. Տիկնայք նաեւ դիմացի եռանկիւնի բազմոցին վրայ նստելով՝ սուրբութիւն եղած քաղաքախարական ձեւերը լրացնելէն յետոյ սկսան խօսակցիլ:

Եւ որովհետեւ կանանց ընդհանուր յատկութիւնն եղած է միմեանց հանդիպած միջոցնին նորաձեւութեան և հազուստի վրայ խօսիլ, այս անգամ ալ նոյնը սկսեցին:



— Կարծեմ այսօր Պօլիս իջաք. այնպէս չէ՞ Օրիորդ, հարցուց Տ. Փունջ:

— Այո՛, պատասխանեց Ստէլ, բերա դացի, բայց 'ի զուր պարտեցայ մինչեւ երեկոյ, սրտագրաւ շրջազգեստի մը կտաւ չը դտայ ամենեւին:

— Իրաւունք ունիս Օրիորդ, անցեալ օր Մարդարը խաւրեցի և Միլիլիէն ֆաթուրա բերել տուի, մէջը ամենեւին հաւնուելու բան չկար, ըսաւ Տ. Փունջ:

— Ասկից վերջը լաթ ալ հազնելու չէ, ըսաւ Տ. Տէրպէնտ, էյ ի՞նչ ընեմ հոգի կիւլիւ ֆիստանս կայ ան կը հազնիմ . . .

— Մայր իմ, հիմայ այն պարիթ է չը հազնուիր, ըսաւ օրիորդ Ստէլ:

— Էյ քուրուկս ո՞րը հազնիմ . . . պարէզիս չըբակը նեղ է, ալբական հազնուելու բան չէ. Հաճի աղաս կըսէ որ, սօնֆէրինդ հոգի, էյ ամեն օր ալ ան կը հազնուի, մեղայ՛ ո՞հ . . . Էնթարիյի ատեն ասանկ մտմտուկ չկար . . .

— Իրաւունք ունիս, ըսաւ Տ. Փունջ, ծիծաղը դժուարաւ դսպելով:

Պ. Փունջ և Պ. Տէրպէնտ նարտ խաղալ սկսան:

Միհրդատ այս միջոցին տիկնանց մօտենալով, « Եթէ կը հաճիք մենք ալ թուղթ խաղանք, ըսաւ:

— Ստենը դեռ կանուխ է քիչ մը խորաթա ընե՛նք, պատասխանեց Տ. Տէրպէնտ:

Միհրդատ իւր տեղը քաշուեցաւ:

Տ. Տէրպէնտ խօսքը շարունակելով, « Էյ չէ, ո՛յ ալ այս մօտաներուն չը դիմացուիր . . . մարիկ, էյ ի՞նչ մեղքս պահեմ, նոր մէկ խաթ մը լաթ շինել տամ նէ ահա ամենը այն է . . .

Տիկին Տէրպէնտ կերելի որ ընչասէր էր, բայց այս մասին իրաւունք ալ ունէր:

Հոս կուզենք դիտողութիւն մ'ընել, մեր Աղղին մէջ ճարակող ալաֆրանկա ըսուած ախտին վրայ. վասն զի բաւական տարիէ 'ի վեր նորաձեւութեան հետեւելու փափաք մը տիրած է ամեն Հայ Տիկնանց սրտին, Եւրոպացւոց յար և նման ըլ-



չալու համար, ներուի մեզ եթէ ըսեմք «կապկի սեռին մէջ տեսակ մ'ալ աւելցուցին», դատախարակութեան պակասութիւնը անհամար գերդատաններու կործանման պատճառ եղաւ, ամեն մարդ կարծելով՝ որ ազնուութիւնը հազուստի կամ նորածեւութեան վրայ է, մեծամեծ ծախքերու տակ սկսան ճզմուիլ և կը ճզմուին մինչեւ ցայսօր:

Օր մը Բերայի Մեծ փողոցէն անցած ատենս խանութ մը մտայ թաշկինակ գնելու մտքով, ուր երեք հատ լաչակաւոր տիկնայք խանութին ներսի կողմը, քանի մը տեսակ կերպաներու վրայ կը վիճէին. «Սղջիկս, կ'ըսէր տարւոք կին մը, յիրաւի դեղեցիկ է, բայց շատ սուղ է, ետքը պիտի սթուայ կանչէ մարդդ»:

— Հոգս ալ հատեր էր, պատասխանեց առաջինը ուսը թօթուելով, սով կը սեպէ, ստակը տուողը սղջ ըլլայ իրեն ի՞նչ...

— Սղջիկս, երկու հազար դուրուշով տուն մը կառնես, բայց ասոր վրայ կաթիլ մը ջուր որ թափի ստակ մը չըներ:

— Ա՛յ սիրտս շատ սիրեց, անցած օր Ն. Յ. Պէյին աղջիկը ասոր ճիշտ նմանը շրջադգեսա մ'էր հագեր, էյ տեսնելու արժանի բան էր...

— Ն. Յ. Պէյին դուստրը մտնելու մասին, մեզի հաւասար կը կարծես, ըսաւ տարւոք կինը:

Ես ալ նոյն միջոցին մտնեալով կանանց, «Ներեցէք համարձակութեանս, ըսի, մէկդի թող կերպասի գնոյն սղու թիւնը...»:

— Կը հասկնամ Պարոն, ըսաւ խօսքս ընդմիջելով, պիտի ըսես որ Ն. Յ. Պէյին աղջկան ու ձկնորսի մը կնոջ ծախսին մէջ պէտք է մեծ տարբերութիւններ ըլլայ, այնպէս չէ:

— Անշուշտ, պատասխանեցի:

— Իրաւունք ունիս, բայց հագնելու լաթ չունիմ'ի հարկէ շրջադգեսա մը պիտի շինեմ. ուստի աղէկը կը շինեմ, ինչ պիտի ընես. Տաճկերէն առածը գիտես, ամենուն անցած կամ մուրջէն դու ալ անցի կըսէ, թէ որ մինակ ինձ մնար, ես լաթ անդամ չէի հագուեր, ըսաւ, և բարձրածայն սկսաւ խնդալ:

Համեուութեան նշոյլը անգամ չի կար այս կնոջը քով:

— Տիկին, պատասխանեցի, շատ ծուռ կը դատէք, հա-



բուսաները դիւրին միջոցներ ունին ծախսելու մասին, անոնցը մտային հաճոյք մ'է, իսկ ձեզի դալով պէտք է երկու հարիւրնոց շրջադգեստ շինել, և հազար ու թը հարիւրը ուրիշ մէկ պետայնոց գործածել:

— Իրան կըսես, պատասխանեց աշխուժով մը, Հայոց մէջ հարուստ կարծուածներուն գրեթէ բոլորն ալ անկարող վիճակի մը մէջ կը գտնուին. ես ի՞նչեր դիտեմ. . . մտային հաճոյք կըսես, մի՞թէ աղքատները մտային հաճոյք չունին, դեղեցիկը սիրելը կանանց յատուկ զգացմանց մէկն է. մի՞թէ աղքատացի զգացումներէն զո՞րկ են, վերջապէս Պարսն անշուշտ դիտես այն առակը որ կըսէ « ձուկը դլխէն կը հօտի » արդ թող, առաջ անոնք համեատութիւնը ձեռք առնեն որ մենք ալ կենդանի օրինակներ ունենանք:

Այս առակախօս տիկնոջ առջեւ ասպարան մնացի, և շուղելով աւելի կենալ հոն, թաշկինակները սունելով դուրս ելայ և միանգամայն դիտեցի, որ կերպասը ծրարել կուտար:

Գառնանք մեր պատմութեան: Ատէլ օրիորդը երիտասարդներուն մօտենալով, « Ո՛հ չե՞ս տեսներ կղբայր իմ, ըսաւ. Պի՛հրդատ կը ներզանայ, զբօսներու պէտք ունի գոնէ թուղթ խաղացէք:

— Ա՛հ անհող կղիք օրիորդ, ձեր խօսակցութիւնը մտիկ ընելով կը զբօսնուինք, ըսաւ Միհրդատ:

— Իրաւունք ունի քոյրս, պատասխանեց Գրիգոր, եթէ կը հաճիք էքարթէ խաղանք:

— Շատ աղէկ, ինչպէս որ կուզէք:

— Քոյր իմ, մեզի խաղի թուղթ բերել տուր:

Ատէլ հրամայեց սպասուհւոյն և խաղի թուղթը բերին:

— Ներեցէք, ըսաւ Միհրդատ, եթէ աղէկ չը խաղամ, վասն զի լաւ չեմ դիտեր էքարթէ:

— Ուրեմն ես քովդ նստիմ և քեզ սովրեցնեմ, ըսաւ Ատէլ, ու աթոռ մը առնելով Միհրդատին քովը նստաւ:

Ատէլի մայրը գոհ աչօք դիտեց Ատէլին Միհրդատայ քովը նստելը:



— Հիմա անշուշտ եմ որ պիտի վասակինք, վասն զի մէկ հոգին երկու հոգւոյ չը կրնար յաղթել, ըսաւ Միհրդատ ժպտելով:

— Բաժնէ, ըսաւ Գրիգոր թուղթերը Միհրդատոյ ներկայացնելով, և Միհրդատ մեքենաբար բաժնեց թուղթերը:

— Ի՞նչպէս կուզէք, հարցուց Գրիգոր, խաղը մէկ քսաննոց թուղթի խաղանք:

— Շատ աղէկ, պատասխանեց, և սկսան խաղալ . . . :

— Թուղթի փոփոխութիւն ընէ՞նք, ըսաւ Գրիգոր:

— Ա՛յ, պատասխանեց օրիորդ Ստէլ:

— Ի՞նչպէս ոչ, ըսաւ Միհրդատ, քանի որ Պ. Եղբայրդ կը փափաքի . . . :

— Պէտք չունիք Պարոն, հինգ կ'ընէք ուռայով մէկտեղ, որով երեք խաղ կը վասակիք:

— Ա՛հ, որչափ բարի էք, ըսելէ որ երեք քսաննոց թղթադրամ վասակցուցիք ինձ:

— Ի՞նչ մեծ բան, ըսաւ Ստէլ քաղցր ժպտով մը:

— Ա. էք, ըսաւ Գրիգոր, երեք հատ թղթադրամ տալով:

— Ո՛րքէմն ալ չպիտի խաղանք, հարցուց Միհրդատ:

— Ի՞նչպէս չպիտի խաղանք, պիտի խաղանք, բայց սա հիմակուան վաստկածդ առ, ըսաւ Գրիգոր:

— Այդ ուրիշ, ըսաւ Միհրդատ, և ուռա մը բացաւ:

— Յաջող բախտ ունիք պարոն, ըսաւ օրիորդ Ստէլ, ահա դարձեալ երեք ըրիք:

— Իբաւունք ունիք օրիորդ, բայց թուղթի մէջ վաստկողը սիրոյ մէջ կը կորսնցունէ կրսէ առակը:

— Չեր այս բախտովը պարոն, ամեն դործի մէջ պիտի վաստակիք . . . :

— Կը հաւատայի, թէ որ ամեն դործի մէջ ալ ձեզ նման անձանձիր ուսուցիչ մ'ունենայի . . . :

— Այդ ի՞նչ է, դոչեց անդիէն Տիկին Տէրպէնա, որ մէկէն ՚ի մէկ քիչ յուզմունք չպատճառեց Միհրդատին, այդ ի՞նչ է, մինակ երկու հոգի կը խաղաք, ամէնքնիս միատեղ խաղանք . . . :

— Շատ աղէկ Տիկին, ըսաւ Միհրդատ, քիչ մը յառաջ



ձեզի այս առաջարկու թիւնը ըրի, և դուք չընդունեցիք:

— Հիմայ, ըսաւ Տ. Տէրպէնա, այս առաջարկու թիւնը ես ձեզի կընեմ:

— Ան առաջարկու թիւն ըսել կուզէք, այնպէս չէ՞ Տիկին, հարցոյցս ց Միհրդատ, փոխադարձ ժպիտ մը փոխելով Տ. Փունջի հետ:

— Էյ ի՞նչ դիտնամ՝ առաջարկու թիւն է, առաջարկու թիւն է ի՞նչ է, պատասխանեց Տ. Տէրպէնա:

Գրիգոր Տ. Փունջի դառնալով, « Հարկաւ դուք ալ մեզի հետ պիտի խաղաք այնպէս չէ՞ Տիկին, հարցուց:

— Այո՛, ամենայն սիրով, պատասխանեց Տ. Փունջ:

— Արեմն, ըսաւ Տ. Տէրպէնա, սեղանին քով երթանք. և դառնալով սպասուհւոյն, Աղանի սա աթոռները շարէ, գոչեց:

Սպասուհին անմիջապէս սեղանին բոլորովին աթոռները շարեց և ամենքն ալ նստելով՝ սկսան այն խաղը խաղալ որուն անունը իւր համբանքէն առած է. այսինքն՝ երկու հարիւր:

Միհրդատ ուշադրութեամբ Պ. Տէրպէնաը կը դիտէր, և միտքը այնքան դրաղած էր, որ ինչ ըրածը չէր գիտեր. այս միջոցին Տ. Տէրպէնաի բարձր ձայնէն ուշաբեցաւ:

— Ա՛յ, պէտք չէր որ աղջիկը նեռէիր, պօռայ խառութեամբ Ատէլին:

— Ներեցէք մայր իմ՝ ուշադրութիւն չըրի, պատասխանեց Ատէլ դեղնելով, վասն զի մօրը կերպէն դուշակեր էր գլխուն գալիքը:

— Իշո՛ւ թագուհի խելքդ ուր էր, պօռայ Տ. Տէրպէնա աւելի փրփրելով:

Ատէլի երեսի դեղնութեան վրայ կապոյտ կարմիր թիւն մը պատեց:

— Իմ անխելքութիւնս որ քեզի պէս տխմարի հետ թուղթ կը խաղամ, ըսաւ, թուղթերը ձեռքէն նետելով:

Հետեւաբար ամենքն ալ մէկ կողմ քաշուեցան առանց ձայն հանելու. Միհրդատ ժպտելով, « Տիկին, ըսաւ, թուղթերը նորէն ձեռու ընիս առնենք, և ուղածիդ պէս թո՛ղ խաղայ . . . »

Տիկին Տէրպէնա աչքերը Միհրդատին վրայ խոժոռելով,



« Յանցանքը մերն է որ ասանկ տղոց հետ թուղթ կը խաղանք ,  
ըսաւ :

Գրիգորի այտերը կարմրեցան և առաջը սկսաւ նայիլ , աւելորդ է դրուցել որ անկից վերջը խաղալը դադարեցուցին և լռութիւնը տիրեց :

Տիկին Տէրպէնտ ժանիքը կախած մէկ կողմ անկիւն մը քաշուեցաւ . Պ. փունջ և Պ. Տէրպէնտ նարտը լմնցուցին և սկսան դործի վրայ խօսիլ : Տիկին փունջ քիչ մը վերջը երթալու համար ոտքի վրայ ելաւ :

— Գեռ ատենը կանուխ է , ըսաւ Պ. Տէրպէնտ :

— Ո՛հ ի՞նչպէս կանուխ , պատասխանեց Տ. փունջ , կէս դիշերը բաւական անցեր է :

— Պարոն փունջ , վաղը պիտի երթանք Հիւնքեար-սույի , հարցուց Գրիգոր :

— Վաղն առաւօտ կը խօսինք ատոր վրայ , պատասխանեց :

— Ո՛չ , հիմայ խօսինք , վասն զի ցորեկուան ճաշը հոն ընել պէտք եմք :

— Արեմն վաղը առաւօտ մեղի եկէք սուրճերնիս խմենք և ՚ի միասին ճամբայ կելլանք :

— Շատ աղէկ :

— Ուրեմն դիշերը բարի ձեղ :

— Երթաք բարեաւ , ըսին միարեւրան սպէնքն ալ :

Միհրդատ օրիորդը բարեւելէ ետքը , Գրիգորին ձեռքը սեղմելով , միւսներուն հետ մեկնեցաւ :

Հազիւ տուն հասած էին , « ի՞նչպէս է Տիկին Տէրպէնտի քաղաքավարութիւնը , հարցուց Տ. փունջ :

— Սքանչելի , պատասխանեց Միհրդատ :

— Պէտք չէ որ դէշ խօսիք , ըսաւ Պ. փունջ . վասն զի այն պէս վարժուած է , տեսէք աղջիկը որչափ քաղաքավար է :

— Աղջկանը քաղաքավարութիւնը թո՛ղ որ Միհրդատ դու վէ , ըսաւ Տ. փունջ ժպտելով :

— Այո՛ , կը խոստովանիմ որ մեծ համակրութիւն դդացի այդ օրիորդին վրայ :



- Ուրեմն աղէկ դու շակեր եմ :
- Ի՞նչ բան :
- Հարսնիք մը . . . :
- Կատակ կընես սիրելիս :
- Ինչո՞ւ կատակ պիտի ըլլայ՝ աղջիկը ճշմարիտ մարդարիտ մ'է, բայց անոնց մէջ մնալով քիչ քիչ յարողը պիտի կորսնցունէ :
- Այս խօսքերը վերջացունենք հողիդ սիրես, և ես քիչ մը քեռայրիս հետ տեսու թիւն ընել կուզեմ :
- Ուրեմն սենեակնիդ քաշուեցէք, և ես հինգ վայրկեանէն ձեր քով եմ, ըսաւ Պ. Փունջ, կնոջը հետ իւր սենեակը քաշուելով. Միհրդատ ալ իւր խուցը մտաւ և առանց հարցումները հանելու թիկնաթուղի մը վրայ նստաւ :

## ՍՕՓԵԱՆ ՊԷՅԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

Քիչ մը ետքը Պ. Փունջ Միհրդատայ սենեակը մանելով, « Ահա եկայ սիրելիս, ըսաւ, ձեռքովը գլանիկ մը յօրինելով. կարծեմ ինձ խօսելիքդ Ս. քունի դանձէն նոր դործ մը առած ըլլալդ է :

— Ո՛չ, պատասխանեց, ծանրակշիւ խնդրոյ մը վրայ պիտի խօսիմ ձեզի, որ պիտի սոսկան . . . :

— Արդէն կը սոսկացնես դիս, սիրելիս :

— Այսօր շողենաւով հոս եկած ատենս էմիրկէնի նաւամատոյցէն ինձ անժանօթ մարդ մը մտաւ Սօփեան պէյ անուամբ, և ինձ սա նամակը տուաւ, ըսելով՝ նամակը հանեց, ու տուաւ որ կարդայ :

Պարոն Պեարուս նամակը կարդայ անհագու թեամբ մը, « Ասկէ ի՞նչ կելլայ, ըսաւ, նորին վսեմութիւնը իւր բարեկամներէն մէկը քեզ կը խաւրէ քու վրայ վարկ մը բանալով, որուն անունն



այ Սօֆեան պէ՛յ ըլլալը բնական է . առի զարմանալու բան չէ :

— Այո՛, բայց վերջը մտիկ ըրէ, ինձ շողենաւին մէջ ըսաւ թէ « կը փափաքի որ իւր հետը Պէօյիւք-տէրէ երթամ » ստիպեալ ես ալ դացի . Սրճարան Գաղղիոյ պանդոկը մտանք, և երբորդ դասիկոնը խուց մը բանալ տալէ վերջը, ինձ ըսաւ որ դրան լեզուակը քշեմ . այս խուցը մէկ դուռ ունէր, և անկէ զատ ուրիշ դուռ չէր երեւեր . բայց Սօֆեան պէ՛յ պատին վրայ դաղտնի պարզունակ մը հրեց ուսկէ դաղտնի դուռ մը բացուեցաւ նշան ընելով որ ես հոն կենամ, ինքը ներս մտաւ և քանի մը վայրկեան վերջը դարձաւ հետը կին մը բերելով :

« Այս կինը հրաշալի գեղեցկութիւն մ'ունէր որ հազիւ երեսուն տարեկան կերեւէր . աթոռ մը ցըցուց ինձ որ նստիմ, և ամենքս ալ նստանք :

« Միհրդատ, ըսաւ, նորին վսեմութիւնը քու վրայ մեծ վատահուժիւն ունի, քու հաւատարմութեանդ կերաշխաւորէ ինձ, և ես վատահելով՝ քեզ դաղտնիք մը պիտի հաղորդեմ, զոր պէտք է պահես մինչ ՚ի գերեզման :

— Հաւաստի եղիք անձնուէր դաղտնասպահ մը ըլլալուս, պատասխանեցի :

— Ուրեմն շատ աղէկ, ըսաւ և շարունակեց իւր խօսքը : « Ասկէ երեսուն և հինգ տարի առաջ Քիոսի յեղափոխութեան պատճառաւ զիս ամբաստանեցին և հոս քանի մը ամիս բանտարկելէ վերջը անմեղութիւնս յայանուելով՝ տրձակեցին . բայց դժբաղդաբար բարեկամներուս հետ յարարերութիւն ընելն անկարելի ըլլալուն, յետին չքաւորութեան մէջ ինկայ . ու Գում-գաբու Սրմիկեանց տանը տակի խանութը ծխախոտ ծախել սկսայ :

« Սրմիկեանց ընտանիքը, մէկ մայր մը և երկու աղջիկէ կը բաղկանար . հայրերնին մեռած ըլլալով՝ իմ վարձած խանութիս ամսականոյն և իրենց ձեռագործներուն շահովը կապը ըէին . ես այն ատենը քսան տարեկան էի . մօրերնուն անունը կատարինէ և աղջիկներուն մէկը Մարիամ և միւսը Մաղթաղինէ կը կոչուէր . տուներնին էրիկ մարդ չը գանուելուն, ա-



մեն պիտոյքնին ես կը հող այի : Ս.յս յարարերու թեան պատ-  
ճառաւ Մաղթաղինէին սիրահարեցայ . . . » 2

Հոս պահ մը կանկ առաւ , և թաշկինակն հանելով աչքերը  
սրբեց . դիտեցի նաեւ որ այն հրաշագեղ կնոջ ոյտերէն միան-  
գամայն երկու կաթիլ արցունք սահեցան . իսկ ես խոր ապ-  
շու թեան մէջ մերթ մէկը և մերթ միւսը կը դիտէի 3 քանի մը  
վայրկեան խոր լռութիւն տիրելէ վերջը , դարձեալ շարունա-  
կեց : « Մայրը չէր դիտեր մեր փոխադարձ սէրը , ամեն ա-  
ռաւօտ կերթայի հարցնելու թէ , պիտոյք մը ունի՞ն . Մաղ-  
թաղինէ դէմն ելնելով դիտ երկայն բարակ խօսքի կը բռնէր .  
Մարիամ իւր քոյրը չար բնաւորութիւն մը ունէր , որով մեր  
ունեցած սէրը իւր մօրը հաղորդեց և մեր սրտերուն փոխա-  
դարձ սիրոյ կապերը թուլցունելու համար իմ Յոյն ըլլալս կը  
ցուցնէր միշտ :

« Վերջապէս օր մը մայրը դիտ կանչելով , ըսաւ որ , ալ ան-  
կից վերջը շուղեր որ իւր տունը ոտք կոխեմ , պատճառը հար-  
ցուցի . Մարիամ պատասխանեց թէ , թաղեցիք զմեզ կը բամ-  
բասեն և թէ կարելի է որ , իւր քոյրը սիրահարի ինձ , եւ այլն ,  
եւ այլն : Ուստի ասկէ վերջը այս տունը մի դար , բայց և այսպէս  
դարձեալ մեր ամեն պիտոյքը դու պիտի հողաս , քանզի լաւ  
դիտես թէ քենէ ուրիշ բարեկամ չունինք , իսկ ես՝ շատ ա-  
ղէկ պատասխանելով , հաղիւ հաղ ինքզինքս դռնէն դուրս  
նետեցի : Մնկէ վերջը ամեն առաւօտ Մարիամ կու գար խանութ  
և իրենց պէտք եղածը առնել տալով տուն կը դառնար :

« Օր մը իրիկուան դէմ երբ խանութս կը դոյցէի՝ դիտեցի  
որ Մաղթաղինէ պատուհանին վրայ ձեռքովը բան մը կընէր .  
աւելի լաւ ուշագրութիւն ըրի և տեսայ , որ շունչը ապակեոյն  
տալով մատովը սա գրած էր . - Գիշերը ժամը չորսին մեր դու-  
ռը - . բարեբաղդարար Մաղթաղինէ ինձ հայերէն սովորեցու-  
ցած էր . իմ ապակին դիտելս տեսնելէն անմիջապէս ետքը  
ձեռքովը սրբեց զայն , և ես նորէն խանութս բանալով ունե-  
ցած քիչ մը ստակս վրաս առի , և տունէն քանի մը խանութ  
վար գանուած գինետունը մտայ , որուն մէջ բաւական բաղ-



մութիւն կար, քանի մը ձկնորս մէկ կողմ նստած նոյն օրումն օղին գեղեցկութեանը և ձկանց առատութեանը վրայ կը խօսասկսէին, անոցին քանի մը նաւավար բարձրաձայն երգերով սասկալի աղմուկներ կը հանէին, ես ալ մէկ կողմ քաշուած քիչ մը գինի բերել տուի, և սկսայ մտածել. բայց զինեալս ձայները զիս կը շփոթէին, և անհամբեր կը սպասէի որ մութը կոխէ:

« Ժամը մէկը հնչեց, դուրս ելայ զինեալսնէն մինչև ծովեզրը գացի, տեսայ որ ձկնորսի մը նաւակ կապուած էր, մէջը մտայ և սլարիսպին աղբանայ ըսուած կողմը տարի մտցուցի, վասն զի այն կողմի սլարիսպը փլած էր. անկէ վերջը դարձեալ սլարիսպէն ներս մտնելով, կրկին եկայ առջի իրիկումն զինեալսնը նստայ. վերջապէս ժամը չորսը հնչեց. աղետալի՛ հնչիւն, որ դեռ ականջիս մէջն է կարծես... դուրս ելայ անկից, սրտիս բարախմունքը կուզէր զիս վհատեցնել. բայց սիրոյ քաջալերութենէն զօրացած՝ տանը դռան առջեւը հասայ, որ Մաղթաղինէ ինձ կը սպասէր. ներս մտայ դռնէն, շուտ ըրէ սիրելիս երթանք ըսի. Ո՛ւր երթանք, ըսաւ. կը սիրենս՝ զիս հարցուցի. Ո՛հ ատի ինձ հարցնելդ աւելորդ է, քու սիրտդ արդէն չը՞ փկայեր, պատասխանեց. Ս, յո՛, ես ալ քաջ զիանալով զիս սիրելիդ՝ մեր փախստեանը համար առաջուց ամեն բան պատրաստեր եմ... »

« Վայրկեան մը լուռ կեցաւ... »

« Խօսէ՛ Մաղթաղինէ, խօսէ, կուզենս ինձ հետ կենալիլ »

« Ս, յո՛, պատասխանեց, առանց քեզի անկարելի է որ ապրիմ, բայց խօստացիր որ զիս չպիտի թողուս կենացդ մէջ »

« Մաղթաղինէ, ըսի, աշխարհի բոլոր անէծքը դ լխուս թափի, եթէ դքեզ թողում, միթէ ինձ ալ հնար է առանց քեզ ապրիլ, այն արշալոյսը յախտենաական մթութիւն է ինձ՝ եթէ քու դրկացդ մէջ չարթնամ... »

« Ուրեմն, աճապարէ, ըսաւ, ատենը կանցնի: Անմիջապէս թիկնացս հանեցի և տուի որ փախտուեցաւ, և հաղիւ դռնէն դուրս սաքերնիս կոխած էինք, մէկ մ'ալ պահնորդին խեղ



դուրս և միօրինակ ձայնը գիշերուան հինգերորդ ժամը իմա-  
ցուց . անմիջապէս դռնէն ներս քաշուեցանք , քիչ մը ետքը  
պահէնորդը ցուարը գեաինը զարնելով դռան առջևէն անցաւ  
դնաց . — Շուտ ըրէ , ըսաւ Մաղթաղինէ , մինչեւ որ դռնաց  
երկու ժամ միջոց ունինք : Գռնէն երկրորդ անգամ դուրս  
ելանք , և դրան բանալիով դուռը դոցելնէս վերջը , առանց  
բառ մը արտասանելու ճամբանիս կը շարունակէինք :

« Երբ առնէն բաւական հեռացանք առաջուց սլաարատած  
լապտերս վառեցի , հինգ վայրկեանէն աղբանոց հասանք , և  
պարիսպէն անցնելով նաւակը մտանք ու սկսայ թիավարել :

## Ա. Լ. ԿՈՇՈՒԹԻՒՆ

« Երթալով կը հեռանայինք պարիսպներէն . — Ո՛հ , ըսաւ  
Մաղթաղինէ , հիմա քիչ մը շունչ կառնեմ , բայց ըսէ ինձ ո՞ր  
պիտի երթանք : Խեղճը առանց սուր երթալիքը դիտնալու ինք-  
դինքը ինձ յանձնած էր . — Կղզին , պատասխանեցի : Գիշերը  
խիտ մթին էր , և ատեն ատեն , արեւմտեան հորիզոնէն կը  
վայլատակէր , ակն յանդիման ալէկոծութիւն մը կը դուշակէի .  
բայց այս իմ դուշակութիւնս Մաղթաղինէի չէի ուզեր յայտ-  
նել , որուն երկիւղ պատճառելէ ուրիշ արդիւնք մը չպիտի  
ունենար . դժբաղդաբար հոմն ալ մեզ դէմ էր . . . »

Այս միջոցին Սօփեան պէյ ոտքի ելաւ և սեղանին վրայէն  
ջրին գաւաթը առնելով քանի մի ումպ խմեց :

« Հովը կը սաստկանար . մէկ մ'ալ լուսաւոր վայլակ մը ան-  
ցաւ , բոլոր ծովը մանրերորդ մը վառեց , ետեւէն խուլ որոտ-  
ման ձայն մը Մաղթաղինէն ստկացուց . — Ս՛հ , ըսաւ Մաղ-  
թաղինէ , օդը կաւրուի , արդեօք պիտի կարենանք ալէկո-  
ծութենէ առաջ կղզին հասնիլ :



« Կը յուսամ, պատասխանեցի, և ոյժս կրկնապատկելով թիափարեւ սկսայ, բայց մենք դեռ կէս ճամբան էինք հետ ղհետէ ալեաց կոհակները կը բարձրանային, և իրարու յաջար գելով հովուն մղմանց առջև կը վազէին, մեր նաւակը ալեաց խաղալիկ եղած էր, և վայլակները ահռելի որոտմամբ կայծակներու փոխուեցան:

« Սղատութեան յոյս չէր երեւեր, և քիչ քիչ դօրութիւնս կը սպառէր:

« Սա ալիքը շատ դէշ կուգայ, ըսաւ Մագթաղինէ. մէկ մ'ալ սոսկալի ալիք մը նաւակին կողը դարնուեցաւ, և իւր փրփրովը նաւակը կիսով չափ լեցուց:

« Կորսուեցա՛նք, գոչեց:

« Անսխապէս թիերը թողուցի, և սկսայ նաւակին ջուրը պարպել... նոյն ատեն սոսկալի որոտմամբ կայծակ մ'ալ վայլատակելով՝ երկինք բոլորովին բացուած կարծեա գլխու նուս հուր պիտի տեղար. ճիչ մը հանեց Մագթաղինէ, քովը ցատկեցի, տեսայ որ նուազած էր. գրկելով զինքը բազկացս մէջ առի, բայց ամենեւին կենաց նշոյլ չէր երեւեր վրան:

« Ո՛հ, Աստուած իմ... Աստուած իմ, գոչեցի, աղատէ այս հրեշտակը... ես եմ պատճառը, սէր խոստացայ, մահ տուի. և կարծեա թէ, Աստուած ձայնիս ունկնդիր՝ իսկոյն Մագթաղինէի աչերը բացուեցան, և մեծ էր ուրախութիւնս:

« Ո՛ւր եմ ես հարցուց. — Հոս իմ գրկացս մէջ Մագթաղինէ, պատասխանեցի: — Ո՛հ, մրմնջեց, արգեօք երջանկութիւննիս մինչեւ այս կէան էր, ամիսս... մեռնելս հողս չէ այլ զքեզ կը մտածեմ որ ինձ համար կեանքդ ղոհեցիր. բարեկամս, ինձ մտիկ ըրէ, դու զիս մի՛ հողար, տուր ինձ յետին տղջոյնդ և նետուէ ծովը. թերեւս կրնաս աղատիլ:

« Քեզ թողում ըսիր, ա՛հ Մագթաղինէ սիրտս վիրաւորեցիր այդ խօսքովդ, քեզ հետ ապրիլս իմ երջանկութիւնս էր. իսկ քեզ հետ մեռնիլն ալ երանութիւնս պիտի ըլլայ. այո՛, եթէ դու մեռնիս, ես ալ քեզի հետ պիտի մեռնիմ: « Ափսոս, ըսաւ, առանց սիրոյ երջանկութիւնը վայելելու մեռ-



նի՛լ . . . — Ա՛յ, Մաղթաղինէ չպիտի մեռնինք, մինչեւ վերջին շունչս պիտի աշխատիմ ազատել զքեզ: — Ուրեմն ես ալ քեզի հետ կաշխատիմ, ըսաւ:

« Երկուքս ալ սկսանք նաւակին ջուրը պարպել, թիերը ծովը առեր տարեր էր, բոլորովին հովին մղման առջին ինկանք՝ ինքզինքնիս ալեաց յանձնելով:


« Երկու ժամու չափ ծովուն վրայ մնացինք առանց ուր դանաւելնիս դիտնալու. մէկ մ'ալ, յանկարծական ցնցմամբ ժայռի մը վրայ զարնուեցաւ նաւակը, և իսկոյն ջուրը ներս յորդեց բացուած ծակէն. սոսկալի ալիք մը նաւակը մէկ կողմին դարձուց և մենք ալ ծովուն մէջ սուղեցանք:

« Առաջին անգամ որ դլուխս ջուրէն դուրս հանեցի, Մաղթաղինէի նիհար ձեռքը տեսայ որ յուսահատաբար ջրին կը զարնէր, իսկոյն բռնեցի զինքը, և կռնակս առնելով սկսայ լողալ. հինգ վայրկեանի չափ ալեաց հետ կռուելէ վերջը, մեծ ուրախութիւն զգացի երբ ոտքս ցամաքը դպաւ. . . նոյն միջոցին Ֆէնէր-պահճէյի փարոսին լոյսը տեսայ ծառի մը ետեւէ. տղատեցա՛նք, դռչեցի:

« Մաղթաղինէ ուրախութեան ճիչ մը արձկեց, և մենք հողի վրայ էինք:

« Իսկոյն Մաղթաղինէ ծնրադրելով դոհարանութեան ազօթք մը մրմնչեց, այսու ամենայնիւ երկինք կը սասանէր կայծակներուն որոտմունքէն, և հեղեղի նման անձրեւ կը պարպուէր երկրի վրայ:

« Հին բաղնիքի մը աւերակներուն մէջ պատասպարուեցանք. քիչ քիչ սկսաւ երկինք պարզիլ, հողմը մեղմեցաւ և արշալոյսը սկսաւ նշմարուիլ. վերջապէս պայծառ արեւով մը առաւուսն սկսաւ:





ԽԱՌԵՐԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄ

« Կարելի եղածին չափ հազուատնիս չորցնելէն վերջը ,  
Մաղթադինէն աւերակին մէջ թողուցի , և ես դէպ 'ի ծովերը  
յառաջացայ . հոն ծեր ձկնորս մը ուռկան կը դորժէր :

« Բարի լոյս , բարեկամ , ըսի : Բարի լոյս , պատասխանեց :

« Նաւակդ հոն է հարցուցի : Մնչո՞ւ չա . . . ըսաւ , առն չեմ  
կրնար տանիլ որ հոն թողած ըլլամ , և դիշերուան անձրեւն ազ  
մէջը չէր լեցուեր : Ըսել է որ նաւակիդ մէջ քիչ մը ջուր կայ :  
— Աւելին . ըսէ որ մինչեւ բերանը ջուրը լեցուն է : — Կուզե՞ս  
որ ես պարպեմ : — Վճարմամբ մը , այնպէս չէ : — Ոչ ըսի քեզի  
ժառայութիւն մը ընելու համար : — Կը հասկնամ , ըսաւ , սիրտդ  
կը նեղանայ , ուրեմն աճապարէ որդեակ , վերջը ուռկան մը կը  
նետենք ինչ որ ելնէ , քառորդ մասը քեզ կը թողում :

« Վազեցի նաւակին քով և տասը վայրկեանէն մէջի ջուրը  
պարպեցի , ու դորձայ ծերունւոյն՝ որ նոյն միջոցին ձեռքի  
ուռկանը լմնցուցած կը ծալլէր , նստայ ծերունւոյն քով . « Բա  
րեկամ աղաչանք մը ունիմ , ըսի : Զարմացմամբ երեսս նայեցաւ :

« Պէտք է դիանաս , շարունակեցի , որ ես հոս մինակ չեմ  
ինձի հետ տասն և վեց տարեկան օրիորդ մ'ալ կայ , և թէ  
դիշերուրնէ 'ի վեր աւերակներուն մէջը անձրեւին տակ ցուր  
տէն պիտի սառէինք . . . :

« Գիշերուրնէ 'ի վեր . . . բայց դիշերը հոս ի՞նչ բան ունէ  
իք . . . : — Ահա ամեն բան . ես օրիորդ մը կը սիրէի և երէկ  
դիշեր , Գում-դարուէն նաւակ մը դրի որ կղզին տանիմ և  
հոն պսակուինք , վտան դի աղջկան ընտանեաց կողմէն այս ա  
մուսնութեան չէին հաւաներ . վերջապէս ալեկոծութեան բրո  
նուեցանք , ու նաւակնիս հոս ժայռի մը զարնուելով խորտա  
կեցաւ , և մենք ալ ծովը սուղեցանք . բայց Աստուծոյ մէկ  
հրաշքը մեզ ազատեց :



« Ուրեմն այն էր, ըստ ծերունին, որ առաւօտուն նաւակի բեկորներ գտայ ծովեզրէն, և հիմայ ո՛ւր է այդ օրիորդը:

« Հոս բաղանեաց աւերակներուն մէջ:

« Որդեակ, իմ հիւզս հոսկէ քիչ հեռու կը գտնուի, եթէ կուզես հոն եկէք բնակեցէք, ըսաւ:

Ո՛չ, ըսի, կը խնդրեմ որ նաւակովդ զմեզ Արնաւուտ գիւղ տանիս, ես թի կը քաշեմ, հոն ազգականներէս մէկը կայ, ա՛նոր տունը քանի մը օր կանցընեմ, վերջը տեսնենք թէ ի՞նչ կըլլայ:

« Գնայ բեր օրիորդը և ես նաւակը պատրաստեմ, ըսաւ ինձմէ բաժնուելով:

« Վաղեցի Մաղթաղինէին քով, աւերելով թէ նաւակ մը գտայ, անմիջապէս մեզ ապաստան տուող աւերակներէն բաժնուեցանք առանց յետին հրաժարականնիս տալու: Մարդս ապերախտ է, և վայրկեանէ մը ծերունւոյն քով հասանք, նաւակը պատրաստ էր մտանք մէջը, և ես թիերը ձեռքս առի, ծերունին կերդ էր և մենք ճամբանիս կը շարունակէինք: Վերջապէս Արնաւուտ գիւղ հասանք, շատ ուղեցի որ ստակ տամ ծերունւոյն, բայց այն չընդունեց. ուստի մեր շնորհակալութիւնը մատուցանելէս վերջը բաժնուեցանք ծերունիէն: Մաղթաղինէի հետ ազգականիս տունը գացինք, ուր այն գիշեր պսակուեցանք:

« Տարի մը վերջը աղջիկ զաւակ մը ունեցայ . . . բայց ես, անիծեալ էի . . . և ահա . . . այս կինն է զոր կը տեսնաս, ըսաւ խեղդուկ ձայնով մը, ու չկրցաւ շարունակել իւր պատմութիւնը:

« Հայր իմ, գոչեց աղջիկը, երկու ձեռքով երեսները գոցելով:

« Քիչ մը ասեն լուռ կենալէ վերջը, այսպէս սկսաւ:

« Տարի մը շարունակ երջանկութեամբ անցուցինք, անհամեմատ էր ուրախութիւննիս, երբ թոթովելով մեր անունը սկսաւ արտասանել մեր զաւակը:

« Մաղթաղինէին քոյրը Մարիամ, մայրը մեռնելէ վերջը,



Քուժ-դարձի տունը ծախեր, և Մատթէոս անուն մէկուն հետ ամուսնացեր էր, և ըսելով մեր Սընաւուտ գիւղ բնակիլը, մայրենի ժառանգութիւնը իւր քրոջը չտալու համար դատ բացաւ ինծի դէմ. իսկ ես իրաւունքը վասակելուս՝ հարկադրեցաւ տատն և մէկ հազար զուրուշ տալ, ասով մեզ հետ թշնամացաւ. քիչ օր ետքը Սընաւուտ գիւղ դալով, մեզի մօտ տուն մը վարձեց։

«Գիշեր մը բարեկամներէս մէկէն նամակ մը ստացայ որ անհրաժեշտ ֆէնէր երթալ կը ստիպէր զիս. գիշերանց իջայ եղելութիւնը իմանալու համար։

«Նոյն գիշերը Մարիամ, ժամը չորսին ատենները, սկսեր է պոռալ կանչել, ըսելով թէ հասէք, գող կայ։ Ոստիկանութիւնը հոն հասնելով եղելութիւնը քննել սկսեր է. Մարիամ պնդեր է որ, ես էի գողը և թէ դաշոյնով զարնել ուզեր եմ, որ մօրը ժառանգութիւնը բոլորովին իմ կինս գրաւէ։ Անմիջապէս տունս կը կոխեն, և զիս հոն չը գտնելնուն կասկածները կաւելնան վրաս, մէկը, Մարիամէն կաշառուելով նոյն գիշերը եկաւ զիս ֆէնէր գտաւ. ես ալ այն ատեն նամակը խաւրող բարեկամիս կը սպասէի։ Սկսաւ զիս համոզել որ եթէ կնոջս և աղջկանս պատիւը պահել կուզեմ, քիչ մը ատեն Պօլսէն հեռանամ, զիս հաւաստելով թէ ինքը պիտի հոգայ կինս և զաւակս . . . :

«Շուարեցայ մնացի, բայց ես անմեղ եմ պօռացի։

«Գիտեմ, ըսաւ, մինչեւ որ անմեղութիւնդ յայտնես վեց ամիս բանտը կը կենաս, և անունդ ստրկի մը կըլլայ։

«Ո՛չ, չեմ զատուիր կնոջմէս, չեմ կրնար թողուլ զաւակս, ըսի . . . :

«Բայց պատիւը, ըսաւ, մտածէ որ ամեն մարդ մէկմէկու մատով պիտի ցուցնեն, ահա՛ գողին աղջիկը։

«Ս. յս վախուստը, յանցանքը աւելի վրաս կը հաստատէ։

«Ես այդ մտածեր եմ, ըսաւ, իմ գործերուս համար զքեզ երէկ թրապիղոն խաւրած պիտի ըլլամ։

«Ո՛հ, ըսի, անիծեալին ձեռքը համբուրելով, կեանքս կը



չնորհեա՛, ու բեմն կը հեռանամ, դու իմ կողմէս տար իմ համբարոյրներս զաւելիս, և ըսէ կնոջս որ ես անմեղ եմ. կը բողոքեմ առաջի երկնից այն հրէշին համար, և քեզ կը յանձնեմ կինս ու զաւակս, Աստուած օրհնէ զքեզ, ըսի, և անմիջապէս դուրս ելայ եղած տունէս. երկայն չընեմ, այն գիշերը բարեկամի մը նպաստիւք Պօլիսէն փախայ, և մինչեւ Սլաւանիա գացի, հոն դիպուածով մը մեծ բախտի տիրացայ. ու թը տարի կնոջմէս առանց նամակ ընդունելու Սլաւանիա կենալէս վերջը Պօլիս վերադարձայ:

«Ես այն ատեն հետաքրքրու թիւնս չը կրնայով զսպել, արդեօք անքաղաք սվարու թիւն մը կըլլայ ըսի հարցընել թէ ի՞նչ կերպով հարստութեան տէր եղաք:

«Պատմութիւն մ'է այդ, զոր վերջն անհրաժեշտ պիտի պատմեմ, ըսաւ: Պօլիս հասնելուս անմիջապէս զիս փախըստեան յորդորող բարեկամ կարծուած մարդուն գացի, այն է Մարտիրոս Տէրպէնա՝ որ զիս տեսնելուն մէկէն 'ի մէկ, — Ա՛հ բարեկամ, ըսաւ, այսչափ ժամանակ ո՞ւր մնացիր:

«Ամուսինս, աղջիկս, հարցուցի . . . — Տխուր պատասխան . . . մի հարցներ, ըսաւ. Քիչ մնաց որ ինքզինքս կորսնցընէի. բայց, ըսի, դու խոստացար որ զիրենք քու պաշտպանութեանդ ներքեւ պիտի առնէիր:

«Ա՛յո՛, պատասխանեց, փախուստէդ տարի մը ետքը, քու ամուսինդ մանչ զաւակ մ'ունեցաւ. կը մակարերես անշուշտ որ, իւր պաշտպանն ինքն ընտրեր էր:

«Բարկութենէս կրակ կտրեցայ, ալ կանգնելու կարողութիւն չունէի, ձեռքս յեղած աթուակին վրայ ուժաթափ ինկայ:

«Բայց աղջիկս, պօռացի, աղջիկս. հրեշտակ մ'էր այն, ո՛հ, ի՛նչ եղաւ . . . :

«Ո՛հ, կրկնեց, յիրուի հրեշտակ մ'էր. այն տարիքին մէջ, մօրը անառակութեանը չդիմանալով, գիշեր մ'անցայտ եղաւ. անկէ մինչեւ հիմա տարի մ'անցաւ, հետադուրս թիւններս բոլորն 'ի զուր ելան, և իւր վրայօք լուր մը չկրցի առնել:



« Սուանց իմ դիտնուլուս, այն անիծեալ մարդը զիս կը խարէ եղեր: Կնոջս դէմ ունեցած բարկութիւնս ատելութեան փոխուեցաւ: Ձրուցէ, ըսի, ո՞վ է կինս անպատուող անօրէնը, երկուքն ալ յանցաւոր, այնպէ՞ս չէ: »

« Գլխովը հաստատական նշան մ'ընելէ վերջը, ֆու հակառակորդդ, ըսաւ, նորին վսեմութեան իշխանին սեղանաւոր նշան Սրունդն է: »

« Եւ Սօֆեան պէյ խօսքն ինձ ուղղելով, « կը տեսնե՞ս որ այս պատմութեան մէջ դու ալ տեղ մ'ունիս, ըսաւ: »

« Ես շուարելով, իմ հայրս, ըսի, այդպիսի եղեռնագործութեան մը անկարելի է որ մասնակցի: »

« Գիտեմ, պատասխանեց. բայց երբ լսես իմ եղեռնագործութիւններս սոսկումէդ երակներուդ մէջ արիւնդ պիտի սառի. . . իմ աղջիկս, այս կինը, որ կը տեսնես, տեսայ և սիրահարեցայ: »

« Ո՛հ, հայր իմ լռէ, ըսաւ կինը արտասուելով: »

« Այո՛, ես անիծեալ եմ, կրկնեց, և լսելով որ իշխանին աղախիններէն է, նպատակիս հասնելու համար հաւատքս ուրացայ: Ֆու հայրդ սպաննելու ուխտ ըրեր էի, և թէ որ ուղէի, հարիւր անգամ կրնայի մեռցընել: Բայց Սստուած չուղեց որ անմեղ արիւն թափեմ: Այո՛ իմ աղջիկս, դողցեր և իշխանին նուիրեր էին և իմ կնոջս կարծեցեալ սիրելին՝ քու հայրդ ըրեր էին, որ ես զայն սպաննեմ, և ասով հօրդ տեղը անցնելով, իշխանին սեղանաւորն ըլլան: »

« Հիմա կը մտածեմ, երբ այն ատեն կնոջս կրկնակի սախամամբը զինքը տեսնելու որ դացի, ինձ ըսաւ. լսեցի որ հարստացեր ես քրոջս քանի մը հազար դուրու շովը. բայց ասի դողութեան մ'արդիւնքն է: »

« Խեղճը, ով դիտէ ի՞նչ ըսելով խարեր էին. մինչ ես ատելութենէս կուրցած էի. և նորէն շարունակելով խօսքը. « Գնու որ, ըսաւ, իմ կեանքս դառնացուցիր, դու որ զիս այսպէս թշուառացուցիր, դո՛ւ որ աղջիկս դողցար, անիծեալ ըլլաս: »

« Ես քու աղջիկդ չդողցայ, ըսի. բայց զաւակս քու ա-



Նառակու թեանցդ չը դ իմանալով թողուցեր դացեր է և հիմայ ես դայն չեմ կրնալ դ տնալ :

« Բայց ինք ամենեւին չստատասխանեց : Երկու տարի վերջը կինս մեռաւ թերեւս դիս անիծելով . . . »

« Օր մը Իշխանը որսի դացեր էր Հայտար-վաշայի մարդագետինը , կառքին մէջ տեսայ այս աղջիկը , նա ալ դիս կը սիրէր . մերձեցայ կառքին քով աւելի մօտէն դիտելու համար , մետաքսեայ թաշկինակ մը նետուեցաւ ինձ կառքէն , բարեբաղդարար խարշիկները շէին տեսեր , մէջը նամակ մը կար , այսպէս գրուած :

« - Թէ որ դիս կը սիրես , Իշխանէն քեզ կնու թեան խընդ-  
« րէ , չեմ յուսար որ խնդիրքդ մերժուի - »

« Մնմիջապէս նոյն իրիկունը նաւ մը մտայ , և յաջող հողմով , հետեւալ առաւօտ իղմիր հասեր էի . հարցուցի և իմացայ որ Իշխանը նոյն ժամուն որսի դացած էր , իսկոյն անտառներուն մէջ նետուեցայ , ժամ մը շարունակ քալելէ վերջը , հեղձամղձուկ ձայն մը լսեցի , որ օդնութիւն կը կանչէր . դէպ 'ի այն կողմը ուղղուելով տեսայ որ , պղտի ձորակի մը մէջ , կատղած յովաղի մը հետ սեւաւընչաց երիտասարդ մը կը տապալտրկէր , ատեն կորսնցունելու ժամանակ չէր , անմիջապէս վազեցի հասայ քովերնին :

« Կենդանուոյն աչքերը ինձ դարձան , դաշոյնս քաշելով իսկոյն սրտին մխեցի , երկաթը դամուեցաւ սրտին , կենդանին մռնչելով դետինը թաւալեցաւ . երիտասարդին քովը մօտեցայ , վախէն նուաղած էր , դիտեցի որ մեծ վնաս մը չէր կրրած , միայն պատուտած լաթերէն ներս քանի մը թեթեւ վերքեր առեր էր . բարեբաղդարար հոն մօտը դտնուած առուակէն , գտակիս մէջ ջուր լեցնելով բերի երեսը սրակեցի՝ որ աչքը բանալով ելաւ կայնեցաւ , ու քիչ մը ջուր տուի որ խմէ :

« Ո՛վ իմ աղատիչս , ըսաւ ինձ շնորհակալ ըլլալով . Ձիս շնորհապարտ մի թողուք , պատասխանեցի :

« Մ՛հ , ուրեմն դու ես այն քաջ մարդը . բայց հաւաստի եղիր որ վարձքդ պիտի ընդունիս : Եւ այս խօսքէն դիս վիրա-



ւորելը տեսնելով, Ռւբենն, ըսաւ, տուր ձեռքդ որ սեղմելու բարեբաղդութիւնն ունենամ. ես . . . Իշխանն եմ, եթէ դորժ մ'ունենաս որուն ես կրնամ նպաստել, կուզեմ որ ինձ մէ ուրիշի չդիմես . . . :

« Խնդումէս պիտի խենդենայի : Տէր իմ, ըսի, ես ալ ձեր վսեմութեան ներկայանալու համար, Պօլիսէն այս առաւօտ հոս հասայ :

« Զարմացմամբ երեսս նայեցաւ : Այն, ըսի, Նորին վսեմութեան խնդիրք մ'ունիմ :

« Զրուցէ, ըսաւ, ինչ որ ալ ըլլայ պիտի կատարեմ :

« Աղախիններուդ մէջ Արիֆէ անուն աղջիկ մը կայ, զոր եթէ օր մը ամուսնացընելու միտք ունենաք, կը խնդրեմ որ ինձ արուի :

« Հետս եկու, ըսաւ, և սկսաւ դէպ 'ի ձախ յառաջանալ. կէս ժամ վերջը, շատ մը քծնող պաշտօնականներ, չորս կողմերնիս շարուեցան, և իշխանը պատմեց թէ ինչպէս զինքն աղատեցի, ամենքն ալ խնդակից եղան, և ինձմէ շնորհակալ կըլլային, թէպէտեւ քաջ դիտէի որ դիս սրտանց կատեն :

« Հետեւեալ օրը հրաման ըլլալով, դարձի պատրաստութիւնները կատարուեցան. խնդումէս ինչ ընելիքս չէի գիտեր. ներսէս բնազդում մը կըսէր. Թշուառական, քու կորստեանդ կը դիմես, բայց ես կը սիրէի. վերջապէս իշխանին աղարակը դարձանք, և երկու օր վերջը ես այս աղջկան հետ ամուսնացայ . . . » :

Հոս պատմութիւնը չը կրցաւ յառաջ տանիլ, Սօֆեան պէյ կը դողար, իսկ իւր աղջիկը հեծկտանօք կուլար :

« Միհրդատ, ըսաւ, ես որ արժանի չեմ, այս իմ աղջիկս կոչելու, երբ որ ինձ պատմեց գիշեր մը՝ թէ իմ բարեկամ կարծած այն Մարտիրոս Տէրպէնտ դեւը զինքը գողնալով իշխանին նուիրեր է, և թէ կինս հաւաստեր են թէ ես յիրաւի գողութիւն ըրած եմ, և ութը տարի կնոջս գրած նամակներուն և ոչ մէկը ձեռքը հասեր է :

« վերջապէս շարաշար խարուեր ենք. հոն ինքզինքս կու-



բուսի . խենդի մը պէս դուրս նետուեցայ , ուր երթալիքս չը  
 գիտնալով Մարտիրոսը կը փնտռէի , բայց որու որ հարցուցի  
 մարդ չէր գիտեր անոր ինչ ըլլալը , վերջը լսեցի որ մեռեր է :

« Հիւանդանոց դացի զաւակս փնտռել , ըսին թէ չեն գիտ  
 աներ , աներեւոյթ եղեր էր , յուսահատ տեղս դարձայ , և մինչ  
 չեւ հիմայ մահուանս կը սպասէի , բայց դեռ ճակատագիրը  
 չէր լցուած , ալ հիմայ անհրաժեշտ պէտք է որ աղջիկս Եւ  
 բոսպա խրկեմ , ուստի ութը օրէն հոս նաւ մը պիտի գայ դին  
 քը առնելու , դու նաւուն հասած գիշերը խորհրդապահ մէկն  
 առնելով նաւակով մը պանդոկին առջին պիտի գտնուիս , ը  
 տա , և վաղուան համար ալ ապսպրեց որ Քինդ հաղար լուի  
 ոսկի , կաշի անտուկի մը մէջ տեղաւորընելով իրեն տանիմ  
 ճամբու ծախքի համար , և որ առաւելն է , մոռցայ զբուցելու  
 որ , կնոջը հետ պէտք է մեր Մարդարը ուղեկցի Եւրոպա , մինչ  
 չեւ որ աղջկան հայրը հոն հասնի . ուստի պէտք է թուղթ մը  
 գրել իմ դանձապետիս , որ վաղը Մարդարը Պօլիս իջնայ , և այս  
 պէտք եղածներն իրիկուան ժամը տասն ու մէկին անհրաժեշտ  
 ձեռքս հասնին » :

— Յիրաւի շատ հետաքրքրական դէպք մ'է այս , ըսաւ  
 Պ . ֆունջ :

— Ի՛նչպէս հետաքրքրական , չե՞ս ըսեր առասպելական ,  
 բայց սա չի հասկցայ որ ինչ պատճառաւ աղջիկը Եւրոպա կը  
 փախցընէ . . . :

— Անշուշտ պիտի խմանաս ետքը , զոր ինձ ալ կը պատմես ,  
 ըսաւ Պ . ֆունջ :

— Բան մը նկատեցիր :

— Ինչ բան , հարցուց Պ . ֆունջ :

— Թէ պատմութեան մէջ քանի մը անգամ Տէրպէնտի մը  
 անուն յիշուեցաւ :

— Ինչպէս չէ , նկատեցի . . . եղեռնագործը . . . :

— Քու դրացւոյդ սերունդէն է 'ի հարկէ և ես բնազդ ում  
 մը կը զգամ որ կըսէ . այն եղեռնագործութեանց մէջ ասոնք ալ  
 մաս մ'ունին :



— Աշխարհի չարերը դու չես կրնար դարձի բերել ինչո՞ւ դ պէտք . . . :

— Այո՛, բայց հետաքրքրու թիւնս յադ եցնելու համար վաղը քանի մը հարցումներ պիտի ընեմ :

— Զգուշացիր սիրելիս, դու հիմայ գրէ սա թուղթը ասը ինձ, որ վաղն առաւօտ Մարդարը խաւ բեմ :


— Անմիջապէս, ըսաւ, և պատին քով դրասեղանին առջին անցնելով, Սիրելի քեռայրս կը խոստովանիմ որ շատ սիրեցի Ատէլ օրիորդը, ըսաւ գրելու զբաղելով :

— Ահ, ըսել է որ Տ. Մաննիկ աղէկ դու շակեր է :

— Քիչ մը չափազանց : Այս միջոցին գիրը լմնացունելով Պարոն փունջին տուաւ :

— Ուրեմն գիշեր բարի, հանգիստ գիշեր կը մաղթեմ, թէ պէտեւ սիրահարներու համար անկարելի է :

— Ծաղրէ որչափ որ կուղես, բայց ես քունը փախցնող սէրը չպիտի սիրեմ : Այս ըսելէ վերջը Միհրդատ Պարոն փունջին ետեւէն դուռը դոցեց . . . կէս գիշերը ժամ մը անցեր էր, տանը ամեն ճրագները մարած էին . . . :



## ՀԱՅԿԵՐՈՅԹ

Հետեւեալ առաւօտը պայծառ արշալոյսով մը նոր սկսեր էր, Միհրդատ արթննալով բաց պատուհանին առաջը նստաւ : Դիմացը կը բարձրանար կանաչախիտ Ուշատէտէ լեռը, իւր վտորը կրելով շատ մը աւանդութիւններ որ այս միջոցին կէս մէջքէն վար եղեամի մէջ ըլլալով միայն գաղաթի մզկիթը կերեւէր :

Ծովուն վրայ մութ մը պատեր էր, զոր կարծես ջուրը շոգիանալով պիտի հասնի, հուսկ յետոյ առաւօտեան զեփիւռն սկսաւ . շողիացեալ մարախուղը իրարու ետեւէ վաղելով, փախչող պղտի ամողերու պէս կանհետանար :



Բնութիւնը մէկէն 'ի մէկ իւր դեղեցկութիւնը՝ զգեցաւ . եր-  
դեցիկ թռչնոց երամներ ոստախիտ ծառոց դարաւոր բոյներուն  
քովերը թռչտիլ սկսան , ծովուն վրայ պաղպաղիւն մը պտըտե-  
ցաւ , զոր հոսանքին ջուրը կապոյտոցընելով ճերմակ ոլուներ կը  
բռնար :

Օրը սկսեր էր : Միհրդատ խոր ապշութեան մէջ էր , երբ  
Գրիգորին ձայնը ղինքը սթափեց . « Է՛հ բարեկամ դու ալ կա-  
նանց հեռուեցար , որ սովորաբար երկու ժամէ հազիւ կրնան  
հագուիլ , կը պօռար փողոցէն :

— Գրիգոր , բարեկամ , կարծեմ դիշերուան կոշնակներէ  
դանդատ ունիս , ըսաւ Միհրդատ , դեռ ժամը տասն երկուքն է :

— Այո՛ , պատասխանեց Գրիգոր դուռը բաղխելով , ամե-  
նեւին քունս չտարաւ , և երկրորդ ու երրորդ անգամ դու-  
ռը բաղխեց . բայց կարծեմ յաւելցուց , ձեր սպասաւորները  
կէս օրէն յառաջ հիւր չեն ընդունիր :

— Մննա , կանչեց Միհրդատ , բայց արդէն Մննան դուռը  
բացեր էր . . . .

Գրիգոր , Միհրդատին սենեակը մտնելով զայն բարեւեց ու  
զըրոյցին վրայ գտնուած ծխախոտէն դլանիկ մը շինեց թիկ-  
նաթուռի մը վրայ բազմելով . « Տեսնենք ձեր սուրճն ալ ծխա-  
խոտին պէս աղնիւ տեսակէն է ըսաւ :

— Հիմայ սուրճը որ բերեն , քու դիտողութեանդ կը յանձ-  
նեմ :

— Կարծեմ , ըսաւ Գրիգոր , Պ . փունջ և Տ . փունջ տակա-  
ւին չեն արթնցած :

— Ահա ոտից ձայն կառնեմ , պատասխանեց Միհրդատ :

— Բարի լոյս Պարոն Գրիգոր , ըսաւ Պ . փունջ տիկին Ման-  
նիկի հետ ներս մտնելով . ժամադրութեան մէջ ունեցած ճրջ-  
դութիւննիդ զիս կը հիացնէ սիրելիս :

— Իրաւունք ունիք , ըսաւ Գրիգոր , բայց այս անիծեալ  
գիւղին տուները որ Նոյին տապանէն տարբերութիւն մը չու-  
նին ամեն սեռէ միջատներ զիս անհանգիստ ըրին այս գիշեր .  
հեռուաբար զձեզ , յաւելցուց , բայց մեք տունէն դեռ չեկան . . . .



— Գուռը կը բաղխեն անշուշտ անոնք են, ըսաւ Տ. փունջ՝ Պարոն Տէրպէնտ և Տ. Տէրպէնտ առաջէն, օրիորդ Ատէլն ալ ետեւնուն, ընդունելութեան սրահը մտեր էին. երբ այն միջոցին միւսներն, ալ Միհրդատին խուցէն ելնելով հօն եկան :

Այս անգամ Պ. Տէրպէնտ իրարու վրայ երկու հաստ մուշտակ հագած, և ձեռքը կարճ և քօքօ գլուխով ծխափոյր մը կը ծխէր, որուն իւրաքանչիւր շունչին մուխէ ամազ մը կը ժայթիւր բերնէն :

Իսկ տիկին Տէրպէնտ ամուսնոյն փափաքանայ համեմատ, սօնֆէրին ըսուած շրջադղեատը հագեր էր, և կերելի որ այն շրջադղեատին վրայ մեծ համակրութիւն մ'ունէր. վասն զի գլխուն վրայ ճիշդ ճակատին մէջ տեղը պրլանդէ վարդ մ'էր դրեր. և որովհետեւ ամենուն դիտողութիւնը իւր շրջադղեատին իջեցնելու համար միջոց մը պէտք էր, դարմանալի խելք մը բանեցուցեր էր. այսինքն՝ այն պրլանդ վարդին երկու կողմէն քող մըն էր ձգեր մինչեւ կէս մէջքը շուրջը բարակ ոսկի բառուած, որով աչք մը դիտելով 'ի հարկէ մինչեւ շրջադղեատը պիտի իջնար :

Ատէլ օրիորդը պարզ հագուած էր, բայց և այնպէս բաւական ժամանակ վատներ էր հագուելու համար :

Պարոն Տէրպէնտ Միհրդատին դառնալով, և հետաքրքիր աչօք զայն դիտելէ վերջը, « կարծեմ Պարոնը այսօր պիտի բարեհաճի Պօլիս չիջնալ և մեզ հետ դանուիլ :

— Այո՛, պատասխանեց Միհրդատ, Պօլիս չպիտի իջնամ. բայց դժբաղդարար պիտի հարկադրիմ իրիկուան կանուխ թողուլ զձեզ գործի մը պատճառաւ :

— Հիմա զիս նայեցէք, ըսաւ Պ. փունջ, ցորեկուան կերակուրի համար սպուխտ և աղանդերիէն տրիշ բան չպիտի առնեմ, ի՞նչ կըսէք՝ եթէ ուրիշ բան մը պէտք է առանց վարանելու զրուցեցէք :

— Ինձ համար, ըսաւ Գրիգոր, կերակրոյ վրայ մտածելու սովորութիւն չունիմ, իսկ զինուոյ գալով այդ խնդիրը տրիշ է :



— Մնառուկ մը դինի կը բաւէ կարծեմ. է՛ Գրիգոր, բարեկամ, ի՞նչ դիտողութիւն ունիս :

— Կըսեմ թէ, ճամբայ ելնելու համար սակսութիւն մը չը կայ. օ՛ն տըննն, յառաջ . . . Եւ թեւը Տ. փունջի տալով վար իջան :

Միհրդատ տեսնելով որ իւր քոյրը Գրիգորին թեւը մտած է, ինքն ալ Ստէլը իւր թեւը առաւ և ամենքն ալ ճամբայ ելան :

Սարը-եարէն Հիւնքեար-սուի երթալու ուղին ոլորապտոյտ ճամբայ մ'է. այն կողմի կառտո գեղին լեռները կանաչութեան հետ գեղեցիկ համեմատութիւն մը ունին. ճամբուն մէջ տեղը տաճկաց գերեզմանատեղի մը կայ, որուն մէջ տեղը մշաահեղ աղբիւր մ'ունի որ Օրթա-չէշմէ կըսուի, այն աղբիւրին գիւմացի պղտի՛ ճեմատեղին հին աւուրց նոճիներուն տերեւներէն դրեթէ տըւ չտեսնար. քիչ մը անդին ձորակի մը քովը Օրթա-չէշմէյի սրճանոցը շինուած է, որուն շուրջը ծառերուն սատերը պատած ըլլալով շէնքը հաստը բունով ծառի տը կը նմանի :

Անհամար սոխակներուն ձայները ձորոյն ջրին կարկաչին հետ խառնուելով կը սահէր կերթար. ձորոյն վերի կողմը գեղացի աղջիկներ երգելով լաթ կը լուանային, ձեռուընուն լաթը ջուրին թաթխելէ վերջը քարին զարնելով մերթ ընդ մերթ այս զարնուելու չափիւնները կը յաւելնար, և մերթ ընդ մերթ կընդհատէր. խնդալու ձայներ յաջորդելով և կերբեւի որ մէջերնին խեղկատակուհի մը կար որոնց գործը յառաջանալուն արդելք կըլլար :

Այս միջոցին մեր փոքրիկ խումբը, զոր ճամբան թողած էինք, Օրթա-չէշմէ հասաւ. անմիջապէս սրճանոցին սպասաւորները աթոռակներ շտկեցին որով ամեն մարդ մէկ մէկ հասառներով նստան, վասն զի ջուրերը գացողները հարկ է որ մէկ մը հոս հանդիպին :

Պարսն փունջ ազատուորին դառնալով, «Տիկնանց համար սարճ, և մեզի համար տը օղի բեր, ըսաւ :



— Կեցցե՛ս Պարոն փունջ , պօռաց Գրիգոր :

— Շատ կը սիրես օղին սիրելիս , բայց կը մնասէ՛ դիտնաս :

— Ի՞նչ ընեմ բարեկամ , քիչ մը զովանալ պէտք է :

Այս միջոցին սպասաւորը խմելիքները բերաւ :

— Տիկին Մաննիկ , քիչ մը օղի կուզե՞ս , ըսաւ Գրիգոր , հաւատա՛ որ ախուսյի ցաւին միակ դեղն է որն որ անցած օր զձեզ այնչափ կը նեղէր :

— Շատ աղէկ , բայց մինակ ե՞ս խմեմ , Տիկին Տէրպէնտի ալ տուէ՛ք որ միասին խմենք :

— Անշուշտ , ես ալ պիտի խմեմ :

Միհրդատ Պ. Տէրպէնտի քով երթալով , « կուզէ՛ք որ ձեր դաւաթը լեցնեմ , և քիչ մ'ալ օրիորդ Ատէլի , եթէ հրաման ունիք :

— Տուր , անոր ալ տուր թող խմէ :

— Ես ոգելից ըմպելիներ չեմ կրնար խմել , գլուխս կը դառնայ :

— Խմէ աղջիկս մնաս չունի , խմէ որ բացուիս :

Միհրդատ Ատէլի խմելու ատենը , « կեցի օրիորդ , ըսաւ , դաւաթնիս մէկ մէկու զարնենք ու հօրդ կենացը միատեղ խմենք :

Ատէլ կարմրելով դաւաթը Միհրդատին դաւաթին կարգուց « Պարոն Տէրպէնտ կենանցդ :

— Կեցէ՛ք հապա ե՞ս , պօռաց Գրիգոր :

— Կը տեսնեմ որ հոս տեղաց ինքզինքնիս գինովութեան զարկինք , ըսաւ Պ. փունջ , ինձ որ հարցնէք , օղին թողլով ճամբայ ելնենք :

— Պ. փունջ , պատասխանեց Գրիգոր , օղին դեռ բերաննիս է , իարայելացւոց Եգիպտոսէն ելնելուն նմանեցաւ . կենանցդ :

— Վերջը արեւուն կը մնամք Պ. Գրիգոր , ըսաւ Տ. Տէրպէնտ , յառաջ անցիր հա՛ նայիմ , քալեցէ՛ք :

Այս սրտողամին ամեն մարդ պէտք էր գլուխ ծաւել . ուստի նորէն ճամբայ ելան :

Միհրդատ կեցաւ քիչ մը որ ըմպելեաց սաւակը հատուցանէ



Ատէլն ալ պատճառանք կը փնտռէր հոն կենալու . նոյն միջոցին ուրիշ քանի մը տիկնայք՝ երկու երիտասարդ հետերնին հոն հասան . ասոնց հետ նաեւ նորատի աղջիկ մ'ալ կար , որ իւր հիանալի գեղեցկութեամբը նոյն իսկ գեղեցկութիւնը կը դերազանցէր . իւր տարիքը թէպէտ պզտիկ , բայց տասն և հինգ տարեկան կերեւէր :

Ատէլ օրիորդը զարմանօք կը դիտէր այս մատղաշ աղջկան գեղեցկութիւնը :

Միհրդատ ստակը վճարելէ վերջը Ատէլի մօտենալով , « Օրիորդ , ըսաւ , մտածու թեան մէջ կը տեսնեմ զձեզ , երթանք շապասն մեզ :

— Երթանք , թեւդ ինձ տուր , եւ Միհրդատին թեւը մրտնելով ճամբայ ելան :

Նոյն միջոցին նկարագրած մատղաշ աղջիկն ալ՝ աղբիւրին առջեւ տղմուտ ըլլալուն կը սպասէր որ միւս կիները այն տղմուտ տեղէն անցընող երիտասարդը դառնայ ու զինքն ալ անցնէ , Միհրդատ աղջկան գեղեցկութեանը հիացաւ :

Օրիորդ Ատէլ տեսնելով Միհրդատին ապշութիւնը , « Պարոն Միհրդատ , ըսաւ , ի՞նչպէս երեւցաւ ձեզ այս աղջիկը :

— Շիտակը , պատասխանեց , շատ գեղեցիկ է , և հագած զգեստներուն նայելով կերեւի որ աղքատ է :

— Կուզէի անոր գեղեցկութիւնը ունենալ իւր աղքատութեանը հետ . . . :

— Ի՞նչպէս Օրիորդ , ձեր գեղեցկութիւնը չ՞բաւեր՝ որ անոր աղքատութեանը հետ գեղեցկութիւնն ունենալ կը ցանկաս , միթէ աւելի գեղեցիկ ըլլալով , աւելի սրտե՞ր քեզ դրաւել կը փափաքիս :

— Ո՛հ , ըսաւ Ատէլ , ինձ մէկ սիրտ պէտք է , և ահա՛ զայն ստանալու համար աղքատութիւնը յանձն կառնում :

— Ուրեմն , ըսաւ Միհրդատ տխրութեամբ , այն աղջկան հաւնող սիրելի մը ունիս :

— Ո՛հ , այն դու հաւնեցար անոր , ըսաւ շառաղնելով :

— Ե՛ս օրիորդ , ե՛ս , ուրեմն երջանիկ եմ . . . :



— Ա՛հ Միհրդատ, միթէ կը սիրե՞ս զիս :

— Ա.յո՛ւ, կը սիրեմ, կեանքէս ալ աւելի կը սիրեմ, և միթէ իմ աչքերս չէի՞ն խոստովաներ իմ յուզեալ սրտիս սէրը, առաջին անգամ զքեզ տեսնողին անտարրեր կենալ անկարելի էր, և ահա ես ալ առաջին անգամ որ տեսայ սիրեցի՛ զքեզ Ատէլ, և պիտի սիրեմ մինչ ցմահ :

— Ա՛հ Միհրդատ, ես ալ առաջին անգամ զքեզ տեսնելու անհամեմատ էր սրտիս յուզմունքը, երէկ դիշեր սոսկալի մտատանջութեան մէջ էի, իսկ այսօր երջանիկ եմ, և այս երջանկութիւնը ինձ գերբնական կերեւի . . . :

— Ո՛վ անուշիկ բարեկամուհի, սրտիս տաղնապը զիս կարգիլէ սիրոյս անչափութիւնը քեզ բացատրել. մէկ խօսք մը, մէկ խօսք մը միայն զրուցէ, զրուցէ զիս պիտի սիրե՞ս միշտ, և զիս չպիտի մոռնաս :

— Ձքեզ մոռնալ ըսիր, զքեզ մոռնալ, ա՛հ, եթէ սիրոյ երջանկութիւնը չի վայելած մեռնիմ, վերջին շունչս քու անուշարտասանելով պիտի տամ, և իմ դամբանիս մէջէն հողիս զքեզ պիտի մտածէ :

— Ո՛հ, շնորհակալ եմ Ատէլ, շնորհակալ եմ, ըսաւ Միհրդատ և օրիորդին ձեռքը առնելով բոցաշունչ բերնին մօտեցուց և համբոյր մը դրոշմեց :

Նոյն միջոցին առաջիններուն քով հասեր էին :

— Ես կարծեցի թէ, ըսաւ Գրիգոր, դուք մենէ առաջ անցած էք :

— Օրիորդին պատմութիւն մը կը պատմէի, ըսաւ Միհրդատ :

Քէստանէ-սույի սրճանոցին առջեւ հասեր էին, Հիւնքեար-սույի երթալու համար ասկէ անցնելու էր. սրճանոցին առջեւը երկու հողի կեցեր էին, մէկը բարձրահասակ և մօրուաւոր, աչքերը դիշատիչ անասնոց նման պզտի ու փալփլուն, յոնքերը դուրս ցցուած, ճակատը կարճ և ներս քաշուած, քիթը նեղ և բարակ ու վար դարձած, Այս մարդուն աւելի տղեղ տեսքը երեսին գոյնէն էր, և այրեցած գօտոյն



ընտելիչներուն նման, կանաչ ձիթապտղոյ դոյն մը առած էր :

Իսկ երկրորդը, կարճահասակ և վտիտ, դեղնած երեսներէն երկու ոսկոր բարձրացեր էր, դունչը սուր, ակռաները խիստ ճերմակ և մազերը խիստ սեւ :

Ասի՛ Միհրդատը տեսնելուն իւր ընկերը դրդեց, և երկուքը մէկտեղ չարաշուկ նայուածք մը ձգեցին Միհրդատայ վրայ :

Իսկ Միհրդատայ ընտանեաց խումբը Հիւնքեար-սուխի ճամբան յառաջացան :

— Պըչաղ ճը, ըսաւ կարճահասակ մարդը առաջինին, ահա երէկ դիշեր մեր տիրոջը հետ տեսնուող երիտասարդը այս է :

— Այո՛, ճանչցայ դոյն, բայց կարծեմ . . . դիտե՛ս որ մեր Տէրը այս Տէրպէնտ վաճառականին հետ սոսկալի հաշիւ մ'ունի :

— Անշուշտ, պատասխանեց վտիտ մարդը զոր Իյնէ-կէօղ կը կոչուէր. վասն զի այս մարդը զարմանալի յատկութիւն մ'ունէր, որ դիշեր ատեն հարիւր քայլ հեռաւորութենէ, այր և կին կը զանազանէր. այո՛, ըսաւ, և աղէկ պիտի վճարէ . . . :

— Ուրեմն ի՞նչպէս կ'ըլլայ որ Միհրդատ ասոնց մէջ կը գանուի :

— Ահա ճիշդ ես ալ ատոր կը զարմանամ. ինձ մնալու որ ըլլայ, երթանք մեր տիրոջը խմացներնք այս դործը. է՛, ի՞նչ կրտես Պըչաղ ճը :

— Ի՞նչ պիտի ըսեմ, երթանք, ըսաւ . . . :

Եւ երկու պահակները հեռացան անկէ :

Հիւնքեար-սուխի, որ նոյն միջոցին շատ՝ բաղմութիւն կար, քանի մը տեղ կրակ վառուած էր, և ամբողջ դառներ շամբուրները անցած՝ անօթի մարդոց աղեացը հետ կը դառնար. կանայք մէկըմէկ կը դիտէին, տղայք զառ ՚ի վայրերուն վրայ կը ցատկատէին՝ մեծ անհանգստութիւն պատճառելով իրենց մօրերնուն, և սիրահար անձինք մէկըմէկու խորհրդաւոր նայուածքներ կուղղէին :

Տէրպէնտ եւ ուղեկիցները հոն հասնելով, «Սա ծառին հովանիին ներքեւ նստինք որ մեզի շատ յարմար է, ըսաւ Պ .



Ֆուենջ, Եւ ամենքն ալ որոշեալ տեղը աթոռակներու վրայ նստան :

Բազմութեան աչքը՝ այս նորեկներուն վրայ դարձաւ : « Քա Սննիկ, ըսաւ բաղմականներէն երիտասարդ աղջիկ մը իւր ընկերին, ահա քուկդ եկաւ :

— Ես զայն արդէն տեսայ, սլասասխանեց երկրորդը . բայց ինքը դեռ չնայեցաւ ինձ :

— Սննիկ, քեզ բան մը զրուցեմ, շատ բախտաւոր ես :

— Ո՛հ, Սօֆի, կարծածիդ չափ չեմ, դու չդիտես . . . :

— Տե՛ս Սննիկ, տե՛ս քեզ կը նայի . դիւթիչ աչքերդ իրեն դարձուր, քեզ տեսնեմ :

Յիրաւի այս միջոցին Գրիգոր Տէրպէնա Սննիկը կը դիտէր, վասն զի աղջկան տարիածուն Գրիգորն էր, և տեսնելով որ աղջիկն ալ իրեն կը նայի, աջ ձեռքով գլխի գտակը շտկեց, որ բարեւել մ'էր . . . :

Սննիկ ալ փոխադարձ շրջազգեստին կուրծքը նայեցաւ, և այս մունջ ողջունելու կերպը բաղմականներէն և ոչ մէկը նշմարեց :

Միհրդատ Ստէլ օրիորդին քովը նստեր գիմուոյ շիշ մը բանարու կղբաղէր . օրիորդ Ստէլ ցած ձայնով Միհրդատին ըսաւ . « Սյս դիշեր Զիֆթ - սույի երթա՞նք ճեմելու :

— Սյո՛, կը ջանամ համոզել կղբայրդ :

— Եւ սխտի համոզուի, քանզի սա դիմացի օրիորդը կը սիրէ և հոն տեսնելու յուսով մեզ կընկերանայ :

— Ինչպէ՞ս, ես լսեր եմ որ կղբայրդ օրիորդ Սննիկը կը սիրէ :

— Եւ ահա օրիորդ Սննիկն է դիմացի աղջիկը :

— Է՛հ, ճանչցայ զայն, հիմայ քիչ մը զբօսնում Պարոն կղբօրդ հետ :

— Ո՛հ, Միհրդատ, Միհրդատ, կաղաչեմ, սէրը մի՛ կատուկեր, վասն զի ես ալ գրեզ կը սիրեմ :

— Սղնիւ սիրտ, ըսաւ Միհրդատ ժպտալով մը Ստէլի երեւոր նայելով :



Տիկին Տէրպէնտ դինուոյ շիշը ձեռքը առնելով, « Նոր հարսերու պէս ի՞նչ լուռ կեցեր էք կը տնտնաք, մեղայ Պ. Միհրդատ, ձեզ կիյնայ հրամցընել, Գրիգոր ապրին չգան »

Գրիգոր իւր սիրահարական նշանացի խօսակցութենէն դադարելով, իրենց խմբեակին մօտեցաւ :

Պարոն ֆունջ դինուոյ բաժակը ձեռքը առնելով, « Մեր կրկին ընտանեաց կենացը ըսաւ, և դաւաթները մէկդմէկ զարնուիլ սկսան. այն միջոցին Միհրդատ Գրիգորին մօտենալով, « Ետքը միասին սա դիմացի մարդազեւտիներ մէկ երկու շրջան ընելու կարծեմ կը հաճիք »

— Ետ աղէկ, պատասխանեց Գրիգոր :

— Յուսամ թէ ասով ձեզ բարեկամութիւն մը ըրած կըլլամ, յաւելցուց Միհրդատ :

Գրիգոր ապշելով մը Միհրդատին երեսը նայեցաւ :

— Փուճ տեղը ինձմէ մի պահեր, օրիորդ Մենիկը սա դիմացինը չէ :

— Ուսկից դիտես :

— Ի՞նչ հարկ, ես դիտեմ, և փափաքանացդ կատարմանը բարեմայթու եմ :

— Ա՛հ, բարեկամ, ինքդինքիւ տէրը չեմ, ինչ պիտի ընեմ չեմ դիտեր :

— Տղայ մի ըլլար սիրելիս, դու ինձ յանձնէ այս դործը :

— Է՛հ, այս ձանձրացուցիչը դարձեալ մտիկ ընելու է, ըսաւ Գրիգոր :

Միհրդատ գլուխը դարձուց տեսնելու թէ ո՞վ է եկողը, Այս նորեկը քսան քսանըհինգ տարեկան երիտասարդ մ'էր, Եւրոպայի մէջ շատ ճամբորդութիւններ ըրած կը ձեւանար, և յիրաւի մինչեւ Բէշթա գացած և հոն խոշորացոյց պատիկերնելու մէջ գրեթէ բոլոր Եւրոպա տեսած էր, կամ դո՞նէ անոր վրայ ստոյգ գաղափար մը պիտի ունենար. ինչու որ Պօլսոյ սովորութիւնները իրեն ատելի էին, ինչպէս որ այս անգամ ալ իւր վարմունքէն բնաւօրութիւնը ցրցուց, զոր նստողներէն բաւական հեռուէն բարձր ձայնով և կոտրատելով, « Այս ի՞նչ



բարեբախտութիւն տիկին, ըսաւ, որ ձեզ հոս գտնելու եր-  
ջանկութիւնն ունեցայ, այն, դարձեալ բախտը այսօր երեսիս  
կը խնդայ, իրօք շատ շնորհակալ ըլլալու եմ բախտին, որ զիս  
հոս առաջնորդեց. բարի լոյս տիկին, օրիորդ, ընդունեցէք  
իմ յարգանքս. Պ. Տէրպէնտ, շնորհ ըրէք զիս ճանչցնելու այս  
աղնուուհի տիկնոջ, եւ գլխովը բարեւեց տիկին փունջը:

Միհրդատ զարմանօք կը սպասէր թէ արդեօք երբ պիտի  
վերջացնէ խօսքը: Տ. Տէրպէնտ Տ. փունջը ճանչցնելէ վերջը,  
« Հրամեցէք Պարոն Թադէոս, ըսաւ, աթոռ մը ցուցնելով:

— Մեծ շնորհակալութիւն, տիկին, անվերջ գոհունակու-  
թիւն, ըսաւ Թադէոս, և Պ. Տէրպէնտի դառնալով, խիստ լաւ  
ըրիք որ այսօր գրօսնելու ելաք. այն, ասի ճշմարտութիւն մ'է  
որ մարդս ատեն ատեն զուարճութեան պէտք ունի:

— Եւ մանաւանդ այս տեղին գեղեցկութեան տեսքը, պա-  
տասխանեց Տէրպէնտ, մարդուս սիրար կը բանայ:

— Ի՞նչ ըսել է, հրաշալեաց կարգը անցնելու տեղ մ'է հոս:

— Պարոն Միհրդատ, ըսաւ Գրիգոր, եթէ կը հաճիս թիչ  
մը պտրտինք:

— Շատ աղէկ, ըսաւ Միհրդատ, և թեւ թեւի մանելով,  
շուրջ կազմող կանանց առջեւ սկսան պտրտիլ:

— Զիս ձանձրացուց կեղծաւոր շատախօսը, եղբայր, ը-  
սաւ Գրիգոր, մարդու պէս երկու խօսք չգիտէ. բարեւ մը որ  
տամ, կը պարտաւորիմ երկայն ճառ մը մտիկ ընել, որ կը պա-  
րունակէ Եւրոպացուց սովորութիւնները և կենցաղավարու-  
թիւնները, խեղկատակ միմոտութիւններով:

— Հոգ չէ, բարեկամ, դու օրիորդ Մենիկի հետ գործիդ  
նայէ. ահա ինքն ալ քեզ կը դիտէ:

Նոյն միջոցին երկու երիտասարդները օրիորդ Մենիկին նըս-  
տած տեղին մօտ կը գտնուէին:

— Պարոն Գրիգոր, ըսաւ Միհրդատ բարձր ձայնով մը,  
այս գիշեր Զիֆթ-սույի գաղղիական երաժշտութիւն կայ, և  
շատ բազմութիւն պիտի ըլլայ. գիշերուան ճաշէն վերջը ձե-  
զի կուգամ և միասին կերթամք:



— Շատ աղէկ, պատասխանեց Գրիգոր, և օրիորդին նա-  
յեցաւ որ նշանով մը ինքն ալ գտնուելու հաւանութիւն տուաւ:

Մէկ մ'ալ ճաշը պատրաստ ըլլալը խմացուցին. առաջիններ-  
բուն քովը որ հասան, արդէն սեղան նստեր էին. Ատէլ օրի-  
որդը իւր քովը տեղ մը տուաւ Միհրդատին:

— Եւրոպացուոց մէջ սովորութիւն է աղանդերին ճաշէն ա-  
ռաջ կուտեն, ըսաւ Թադէոս, չորցած ապուխտի մեծկակ կը-  
տոր մը բերանը ներտելով, գինին շաթօ-ֆլէօս է կարծեմ, յա-  
ւելցուց բաժակը բերնին մէջ պարպելէ վերջը:

— Պարոն Միհրդատ, ինչո՞ւ չես ուտեր, ըսաւ Գրիգոր:

— Եւրոպացուոց մէջ մեծ ամօթ է բարեկամի մը սեղանը չը  
պատուելը. այնպիսիները տխմար կը սեպուին, ըսաւ Թադէոս  
խորոված մսի կտոր մը առջին քաշելով:

— Պարոն, ձեր կոպտութեամբը Եւրոպա պարտած ատեն  
նիդ, հաւաստի եմ որ Հայ անունը նախնացած էք, պա-  
տասխանեց Միհրդատ:

— Խեղճը չը գիտեր քաղաքավարութեան ինչ ըլլալը, մըր-  
մընչեց Թադէոս ուսերը թոթուելով. . . .

— Գիտէ որ պատուոյս կը դաշխ, Պարոն:

— Է՛ հէ՛, իրան է որ աղոց հեռ կատակ չըլլար:

Այն կէտին Միհրդատին բարկութիւնը նկարագրել անկա-  
րելի էր:

— Զուարճութեան մէջ բարեկամք, ինչո՞ւ զիրար թշնա-  
մանէք, ըսաւ Պ. Տէրպէնտ:

Միհրդատ առանց պատասխանելու, սեղանէն ելնելով մէկ  
կողմ քաշուեցաւ. նոյնպէս Գրիգոր ալ ելաւ Միհրդատին քով  
գնաց:

— Ես իրաւունք ունէի սա անիծեալ մարդէն դարչելուս,  
ըսաւ Գրիգոր:

— Զղուելի կոպիտ մ'է, պատասխանեց Միհրդատ:

Այս միջոցին միւսներն ալ սեղանէն ելան. Օրիորդ Ատէլ  
Միհրդատին մօտենալով, « Այդ ծաղրածուն խօսքերը բանի  
տեղ կը դնես, ըսաւ:



- Իրաւունք ունիս օրիորդ, պէտք չէր պատասխանել :
- Թեւդ ինձ տուր քիչ մը սա ծառաստանին մէջ ճեմենք, միասին կուգանս, եղբայր :
- Չէ՛, դուք գացէք, ըսաւ Գրիգոր, և Միհրդատ թեւ Ստէլի տալով սկսան դէպ ՚ի ծառաստան յառաջանալ :
- Ո՛հ, որչափ ինձ վախ պատճառեցիր գիտե՛ս Միհրդատ, բայց ինչ որ է, անիծեալը զքեզ քիչ մը բարկացուց : Ո՞րչափ ատեն Սարը-եար պիտի կենաս :
- Ամիտի մը չափ :
- Ուրեմն ամիսէ մը վերջը ալ չպիտի տեսնեմ :
- Քիչ մը ատեն, ետքը կուգամ դարձեալ, ամիս մը կը կենամ անկից վերջն ալ Բերա կը տեսնուինք :
- Ո՛հ ի՞նչալէդ վերջը շատ մ'ուշանար, ամեն անգամ միտքդ բեր որ, հոս զքեզ մտածող մ'ունիս, և անոր անհանգստութիւն պատճառելու անգթութենէն ետ կեցիր սիրելիս :
- Ո՛հ, կը կարծե՞ս որ առանց քու տեսութեանդ ես տեղ մը կարենամ կենալ, թէ որ դործս ներէ, ամեն ատեն հոս պիտի ըլլամ, հոս քու քովդ, վասն զի կը զգամ որ քենէ հեռու անկարելի է ինձ կենդանի օդ շնչել :
- Սիրո՞ւն բարեկամ :
- Այդչափ միայն, է՛հ հաւատա՛ որ քու սրտիդ սակաւագիւտ մէկ ընծան, իմ սրտիս մէջ պիտի պահեմ, իբր առանդ մեր սիրոյն :
- Միհրդատ, մինչեւ առջի օրը աշխարհ չկար ինձ համար, վասն զի չէի սիրած, բայց այսօր կը զգամ որ աշխարհի մէջ եմ և առաջին սէրս քեզ տուի, ո՛հ եթէ քու վրադ ունեցած սիրոյս չափը գիտնայիր, ան ատենը ինձ պիտի ըսէիր, Սիրուիլը արդարեւ անոյշ բան է :
- Եւ միթէ իմ քու վրայ ունեցած սէրս սահման ունի՞ :
- Ո՛հ հաւաստի եմ որ կը սիրես զիս :
- Բայց ես զքեզ չպիտի մոռնամ երբէք, և այս ուխտիս երկինք թող վկայ ըլլայ :



— Եւ մի՛թէ ես զքեզ պիտի մոռնամ :

— Այն օրը որ խոստմանս դրժեմ, Ատէ՛լ, անիծեալ ըլլամ առաջի երկնից :

— Իրենց երդմունքը մարդոց անլսելի ըլլալու համար երկինք կը խաւրեն, բայց ես երդումները երկինք չդացած ճամբան լսեցի, ըսաւ Իյնէ-կէօզ, որ ծառի մը ետեւ պահուած Միհրդատը կը դիտէր :

— Ա՛հ մոռցայ որ գործ ունիմ, ըսաւ Միհրդատ, սախտեալ եմ բաժնուիլ ձեռնէ :

— Եթէ գործ ունիս՝ ինձ մեր ընտանեացը դարձուր և զիշերը մի՛ մոռնար :

Միհրդատն օրիորդը ընտանեացը յանձնեց՝ և մնաք բարով ըսելով, Պէօյխ-ք-աէրէի ճամբան բռնեց :

## ՃԱՆՉՈՒՄԻՒԼ

Քիրէճ – պուրնույի բարձրաբերձ կազամախները իրենց երկայնքը կը չափէին ծովուն մէջ. մեծարարձ կաղնիներ բոյսերնին գարադոսը պատած մերթ ընդ մերթ տերեւներնուն սուսախունովը ամայի լռութիւն մը կընդհատէին. կենդանի աւարած մը չէր տեսնուեր այս հռչակաւոր գիրք ունեցող տեղը, և թռչուններն իսկ իրենց երգերը դադրեցուցեր էին :

Սրճանոցին դուռը բաց էր, բայց մէջը մարդ չկար. Պապա կարապետ անունով ծերունի մը վարձած էր այս խանութը, որ գինեմոլ մէկն էր. իւր սրճարանին մէջ մառան մ'ունէր, որ խանութին տէրը գինի դրած էր հինցնելու համար. բայց Պապա կարապետ իւր ստամոքսին մէջ կը հինցընէր զայն, առանց տիրոջը գիտութեան :

Այս մարդը իւր ընթացքին համար աղէկ վարպետութիւն



մը բռնած էր . օրինակի համար մէկը ըսէր թէ Պապա կարապետ ինչո՞ւ կը գողնաս , միշտ կը պատասխանէր թէ , « Որդեակ , ուտելու և խմելու ժամանակ ինչ որ քեզ պէտք է , ունեցող մէկէ մը առնելը գողութիւն չէ . բայց կը հետեւցնէր , միտքդ դիր որ ունեցած ատենդ պարտքդ վճարես , ինչպէս որ ես թէ որ ունենամ Տէլի Էօմէրին գինիները կը հատուցանեմ » , կըսէր :

Մէկ մ'ալ երկու ձիաւոր կեցան խանութին առջեւ , առնք Սօֆեան պէյն ու Միհրդատն էին :

— Է՛ մարդ չկայ հող , կանչեց Սօֆեան պէյ . բայց ձայն տուող չկար :

— Ս.յս ծերը դարձեալ մառանը իջած է , ըսաւ Սօֆեան պէյ , դու նստէ դուրսը որ ես կանչեմ . և խանութը մտաւ , ու մառանին կափարիչ դուռը վեր առնելով , « Պապա կարապետ , Պապա կարապետ , կանչեց :

Հասաւ ձայն մ'ելաւ նկուղէն :

— Պապա կարապետ . . .

— Է՛ տղ է ան , թէ որ կրակ կուզես հան անկիւնը վառարանին մէջ կրնաս գտնալ , պատասխանեց ձայնը :

— Վեր եկու կրակ շեմ ուղեր :

Սկսաւ ծանր կալուածքէ մը սանդուխը տատանիլ , և վայրկեան մը ետքը ճերմակ մազերով թուխ դէմք մը երեւցաւ սանդուխին գլուխը . « Անիծեալ ըլլան այս անկուտի յաճախորդները , վայրկեան մը հանգստութիւն չեն տար , ըսաւ Պապա կարապետ , առանց Սօֆեան պէյին երեսը նայելու :

— Պապա կարապետ , այսօր դարձեալ ամեն աւուր երգածդ կերդես :

— Ո՛հ , տէր իմ , ներեցէք չկրցի ճանաչել , արդեօք շատ սպասցուցի՞ զձեզ . . .

— Ո՛չ , ես ալ հիմայ եկայ . մեզի շիշ մը գինի բեր՝ քու աղնիւ գինիներէդ :

— Գլխուս վրայ տէր իմ ,

— Իյնէ-կէօզ եկա՞ն :



— Առաւօտուն Եէնի-ղիւղի ձկնորսներուն հետ կատարեալ պատերազմ մը ընելէ վերջը չեմ գիտեր ուր գնաց :

Խանութին մէկ անկիւնը իրարու վրայ դիզուած ուռկաններուն ետեւէն Իյնէ-կէօղ 'ի տես ելաւ . և ծերունւոյն ուսին զարնելով « Հնավաճառ սինլքոր զքեզ , ըսաւ , ժամէ մը աւելի է որ մառանը խմելու դբաղած էիր՝ թէ որ հոս չըլլայի , տակաւ մը շաքարօղիդ պիտի գողնար սրիկայ Պետիկը :

— Ա՛հ , այն անդգամին առաջին գողութիւնը չէ :

— Ձրուցէ տեսնեմ Իյնէ-կէօղ , ի՞նչ գիտեցիր , հարցուց Սօֆեան պէյ :

— Տէր իմ , Տէրպէնտի աղջիկը , հողւոյն չափ կը սիրէ և իրարմէ չզատուելու համար երկնից առջեւ երգմունք ըրին Հիւնքեար-սուկի ծառաստանին մէջ , հետեւաբար իմ առջիւ :

— Տէրպէնտ ի՞նչպէս կը վարուէր Միհրդատին հետ :

— Գիշերը ժամը ու թնին ճրագ տեսայ խուցերնին ուստի քովի նաւակայանին վրայէն մինչեւ պատուհանը ելայ , բարեբաղդաբար կէս բայ ձգեր էին , ու սա խօսքերը լսեցի . « Տիկին , ինձ որ հարցնես , պէտք է ջանանք որ Ստէլին սիրահարի Միհրդատ . այս միջոցով միայն կարելի կըլլայ զայն ստանալ . Ստէլ մէկ մը զայն հրապուրելէ վերջը մենք հաւանութիւն չենք տար որ ամուսնանան 'ի յարկէ յուսահատութեան մէջ պիտի իյնայ և մէկ մ'որ յուսահատի ամեն բան կարելի է » : Սհա այսչափը միայն լսեցի տէր իմ :

— Ա՛հ , դժոխային խորհուրդ , և կըսես թէ արդէն սիրահարեր է Միհրդատ :

— Իրարմէ չբաժնուելու համար , իմ առջիւ երգում ըրին :

— Շատ աղէկ , հիմայ պէտք է որ Միհրդատ զքեզ ճանչնայ , աղէկ հսկէ՛ անոր վրայ :

— Գլխուս վրայ տէր իմ :

— Մտցայ հարցնելու , ինչո՞ւ կռուեցար առտուն և ինչո՞ւ ինձի չի դրուցեցիր :

— Աչինչ բան էր անոր համար չի դրուցեցի ձեր մեծութեանը . առաւօտուն հոս ծախուն գիմացը կը ծխէի , երբ աղ-



քոտ ձկնորս մ'եկաւ նաւամատոյցին բայր ուռկան նետեյ , նաւակին մէջը տասն տասներկու տարեկան մատղաշ աղջիկ մ'ալ կար որ ետքէն հասկըցայ ձկնորսին աղջիկը ըլլալը , քիչ մը ետքը հինգ նաւակի չափ Եէնի-գիւղի ձկնորսներ եկան , և կը ստիպէին առջի խեղճը որ ուռկանը վերցընէ անկից , կաղաչէր կը պաղատէր , բայց զինքը մտիկ ընող չկար , ( պէտք է գիտնալ որ նաւամատոյցին վրայ կը կռուէին ) և սկսան բիրտ կատակներով խեղճ աղջիկը թշնամանել . ինքզինքս չկրցայ զսպել , մօտեցայ ասոնց , և ետ քաշուեցէք գոչեցի : « Ո՛հ Աստուծոյ համար զիս ազատէ » պօռայ աղջիկը վրաս վաղերով . մէջերնին կապկի գէմքով մէկը , « կերդնում որ , ըսաւ , այս մարդը կատարեալ խեղճ մ'է . ամենքն ալ սկսան բարձրաձայն ծիծաղիլ :

Կատաղութիւնս վերջին աստիճանի հասաւ , նաւամատոյցին վրայ նաւակի թի մը թողուցեր էին , յափշտակեցի զայն և ամենքն ալ ծովը թափեցի խեղճ մըջիւններու պէս : Ահա երկու թիւեր , տէր իմ , թէ որ կուզես գլխուս վրայ կերդնում որ զինով չէի :

— Գինով ալ ըլլայիր , այս անգամ ներելի էր , քանզի առաքինութիւն մ'է կատարածդ . բայց ինչ որ է , հիսկայ դու անցայտ եղիր ասկէ :

— Ուրիշ հրաման մ'ունիս , տէր իմ :

— Ոչ . գնայ և իրիկուան դիս տես :

— Շատ աղէկ , տէր իմ , ըսաւ , ու դարձեալ ուռկաններուն ետին մտաւ :

Սօֆեան պէյ ձեռքը ճակատին տարաւ , և ծանր քալումով Միհրդատին քով գնաց նստաւ :

— Ձեզ քիչ մը սպասցուցի , այնպէս չէ՞ , Պ . Միհրդատ :

— Ոչ , տէր իմ , արդէն միտքս զբաղած էր , ժամանակին անցնիլն անգամ չեմ գիտեր :

— Գրեթէ ամեն սիրահար այդպէս է :

— Ի՞նչպէս . . . .

— Գիտես Միհրդատ , որ իմ պատահարս պատմած ատենս



ինչպէս հարստանալս ալ քեզ սրատմել խոստացեր էի . կուղեմ խոստմունքս կատարել , և պէտք է սյսօր դիտնաս ամեն պարագայովը . հիմայ որ մենք երկուքս ենք , երեսս նայէ և զըրուցէ . զիս չե՞ս ճանչնար . . . :

Միհրդատ զարմանօք Սօֆեան պէյին նայիլ սկսաւ .

— Է՛ , զըրուցէ տեսնեմ , զիս ամենեւին ուրիշ անդամ տեսած չե՞ս :

— Կը խոստովանիմ , տէր իմ , որ ձեզ ուրիշ տեղ մը տեսնելս ամենեւին չեմ յիշեր :

— Ուրեմն գիտցիր որ դու իմ կեանքս ազատեցիր ասկէ վեց ամիս յառաջ :

— Ե՞ս . . . յիշողութիւննիդ ամիտիեցէք տէր իմ , կարելի է զիս ուրիշի նմանցուցիք :

— Ոչ , իմս չսխալիր , քանզի շնորհակալութեան դրոշմն է որ սրտիս մէջ կը կրեմ . բայց դու իրաւունք ունիս զիս ճանչելու , վասն զի ոչ այս հազուատով էի և ոչ այս դէմքով . . . ասկէց վեց ամիս յառաջ Գատըլը որսի գացեր էիր , այնպէս չէ՞ :

— Այո , կը յիշեմ . . . :

— Եւ հոն տեղ Պեշ-Բե՛՛՛՛՛՛ ըսուած տեղը որսի պտրտած ատենդ վեց հողի մէկ հողւոյ դէմ կը կռուէին :

— Այո՛ , այո՛ , կը յիշեմ այն քաջ պատանին , որ թէպէտեւ երեք տեղէ ծանր վիրաւորուեցաւ , բայց և այնպէս քաջութեամբ դէմ կը դնէր վեց զինեալ աւազակներու :

— Այո՛ , բայց կը նուազէր երբ դու հասար և կեանքդ վրտանքի մէջ դնելով զայն ազատեցիր :

— Ուրեմն դո՞ք էիք այն երիտասարդը :

— Այո՛ , մաղերս , պեխերս և ինզուրներս ներկեցի երիտասարդ երեւնալու համար . . . մտիկ ըրէ . ընկերութեան մը անդամ եմ , որ եթէ ոստիկանութիւնը խմանայ՝ մահս անշուշտ է . ուստի հարստութիւնս ապահովել մտածեցի և նոյնին նրկատմամբ տանս մէջ գրութիւն մը չպահելու համար հարկադրեցայ տեղ մը թաղել , և եկայ Գատըլըյի մօտ Պեշ-Բե՛՛՛՛՛ ըսուած լեռան հիւսիսակողման ստորտը եղած քարայրը աղէկ



մը աչքէ անցնել որ իմ գանձս ապահով կրնամ հոն պահել, և այն վեց հոգին որ տեսար իմ մարդիկներէս էին. ասոնք գուշակելով որ հարստութիւնս տեղ մը պիտի պահեմ, ամեն ատեն քայլերուս կը հետեւին եղեր, և իմ Պէշ-թէրէլէր երթալս տեսնելով, յուսացեր էին որ հարստութիւնս հոն պահած ըլլամ՝ զիս գարաներ էին. բայց քու առիւծի մը պէս հասնիլդ անօրէնները սոսկայնելով փախստեան ստիպեց. ո՛վ քաջդ պատանի եթէ դու չըլլայիր ևս մեռած էի. ուստի այսօր պէտք է որ իմ սրտիս երախտիքը յայտնեմ քեզ պատմելով իմ ինչպէս հարստանալս :

« Սակէ երեսուն և հինգ տարի առաջ Պէնէրէն փախստեան դիշերս, զիս կառքի մը մէջ դրին, որուն անիւներուն ձայնէն մարդու գլուխ կը ճաթէր, ևս այն կառքով մինչեւ Կտիրնէ գացի, հոն ամիսի մը չափ կեցայ հացագործի մը քով. ամեն օր կինս և զաւակս աչքիս առջեւն էր... մշտայորդ արտասուքներով աչքերս միշտ թայ էին, ինձ այնպէս կերելէր որ, ամեն մարդ վրաս կը կասկածի. ուստի տեսնելով որ հոն կենալը անկարելի է, հացագործին քովէն ելայ և նաւակով Էնէզ և անկէ Տրակոտինա գետաբերնէն նաւ մը մտնելով Սէլանիկ գացի. հոն խլան-պարէ անունով մէկու մը հետ բարեկամացայ. այս մարդը ֆոշինա գիւղէն էր, ինձ պատմեց թէ մէկ քոյր մ'ունէր, և թէ իրենց ապրուստը ճարելու համար, ստիպուեր է ֆոշինայէն ելնել :

« Միատեղ սկսանք գործ մը վնասել, բայց 'ի դուր աշխատեցանք, քովս հաղար զուրուշի չափ ստակ կար, մտած եցինք որ, այս ստակով մանր մունր վաճառքներ առնենք ու գիւղերը տանելով ծախենք. ուստի միատեղ շուկայ գացինք և գիւղերը ինչ վաճառք որ կանոյնէր առինք ու ճամբայ ելանք :

« Բալանկա, Իշտիպ, Բուճան օլա, Գէօսթէնաիլ, Թուսնիլցա, և ուրիշ շատ գիւղեր ու գիւղաքաղաքներ ստրտելով, բաւական ստակ շահեցանք, ու նորէն վաճառք առնելու համար Խսկիւս գացինք. գործերնիս լնացնելէ յետոյ, ճամբայ ելանք Ֆիլիպէ երթալու համար :



« Մեծ էր խլանի ուրախութիւնը, վասն զի ֆոշինա պիտի հանդիպէինք, տարի մը կար որ իւր քոյրը տեսած չէր. վերջապէս մութը կոխեր էր երբ հասանք ֆոշինա, և պզտի հիւղէի մը դուռը բաղխեցինք. գեղեցիկ օրիորդ մը դուռը բացաւ, և մէկէն 'ի մէկ ուրախութեան ճիչ մը արձակելով խլանին ճիտը նետուեցաւ:

« Քիչ մը ատեն առանց խօսելու միայն հեծկլտալու ձայներ կը լսուէր, վերջը ներս խուցը մտանք, և իրարու հետ խօսիլ սկսան. ես անոնց խօսածը չէի հասկնար, ուստի անկիւն մը քաշուելով նստայ:

« խլան ինձ դառնալով, — Բարեկամներէ, բոլորովին զձեզ մոռցայ, ըսաւ, և քրոջը զիս ցուցնելով, Յունարէն լեզուաւ, Էլիուլ, քոյր իմ այս պարոնը մեր բարերարն է, մեր բոլոր երջանկութիւնը ասոր պարտաւոր եմք, ըսաւ:

— Ձիս շնորհապարտ կը թողուս խլան, եթէ դու չըլլայիր դեռ ևս... ո՞ր խտէ ես ի՞նչ պիտի ըլլայի:

— Պարոնը չուզեր որ շնորհակալ ըլլանք, շատ աղէկ, ըսաւ քոյրը, բայց կը յուսամ որ ծառայութիւնն իս չմերժեր. Ս. յս ըսելով դուրս ելաւ:

« Ս. յս աղջիկը թէպէտև զիւղացի, բայց իւր գեղեցկութեան և աղնուութեան նմանը քաղաքի մէջ ալ տեսած չէի. պզտի խցկի մը մէջ նստած էինք որուն կարասիները թէպէտև և հին, բայց մաքրութիւնը կը փայլէր վրանին, մէջ տեղը պզտի աթուակ մը ոչխարի մարմի մը վրայ դրուած էր, աջ կողմը պատին մէջ տեղաւորուած ծխնելոյզով վառարան մը կար, որ թէ կերակուր եփելու, և թէ խուցը աաքցնելու կը ծառայէր:

« Առատաղին մօտ պատին վրայ, խորշի մը մէջ, Ս. Գեորգայ պատկերը դրուած էր, առաջը մշտավառ կանթեղ մը կախուած. նկարիչը անվահեր ոտըր մը զծաղրել ջանացեր էր, քանզի այս Ս. Գեորգը մեծաւ քաջութեամբ տակալի վճապի մը հետ կը կռուէր:

« Բարդ խցելու գործիք մը պատին վրայ կախուած էր, և



քանի մ'ալ գեղջկական ձեռագործներ այս խուցին զարդերն էին . օրինակի համար ցորենի հասկէ խաղալիք մը առատապէս կախուած , մայիս ամսոյ դարչամեալ ծաղկեայ սլասկ մը և ուրիշ նոյնօրինակ գիւղային զարդեր այս խցկին կարասին կը կազմէին :

« Նոյն միջոցին Ղիուլներս եկաւ , ձեռքը պնակի մը մէջ խաչած հաւկիթներ և սեղանի սպասների բռնած . — Եղբայր , առտնք ձեռքէս ա՛ռ և սեղանը պատրաստէ , ըսաւ զանտնք տակէ վերջը դարձեալ դուրս ելնելով :

— Ղիուլ , ըսաւ իսկան , մեզ աւելորդ բան պէտք չէ եկն՝ որ նստէ որ խօսինք :

— Եղբայր , մտքէդ կեղնէ՞ որ հիւր ունիմք :

— Իմ բարեկամս քիչով կը բաւականանայ :

— Օրիորդ Ղիուլ , կաղաչեմ ինձ համար անհանգիստ մի ըլլաք ըսի :

« Վերջապէս սեղանը նստանք . հաւու խորոված , սեր , կարագ պանիր , առատօրէն սեղանին վրայ կը կենար :

« Իսկան սկսաւ իմ պատահարներս պատմել , աղջիկը դժկամակութեամբ լսեց ամուսնացած ըլլալս , և քիչ մը մտածելէ վերջը — կը տեսնեմ որ պարոն , ըսաւ , չարաչար խաբուեր էք :

— Ի՞նչպէս Օրիորդ , պատասխանեցի , ի՞նչ բանի մէջ խաբուած կը կարծէք , ես ալ դիտեմ որ դիս սուտ ամբաստանեցին , բայց Պօլիս իրողութիւնը մինչեւ որ հասկցուի ասանկ պարագաներու մէջ , մարդ պէտք է տարի մը բանտը կենայ :

— Դու չես դիտեր սիրելի քոյրս , որ բանան ի՞նչ ըսել է , յարեց իսկան սեղանէն ելնելով . թէպէտ հոգ չէ բանտարկուիլը , բայց մարդուս պատիւը ստակի մը կըլլայ : Ե՛ր Պարոն վասիլ , ըսաւ ինձ դառնալով , թէ որ Ծիլիպէէն դառնալու ըլլամք , ալ բնակութիւնդ հոս պիտի հաստատես . այնպէս չէ , չեմ թողուր որ ուրիշ տուն մը նստիս . այս անակը կը ծախեմ , և ուրիշ մեծ մը կը վարձենք . կինդ ու զաւակդ հոս բերել կուտաս , և աշխարհս աշխարհի մարդոց թողլով մենք հոս ազատ կեանք մը կը վարենք :



— Շիտակը կուզե՞ս, իվան, իմ ալ միտքս այդ է, բայց մէկ մը ճամբորդութիւննիս լրացնենք ըսի:

— Ո՛հ որչափ երջանիկ պիտի ըլլամ, ըսաւ լիուլ, ձեր ամուսինը իբրեւ մայր և քոյր պիտի ընդունիմ:

— Շնորհակալ եմ օրիորդ, ափ՝ ձեր աղնութիւնը կը ցուցնէ ըսի:

— լիուլ, մեր բարեկամը հեռու ճամբայէ կուդայ, նմանապէս ես, անկողինը պատրաստ է:

— Քովի սենեակը պարոնին համար անկողին պատրաստ է, բայց դու սիրելի եղբայրս հոս պիտի պառկիս:

— Ուրեմն կուզէ՞ք որ հանգստանաք, ըսաւ իվան ինձ դատնալով: Եւ յիրաւի իմ ալ աչքերս կը գոցուէին. իվան իմ պատասխան չի տալս տեսնելով, « լիուլ ճրագ բռնէ պարոնին, ըսաւ:

« լիուլ ճրագը առնելով, զիս նստած խցիկնուս քովի խուցը տարաւ, և ճրագը հոն ձգելէ վերջը ինձ բարի դիչեր մաղթելով դուրս ելաւ:

« Երբ մինակ մնացի խուցը դիտելու առեն չունեցայ, մտանդի քունը աչքիս վրայ ծանրացեր էր. ուստի անմիջապէս անկողին մտայ, և այս սուաջին անգամ էր որ խաղաղութեամբ ննջեցի, կինս և զաւակս երազելով:

## ԻՇՏԻՊԻ ԳՈՂԵՐԸ

« Արշալոյսը դեռ նոր ծագեր էր երբ արթնցայ, աչքս չորս կողմը շրջեցի և տեսայ որ միափեղկ պատուհանէ մը լոյս կառնէր այս խուցը, տեղ տեղ սրտին դաճերը թափած էին, հնութենէ առաստաղակալները կամարածեւ դուրս ցցուեր էին, ձախ կողմը նկուզանման խորշ մը կար լի հին կարաս



եօք, անկողնէս ելայ հազուեցայ, ականջ տուի որ դեռ չեն արթնցած, մօտեցայ այս խորշին և հին ու տարաղնած գիրք մը աչքիս զարկաւ, կերեւի որ ընդհանրապէս այն կողմերու սովորութեան համեմատ գրականութեան շատ պատիւ չկար այս տան մէջ, գիրքը ձեռքս առի, ասի Ստրաբոնի հնախօսութիւն մ'էր Սլաւանիոյ վրայ գրած. մէկ մ'ալ Լիուլին ձայնը առի, որ տան շունը կը կանչէր. խցիկիս դուռը կէս մը բացի, ծխնիններուն ձայնը Լիուլին ուշադրութիւնը դրաւեց, որ զիս տեսնելով բարեւեց:

— Պարոն իման արթնցա՛ւ, հարցուցի:

— Այո՛, պատասխանեց, կրնաք ներս մտնել նախաճաշիկ նիդ ընելու:

« Տեստի քովի խուցը անցայ. իման զիս բարեւելէ վերջը, հեւալով մէկ կողմին կրթնեցաւ. երեսը դեղներ էր:

— Ի՞նչ եղեր ես բարեկամ, այդ որչափ դեղներ ես:

— Ոչինչ, վախնալու բան մը չէ քիչ մը անհանդիստ եմ, յուսամ թէ իրիկուան կառողջանամ, և վաղը ճամբորդութիւնս չէ՛ւ չ'ըշարունակենք:

« Նոյն միջոցին Լիուլ ներս մտաւ ձեռքը դեղջկական դեղեր բռնած, երակը զննեցի որ սովորականէն խիստ արագ կը զարնէր, սաստիկ ջերմ մը սլաղ քրտինք մը հոսել կուտար մարմինէն, վաղեցի դիւղին բժիշկը կանչել որ սովորաբար դիւղին միմիակ սրճանոցը կը գտնուէր:

« Այս մարդը գեր և շատախօս մէկն էր, իւր խմած գիւնիին աւելորդը երեսին զարկած ըլլալով բոլորովին կապոյտ գէմք մ'ունէր. մօտեցայ ասոր և Պարոն բժիշկ, ըսի, կաղաչեմ ինձ հետ գաս. հիւանդ մը կայ որ ձեզ կարօտ է:

— Շատ աղէկ, պատասխանեց, վախու բան մը չէ ատ, նիստ սուրճ մը խմէ ու երթանք:

— Բայց հիմա սուրճ խմելու ատեն չէ, կաղաչեմ ժամ յառաջ հիւանդին քով գտնուինք:

— Բարեկամ դու այն առակը չդիտես որ, անապարանօք ընկած գործը աղէկ չըլլար կրսէ. և ի՞նչ կայ, թէ որ ջերմ է



դիս տեսնելուն պիտի հալածի այդ հիւանդութիւնը, իսկ թէ որ դեղնացաւ է, պիտի զղջայ իմ դէմս ելնելուն, բարերազգարար ինչ հիւանդութիւն որ ըլլայ աղէկ կը ճանչնամ, հիւանդութիւն ըսածդ արու և էգ է, իսկ ամեն բժիշկ ասոր ուշադրութիւն չընէր, օրինակի համար . . . :

— Բայց ատենը կանցնի պիտի դա՞ն թէ ոչ, ըսի խօսքն ընդ միջերով :

— Ե՛հ հասկըցայ, կեցի սա ծխաբոյրս լեցնեմ, և քեզ հետ կամաց կամաց ճամբայ ելնենք :

« Վառարանէն կրակ մ'առնելով ծխաբոյրին վրայ դրի, հետդհետէ երկու երեք շունջ վեր քաշեց և ետքը ստկալի մուխ մը դուրս տուաւ բերնէն, որուն մէջ մնալով շունչս բըռնեցի որ չխեղդուիմ :

— Հիմա ալ առջիս ինկի տեսնեմ, ըսաւ :

« Ուրախութեամբ ինքզինքս սրճարանէն դուրս նետեցի, ինքն ալ ետեւէս ելաւ ու սկսանք դէպ 'ի տուն յառաջանալ :

« Տան մօտ լիուլը տեսայ որ աճապարելով մեր կողմը կը վազէր. դիս տեսնելուն, — Ո՛հ պարոն, ըսաւ, եղբայրս ձեռքէ կերթայ :

— Բայց ի՞նչ եղաւ իմ հեռանալէս ետքը :

— Ինքզինքը կորսնցուց և չի կրնար խօսիլ, ու այս . . . կացութեան մէջ է մինչև . . . ցարդ . . . :

— Հանդարտէ օրիորդ, Աստուած ողորմած է, ըսի :

« Տուն հասանք հիւանդը մեզ չէր ճանչնար, սաստիկ ձայներ կը հանէր, բժիշկը մօտեցաւ բազկերակը զննեց, գլուխը շարժեց, երկու անգամ հաղաց, վերջը մեզի դառնալով, — Ասի հիւանդութիւն մ'է որ, մեծն Հիբոկրատ Մօռպիւս անունը կուտայ, ըսաւ :

— Ուրեմն ի՞նչ ընել պէտք ենք, ըսի :

— Հիմա դեղագիր մը կուտամ որ անմիջապէս շինել տալ պէտք է, և որովհետեւ այս դիւղը դեղագործ չկայ, իշտիպ խրկելու համար պէտք է մէկը գտնաք :

— Գրէ դեղագիրը ես կերթամ, ըսի :



— Շատ աղէկ, ըսաւ և ծոցէն թուղթ մը հանելով սկսաւ գեղադիրը պատրաստել :

« Լիուլ երախտագէտ աչօք ինձ նայեցաւ :

« Բժիշկը գեղադիրը ինձ տալով, - Պէտք ես, ըսաւ, ուժը ժամէն անհրաժեշտ հոս գտնուիս, քանզի հիւանդին առողջութիւնը ասկէ կախում ունի :

— Իսկ ես կաղաչեմ, ըսի, իմ բացակայութեանս միջոցին մի նակ մի՛ թողուր հիւանդը, և լիովին վարձքդ կընդունիս : Յետոյ ջորի մը հեծնելով ճամբաց ելայ :

« Միջնոլորտը սեւ գոյն մ'առեր էր . մերթ ընդ մերթ անձքեւի կաթիլ մը սաստիկ ցուրտ մը կաղդէր այրած ճակտիս, այսու ամենայնիւ սրարշաւ ճամբաս կը շարունակէի :

« Քոչինայէն իշտիպ երթալու ճամբան, իշտիպի մօտ ժայռերու դօտի մը կայ որ նեղ և զառիւլայր ճամբայէ մը անցնիլ պէտք է . այս տեղի տեսքը, մարդուս սարսափ կաղդէ, մէկ կողմը սեպացեալ ժայռեր մինչեւ ամպերը կը բարձրացնեն գագաթնին . իսկ միւս կողմը սոսկալի խորխորատ մը կայ որ մարդս կը սոսկայ վար նայիլ . այս երկու անջրպետներու մէջ տեղի նեղ անցքը սահուն ապառաժ է որ անկարելի է ձիով կամ ջորիով ճամբորդել :

« Այս տեղ որ հասայ, ջորիէս՝ վար իջայ և անատունին երասանակը թեւս առնելով սկսայ ոտքով շարունակել ճամբաս :

« Քառորդի մը չափ հազիւ յառաջացեր էի, երբ ինձ ուղղուած հրացանի ձայնով գնտակ մը ձախ աղդրս շախշախեց և ուժը զինեալ աւազակ դէմս կանդնած տեսայ :

— Թէ որ շարժում մ'ընես, մեռած ես, գոչեց բարձրահատակ աւազակ մը հրացանը ինձ ուղղելով, բայց ես շարժելու ոչ կամք ունէի ոչ զօրութիւն վիրաւոր աղդրիս դժնդակ ցաւէն . ուստի անարդել քովս մօտեցան ու քովս գամուած հարիւր Մէմուհիյէ ոսկին ուրախութեամբ կողոպտեցին :

— Ո՛ւր կերթայիր, հարցուց մեծաւորնին որ հաճելի դէմք մը չունէր :

— Իշտիպ կերթայի, հիւանդի մը համար դեղ շինել տալու :



«Մեծաւորը իւր ընկերներուն դառնալով, — թողունք որ երթայ դեղքը շինել տայ • հետեւաբար ինքն ալ հիմայ դեղի պէտք ունի • բայց զդուշութեան համար ջորին մէջ տեղէն վերցնելու է, որ շուտով չը հասնի դիւղաքաղաքը օտիկանութեան իմայնելու • օ՛ն, տղաք վար հրեցէք դարէն, ըսաւ •

«Իսկոյն հրամանը 'ի գործ դրին • ջորիին երասանակը թեւ անցուցած ըլլալով՝ անասունը վար դահաւիթած ատեն զիս ալ մէկ տեղ քաշեց որ կենդանւոյն հետ այն սոսկալի ժայռերէն վար դլտորեցայ • սուր ծիծաղ մը լսեցի, անկէ վերջը ինչ ըլլալս չեմ գիտեր •

«Սոսկալի ցաւեր զգացի առաջին անգամ որ խելքս դլտխս եկաւ •

«Գիշեր էր . . . ուր դտնուիլս չէի գիտեր, ձեռքս չորս դիս տանելով ահագին մարմին մը շոշափելս զգացի և երբ ելնել ուղեցի, անտանելի ցաւ մը զիս պոռալու ստիպեց • խելքս պլտխս եկաւ, և մի առ մի սկսան միտքս դալ գնտակը, գողերը, և վար դահաւիթելս, որքան որ կարելի էր •



## ԱԼՊԱՆԻՈՅ ՄԷՋ ԳԱՆՁ ՄԸ

«Լաւ մը չորս կողմս դիտեցի որ, ժայռի մը խոռոչի մէջ ինկեր էի • իսկ շոշափած մարմինս, խեղճ անասունին դիակն էր որ քովս անշնչացեր էր • այն միջոցին լուսնին մէկ շառաւիղը դտնուած տեղս ցայտեց, վեր ելնել անկարելի էր • իսկ վարի կողմէն ծակ մը չգար որ դուրս կարենայի ելնել այս դառադեղէն • անօթի, ծարաւ, յուսահատ մահուան պիտի սպասէի • մինչեւ առաւօտ շարունակ օգնութիւն կանչեցի, բայց 'ի դուր, դուրսէն անկարելի էր որ մէկը զիս տեսնէ • իսկ ձայնս լսել տալու յոյս ամենեւին չուսէի • բոլոր անգամներս կը ցաւեր •



չարժում անդամ չէի կրնար ընել . վերջապէս դժնդակ տառապանաց մէջ, այն դիշերը լուսցուցի .

« Հետեւեալ առաւօտ մեծ զարմացմամբ դիտեցի որ, իմ դռնուած նկուղէս նեղ անցքով մը ուրիշ ընդարձակ քարայր մը կը մանուէր . վերջին ճիգս թափելով, բոլոր ուժս վրաս ժողվեցի, և այն նեղ անցքէն քարայրն անցայ դուրս ելլալու համար ազատութեան ճամբայ մը յուսալով . բայց այս անցաւոր յոյսս 'ի դերեւ ելաւ քարայրին ահռելի մթութիւնը տեսնելով, մէկ մ'ալ նեղ ճեղքուած քէ մը արեւին աղօտ ճառագայթ մը սիւնակի մը պէս քարայրին յատակը նկարուեցաւ, զգացած ուրախութիւնս անկարելի էր նկարագրել . մօտեցայ այս յուսոյ ճեղքին, որ հեռաւոր անկիւններէն մէկն էր . բայց մէկ մատս հաղիւ կը սեղմէր այս ծակէն դուրս, ուստի սկսայ քարայրին մէջ ժայռերը կտորելով անցք մը բանալու գործիք մը բնուել և կոյր զկուրայն դարձած ատենս դլուխս սաստկութեամբ թանձր մարմնոյ մը զարկի, որ քիչ մնաց մարէի, ձեռքովս կարելի եղածին չափ շոշափեցի, բայց ինչ ըլլալը չի կրցի մակարել, ասի կարծր առարկայ մ'էր սիւնակի մը վրայ դրուած . մէկ կողմէն բան մը կտորել ջանացի, իսկ նուազ ուժս չօգտեց ուստի վհատելով հոն ինկայ . կինս և զաւակս կը մտածէի, առանց վերջին անդամ մը դիրենք տեսնելու պիտի մեռնէի . . .

« Յանկարծ սքանչելի խորհուրդ մը միտքս լուսաւորեց . այն ճեղքուած քին վերի կողմը նեղ, իսկ վարի կողմը լայն և գրեթէ չորս մատնաչափ տարբերութեամբ էր, ուստի հողը փորելով, տակէն անցք մը բանալ մտածեցի . իսկոյն կենդանւոյն դիակին քով վաղելով բերնէն երասանը հանեցի, ու նոյնով սկսայ հողը փորել . մինչեւ կէս օր մէկ ոտք փորեցի, մեծ էր ուրախութիւնս երբ տեսայ որ անցքը կը մեծնար, քանդի ապառաժին ճեղքուած քը երթալով եռանկիւնաբար կը լայննար . իրիկուան դէմ բաւական մեծցեր էր ծակը, արեւը մարը մտած ատեն դուրսի դաշտին մակերեւոյթին հաւասար եկեր էր, որ իւր կարմրաշեկ ճառագայթներէն մէկը քարայրին մէջ զարկաւ անարդել, և ասով բաւական լուսաւորուեցաւ քարայրը, այն



ատեն դիտեցի որ, գանուած տեղս հին դարերէն մնացած  
կռատուն մ'էր, երեք պատուանդանով սակի սիւնակի մը վը-  
րայ ադամանդեայ մեծ արեւ մը դրուած էր, այս արեւին մէջ  
տեղի մէկ պըրլանթ քարը, երկու հարիւր տասը քարաթ կըշ-  
ուեց որ երեք միլիօն Անգղիացի ոսկւոյ ծախեցի Լօնտրայի մէջ:

Այս միջոցին Միհրդատ Սօֆեան պէյին խօսքը ընդմիջե-  
լով « Երկու հարիւր տասը քարաթ, միմնջեց »

« Այս երկու հարիւր տասը քարաթ, և տակաւին բան մը չէ  
այս, այն արեւուն ճառագայթներուն վրայի ադամանդները  
ուրիշ, որ իրարմէ համեմատաբար կը պղտիկնային »

« Այս օրուան օրս եօթը միլիօն հինգ հարիւր հաղար Անգ-  
ղիացի ոսկի կարծէ, ուստի նախ և առաջ արեւը տեղէն հա-  
նել մտածեցի, բայց պէտք եղաւ աշխատիլ քանզի ոսկի կո-  
թովը սիւնակին վրայ գանուած ծակին աղուցուած էր, մեծ  
դժուարութեամբ տեղէն վերուցի, և բացած անցքէս դուրս  
ելայ »

« Հետզհետէ մութը կը կոխէր, մտածեցի որ գանձս թա-  
ղեմ հոն, ազդ ըիս ցաւը վերջին աստիճան էր, այսու ամենայ-  
նիւ դործի սկսայ »

« Ադամանդեայ արեւը հողուն տակ ծած կելով վրան քարա-  
կոյտ մը շինեցի, և քարայրին անցքը քարերով գոցեցի ու  
դուրս ելայ »

« Գիշերը մթին էր, ճամբայ ելայ առանց ուր երթալս դիտ-  
նալու, տասը վայրկեան քալելէս վերջը ազօտ լոյս մը տեսայ  
աջ կողմէս. քայլերս դէպ 'ի լոյսին կողմն ուղղեցի, հինգ վայր-  
կեանէն պղտի հիւղի մը դուռ զարկի, ալեւոր ծերունի մը դու-  
ռը ինձ բացաւ. Աստուծոյ սիրուն օգնէ ինձ ըսի, գողերու  
հանդիպեցայ, զիս վիրաւորեցին և ունեցած բոլոր ստակներ  
առին, առաւօտէ 'ի վեր լեռները կը թափառիմ անօթի ծա-  
րաւ »

— Ներս մտիր որդեակ, ըսաւ ծերունին թեւս մանելով,  
որ կարողութիւնս սպառիլը տեսած էր. զիս իւր վտարիկ խու-  
ցը նստեցնելով՝ անմիջապէս ջուր տաքցուց և վերքս լուաց ու



հայ կարող և չորցած խողի ապուխտ բերաւ, շիշ մը կիպրոսի գինի բերաւ, որ վրայի փոշիէն կերեւէր թէ շիշը 'ի վաղուց կը պահէր որն որ դիտ կաղդուրեց:

« Կերակուրը ուտելէն վերջը՝ ծերունին կտորուանքները վերցուց և տարաւ ժայռէ փորուած խորշի մը մէջ դրաւ, որ իրեն պահարանի տեղ կը ծառայէր:

« Գործը լմնցընելէ վերջը քովս նստելով, — է՛ր իտառարդ, խօսէ տեսնեմ հիմայ հանդիստ ես, ըսաւ:

— Հայր իմ, պատասխանեցի, կեանքս շնորհեցիր. եթէ ձեր վեհանձն ընդունելու թիւնը չգտնայի, վաղն առաւօտ թերեւս մեռած էի:

— Է՛հ, որդեակ, Սատուծոյ փառք տանք. ես հոս ինչպէս որ կը տեսնես առանձին, տասը տարիէ 'ի վեր բնակուածիւնս հաստատած եմ, քանի մը արտավայր երկիր ունիմ, որ իմ պիտոյքս կը հողայ հեռու աշխարհային կենաց պատրանքներէն՝ որ ոչնչութիւնը մտցնել կուտայ մարդոց. ուստի մինչեւ առողջանաս այս բնակութիւնը քուկդ է:

— Հայր իմ, պատասխանեցի, ես ֆոշինա գիւղէն հիւանդի մը համար դեղ առնել իշտիպ կերթայի, ուր գողերու հանդիպելով չկրցի երթալ, ս'հ չեմ գիտեր թէ հիմա ինչ եղաւ, կուզեմ վաղը ֆոշինա հասնիլ:

— Ես քու տեղդ կերթամ վաղը, պատասխանեց:

— Բայց, կարծեմ ասկէ շատ հեռու է, ըսի, և ձեզ անկարելի է այնչափ ճամբայ քալել:

— Մնհող եղիր որդեակ, ըսաւ, ես բաւական ոյժ ունիմ, ասկէ դատ ջորի մ'ալ ունիմ որ թէպէտեւ ծեր, բայց աղէկ կը քալէ:

— Զիտ երախտապարտ կը թողուք:

— Որդեակ միթէ Տէրը չըսա՞ւ որ օգնէ ընկերիդ, բայց դու հիմայ պէտք ես հանգստանալ, մաի սա անկողնին մէջ, ես տակաւին գործ ունիմ:

« Կրկնել շտուի ծերունւոյն խօսքը և հաղուսաներս հանելով անկողին մտայ ուր անմիջապէս քունս տարաւ:



ԹՒԱՂՄԱՆ ՀԱՆԴԵՍ

« Հետեւեալ առաւօտն որ արթնցայ, արեւը բարձրացեր էր  
և ծերունին նստեր լաթերուս պատուածները կը կարկտէր.  
Իմ արթննալս տեսնելով՝ — Տեսնենք, ծերունւոյ մը կարածին  
պիտի հաւնիս, ըսաւ:

— Ս'լ աղնուութեան չափն անցուցիք, հայր իմ, ըսի:

— Որդեակ, հիմաջ ես ջորին պիտի պատրաստեմ. ֆոշինա  
դիւղը որո՞ւ պիտի երթամ ըսիր:

— Իվան Պարէյի բնակութիւնը պիտի հարցնես:

— Իվան Պարէ՛, ըսաւ ծերունին այլայլելով. Իվան Պարէ՛  
ըսիր:

— Ս,յո՛, Իվան Պարէ, ֆոշինա դիւղէն:

— Սնկարելի է որ ես հոն երթամ, անկարելի է, յարեց  
ծերունին գլուխը կուրծքին կախելով:

— Ես այն մտքով չըսի ձեզ որ անհաճոյ յանձնարարութիւն  
մը կատարէք, եթէ կը հաճիք ես կերթամ:

— Գնա՛, ըսաւ ծերունին, բայց մէկ խնդիրք մը ունիմ  
քենէ:

— Ըսէ՛, պատրաստ եմ կատարելու:

— Իվանը տեսնելէ ետքը դարձեալ հոս դարձիր. և ինձ  
համար բան մի՛ ըսեր Իվանին:

— Հաւաստի եղիք, որ Իվան բան մը չի պիտի դիտնայ:

— Ուրեմն աճապարէ որդեակ, ես երթամ ջորին համե  
տեմ, ըսաւ և տարտամ քայլերով դուրս ելաւ. իսկ ես ապշած  
մնացի:

« Տասը վայրկեան ետքը ծերունւոյն ձայնն առի որ դիս կը  
կանչէր. աճապարեցի ոտքի ելայ, հետեւաբար դժնդակ ցաւ  
ւեր դղալով. դրան առջեւ ջորին պատրաստ կը կենար. մնաս  
բարով ըսի ծերունւոյն, կենդանւոյն վրայ հեծնելով:



— Երթաս բարով որդեակ ըսաւ . խոստումդ մի մոռնար :

— Վաղը հոս պիտի ըլլամ թէ որ խլանը աղէկ վիճակի մէջ գտնամ :

— Օն , յառաջ վարէ ճամբադ դեռ եւս օղնութեանդ կը կարօտին , ըսաւ ծերունին խեղդուկ ձայնով մը :

« Վերջին ողջոյնը տալէ ետքը , կենդանին դէպ 'ի ֆոշի նայի ճամբուն մտրակեցի . հազար և մէկ խորհուրդներու մէջ միտքս կը ծփար , ծերունւոյն կերպերէն սրտին գաղանիքը գիտնալ անկարելի էր , իսկ խլանին հարցներով խոստմնադրութ պիտի ըլլայի :

« Բայց խլանը ուսկից կը ճանչնար ծերունին . միտքս դրի եղերութիւնը անհրաժեշտ իմանալ խլանէն :

« Գիշերը կոխեց շատ կը վախնայի որ ճամբէն չը շեղիմ . վերջապէս դիւղին ճրագները աղօտ կերպով նշմարու իլ սկսան . կէս ժամէն խլանին դռանն առջեւն իջայ , դուռը բաղխեցի բայց ձայն տուող մը չեղաւ . երկրորդ անգամ զարկի , առաջի բաղխումէն աւելի արդիւնք մը չունեցաւ . տանը չորս կողմը պտրտեցայ որ լոյս մը տեսնեմ , բայց ներսը տխուր մթութիւն մը պատեր էր . կանչեցի , դարձեալ կանչեցի , բայց 'ի դուր . երկու թաթերու վրաս դալչիլն դգացի , մէկէն ետ քաշուեցայ , և տեսայ որ տանը հաւատարիմ շունն էր որ ձայնս ճանչցեր , տխրութեամբ կը քծնէր ու վազելով տանը կից ախոռին դռանը առջեւ կերթար կոռնար , դարձեալ կը դառնար . դէպ 'ի ախոռը յառաջացայ , կենդանին քառարչաւ ախոռէն ներս մտաւ , կերեւէր որ շատ դոհ էր իրեն ուշադրութիւն ընելուս :

« Տունը մտնելու համար ախոռին ներսի դին դուռ մը կար , որ ետին ծառի մը կոճղ դրած էին նիղի տեղ . ուժով մը հըրեցի դուռը , որ այս մղման տեղի տալով դէպ 'ի ետեւ բայցուեցաւ , ամենեւին ձայն չի կար , խոր մթութեան մէջ սարսուռ մը տիրեց վրաս , բայց սիրտ ըրի ներս մտայ :

« Քայքայեալ կարճ սանդուղէ մը տան մէջ մտայ , որ իմ պառկած սենեկիս դուռը բաց էր . ճրագը տր դրտ իլը գիտէի ,



ներս մասայ վառեցի զայն լոյցկիքով մը . յետոյ խլանին պառկած խուցը դայի՞, սուր և զղուելի հոտ մը առի . ի՞նչ էր տեսածս . . . խլանին դիակը անկողնէն դուրս գետինը կը կենար . այն աղնիւ դէմքը սրչափ փոխուեր էր . աչքերը խորունկն իջեր էին , դէմքը նիհար , մազերը ցցուած և ոտքերը կցուած կեցեր էր . երկու ձեռքերովը կուրծքին վրայ բան մը կը բռնէր . մօտեցայ դիակին՝ տեսայ որ Ստրաբոնի հնախօսութիւնն էր , այն հին մատեանը՝ զոր քովի խուցը պառկած գիշերս տեսեր էի .

« Հետաքրքրութիւնս զիս դրդեց , ձեռքին մէջէն հանեցի գիրքը , և տեսայ որ վրան սա խօսքերը գրուած էր .

« — Ով որ այս գիրքը առաջին անգամ ձեռքէս առնէ , կը խնդրեմ որ առանց կարդալու կրակը նետէ — »

« Շիտակը ի՞նչ մեղքս պահեմ , եռանդեամբ գիրքը բացի և սկսայ կարդալ , Ստրաբոնի Սլլպանիոյ վրայ դրածները , որուն մէջ երկրին սահմանները և բարքերնին կը բացատրէր .

« Լեզուաց զանազանութիւնն և արեւապաշտութիւնը , աւելի եւս լուսի՛ը պաշտելնին աղանդ դրած էր .

« Իրենց մեռելներնուն հետ՝ մեռնողին ինչքը միատեղ կը թաղեն կրսէր .

« Ստոնց տակը յաւելուած մը կար Չինեայէն գրուած՝ որ Սլլպանիացի փիլիսոփայ մ'է .

« Եէզիտ Բ. Խալիֆային Սբումալիմ զօրավարը երբ Սլլպանիոյ տիրեց , հրովարտակ հանեց որ Լէզկիներն ու Բարսղիկներն Մահմէտականութեան դաւանին . Լէզկիները Մահմէտականութիւնը ընդունելուն համար կաղի կու մուխք կոչուեցան . իսկ Բարսղիկները իրենց դենը չթողելուն համար Սբումալիմ իրենց կռատունը քարերով գոցեց անյայտ ըրաւ , և զիրենք ալ Քեաֆիր կու մուխք կոչեց Մահմէտականութիւնը չընդունելուն համար .

« Այս անյայտ եղած կռատան մէջ աղամանդեայ արեւ մը կար , որուն գին չէր բաւեր . կարծիք կայ որ , այս կռատունը Քոչնայի և Իշախալի մէջտեղերը շինուած էր . բայց ամեն հետազօտութիւններ պարապ ելան .



« Ուրիշ քանի մը տեղեկութիւններ եւս կային, բայց գիրքը գոցեցի, և անմիջապէս հրամանը ՚ի գործ գնել սկսայ, ինչպէս որ կը հասկընաս, անսպառաճառ անցայտ ընել պէտք էր այն գիրքը. ո՛ր գիտէ գեռ եւս ուրիշ մէկու մը հետաքրքրութիւնը կրնար շարժել. ուստի վառարանին մէջի կրակն արժարժեցի, և գիրքը մէջը նետեցի. հինգ վայրկեան վերջը մոխրոյն ծալքերն աւրեցի, ուր գանձին վերաբերեալ յիշատակը անցայտ եղաւ »

« Ետքը քովի սենեակը դայի Լիուլին դարձն սպասելու. կէս գիշերը անցաւ եկող գացող չկար. հողնած էի, վերջապէս քունը յաղթեց »

« Աւաւօտուն ուշ արթնցայ, Լիուլ չէր եկեր, ուստի որոշեցի որ եկեղեցի երթամ իմաց տամ »

« Մատուռին մօտ յոյն քահանայ մը տեսայ, վերասպատուելի հայր, ըսի, գիւղին մէջ ննջեցեալ մը կայ, հաճեցէք վերջին արարողութիւնները կատարել որ թաղենք »

— Եկեղեցւոյ ամեն խորհուրդները կատարուեցան »

— Ահա ճիշդ ես ալ նոյնները կը խնդրեմ ձեր գերատաառութենէն »

— Օ՛յն չեմ ըսեր, վերջին թոշակ տրուեցան »

— Կարծեմ ոչ »

— Ուրեմն հանդէս չենք կրնար ընել անոր թաղմանը, իմ օգնական եղբայրս կը խրկեմ ան կը լնացընէ ամեն բան »

— Բայց այս մարդը անմեղ էր. ի՞նչ սոսկալի մեղք կը գրանաք որ անոր վրայ աղօթելն անդամ անսպառչած կը սեպէք »

— Ի՞նչ մեղք ըսիր, գոչեց զայրացմամբ, ասկէ աւելի մահացու մեղք կայ որ մարդս առանց հաղորդուելու մեռնի. Մենք պարտք մը ունինք որ առաջուց կիմացնենք, և ամեն ատեն ըսեր ենք « պատրաստ լերուք մօտ է ժամն վերջին » բայց այս դժօխոց որդիները չեն ըսեր, հիմայ թո՛ղ երթան այն սոսկալի կրակին, որ պիտի այրէ, բայց չը պիտի վիճացնէ »

« Զայրոյթս վերջին աստիճանը հասած, Գնայ քու այս քարողութիւններդ սողայելին տուր անզգամ, գոչեցի. յառաջա-



դ իմութեան արդեւք ընկերութիւննիդ, Սատուածութիւնը ձեռքը խաղալիկ ըրեր, խղճմտանքները կը կթէ. անշուշտ եմ որ երանութիւնը սաղայէլ չընդունիր, դուք զղուատեսիլ խորշով ներով մարմնացեալ սաղայելներէ՝ մարդկային սեռը հոգւով մարմնով կը տանջէք:

« Մնդդամը իւր վերջին դէնքը ձեռք առաւ, այսինքն ըսկըսաւ զիս անիծել. բարեբախտաբար ես անանկ անէծքէ վախցողներէ չէի, ուստի առանց պատասխանելու, դարձայ մեռեալին քովը, բոլոր գիւղին մէջ Լիուլին համար հարցուցի ամենեւին մէկը բան մը չէր գիտեր, և ոչ տեսնող կար. ուստի տանը պարտեղին մէջ գերեզման մը փորեցի, ու մեռեալը թաղեցի կաթիլ մ'արցունք նուիրելով:

« Տխուր գերեզման, որ վրայի ծաղկեայ զարդերը քիչ մը վերջը պիտի թառամէր, չ'ունէր նշան մը որ Լիուլ դարձին տեսնէր զայն, ուստի փայտեայ խաչ մը շինեցի ու գերեզմանին գլխի կողմը դետեղելով եկայ, տանը դռները դոցեցի վերջը ջորիին վրայ հեծնելով դարձեալ ճամբայ ելայ:

« Նոյն գիշերը իշտիպ գացի, Լիուլին համար հարցուցի կը կարծէի որ, իմ ուշանալս տեսնելով ետեւէս եկած ըլլայ:

« Բայց այս յոյս ալ պարապ ելաւ. ամենեւին մէկը բան մը չէր գիտեր, ուստի ծերունւոյն քով դառնալ մտածեցի որուն ընակութիւնը շատ մօտ էր գանձիս:

« Հետեւաբար նորէն ճամբայ ելայ, արշալոյսը նոր կը ծագէր բոլոր լեռները ցողը պատեր էր, բիւրեղեայ վերարկուոյ նման. ծերունւոյն խրճիթին մօտեցայ, տեսայ որ ծերունին դուռը նստեր էր. զիս տեսնելուն ոտքի ելաւ « Հաւատալի եմ որ բարի լուր ունիս » ըսելով:

— Ընդ հակառակը, պատասխանեցի, իման մեռեր, իսկ Լիուլ անյայտ եղեր էր, որուն համար ըրած հարց ու փորձս 'ի գերեւ ելան, ըսի ջորիէս իջնալով:

« Ծերունւոյն երեսը կապարի դոյն մը զգեցաւ:

— Մեռեր է՝ մի՞թէնչ . . . անշուշտ դո՞հ որտով . . . Գալէ որդեակ ներս ելլծանք և պատմէ ինձ ի՞նչպէս մեռաւ:



— Շատ աղէկ, պատասխանեցի և միասեղ ներս մտանք,  
 ջորին մարդին վրայ սանձարձակ թողլով:

«Մերունին անհամբերութեամբ մը, -Մեռած ատեն բան  
 մը զրուցե՞ց, հարցուց:

— Ո՛չ, ըսի, ևս զինքը մեռած գտայ:

— Ուրեմն ի՞նչ ըրիր:

— Այն ատեն մանրամասնաբար ամեն բան պատմեցի ֆա-  
 հանային խորութիւնը, չմոռնալով նաեւ իմ տուած պատաս-  
 ներս:

— Որդեանկ, ըսաւ, թէպէտ ևս ֆրիստոնեայ չեմ, բայց  
 կուզեմ ձեր մէկ սխալը ուղղել. ձեր երիտասարդներէն շա-  
 տերը իրենց կղերը կանարդեն և կարծես թէ միայն անարդած  
 ըլլալու համար, շարունակ կանպատուեն, սակայն կը սխալին.  
 քանզի ամեն անարդանք իրաւունքով մ'ըլլալու է, եթէ ո՛չ,  
 անարդանքը նոյն իսկ անարդողին կը վերաբերի. բարեկամ  
 կղերը չէ թէ մարդկային յառաջադիմութեան արդելք է, այլ  
 անոր լուսաւորութեանը համար անձանձիր ուսուցիչ եղած է.  
 միթէ այժմեան լուսաւորութիւնը հին կղերին դաստիարակու-  
 թեան արդիւնքը չէ՞, բայց կրնայ ըլլալ, որ բարենպատակ ըն-  
 կերութեան անթիւ անդամոց մէջ մէկ քանի չարեր ալ կը  
 գտնուին. ուստի այս մէկ քանի չարերուն պատճառաւ ամ-  
 բողջ ընկերութիւն մը բամբասելու իրաւունք ունի՞նք. նոյն  
 իսկ ևս կենդանի օրինակ մ'եմ քեզ. ևս որ ազգաւ Հրեայ  
 և անհամար շարութիւններով օրերս անցուցած եմ, միթէ իմ  
 դործած շարութեանցս համար ամբողջ Հրէից ազգը անարդել  
 պէտք է. եթէ իմ Ռարբիս մանկութեանս ատեն Ստուծոյ  
 վախը չը տպաւորէր՝ հիմա քեզ եղեռնադործութեանցս պատ-  
 մութիւնը չէի սկսեր խիղճս հանդարտեցնելու համար, վասն  
 զի կուզեմ գտնէ անիրաւութեամբ յախշտակած մէկ հարրա-  
 տութիւնս բուն տիրոջը դարձնել քու ձեռքովդ, բայց չեմ  
 գիտեր թէ պիտի յաջողիմ. ո՛վ երիտասարդ, զիս պիտի ա-  
 նիծես երբ լսես իմ պատմութիւնս. բայց կը խնդրեմ առանց  
 սոսկալու մտիկ ընես, պատմութիւն մը որ առաջին ան-



դամ Մատուծոյ և քու առջիդ պիտի խոստովանիմ. չէ թէ մեզաց թողութիւն դանկու յուսով, այլ դոնէ անդդամութիւն մը պակաս ըլլալու համար:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

« Ասիէ դրեթէ չորս հինգ տարի առաջ, հարստանալու փափաքաւ Աղեքսանդրիայէն հոս դաղթեցի. անուս Սամուէլ Ավրամ է, դեղերը պտրտելով բաղդախնդիր մ'եղայ, վերջապէս օր մը Գոշինա դիւղը խլան-Պարէյի տունը իջեւանեցայ:

« Այն ատենը հայրերնին Սթանքօ նոր մեռած էր, խլան մեծ եղբայր մ'ունէր որ Միթրօ կը կոչուէր. մայրերնին Գաթէրին-Պարէ դեղեցիկ և մանկամարդ կին մ'էր:

« Այն դիշերը դիւս մեծ սիրով հիւրընկալեցին. պատկերու ժամանակը դալով, առանձին խոց մը տարին, ոյն օր պատրաստ անկողին մը կար, երբ մինակ մնայի բոլոր երեւակայութիւնս Գաթէրինին դեղովը կը բորբոքէր՝ քունը աչքերէս հեռու անկողնոյս մէջ յաջ և ահեակ կը դառնայի:

« Լուսինը պատկած խուցս լուսաւորեց. պատին վրայ խորշի մը մէջ բան մը նշմարեցի, որ հետաքրքրութիւնս շարժելով ուր ելայ խորշին մօտեցայ, քառակուսի փոքրիկ առարկայ մըն էր դրուած որ ցնցոտի ծածկոցով մը դոյեր էին. ծածկոցին վրայ գրութիւն մը կար, լուսնի լոյսով կարդացի այս գրութիւնը, որ Միթրօյին հայրը կը հրամայէր:

« -Երկու տարի վերջը բանան այն գիրքը, և թէ շտա բան պիտի սովորին-:

« Ծածկոցը վերուցի՝ գրքին մէջ քառածալ թաղթ մը դետեղուած էր, իսկ գիրքը Ստրաբոնի հնախօսութիւն էր:

« Այլպանիոյ վրայ զրոյուածները շատ թղթատեր էին, դիր-



քէն բան մը չը հասկընալուս վատութեամբ թուղթին կնիքը քակեցի, և ահա ասով առաջին անգամ անդդամս թեանս ասպարէզին մէջ մտայ . . . Է՛հ դրեթէ առանց սոսկալու . . .

«Եւ սաքի վրայ ելնելով սեղանին վրայէն դաւաթը ջուր լեցուց, մէկ քանի ումպ խմեց, և դարձեալ քովս նստելով այսպէս սկսեց:

«Ս.յս թուղթը հայրենական ժառանգութեան կտակ մըն էր, որուն պարունակութեանը առաջին անգամ հաւատալ չուղեցի: Գաղղիոյ Տէրութեան դրամասեղանը, երկու հարիւր հարզար ոսկի շահու գրուած էր, և թէ երկու տարի արդիւնեալ էր այն ատակին դալիլ: այս հարստութիւնը իրենց Գաղղիացի կոմս մը շնորհեր էր, Միթրոյին հօրը ձեռքով մահու ընէ աղատելուն համար:

«Ս.յս միջոցին խշրտոցի ձայն մ'ելաւ, բայց ուշադրութիւն չըրինք, ծերունին նորէն պատմութիւնը շարունակելով. —Ս.յս անցքը, ըսաւ, մանրամասնաբար կը բացատրէ կտակը որն որ հիմնց պիտի կարգաս:

«Ուստի աւանելով որ, կտակին պայմանաժամին դեռ տարի մը կայ, նոյն գիշերը կտակը անդը թողուցի վերստին դայն գողնալու միտքով:

«Երկրորդ առաւօտուն դործի մը պատրուակաւ այնպէս ձեւացուցի որ շարած մը հոն կենալու պէտք ունիմ:

«Միթրօ պատասխանեց թէ, անշուշտ եմ որ ուրիշ անգամ իջեւանելով գիրենք չը պիտի վշտայնեմ, և թէ պիտի ջանան կարելի եղած ծառայութիւնները ինձ մատուցանել:

«Իմ ալ միակ բաղձանքս այս էր, այսու ամենայնիւ դրժուարութեամբ դիջայ իրենց ստիպմանցը:

«Հեռեւեալ իրիկունը թուղթի մը վրայ, կտակին կնքոյն նմանօրինակը կնքելով դրպանս դրի. սառն դայի և ամեն մարդ երբ հանգստանալ դնաց, ես ալ խուցիս ճրտղը մարեցի և սպասեցի մինչեւ որ ամենքն ալ խոր քուն մտան:

«Վերջը անկողնէս ելնելով դրքին մէջէն կտակը առի, ու անդը ցօրեկու ընէ սրատրտատած թուղթս դրի անկողին մտայ:



« Հետեւեալ օրը կտակը բաճկոնիս մէջ կարեցի, անկէ վերջը մտերմաբար տուներնին կը մտնայի կեղնէի. և Գաթէրինի վրայ ունեցած տարիքանքս օր ըստ օրէ կաւելնար .

« Ս. յն օրերը Մէլանիկի մէջ ազդականներէս մէկը մեռաւ, որ ուրիշ ժառանգորդ չունենալուն, ամբողջ հարստութիւնը ինձ կկոնար, պէտք եղաւ Մէլանիկ երթալ. ուստի դիտարարութիւնս, յայտնեցի Միթրոյին, իմացնելով նաեւ որ բաւական հարստութիւն պիտի անցնէր ձեռքս, իւր մայրը կնութեան խնդրեցի սրուն հաւանեցաւ ՚ի բաց թողլով մօրը հաւանութիւնը :

« Գաթէրինի հաւանութիւնը ստանալու համար պէտք էր որ, ես հետը խօսէի, արդ նոյն իրիկունը ճաշէն վերջը երբ սովորաբար ճրագը թողլով դռնէն դուրս կեղնէր, — Տիկին հաճեցէք քիչ մը կենալ, ըսի, ձեզի երկու խօսք ունիմ :

« Զարմանօք երեւս նայեցաւ .

— Թէպէտ, շարունակեցի, այսպիսի համարձակութիւն մը ներողութեան արժանի չէ, բայց ձեր սրտին բարութենէն խրախոյս առնելով կուզէի ըսել . . . .

— Ի՛նչ ըսել կուզէք չեմ հասկընար :

— Ո՛հ տիկին, յուզմունքէս չէք հասկընար. կը սիրեմ զձեզ Գաթէրին, և միայն ձեր մէկ հաւանութիւնը զմեզ և այս ընտանիքը երջանիկ պիտի ընէ :

— Բայց չե՞ս մտածեր որ ես հատուկ զաւակներու տէր եմ :

— Սրդէն անոնց հաւանութիւնը ստացայ, պատասխանեցի խօսքը կարելով, մտիկ բրէ Գաթէրին, ազդականիս մէկը մեռաւ ինձ բաւական հարստութիւն թողլով, ուստի երջանիկ ըլլալու համար, ամեն բան պիտի ունենանք, քու զաւակներդ իմն ալ պիտի ըլլան, ես ալ ֆրիատենայ եմ, վարանել չուզեր Գաթէրին սուր հաւանութիւնդ, որ հանդարտ սրտով գործիս երթամ, ու շուտով դառնամ երջանկանալու :

— Քանի որ այս է ճակատագիրը, պատասխանեց, պիտի յարգեմ զայն, դնայ Պ. Սամուէլ, միտքդ ըլլայ որ, միշտ զքեզ պիտի մտածենք հոս :



« Մեծ էր ուրախութիւնս , ձեռքը քաշեցի համբուրեցի գիւական խնդումով մը . իսկ Գաթէրին զիս խուցը մինակ թողլով դուրս ելաւ :

« Թէ որ գիտնային Մովսիսական ըլլալս , անշուշտ չպիտի հաւանէին այս ամուսնութեան , իսկ ես շատ վարպետութեամբ կը ստէի :

« Երկրորդ առաւօտուն ճամբայ ելայ , և քանի մը օրէն Սէլանիկ հասնելով , գործերս կարդադրեցի , հետեւաբար կտակին նկատմամբ ալ պէտք եղածներն 'ի գործ դրի . ուստի նորէն Գուչինա եկայ , որ ամիս մը անցեր էր բաժնուելէս 'ի վեր :

« Մեծ սիրով ընդունեցին զիս , և մէկ ամսուան մէջ պէտք եղածները հոգայէս վերջը , աւելի մեծ տուն մ'ալ գնեցի , և այս նոր գնած տանս մէջ ամուսնացանք :



## ՀՆԴԿԱՍՏԱՆՑԻ ԲՈՒԲՈՒԼ ԽԱԹՈՒՆ

« Վեց ամիս շարունակ առանց նշանաւոր դէպք մի պատահելու անցաւ :

« Միթրոյին հետ խօսք ըրինք որ , քաղքէ քաղաք վաճառականութիւն ընելով , Ռեղունճա – օվայի նոր բացուելիք տօնավաճառը երթանք , ուստի ճամբու պատրաստութիւնն իսկարկադրելով ճամբայ ելանք :

« Կինս հինգ ամսու յղի էր , որմէ բաժնուած ժամանակ իւր թափած արցունքներուն բոլորն ալ տղուն համար կարծելով պաղ անտարբերութեամբ մը զատուեցայ , և որովհետեւ դեռ ատեն ունէինք Ռեղունճա-օվա երթալու , սկսանք գիւղերը պտրտիլ :

« Օր մը Յիլիպէ կը դանուէինք , երբ ճամբորդող Հնդկաստանցու հի մը եկաւ Բուբուլ խաթուն անունով . իւր գեղեց-



կուժենէն առաւել հարստութիւնը հիանալի էր . հարիւրի մօտ նաւեր մէայն Միջերկրականի մէջ ունի կըսուէր . ես որ ոսկեւէր էի , իմ ականջիս այս խօսքերը խիստ քաղցր կը հնչէին :

« Օր մը շուկայ ելեր էր , Եւրոպական կերպասներ փնտռելու համար , մենք ալ Միթրոյին հետ խանութ մը բացեր էինք . մենէ ուրիշ Եւրոպայի կերպաս ծախող չի կար , ուստի դրացի խանութպանները դժկամակելով մեզ ցցուցին :

« Այս կնոջ հասակը միջին էր , դէմքը դեղնած բայց խիստ վայելուչ . դեղին և շեկ մազերը ականջին տակէն վեր առնուելով , ետին կախուած էր . Անգղիացի կանանց պարզութիւնը ասոր վրայ ալ կը տեսնուէր , ետեւէն քսանի չափ նաժիշաներ մասնաւոր կերպով մը կը քալէին :

« Մեր խանութին առջին կայնելով քովի կնոջը դարձաւ ըսաւ . — Կարծեմ այս պարոններուն քովը կը գտնուի հարցու տեսնենք :

« Աղախներ յարդանք մատուցանելէ վերջը մեզ դառնալով , — Պարոններ , Եւրոպայի կերպաս կը գտնուի ձեր քովը , հարցուց :

— Ամեն տեսակը , աղէկը , և ձեզ կը հաւաստեմ թէ խ'ստ աժանը մենէ ուրիշի քով չը գտնուիր տիկին , պատասխանեցի :

« Այն ատեն Քուբուլ խաթուն մեզի հետ խօսակցելու զիջանելով , — Երեք բարիք միատեղ , հաղուադիւտ բան , ըսաւ . շիտակը ձենէ ուրիշի դիմելով մահացու մեզք դորձած պիտի ըլլամ . ու ետին դառնալով աթոռ մը հրամայեց :

« Անմիջապէս Միթրօ խր նստածը ներկայացուց :

« Ծանրութեամբ աթոռին վրայ նստաւ , և նաժիշաները խր ետին կարգաւ շարուեցան :

« Ես սկսայ կերպասները ցուցնել . ազգու նայուածքով կը դիտէր զՄիթրօ Քուբուլ խաթուն :

— Պարոններ , շատ կը նմանիք զիրար , եղբայր էք , հարցուց :

— Այո՛ տիկին , պատասխանեցի Միթրօ խօսքի չսկսած . դեռ առեւտուրի մէջ համբալ ըլլալուն ղինքը հետս կը սը-



տուտայրնեմ. շխտակը ըսելով, տիկնոջ անոր վրայ ունեցած հաւմակրութեան կը նախանձէի :

« Մի՛թրօ չը պատասխանեց :

— Կարդում ա՞ծ է, հարցուց կիներ :

— Ո՛չ ան, ո՛չ ես, պատասխանեցի, Մի՛թրօ կը ժպտէր :

— Սա կարմրագոյն սնդուտը մ'անցնիր, ըսաւ, այն ալ հաւնածներուս կարգը դիր :

— Աղէկ ճանաչողութիւն ունիք տիկին, ըսի, վերջապէս տասը հազար դուրուշի չափ բան դնեց՝ առանց դիներուն դիտողութիւն ընելու, որն որ խանութին ապրանքին երեք մասը կը պարունակէր :

« Բուբուլ խաթուն Մի՛թրօյի դառնալով, — Հաճեցէք պարոն, ասոնք իմ տունս բերել, ըսաւ ստակը վճարելով :

— Շատ աղէկ տիկին, պատասխանեց Մի՛թրօ :

« Տիկինը վերջին հայեցում ա՞ր սրձակելէ վերջը մեկնեցաւ խանութէն :

— Մատթէոս ծրարէ կերպանները, հրամայեցի սպասաւորին, որ ասան և հինգ տարեկան սրամիտ երիտասարդ մէր, առեւտրական գործոց մէջ ուշիմ ըլլալուն միշտ հետերնիս կը պարտցունէինք : Շրարները պատրաստուեցան, Մի՛թրօյին ըսի որ ես կերթամ դու խանութը հսկէ :

— Շատ աղէկ, պատասխանեց, և ես Բուբուլ խաթունին տունը դացի :

« Այս տունը մեծաշէն և դեղեցիկ էր. պարտէզին մեծ դռնէն երկայն ծառուղիէ մը տանը բակը կերթըցուէր, բազմաթիւ ծառաներ կերթեւեկէին բակին մէջ, խաթունին նաժիշտը մեզ տեսնելուն, քաղաքավարութեամբ բարեւեց և մեզ խմացուց որ խաթունը իւր սրահը տանիլ հրամայեր էր. ուստի առաջնորդեց մեզ անձամբ ճամբայ ցրցունելով :

« Երկայն ճեմագատիէ մը անցնելէս վերջը սրահի մը վարագոյրը մէկդի առնելով, — կերպաս ծախող պարսնները, ըսաւ :

— Ներս մտցու, պատասխանեց ձայն մը :

« Սրահէն ներս մտայ, դուրսը թողլով Մատթէոսը. շքեղ



զարդարուած և սակեղօծ էր բոլոր սրահը . սակեթել բանուած բաղնոցի մը վրայ երկնցեր էր թուբուլ խաթուն . Երկու աղախին անընդհատ կը հողմահարէին զինքը : Չիս տեսներուն առանց տեղէն շարժելու , -Պարոն ուր է եղբայրնիդ ի՞նչու չեկաւ , հարցուց :

— Ներեցէք տիկին , խանութը հսկելու համար թողուցի :

— Կերպաները բերի՞ր , հարցուց գժկամակու թեամբ :

— Այո տիկին , դուրսը սպասաւորիս քովն է :

— Բայց ինչո՞ւ կեցեր էք նստէք , հրամայեց և ես աթու մը առնելով նստայ . Պարոն , ըսաւ , ձեր վրայ տեսած աղնուութիւնս , ջերմ համակրութիւն մի զարթոյց սրախ մէջ եղբօրդ և քու վրադ :

— Շատ բարետիրտ էք տիկին , սպատասխանեցի :

— Հոստեղանցի էք . . . .

— Ոչ տիկին Գոչինա հաստատած եմք բնակութիւննիս . . . .

— Ուրեմն հայրենիքնիդ :

— Ելիսամէթիով . . . .

— Գիտեմ հին ատենը Ալպանիոյ թագաւորութեան մայրաքաղաքն էր :

« Այս միջոցին անոյշ և սուրճ բերին , տիկնոջ դէմքը այլայլած էր , այնպէս կը դուշակէի որ ինձ զրուցելիք մ'ունի . նշան ըրաւ , և սրահին մէջ գտնուած բոլոր աղախինները դուրս ելան , երբ մինակ մնացինք վարանելով մը ինձ նայեցաւ , -Անուննիդ սպարոն , հարցուց :

— Սամուէլ , սպատասխանեցի :

— Պարոն Սամուէլ , ըսաւ դողդոջ ձայնով մը . ես հարուստ միանգամայն ազատ եմ , և բարի մարդկանց օգնութիւնս չեմ զլանար , կուզեմ որ ձեզ հարստացունեմ . . . .

— Չեմ գիտեր ի՞նչպէս յայտնեմ երախտագիտութիւնս տիկին , սպատասխանեցի . . . .

— Միայն մէկ միջոցով մը , ըսաւ այլայլութիւնը աւելնալով :

— Ո՞րն է այդ միջոցը տիկին , հաւաստի եղիք որ ձեր հըրտանը անմիջապէս կատարել պիտի ջանանք . . . .



— Չենէ մէկը . . . այսինքն եղբայրդ կուզեմ որ միշտ քովս կենայ, ըսաւ այնպիսի կերպով մը որ մարդս երկար վարանու մէ վերջը խոստովանութեամբ թեթեւցած կը դգայ ինքզինքը:

— Ներեցէք տիկին, ըսի, եղբայրս թէպէտեւ աղքատ, բայց երբէք յանձն չառնուր ձեր քով ծառայութեան մանալ:

— Հոս իմ քովս իբրեւ իշխան մը պիտի ըլլայ, ծառաներ պիտի ունենայ, հրամանները կատարելու. հարստութիւն մտային հաճոյիցը համար վերջապէս կուզեմ որ ըսեմ, սիրտ մը զինքը սիրելու . . . :

— Կը հասկնամ տիկին, կատարելապէս կը հասկնամ, պատասխանեցի, և նախանձը որ սիրտս կը խայթէր, մէկէն ՚ի մէկ սատանայական խորհուրդ մը յղացաւ: Տիկին, ըսի, այս ձեր առաջարկութիւնը մեզ նոր կեանք կը պարզեւէ, ուստի ներեցէք որ մտերմութեամբ խօսիմ ձեզ հետ . . . :

— Կուզեմ որ իբրեւ ազգական՝ բարեկամի պէս խօսիս:

— Շատ աղէկ, ուրեմն պէտք է գիտնաք որ եղբայրս Միթրօ Գոչինայի մէջ աղջկան մը սիրահարած է, բայց այս սէրը տղայական բան մ'է, որ ազդու միջոցներով կրնայ առաջը առնուիլ:

— Ուրեմն ի՞նչ պէտք եմք ընել, հարցուց աշխուժով մը:

— Յիրաւի ես ալ չեմ գիտեր . . . բայց աղէկ միջոց մը միտքս կուգայ:

— Ի՞նչպէս . . . :

— Դուք վաղը խանութ գալով մեզ կը հրամայէք որ վիէննայի կերպաս բերել տամք, պատճառ բռնելով որ հետերը նիդ Հնդկաստան պիտի տանիք, ես ալ զինքը վիէննա կը խաւրեմ, ու իւր բացակայութեանը Գոչինա կերթամ, և Միթրօյին սիրած աղջիկը ուրիշի մը հետ կամուսնացնեմ, որն որ աղքատ ըլլալուն հարիւր ոսկի օժիտը անկարելի է մերժէ:

— Պարոն այս դորժին համար բոլոր հարստութիւնս կը վատնեմ, միայն թէ Միթրօ շատ չը կենայ վիէննայի մէջ:

— Գրեթէ երեք ամիս:

— Շատ աղէկ կը հաւանիմ, ստակի պէտք ունիս:



— Գեռ ոչ տիկին ,

— Երբոր պէտք ունենաս ան այս գիրը որ հաղար Տաճկական սակիլի դումար մ'է , ամեն սեղանաւոր քիչ մը ղեղչումով կը հասուցանէ :

« Մտորագրեալ թուղթը առնելով օտքի ելայ , « Հիմակուհիմա մնաք բարով տիկին , մտցայ նաեւ զրուցելու որ ձեր սիրոյն վրայ դեռ բան մի խօսիք Միթրոյին :

— Անհոգ եղիր բան մը չպիտի դիտնայ վաղը խանութը , երբ յառ բարով :

— Այն վաղը խանութը , ըսի և յարգանքս մատուցանելէ վերջը Մատթէոսին հետ դուրս ելայ տունէն :



## ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԹԵԼԱԴԻՐԸ

« Մատթէոս տեսածներուն վրայ հիացեր էր . երբոր տունէն հեռացանք , — Տէր իմ , ըսաւ , այն ի՞նչ շքեղ զարդարուած , այն սրբան հարստութիւն :

— Այն , պատասխանեցի զինքը դիտելով , է՛ , զրուցէ տեսնեմ , յաւելցուցի , սրչափ ստակով դո՛հ կըլլաս :

— Ա՛հ տէր իմ , եթէ հինգ հարիւր ոսկի ունենայի :

— Ի՞նչ կընէիր :

— Կը հարցընես թէ ի՞նչ կընէի . անմիջապէս վաճառականութեան կը սկսէի և . . . բայց ինչո՞ւ զրարանեմ անկարելիութեան վրայ :

— Գործունեայ մարդու մը համար անկարելիութիւն չի կայ Մատթէոս , ըսի , որ այս միջոցին նայուածքներովը զիս պաշարեր էր , միտքս հասկնալու համար :

— Իրաւունք ունիք տէր իմ , ըսաւ , միայն թէ այսպիսի դումար մը ձեռք ձգելու համար , այնպիսի մարդոց պէտք է



դիմել, որոնք դործունէութեան յարգը ճանչնալ չեն ուզեր, թէև իրենք ալ դործունէութեամբ վստայեամ ըլլան :

— Իրաւունք ունիս, ահա ասոր համար կըսեմ որ մինչև հարստանայ մարդ, պէտք է որ առաքինութիւնը մէկզի ձըգէ, քանզի հիմակուան ատենները առաքինի ըլլալով ստակ վաստկիլ, անկարելի է :

— Հաղար անգամ իրաւունք ունիս, գոչեց Մատթէոս, ահ թէ որ մէկ մը առիթը դար, կերգնում որ բոլոր աշխարհ պիտի սոսկայնեմ . . . :

— Առիթը պիտի գայ սիրելիս . . . :

— Այն ատենը դիտեմ ի՞նչ պիտի ընեմ :

— Մատթէոս, ըսի դիւական ժպիտով մը, ե՛ս քու փափաքած դումարիդ կրկինը կրնամ վաստկեցնել քեզ, միայն թէ դժուարութիւններ ունի :

« Աշխուժով մը խօսքս ընդմիջելով, — Տէր իմ դժուարութիւն ըսիր, գոչեց, հաւաստի եղիք որ մինչև վերջին շունջս պիտի մաքառիմ այդ դժուարութեանց հետ և պիտի յաղթեմ :

— Այնպիսի պարագաներ կան, որ պէտք կըլլայ մարդ մը մէջ հատեղէ վերցնել . . . :

« Մատթէոս ուները թո՛թուեց արհամարանօք :

— Հետեւաբար առանց մէկու մը դիտութեան, յաւելցուցի :

— Հաւատացէք որ ես անգամ պիտի մոռնամ, բայց միտքերնիդ բացատրեցէք ի՞նչ պէտք եմ ընել :

— Հիմա ամեն բան պիտի իմանաս, բայց նկատէ որ եթէ մէկու մը բան մը դրուցես, հաղար ոսկի պիտի կորսնցունես, ես ալ պիտի ստիպուիմ քեզ իբրև ստախօս հրատարակել :

— Ատոնք անցի, դործը ի՞նչ է :

— Ահա դործը, Միթրոյին հետ զքեզ վիճննա պիտի խառնեմ, Միթրո վիճննա պիտի երթայ, բայց ետ չպիտի դառնայ, այս ալ քու դործունէութենէդ կախում ունի :

— Սանկ ըսէ, և ես փոխարէն հաղար ոսկի պիտի ընդունիմ այնպէս չէ :



— Օսմանցի՝ եթէ հաճիս դործին կատարման : կէսը հիմա կէսն ալ վերջէն պիտի ընդունիս :

— Ե՛րբ պիտի երթամք :

— Վաղը չէ միւս օր :

— Տուր հինգ հարիւր ոսկին :

— Հիմա , միայն թէ դործը անկասկած լինիուհա :

— Մնհող եղիր դու , ըսաւ :

« Եւ Մատթէոսին հետ սեղանաւորի մը գայինք , ու հոն հաղար ոսկինոց մութհակէն քիչ մը բան զեղչելով դուռ ոսկի առի և հինգ հարիւրը Մատթէոսին տուի : Երկրորդ օրը խաթունը եկաւ և տուած հրահանգիս համեմատ վարուեցաւ , թէպէտեւ չուղելով : Ես այն ատեն Միթրոյին հաւանութիւնը ստանալէս վերջը , խորհուրդ ըրինք որ հետեւեալ օրը ճամբայ ելլայ : Երկրորդ օրը ամեն բան պատրաստ էր . Յուդայի մը պէս զինքը համբուրեցի . այն ատեն աչքերը լենալով , — Հայր իմ , ըսաւ , եղբօրս և քրոջս յետին համբոյրներս տար , և ըսէ անոնց որ այս ճամբորդութիւնս զմեզ երջանիկ պիտի ընէ . դրուցէ մօրս որ աղօթքներուս մէջ միշտ պիտի յիշեմ զինքը . . . ո՛հ , բայց կուզէի մէկ մը տեսնել զինքը , կուզէի անոր գրեացը մէջ նետուիլ : Չեմ գիտեր ի՞նչ խենդ զգացում՝ ո՛ր կըսէ , ալ չպիտի դառնաս :

« Մ.յս խօսքերը սուկացուց զիս , խե՛նդ ես Միթրօ , ըսի , երեք ամիս ըսածդ շուտով կանցնի : Գնա որդեակ Մատթէոսը զքեզ իբրեւ եղբայր պիտի նայի , ինչպէս որ գիտես մօրդ ծննդաբերութիւնը մօտ է . եթէ ոչ , ես կերթայի քու տեղդ :

— Մնաս բարեաւ հայր իմ , ըսաւ , մնաս բարեաւ , աղօթէ ինձ համար :

— Աստուած հսկէ վրադ որդեակ , ըսի կեղծ կարեկցութեամբ . . . ,

— Վերջին գիրկընդխառնութիւն մը , դոչեց , թեւերս մեքենաբար բացի , վաղեց ինձ բարեցաւ , սարսուեցայ . . . ույժով մը ետ հրեցի , ապշելով կեցած տեղը մնաց : Վախնալով որ ինքզինքս չը մատնեմ , որդեակ , ըսի , սիրտս կը կեղեքես



և քիչ քիչ այս բաժանման համար ունեցած հաւանութիւնս կը սպառի :

— Մնհող եղի հայր իմ, պատասխանեց, ես շուտով կը դառնամ, ու ետին դառնալով, Մատթէոս ճամբայ ելնելու համար ամեն ինչ պատրաստ է, հարցուց :

— Ամեն բան տէր իմ, այս բոլորին կրնամք երթալ, ըսաւ :  
« Վերջին անգամ մ'ալ պագատուեցանք : Ես Մատթէոսը մէկ կողմ քաշելով, Մատթէոս, ըսի առանց կասկածանայ տեղի տալու, եթէ դործին կատարմանը ձեռնհաս ըլլաս, խոստացած իս վրայ գումար մ'ալ կաւելցնեմ :

— Մնհող եղիք, ըսաւ ծառան պող արեամբ :

— Ուրեմն երթաք բարեաւ, ըսի և ճամբայ ելան . . . :

« Ս. յս միջոցին ծերունին խօսքը իւր վրայ դարձունելով, իմ եղևունադործութեանցս թերադիրը ոսկին եզաւ . ասով արդարանալ չեմ ուզեր, ըսաւ : Միայն թէ ուրիշ մը թերադրելով մարդասպան ըրի . . . այսու ամենայնիւ եթէ այս երկրորդը չուզէր, թերեւս հիմա մէկը պակաս կըլլար . . . այս ըսելով դուխը կուրծքին կախեց, դէմքը տժգունած :

« Իսկ ես այն դիրքը կը մտածէի այն Սարարոնի հնախօսութիւնը որն որ ծերունւոյն պատմած նոյն խուցին մէջ տեսած էի, և դիշեր մ'ալ պառկեր էի, հետաքրքրութիւնս վերջին աստիճանի էր, ուստի ծերունւոյն դառնալով նենդաւոր շարունակէ ըսի :

— Իրաւունք ունիս այդպէս կոչելու, ըսաւ տժգունելով : Ո՛վ երիտասարդ, յաւելցուց, այս առաջին անգամն է որ համարձակեցայ կենացս անցեալը միտքս բերել . . . դժայ ինձ, ես թշուառ մէկն եմ, ամեն ատեն խղճմտանայ խայթեր զիս կը հալածեն, և ուժով մը ձեռքէս բռնելով խղղուկ ձայնով մը, կը հաւատամ երիտասարդ, ըսաւ, ամեն ատեն արիւնաթաթառ դէմքեր կը տեսնամ՝ որ ինձ վրէժխնդիր նայուածքներ կուղղեն, ո՛վ են չեմ ճանչնար, բայց միշտ ահանջիս մօտ « մարդասպան » կը փափսան . . . չէս դիտեր ինչ սոսկում է այն . երբ անոնց ձեռքերուն իմ մարմնոյս վրայ դաշխը կը դղամ :







« Գոչինա գիւղին բժիշկը գեր մարդ մ'էր, գինեմուղ և գինւոյն այնչափ սէր կապած էր որ ամեն հիւանդութեան գերդ, գինի խմել կապապրէր: Ս.յս մարդը առաքինութեան ինչ ըլլալը չէր գիտեր. իրեն համար չարութիւն կամ առաքինութիւն գործելու համար բաւական էր որ մէկը վճարէր: Ս.յս մարդը գիւղին սրճարանը գոյոյ շատախօս և միանդամայն լիրբ բնաւորութիւն մ'ունէր. բարեւ տէր բժիշկ, ըսի:

— Բարեւ պարոն, ըսաւ, ինչպէս արդեօք կրնամ ձեզ ծառայել . . . :

— Ոչինչ բարեկամ, ձեր հանճարին համար ը լսելուս բաղձանք մ'ունեցայ ձեր բարեկամութիւնը ստանալու, թէև չեմ գիտեր որ այս շնորհքը ընդունելու երջանկութիւնը պիտի ունենամ արդեօք . . . : Մեր պարծենկոտ գերը կերելի որ այս քաղաքավարական խօսքերէս ախորժեցաւ. քանզի հոն գրտնուողներուն գառնալով, — Ս.հա՛ քաղաքավար աղիւս պարոն մը գոչեց, որ առաջին անգամ կը տեսնեմ Գոչինայի մէջ, և ինձ գառնալով, այս պարոն ձեր բարեկամութիւնը կընդունիմ, որ ինձի մեծ պատիւ է. ո՛ն ձեռքդ ինձ տուր բարեկամ:

— Շատ աղէկ, ըսի ձեռքս անոր երկնցունելով, կուզեմ որ արժանաւոր սկզբնաւորութիւն մ'ընենք մեր բարեկամութեան Սրասուլին գինեատունը աղնիս սեաւ գինի մը կայ, որուն յուսամ թէ պիտի հաւնիս:

« Սկամայ տրախութեան շարժում մ'ընելով, — Ս.յո՛, ըսաւ, արդէն փորձեր եմ սոյն գինին, և կը խոստովանիմ որ ամենալաւ գոյոյ:

— Ուրեմն երթանք այս փորձը կրկնապատկենք:

— Եռապատկենք թէ որ կը հաճիս, ըսաւ և գէպ'ի գինեատունը ուղղեցանք. գինեատան մէջ մարդ չը կար գինեատան տէրը Սրասուլ փայտէ աթոռակի մը վրայ կը մըարէր:

— Է՛ Սրասուլ արթնցի որ միշտ յաճախորդ կերազես, պոռայ բժիշկը, երազի չը հաւատացողներուն ահա ապացոյց մը, յաւելցուց թորենիցի ծիծաղով մը:

— Հրամայէք պարոններ, ըսաւ աչքերը շփելով և յօրան



ջերով գինեպանը, պարտեղը տունկին տակ կը նստիք թէ ներսը:

— Պարտեղը, պարտեղը որդատունկին տակ:

— Շատ աղէկ, ըսաւ Ս.բասօլ և երկու փայտեայ աթուակներ դրաւ պարտեղին հեռաւոր անկիւններէն մէկը որ ծանրութեամբ մը բժիշկը և ես նստանք:

— Ի՞նչ գինի կուզէք, Սանդուրին թէ կիպրոս . . .

— Աչ, տեղացի սեաւ գինիէդ բեր:

« Գինեպանը հրամանը կատարել փութայ:

— Բարեկամ, ըսի, անցածները չեմ գիտեր ով ձեզի համար քաջ քիմիագէտ է կըսէր . . .

— Քիմիեագիտութեան կարելիութենէն անդին շատ անցած չեմ:

— Իրան է որ պղինձը ոսկի կարենայ ըլլալ, քիմիաբանական փորձերով:

— Ինձ համար դեռ անկարելիութիւն մ'է այդ, այսու ամենայնիւ փորձը ձեռքէ չեմ թողուր:

« Ս.յս միջոցին Ս.բասօլ թիթեղեայ հօխանոցով մը գինին բերաւ աթուակին վրայ թողուց և գնաց:

« Բժիշկը աչքերը ուրախութեամբ գինիին վրայ դարձուց և,  
— Ս.հա բարեկամութիւնն ալ այսպէս կըլլայ, գոչեց և սկսանք դառաթ պարսկել:

— Թէ որ ինձ հարցընեա, բժշկութիւնը սքանչելի գիտութիւն մ'է, արհեստ մը՝ որ ամեն մարդու պէտք է . . .

— Բայց և այնպէս, սլատասխանեց խօսքս ընդմիջելով, օրական հացերնիս ճարելու համար շատ նեղութիւն կըողներ կան մեր մէջ:

— Իրաւունք ունիս բարեկամ, ես Պօլսոյ մէջ բժիշկ բարեկամ մ'ունէի, որ ուրիշ բժիշկները գինքը չը քաշելուն ամբաստանեցին թէ կաշառքով քանի մը հողի թունաւորեր է, և ի՞նչ մեղքս պահեմ ես անդամ կասկածեցայ, բայց եկու տես որ բժիշկները չը կըցին հաստատել, վասն զի ամենեւին նշան մը չէին գտեր մեռեալին վրայ:



— Ս,յդ ալ բան է, ես ալ այնպէս թոյները դիտեմ, որ մարդ մը այսօր առնելով տասն և հինգ օրէն մեռնի առանց մեռեալին ներսի դին նշան մը թողլով:

— Ս,յդ անկարելի է, մկնդեղը անկորուսելի յասկու թիւն մը ունի:

— Ստի ստոյգ է Եւրոպայի համար, բայց այս տեղի բժիշկները աւելի կուզեն պարծիլ քան թէ դիտնալ. օրինակի համար, այս ինչ դեղին մէջ դարին թըջեցիր, այն դարին ածան հաւի մը ածելու մօտ կերցուցիր, հաւը պիտի մեռնի, բայց քեզի հաւկիթ մը պիտի թողու՝ ահաքը խիտ անմեղ, որ ուտողը քիչ ատենէն բնական հիւանդութեամբ մը պիտի մեռնի. է՛հ, այն ատեն բժիշկները կըսեն թէ՛ այս մարդը պիտի մեռնի եղեր:

— Բարեկամ, կազաչեմ գոցենք այս խօսքերը և մեր գինւոյ խնդիրը ձեռք առնումք . . . :

— Խիտ բարի. ես արդէն այսպիսի խօսակցութիւններէ չեմ ախորժիր, միայն թէ հետաքրքրութիւնս յագեցնել ուղեցի. կենանցդ:

— Կենանցդ բարեկամ . . . ուրիշ մ'ալ . . . :

— Է՛. վերջը տանը ճամբան չեմ գտնար:

— Հոգ չէ, ես դքեզ կը տանիմ մինչեւ տանդ գուռը:

— Շնորհակալ եմ, սովորութիւն չունիմ պալատականներով տուն երթալ, որ կնոջս հետ անմիջապէս կուտելու առիթ տամ:

— Ուրեմն չեմ ուզեր քեզ արդեւք ըլլալ, դարձեալ տեսնուիք:

— Բարեկամ, գիւղին սրճարանը իմ սովորական գրօտատեղիս է. անիծեալ ըլլան այս գիւղին մարդիկը որ ամենեւին չեն հիւանդանար և կը հարկագրիմ սրճարանէն գուրս չելլալ. ուստի բարեկամի մը պէտք ունեցած ատեննիդ զիս հոն պատրաստ պիտի գտնաք:

— Ուրեմն կեցիք բարով:

— Երթաք բարով, ըսաւ բժիշկը ինձմէ դատուելով. իսկ



եւ նոյն ժաման իշտիպ դացի եւ դեղագործին հետ գործս լըմընցընելէս յետոյ հեռեւեալ օրը դառնալով գործի սկսայ :

« Սյս միջոցին պատմութիւնը չկրցաւ յառաջացնել, աչքերը սովալլուկ նայուածք մը առաւ եւ սաստիկ կը դողար : Պահ մը այսպէս անցնելէ ետքը դարձեալ շարունակեց :

— Տասն եւ հինգ օրէն կինս մեռաւ եւ ես էի մեռցնողը . . . թունաւորեցի՛, դոչեց խղի ուկ ձայնով մը, եւ դլուխը կուրծքին ծակեց անհասկնալի խօսքեր մըմնջելով . իսկ ես ասղչած մնացեր էի . . . : Աղէկաուր տեսարան մ'էր մայր եւ աղջկան օղբերը . Ղիուլ իւր փոքրիկ թեւերովը գրկեր էր հիւանդը՝ մահուան ճիրաններէն դայն քաշելով յափշտակել կուղէր . իսկ իմ փան ստքին քով կարտասու էր, եւ ես քար կտրած մէկ կողմ կեցեր էի : Նոյն միջոցին հիւանդը խօսիլ սկսելով՝ հազիւ լսելի սա խօսքերը արտասանեց :

— Զանկըներս, ըսաւ, այդ արտասուքները՝ զոր ինձ համար կը թափէք, իմ ցաւերս կաւելցնէ . Ստուծոյ կամքը այս է եղեր, իւր հրամանները օրհնեալ ըլլան . . . :

— Մայր իմ, մի՛ մեռնիր, ո՛հ մայր իմ, մի՛ մեռնիր, ըսաւ Ղիուլ, աղէկաուր ձայնով մը :

— Իմ մեռնելս հոգ չէ, քանզի գիտեմ որ անդին իրարու քով պիտի ըլլանք միշտ . այսու ամենայնիւ, ըսաւ արտասուելով, ո՛հ դեռ ապրիլ կուղէի . . . առանց սիրելի Միթրօս տեսնելու մեռնիլ . . . : Եւ դլուխը ինձ դարձնելով, Եւ դու ո՛վ սիրելի ամուսինս, ըսաւ, եթէ քեզ վշտացուցած եմ, կը խընդրեմ որ ներես . . . ձեռքդ ինձ տուր սիրելիս :

— Ահամայ ձեռքս երկնցուցի, որ բռնելով աղերսարկունայուածք մ'ուղղեց ինձ եւ ձեռքս համբուրեց, իսկ ես կը դողայի :

— Դու կը դողան, ըսաւ, եւ ինչո՞ւ ինձմէ երեսդ կը պահես . . . ո՛հ, կը խնդրեմ ինձ համար մի՛ լար, ես երանութեան մէջ ծնելու համար կը մեռնիմ . միայն թէ չմեռած կաղաչեմ որ զաւկներուս խնամք տանիս, զոր քիչ մը ատեն քու կողալ էին . զբուցէ, Մամուէլ, պատասխան տուր որ հանդարտ սըր-



տով մեռնիմ: Իսկ ես խօսելու անկարող, գլխովս հաստատա-  
կան նշան մ'ըրի:

— Ա՛հ, ըսաւ, շնորհակալ եմ քե՛նէ. հիմայ դո՛հ որտով կը  
մեռնիմ: Եւ վերջին անգամ ձեռքերը դաւկներուն երկնցընե-  
լով դրկեց զանոնք սրտին վրայ և համբուրեց . . . քիչ քիչ սկը-  
սաւ նուազիլ, երկայն հառաչանք մ'ելաւ որտէն, աչքերը  
դարձան. անկողնոյն մէջ ահռելի կերպով անդադար թա-  
պըլտըկելով՝ իւր մահուանը հետ կը կուռէր խեղճը. ծնտաին  
ջղերը քաշուեցան, դեռ խօսիլ կուղէր, բայց չէր կրնար. վեր-  
ջին անգամ բոլոր ուժը ամփոփելով միայն սա շափ կրցաւ խօ-  
սիլ, հաղիւ լսելի ձայնով: — Ա՛հ, կը մեռնիմ Միթրօս, սի-  
րելիս, Միթրօս . . . ա՛հ:

« Ամեն բան լմացաւ: »

« Այս տեսարանը զիս այնպէս թմրեցուցեր էր, որ ո՛չ կը  
զգայի ոչ ալ կը լսէի, խելքս գլուխս չէր. այնպիսի ցաւեր կան  
որ նկարագրելը անկարելի է: Իվանին և Ղիուլին աղեկէզ ող-  
բերը զիս բոլորովին շուարեցուցին. արիւնս գլուխս զարկաւ,  
աչքերս մթնցան, քիչ մնաց պիտի իյնայի: Մէկէն ինքզինքս  
սենեակէն դուրս նետեցի, կը վազէի առանց ուր երթալս զիս  
նալու, վազրի նման իմ շուքէս կատողելով կը վախսէի: »

« Հետեւեալ օրը յուղարկաւ որու թիւնը կատարուելով՝ դիւ-  
ղինս գերեզմաննոցը ամփոփեցին մարմինը: Քանի մը օրէն կա-  
մայ կամայ սկսայ թուրու խաթունը մտածել և քիչ ատենէն  
խիղճս բոլորովին հանդարտեցաւ: Ա՛լ անկէ վերջը անհամբեր  
Մատթէոսին գալստեան կսպասէի. երեք ամիս շարունակ իբր  
խանդակաթ հայր մը խնամեցի տղաքը. վերջապէս օր մը մու-  
թը կոխեր էր, երբ Մատթէոս եկաւ. անմ' շապէս զինքը մէկ  
կողմ առնելով՝ ի՛նչ լուր ունիս, ըսի, բայց անոր նայուածքէն  
դո՛հ եղայ. յետոյ բարձր ձայնով ո՛ւր է Միթրօ, գոչեցի, կեղծ  
այլայլու թեամբ մը: »

« Աղետալի բացատրութիւն. Մատթէոս առանց պատաս-  
խանի աչքէն վազած արտասուաց կաթիլները սրբել սկսաւ: »

— Բայց խօսէ՛ սխառցին երկուքը միատեղ միթէ մեռաւ: »



— Մատթէոս գլխովը հաստատական նշան մը ըրաւ որ այս միջոցին այն բառէն աւելի սոսկալի էր :

— Բայց, ըսաւ, իվան ի՞նչ հիւանդութենէ մեռաւ :

— Սիրելի պարոնիկներս, պատասխանեց Մատթէոս, հիւանդութենէ չը մեռաւ, այլ ինքզինքը գիշեր ատեն նաւէն ծով նետեց մինչ նաւը իւր ճամբան կը շարունակէր :

— Նաւէն ծով նետուեցա՞նք ըսիր պօռացին, բայց ի՞նչ պատճառաւ : — Այո՛, ի՞նչ պատճառաւ, յաւելցուցի ես ալ :

— Մատթէոս ինձ սուր նայուածք մը ուղղելէ յետոյ պատճառը չեմ գիտեր, պատասխանեց, միայն թէ ամեն օր ինձ սիրտհէոյ վրայ կը խօսակցէր : Մնկէց վերջը միայն հեծկըլտալու ձայներ լսուեցան :

— Պէտք էիր իրմէն չը դատուիլ, որ անձնատապանութիւնը արդիւէն յարեց լիուլ :

— Ես միշտ քովն էի, բայց դժբաղդարար ամենուն քուն եղած ժամանակը իւր մտքին դրածը կատարեր էր :



## ՄԱԼԹՈՒ ՆԱԻՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԸ

« Այս միջոցին նստած աթուակիս քովէն հաղալու մեղմ ձայն մը ելաւ :

« Ծերունին մէկէն պատմութիւնը ընդմիջելով — կարծեմ մէկը զմեզ մտիկ կընէ դոչեց :

« Նստած աթուակիս իրարու վրայ դիզուած պարկերու կաթնցուցեր էի, անմիջապէս նոյն պարկերուն ետին նայեցանք բայց մարդ չկար : — Երեւակայութիւնը զիս խաբեց, ըսաւ, կարծեցի թէ ձայն մը առի :

— Այսու ամենայնիւ ես ալ առի այդ ձայնը, ըսի, և ծերը անհանգիստ նայուածք մը շրջեց իւր բոլորաթիւրը կասկած անայ



բան մը չի գտնելուն իւր պատմութիւնը դարձեալ սկսաւ շարունակել :

— Քանի մը օր վերջը Մատթէոսը կանչեցի սենեակս և իրեն ըսի . Մատթէոս , կուզե՞ս որ հարստանաս :

— Մնչո՞ւ չա , կը տեսնես որ հարստանալու համար ամեն բան յանձն կառնեմ և հետեւաբար երբ առիթը ինձ ներկայացուցիր՝ դորժի մէջ ճշգուծիւնս տեսար :

— Այո՞ , դիտեմ բայց այս անգամ մարդ մը մեռցնելու վըրայ չէ խնդիրը որ վստահ ըլլամ , այլ մարդ մը ազատելու :

— Պատուոյս կը դաշխս , ըսաւ , բայց այսու ամենայնիւ դնոյն բարձրութիւնը ամեն բան կը դիւրացնէ :

— Մարդու մը կեանքը ազատելու համար ինչո՞ւ բարձր դին կուզես :

— Քանզի շատ անգամ մարդ մը ազատելու համար քանի մը հողի սպաննել հարկ կ'ըլլայ :

— Ա՛յ , Մատթէոս ո՛չ , այս անգամ խնդիրը պարզապէս իմ էորածին զաւկիս վրայ է . կուզեմ որ Մակարոս իբրեւ քու զաւակդ սնուցանես և ահա այս ծառայութեանդ համար քեզ տասը հազար ոսկի պիտի տամ , այն պայմանաւ որ մէկ մ'ալ այս կողմերս չերեւիս :

« Մատթէոս այս միջոցին անձկութեան քրտինք կը թափէր , իսկ ես նորէն շարունակելով՝ Գու այս ստակը ուր որ ըլլաս նայէ որ խնայողութեամբ դորժած ես . Մատթէոս , իմ մի միակ զաւակս քեզ կը յանձնեմ և միշտ ձեռնառութիւնս չի պիտի զլանամ քեզ , մինչեւ որ ատենը դայ զաւակս քեզմէ առնելու և այն տասը հազար ոսկին քու վարձքդ պիտի ըլլայ . խօսէ կը հաճիս :

— Տէր իմ , պատասխանեց Մատթէոս , քանի որ դուք դիս հարստացնել կուզէք , ես ալ կ'երդնում որ քու զաւակդ երջանկացնելու պիտի աշխատիմ , իբր իմս նկատելով և պիտի շահամ վերջը զքեզ դո՛հ ընել :

— Շատ աղէկ , ըսի , ահա քեզի 10000 ոսկիի փոխանակադրեր Պօլսոյ սեղանաւորներէն՝ Գամօնաօյէն վճարելի , դնա կէս



դիշերուան համար ճամբորդ ու թեան պէտք եղածը պատրաստէ :

— Ուրեմն այս դիշեր ճամբայ պիտի ելլամ :

— Ս,յո :

— Բայց այն ատեն զիս փախտտական պիտի հրատարակեն :

— Հոգ չէ ատի, մէկ մ'ալ հոս չգալդ կ'ապահովէ :

— Բայց ձեր հոս մնալովը Միթրոյի անձնասպանու թեան վրայ կարծիքներ պիտի տարածեն :

— Ես ալ այս դիշեր պիտի հեռանամ ասկէ, բայց ալէկ միտքս եկաւ, պատմէ Միթրոյին անցքը տեսնեմ անկասկած լինցե՞ր է :

— Սէլւնիկէն Մալթա անուն նաւ մը հեծանք, որ Գալաս պիտի երթար. հետս կէս տակառի շափ ուսմ առեր էի, դիշեր մը Միթրոն սովորականէն շատ խմած ըլլալուն կանուխ քընացաւ. ես սկսայ ղեկավարին հետ խօսիլ, այս միջոցին նաւուն վրայ անկէ ուրիշ մարդ չկար, ամենն ալ խոր քնոյ մէջ էին նաւապետն ալ իւր խուցը գացած էր. անունդ ի՞նչ է բարեկամ, հարցուցի ղեկավարին :

— Ճօրճի, պատասխանեց :

— Քանի՞ տարեկան ես :

— Տասն և վեց :

— Ռօմ մը կը խմե՞ս :

— Շատ կը փափաքէի բայց արգիլեալ է :

— Ա՞յլ պիտի զրուցէ նաւապետին, ե՞ս, ո՞չ :

— Իրաւունք ունիս ըսաւ, և ես շիշը անոր ներկայացուցի, զոր կէտը վերադարձուց ինձ :

— Ի՞նչ վարձք կառնես :

— Սմիտը չորս թալեռ :

— Գժբաղդ պատանի, ըսի, մեր քովը Միթրո աթոռի մը վրայ կը մրարէր : Գարձեալ շիշը ներկայացուցի ղեկավարին :

— Բարեկամ, ըսաւ, դիտես որ քու Ռօմդ զլուխս տաքցուց :

— Տղայ մի՛ ըլլար, շատ քիչ բան էր խմածդ, և կրկին շիշը բերանը առնելով, այս անգամ քառորդ մասը խմեց, ու երբ շիշը վար կառնէր, ի՞նչ կընես բարեկամ, ըսի, շիշը ա-



նոր բերնին մէջ շտկելով . դու ալ իմ խեղճ բարեկամիս նմանեցար , որ շուտ գինովնալու դժբախտութիւնն ունի :

— Ե՞ս , ոչ , ես կրնամ սասնկ տասը շիշ ալ խմել :

— Մի վախնար , ուսմա չհատնիր . այս ըսելով դացի նորէն շիշը լեցուցի տակառէն և ղեկավարին մօտենալով , տեսնանք այս ալ , ըսի , պիտի կարենան խմել , գինով չըլլող պարոն :

« Կերելի որ այս խօսքը երիտասարդին ծանր եկաւ . քանզի առանց պատասխանելու շիշը ձեռքէս առաւ , և մինչև կէսը խմելէ վերջը ինձ տուաւ ըսելով .

— Բարեկամ , կարծեմ գինեպանութիւն ընելու համար Գալաս կերթաս . եթէ միտքդ այդ է , քեզ խորհուրդ կուտամ որ սա անիծեալ ուսմդ յաճախորդներուդ շտաա :

— Ինչո՞ւ :

— Ինչո՞ւ , է՛հ , խելքս կը դառնայ . սա խռկացող բարեկամդ ալ արթնցու որ միատեղ խմենք :

— Բարեկամ , մի արթնցուներ , վասն զի քունը գլուխը եղած ժամանակ ափիտն ծխողի մը պէս է :

— Աւելի աղէկ , ե՛ս , ե՛ս , ծանր գլուխ մարդը չեմ սիրեր , ես պիտի արթնցնեմ զայն ըսելով , քովը գնաց . այն միջոցին ես Միթրօին պառկած աթուին վրայ կնալով գրկեցի , իբր թէ զայն արթնցունելը արդիլել կուղեմ . ղեկավարը անոր թեւը քաշել կուղէր , և թո՛ղ , կրսեմ ըսած ժամուն ես Միթրօն ծովը նեաեցի , երկուքս մէկ բերան ճիշ մ'արձակեցինք :

— Ի՞նչ ըրիր , անդդամ , դ ոչեցի . . . պատանուոյն երեսը մտխիր դարձաւ և լեզուն կապուած մնաց : Իսկ ես մտածելով որ իմ ղեկավարը գինովցրնելէս կարելի է կասկածին , դժբախտ երիտասարդ , ըսի , ձայն մի հաներ որ գոնէ անպատիժ մնաս . ես աղէկ գիտեմ որ դու յանցանք չունիս , եթէ ոչ՝ ծանր կերպով կը պատժեն զքեզ ձեր սովորութեանը համեմատ . ուստի վաղը կրսենք թէ ինքզինքը ծովը նեաեր է . ի՞նչ ընեմք , բան մըն է եղաւ :

— Ո՞վ աղնիւ պարոն , կեանքս կը շնորհեա , ըսաւ :

— Լուսթիւն կը պահանջեմ , շուտ գործիդ նայէ , ես ալ



պատկիմ ըսելով քաջուեցայ սենեակս : Քիչ մը ատեն անորոշ ձայներ լսուեցան , բայց խուցս քաջուած ժամուս ձայները կտրած էին և ամեն բան խոր տեղը հանդարտ էր : Հետեւեալ սուսուօտուն անկողնէս ելնելով Միթրօին խուցը դացի և բնականաբար զինքը հոն չգտնելով վեր ելայ հարցուցի . զարմանքը պատեց նաւուն մէջ . դարձեալ խուցը իջանք , այս անգամ անկողնոյն վրայ նամակ մը կար : Անմիջապէս բացի , որ յունարէն գրուած էր . նաւապետին տուի , որ սա խօսքերը կարդաց .

« Բարեկամ , սիրուհւոյս անհաւատարմութիւնը զիս այս  
 « կեանքէն ձանձրացուց . մնաս բարով սիրելիս , զբուցէ մօրս  
 « որ մխիթարուի՝ յաւիտենականութեան մէջ իրար կը հանդի-  
 « պինք . յարգեցի զինքը , քանզի կանանց մէջ առաքինի ճանչ-  
 « ցածներէս մէկն է . իմ կողմէս յետին ողջոյնս տար եզրարցս  
 « և ըսէ անոնց որ ինքզինքս ծովը նետեցի . աղօթեցէք ինձ  
 « համար . . . » :

ՄԻԹՐՕ

« Գրութիւնը լմացընեւէ վերջը նաւապետը զիս մխիթարե-  
 լու ջանաց . վերջապէս Գալասէն ետ դարձայ հոս եկայ , հի-  
 մայ դարձեալ պատրաստ եմ հրամաններդ կատարելու :

— Կեցցե՛ս , ըսի , շատ դոհ եմ քենէ . կարճ խօսիմ նոյն զի-  
 շերը գաղտուկ զուակս Մատթէոսին յանձնեցի և ես ալ Թիլի-  
 պէ դառնալու ճամբայ ելայ . Երեք օրէն Թիլիպէ հասայ , բո-  
 լորովին սգոյ զդեստներ հազուելով Բուբուլ խաթունին ներ-  
 կայացայ : Առաջին անգամ զիս տեսնելուն խնդումով Միթրօն  
 հարցուց . Ես սկսայ հեծկլտալով լալ :

— Ի՞նչ եղաւ , ի՞նչ ունիս դոչեց տաղնապով մը :

— Տիկին , պատասխանեցի , Միթրօ ճամբան ինքզինքը ծո-  
 վը նետեր է :

« Խաթունը ճիշ մը արձակեց և նուաղելով դիտինը ինկաւ .  
 նաժիշաները շուտ մը օգնութեան վաղեցին , խիստ դժուար ըս-  
 թափեցաւ . այնուհետեւ չորս ամիս շարունակ զիս քովէն չէր  
 հեռացներ . վերջապէս օր մը ինձ ըսաւ որ Հնդկաստան պի-



տի դառնայ, այն ատեն միտքս յայանեցի որ իրեն հետ ամուսնանալով զինքը երջանիկ ընելու պիտի աշխատիմ. Պատասխանեց թէ՛ անկէ վերջը ամուսնանալու միտք չունէր. ուստի պէտք եղաւ բոլոր ակնկալութեանցս երթաք բարով ըսել և Ֆիլիպէէն հեռանալ. զուր տեղը երկու հոգի մեռցուցեր էի. ամեն զիշեր ուրուականնին կը տեսնէի, զոր վրէժխնդիր աչօք ինձ կապառնային. եթէ զաւակս չմտածէի՝ այսպիսի կեանք մը շարունակելը ինձ անկարելի էր. շատ տարիներ փնտռեցի զայն, բայց անհնար եղաւ անոր վրայ տեղեկութիւն մը ստանալ և ալ բոլորովին յոյսս կտրելով՝ երկու տարի է որ հոս առանձնացած եմ. Հիմայ, ըսաւ ծերունին, խօսքը ինձ դարձնելով, ա՛ռ այս կտակը և կը փափաքիմ որ մէջի պարունակութիւնը ճշդիւ կատարես: Վառարանին քով նստելով սկսայ կարդալ. դեռ կէսը հազիւ կարդացած էի՝ մէկ մ'ալ դռնէն ներս խոժոռադէմ մէկը մտաւ երկու ձեռքը ատրճանակներ բռնած:

— Անշարժ կեցի տեղդ անդդամ, գոչեց, արդարութեան ժամը հասաւ. ես ոստիկանութեան պաշտօնեայն եմ, հոս պահուելով ամեն բան լսեցի. տո՛ւր այդ կտակը ինձի:


« Ծերունին անմիջապէս տեղէն ցաթկելը կտակն առնելն ու կրակը նետելը մէկ ըրաւ, որ մէկէն բոցը պաշարեց և աճիւն դարձուց:

— Ո՛հ, պոռայ կարծեցեալ պաշտօնեայն, ուրեմն դու ալ սատկէ ծեր եղեռնագործ, ըսաւ, և ձեռքի ատրճանակը ծերունւոյն վրայ պարպեց. դնտակը անոր ուղեղին մէջէն անցեր էր: Ծերը առանց ձայն հանելու գետինը թաւալեցաւ շնչասպառ և մարդասպանը անմիջապէս անյայտ եղաւ:

« Ս,յն ատեն զիս վերաւորող գողերուն գլուխը միտքս եկաւ, որ շատ կը նմանէր այս ոստիկանութեան կարծեցեալ պաշտօնէին. բարեբախտաբար կտակին այն մասը կարդացեր էի, որ կրսէր թէ դրանք սեմին տակ թաղուած է լոնտրայի դրամաթուղթերը. իսկոյն գործի սկսայ, և սեմին տակը փորելով յիշաւի պղտի սնտուկի մը մէջ ամփոփուած գտայ յիշեալ



դրամաթղթերը . անկէ վերջը հոն կենալու պատճառ մը չունե՞  
 նալուս նոյն դիշերը ջորին հեծներով դացի ադամանդեայ արե՞  
 դակն առի և քարայրը բերի որուն ադամանդները քակեցի և  
 ջորին դամբին մէջ տեղաւորեցի , ու ծերունոյն մարմինն ալ  
 բացած փոսիս մէջ թաղեցի . հետեւեալ առաւօտը այն եղեալ  
 նալից տեղերէն հեռանալով Լոնտրա դացի և հոն ինչպէս որ  
 դիտես՝ արեգակին մէջտեղի մեծ քարը երեք միլիոն ոսկիի  
 ծախսեցի Լորտ դերդաստանի մը ու վերջը Պօլիս դարձայ կինս  
 ու զաւակս գտնալու . . . ալ անկէ վերջի պատահածները ար-  
 դէն դիտես , ըսաւ Սօֆեան պէյ տխրութեամբ » :



## ԶԻՖԹ-ՍՈՒԻՅԻ ԶԲՕՍԱՎԱՅՐԸ

Այս միջոցին արեւը մարը կը մանէր խր կարմիր ճառա-  
 դայթները քղանցքի մը պէս ետին ձգելով . իսկ Միհրդատ լը-  
 սածներուն վրայ զարմացած բառ մը արտասանելու անկարող  
 եղած էր . Սօֆեան պէյ ժպտտով մը անոր դառնալով ,

— Է՛հ , ըսաւ , քիչ մ'ալ քու վրադ խօսինք :

— Տէր իմ , պատասխանեց Միհրդատ , իմ վրաս խօսելու  
 բան մը չպիտի գտնաք :

— Ընդ հակառակը , շատ բան կայ քու վրադ խօսուելիք .  
 դու խօսէ , դեռ երիտասարդ ես , տեսնեմ սիրահարեցա՞ր :

Այս հարցման վրայ Միհրդատ շուարեցաւ մնաց . առաջ  
 ջուց ոչ սկզբնաւորութիւն մը եղեր էր , և ոչ անոյշ դարձու-  
 ած քով մը այս խօսակցութիւնը սկսեր էր . մարդու մը սրտին  
 գաղտնեացը թափանցել ուղղը լակոնական ոճով խօսելու չէ ,  
 որ սիրար դոցող կղպակին դարձ մ'ալ կուտայ . բայց այս ան-  
 դամ հակադարձը եղաւ , ինչու որ Միհրդատ Սօֆեան պէյին  
 դառնալով ,



— Ս,յո՛, պատասխանեց :

— Օ՛ հօ՛, շատ աղէկ . բայց տարփածուները քանի մը կարգ են , այսինքն կան այնպիսիներ , որ թէեւ զիրար կը սիրեն , բայց ամուսնանալ անկարելի է անոնց համար . ուրիշ տեսակ մ՛ալ կայ , որ սիրահարու թիւնը իրենց համար փաքը զբօսանք մ՛է . տեսակ մ՛ալ կայ , որ երիտասարդը կամ օրիորդը անհամեմատ կը սիրէ՝ դիմացինէն առանց սիրուելու , որ նորելուկ խենդու թիւն մը չէ . իսկ տեսակ մ՛ալ կայ , որ ամենէն զգուելին է , այսինքն առանց սիրելու կը սիրեմ ըսելով իւրեանց տարփածուն խարողները , որ շատ անգամ կանայք կըլլան . հիմայ զրուցէ տեսնեմ՝ դու ո՞ր կարգէն ես :

— Տէր իմ , կը համարձակիմ զրուցելու որ ես բախտաւոր երջանիկներուն կարգէն եմ :

Սօֆեան պէյ յօնքը կնճռելով քիչ մը մտածեց ու ըսաւ .

— Ուրեմն Միհրդատ , խիտ երջանիկ ես :

— Ս,յո՛ , տէր իմ , պատասխանեց . ես այս մասին հաւաստի եմ որ երջանիկ պիտի ըլլամ . իսկ ամուսնանալու մասին քիչ ատենէն կը յուսամ որ տիկին Արուստը ձեզ ներկայացնեմ :

— Մտիկ ըրէ , Միհրդատ , ըսաւ Սօֆեան պէյ . միտքս քու սիրուհիէդ բաժնել չէ դքեզ , այլ դու դեռ չես զխտեր կիներ ի՞նչ ըսել է . կանայք դիւրադդած ըլլալովսին ոչինչ բանէ մը կը զայրանան և վայ այն մարդուն՝ որ կին մը սխ պահած է իրեն . իսկ սիրոյ մասին միշտ նորը յարգի է աչքերնուն . անոնցմէ սիրոյ յարատեւութիւն սպասելը անմտութիւն է . երիտասարդ մը իրենց դիւ թիչ ազգեցութեամբը հրապուրելէ վերջը՝ անոր կեանքը դառնայնելը իրենց զբօսանք մ՛է . անոնց սիրտը կուրծքերնուն մէջ շաղացքի անուոյ կը նմանի , որ կը դառնայ ու կը դառնայ , մինչեւ իրեն փշրածը լմացընէ , յետոյ կը դադրի . այո՛ , կը դադրի նորէն սկսելու համար . անոնք երջանիկ չեն երբ շունին մէկը իրենց համար արտասուող : Ս,յո՛ սու ամենայնիւ համեատ աղջիկներու համար չէ իմ ըսածներս . կը հասկընան Միհրդատ :

— Սմենակատարեալ կերպով Տէր իմ , և եթէ այս գիշեր



Զիֆթ-սուի դալ բարեհաճիք, ձեր "գառողութեանը պիտի յանձնեմ սիրուհւոյս համեստութիւնը:

— Այս դիշեր գործ ունիմ չը պիտի կարենամ դալ բայց անշուշտ ուրիշ անգամ պիտի տեսնամ: Եւ Սօֆեան պէյ, ոտքի ելլալով, զժամը տասն երկուքը անցեր է, ըսաւ խօսակցութեան դբաղելով ժամանակին անցնիլը չխմայանք, և ձիապանին գառնալով ձիերը բերել հրամայեց: Զիապանը ձիերը քարէ սանդուղին մօտեցուց. . . .:

— Պապա կարապետ, կանչեց Սօֆեան պէյ, ստակդ աթուռակին վրայ թողուցի:

— Շնորհակալ եմ տէր իմ, ըսաւ ձերը աշխուժիւ, միշտ քառապատիկ կը հատուցանէք Ստաուած օրհնէ զձեզ. . . .:

— Այս օրհնութեանց մէջէն երկու բարեկամները ձի հեծնալով աներեւոյթ եղան:

« Պապա կարապետ անհոգ կերպով ստակներուն քով վազեց, գոհ սրտով համբեց զանոնք և զգուշութեամբ քսակին մէջ տեղաւորեց. այս դիշեր, ըսաւ, բարեկամաց հետ աղէկ խնջոյք մը կրնամ ընել: Եւ մութը կօխելուն խանութը դոցելով Պէօյիւք-տէրէյի ճամբան բռնեց:

Մենք ալ ընթերցողնիս Զիֆթ-սուիյի դբօսալայրը կը հրաւիրենք. ժամը դիշերուան տասն երկուքն է, այս դբօսատեղւոյն մէջ տեղը շինուած է սրճարանը, ( աքասիա ) ծառերով զարդարեալ պարտիզակը բազմութեամբ լցուեր էր, աւերորդ բազմութիւն մ'ալ Պարտիզակին առջին վրդովեալ ալեաց նման կը տարութերէր. դիմացէ դիմաց երկու փայտեայ սիւնակներու մէջ առասանի անցուած փոքրիկ հրախառ տեսակ մը բամբուշտներ կախուած էին որոնք տարվածու պարոններուն իրենց սիրուհիները լուսոյ մէջ տեսնալու պիտի ծառայէին: Սրճարանին դիմացի կողմը ծովուն վրայ փոքրիկ մարդադետնի մը մէջ երաժիշտները պղտի լապտերներով զարդարուած բարձրաւանդակի մը վրայ շարուեր կ'երգէին հետեւաբար եղանակի տետրերու վրայ սեւեռած էր աչքերնին, թէպէտեւ նըռաագածնին տետրին մէջ չկար: Մերթ ընդ մերթ կրակ տուող



տղոյ սուր ձայնը կը լսուէր որոնք գլանիկ մը վառելուդ ան միջապէս ստակ կը խնդրեն :

Պարտեզին դրան գիմացովը պատին տակը երիտասարդ մ'էր նստեր վայտեայ աթոռակի մը վրայ . աթոռ մ'ալ թեւին տակը առած ըլլալով մէկ կողմէն պառկածի պէս կը կենար առջեւը պզտի բլաթի մը մէջ շիշ մը քարեջուր և դաւաթ մը դրուած էր , ձեռքը եղեգ է գաւազան մ'էր բռներ զոր այս միջոցին արագ արագ իւր դեղին սունազգեստին կը զարնէր . այս երիտասարդը մեր Հիւնքեար-սուի ճանչած Պ . Թադէոսն էր :

Նոյն միջոցին պզտի խմբեակ մը կը յառաջանար Պ . Թադէոսին կողմը , երկու դեռահաս աղջիկներ թեւ թեւի մտած առաջէն կը քալէին խօսելու և խնդալու զբաղելով . կ'երեւէր որ մտերիմ բարեկամահիներ էին , ետեւուն ալ երեսուն տարեկան կնոջ մը հետ բարձրահասակ և դրեթէ նոյն տարուօք պարոն մը ձեռքը երկայն ծխաբոյր մը բռնած , ծանր ծանր կը յառաջանային . Պ . Թադէոսին առջեւ հասած ատեննին աջ կողմի օրիորդը իւր մտերմահւոյն թեւը դրդեց :

— Աղջիկը դառնալով ի՞նչ կայ Շաղիկ հարցուց . . . :

— Չե՞ս տեսնար քուկինդ պատին տակը նստեր է ըսաւ . . . :

Աղջիկը աշխուժով մը գլուխը դարձուց և պարոն Թադէոսը տեսնալով փոխադարձ թեթեւ ժպիտ մը փոխեցին իրարու նշանացի կերպով՝ զոր պէտք էր շրթունքը խածնելով աչքին ծայրէն նայած ատենը , քիչ մը ժպիտով գլուխը վեր վերցնել : Այն տարուան սիրահարական ընդհանուր բարեւելնին այս կերպ էր , վերջէն ուրիշ շատ կերպեր ալ հնարեցին , որոնք հոս մի առ մի նկարագրելը անօգուտ կը համարինք : Երիտասարդը բոլորովին մէկ կողմ քաշեր էր բաճկոնը՝ բաճկոնակին բանուածքը օրիորդին ցցունելու համար , որ վարպետ ձեռքէ ելած ասղնեգործ մ'էր կանաչ սնդուսի վրայ կարմիր մետաքսով բանուած :

Այս խմբեակը պարտեզին դրան առջին որ հասաւ , էրիկ մարդը կենալով . — Է՛ , ինձի նայեցէք . . . աղջիկս մը կ'երթաս նստինք , ես հողնեցայ ըսաւ . . . :



— Ճանրմ' աղապա , Բ... մ'ալ ընենք , ըսաւ աղջիկը աղերսանօք :

— Ես մօրդ հետ կը նստիմ , դու Շաղիկին հետ պարտէ և վերջը եկու , ըսաւ պարտեղէն ներս մտնելով :

Երկու օրիորդները անմիջապէս քայլերնին պարտն թաղէս սին նստած կողմն ուղղեցին : Երիտասարդը իւր կողմը յառաջանալը տեսնելով սկսաւ ձեռքովը պէխերուն հետ խաղալ :

Օրիորդն երբ երիտասարդին մօտեցաւ , պնտար ըսելով բարեւեց :

— Պնտար , օրիորդ , պատասխանեց երիտասարդը :

— Ի՞նչպէս ես , ճշմո՞յ :

— Մերի , շատ աղէկ եմ :

— Բո՞ւ՜ք հոս սիտէ ըրիր :

— Բըրէնը ձեզ տեսնելու համար :

— Կուղե՞ս որ քիչ մը պարտինք :

— Ս... սիրելիս ըսաւ , և ոտքի ելնելով իրարմէ քիչ մը հեռու սկսան ճեմել :

Սխառհին խօսքի սկսելով , — Մ... մի , ըսաւ , այսօր... տուիր իրիկուան Մէղար-պուրնի դալ և չեկար . « Երե՞ս ք... ք զիս կը խարեւ , սանձ... պարտն , սանձ... »

— Միլ ք... ճարտար-սուրի ճարտար Տէրպէնար տեսայ որ զիս ստիպեց միատեղ իջնալ :

— Ձե՞ր... որչափ բազմութիւն կար :

— Ան՞ձն ճարտար-սուրի , Տէրպէնարի ալ ընկերութիւնը մարդ չուղեր ձգել , չե՞ք :

— Ե՞ս չե՞մ , չեմ ընդունիր երկէք որ ճշտե՞ց է Բ... մի :

Այն միջոցին քանի մը մատաղ օրիորդներ ասոնց քովէն կանցնէին . կարելի է խօսակցութիւնը լսած էին , քանզի ետեւնուն սուր ծիծաղ մը լսուեցաւ և բաւական ատեն տեւեց . Շաղիկ օրիորդը շրթունքը խաժաւ , վասն զի աղէկ գիտէր որ իւր մտերմութեան խօսակցութեանը վրայ կը խնդային : Երբ որ պարտեղին ծայրը հասան , թաղէս յարդանօք բարեւեց հոն նստող խմբեակ մը :



— Ո՞վ էին անանք, հարցուց օրիորդ Շաղիկ :

— Պարոն Տէրպէնտի ընտանիքը, պատասխանեց թաղէոս :

Յիրաւի Պ. Տէրպէնտ սամուրենիի մը մէջ ընկղմած իւր երկայն յասմիկ ծխափայտը կը ծխէր : Տիկին Տէրպէնտ դարձեալ իւր սօնֆէրին շրջադէտար հագեր էր, և Գրիգոր Միհրդադաւին քով նստելով ու շաղբութեամբ անցնողները կը դիտէր, թերեւս անոնց մէջ օրիորդ Աննիկը տեսնելու յուսով : Պ. և Տ. փունջ օրիորդ Ատէլի հետ կը խօսակցէին : Այս միջոցին Գրիգոր տեղէն ելնելով՝ դնաց սրճարանին սպասաւորներէն մէկուն բան մը ըսաւ : Սպասաւորը սրճարանէն ներս մտաւ, և Գրիգոր գոհ սրտով իւր տեղը դարձաւ :

— Ո՞ւր դացիր, հարցուց Միհրդաւոս :

— Հոս էի, պատասխանեց Գրիգոր :

— Պարոն Միհրդաւոս, ըսաւ օրիորդ Ատէլ, ցորեկուան տեսածնիս չէ՞ սա աղջիկը :

— Այո՛, նոյն ինքն է և ինձի այնպէս կուգայ որ քովի մարդը պիտի ճանչնամ :

— Պատուաւոր մէկը չերեւիր :

— Ա՛՛ ճանչցայ, այս այն նաւաւարն է, զոր անցած դիշեր իւր նաւը մտայ :

Այս միջոցին քսանի չափ այն հրավառ փամփու շտներէն բռնկցուցին, որով ցորեկուան պէս լուսաւորուեցաւ չորս կողմը : Նոյն միջոցին երկու երիտասարդ պարտիզակին դրանը մէջ կեցեր էին անցքը բոլորովին խափանելով. օրիորդ Աննիկին անցած ժամուն երիտասարդներէն մին,

— վէնսան, շահա պատ. շէ՛ + շէ՛՝ պտւու շէ՛ + շէ՛ :

— Օ՛, ըսաւ երկրորդը տեսնելով, Ֆէշուշուր Ֆէշուր :

Օրիորդ Աննիկի անցած ատենը Միհրդաւոս որ օրիորդ Սօֆիին թերը մտած էր, Գրիգորին դարձաւ զայն ցուցնելու համար, բայց Գրիգոր արդէն տեսեր էր : Օրիորդ Ատէլ Միհրդաւոսին ահանջին ծռելով՝ — Գեղ կը հաւաստեմ որ Գրիգորիկն է անանք փառել տուողը, ըսաւ, օրիորդ Աննիկը յատակ կերպով տեսնելու համար :



— Աղէկ գուշակեցիր, պատասխանեց Միհրդատ, և ետքը Գրիգորին դառնալով՝ բարեկամ, ըսաւ, եթէ կուզես քիչ մը պտրտինք:

— Հաճութեամբ, պատասխանեց Գրիգոր, և օրիորդ Աննիկին դացած կողմը յառաջացան:

Օրիորդ Աննիկ երիտասարդներուն իւր կողմը յառաջանալը տեսնելով քայլերը փոքրացուց: Գրիգոր անոր քով հասաւ. Միհրդատ քիչ մը ետ մնաց անոնց խօսակցութեանը արդելք չըլլալու համար: Օրիորդ Աննիկ խօսակցութեան սկսելով՝

— Ա՛հ, ըսաւ, ի՞նչ բարեբախտ առիթ, որ զքեզ տեսայ. բայց քալէ սա կողմը երթանք որ մարդ չտեսնէ զմեզ:

## ՏԷԼԻ ՃՕՐՃԻ

— Աննիկ, ըսաւ Գրիգոր զանի թեւը առնելով, քանի որ քեզմէ հեռու ապրելու դատապարտուած ըլլալս կը մտածեմ, քու վրայ ունեցած սէրս կ'աւելնայ, բայց վերջասկէս այս ընթացքին չեմ կարող համբերել, ամեն բան պիտի յայտնեմ հօրս, և թէ որ պէտք ըլլայ իւր կամացը հակառակ վարուելու պիտի ստիպուիմ:

— Ա՛հ Գրիգորիկ այդպէս բան մ'ըներ, թերեւս ունեցած պզտի երջանկութիւնս ձեռուրնուս կ'առնեն, ես ատեն ատեն միայն քու տեսութիւնդ վայելելով դո՛հ կ'ըլլամ աւելին չեմ փափաքիր:

— Աննիկ սիրելիս, չե՞ս մտածեր որ մէկ ուրիշ մը հօրմէդ զքեզ կնու թեան կը խնդրէ, այն ատենը դժբաղդութենէ ազատելու համար մեռնելէ ուրիշ միջոց չը մնար ինձ:

— Բայց դու կը կարծես որ քենէ ուրիշի հետ ամուսնանամ, ի՞նչ զօրութիւն կրնան բանեցնել այս սրտիս դէմ զոր քեզի ուխտած եմ, ըսաւ, ձեռքը սրտին վրայ դնելով:



— Գրիգոր խանդաղատանօք ձեռքը բռնեց, համբուրեց և զայն իւր ձեռացը մէջ սեղմելով, ո՛վ իմ քաղցրիկ բարեկամս, հիս, ըսաւ, քու խօսքէդ դուրս չպիտի ելլամ պիտի սպասեմ, պիտի համբերեմ բարբարոսութեանց, միայն թէ զիս քու տեսութենէդ չը զրկեն:

— Ո՞վ է այն երիտասարդը զոր հիմայ հետդ էր:

— Աղնիւ բարեկամներէս մէկը Միհրդատ Արունդ:

— Արդեօք մեր սիրոյն գաղանիքը յայտնեցիր անոր:

— Չեմ ուզեր որ ձեզ ստեմ, այո՛:

— Ա՛հ, շատ դէշ ես ըրեր անգութ, պէտք էիր մտածել, որ իմ պատիւս քեզ ալ կը նկատէ:

— Հաւաստի եղիք, որ այնպիսի աղնիւ երիտասարդէ մը ձեր պատուոյն արատ չդար, և կարելի է օր մը մեզ ալ նպաստէ:

— Քանի որ այդպէս է, պէտք եմ զիջանիլ, ուրեմն հօսկանչէ որ խօսինք հետը:

— Պ. Միհրդատ, Պ. Միհրդատ, կանչեց Գրիգոր ուրախութեամբ:

Միհրդատ՝ նոյն միջոցին ճերմակ անդրավարտիքով, կապուտ բաճկոնակ մը հագած մէկու մը հետ կը խօսէր:

— Ուրեմն, ըսաւ, վաղը ժամը չորսին զիս տունը եկու գտիր:

— Գլխուս վրայ տէր իմ, ըսաւ անդրավարտիքով մարդը, որ նաւավար կարապետն էր:

Միհրդատ Գրիգորին մօտենալով, գլխովը օրիորդը բարեւեց:

— Մենք ալ ձեր աղնուութեանը վրայ կը խօսէինք օրիորդ Աննիկի հետ, ըսաւ Գրիգոր:

— Իրաւ որ, պատասխանեց Միհրդատ, ես բոլորովին ուրիշ բանի վրայ խօսելիդ կենթադրէի հեռուէն:

— Այսու ամենայնիւ Պարոն, ըսաւ օրիորդ Աննիկ, հաւատացէք, որ Պ. Գրիգորին ըսածը ճիշդ է:

— Կը հաւատամ օրիորդ, բայց զիս մի մեղադրէք. քանզի ես ալ այնպէս կարծելու պատճառ ունէի, և օրիորդ Աննիկի



երեսը նայելով, կը տեսնեմ որ, յաւելցուց, Գրիգոր բարեկամս  
խիստ երջանիկ է:

— Կարծածիդ չափ չեմ, բարեկամ, ըսաւ Գրիգոր ախրու  
թեամբ, այնպիսի արդեւքներ կան . . . .

— Իրաւունք ունիս, յարեց Միհրդատ, և այդ արդեւք  
ները սէրը կը քաղցրայնէ, այնպէս չէ՞ օրիորդ . . .

Օրիորդը ժպտաւ մը պատասխանեց. այս միջոցին երկու  
աղջկան հետ երիտասարդ մը անցաւ քովերնուն:

— Ո՞վ էին ասանք, հարցուց Գրիգոր, որ զմեզ այսչափ դի-  
տեցին:

— Չճանչցա՞ր, օրիորդ Գնարիկին հետ Շաղիկն էր, ըսաւ  
Սննիկ:

— Բայց հետերնուն էրիկնարդը ո՞վ էր:

— Պարոն Թաղէսն էր:

— Չէի դիտեր, որ անոնց հետ բարեկամութիւն ունի Պ.  
Թաղէսը:

— Աղջկան հայրը, տեղեկութիւն չունի այս բարեկամու-  
թենէն:

— Ուրեմն այս տեսութիւնը գաղտնի սիրահարութիւն մ'է:

— Սնչու չա:

— Հա՛, հա՛, հա՛, աղէկ դատեր են զիրար, ըսաւ Գրիգոր  
խնդարով. առաջին կարգի երկու ձուագեղներ:

— Ո՞վ է այդ պարոն Թաղէսը, հարցուց Միհրդատ:

— Յորեկուան Հիւնքեար-սուխի կոպիտ բարեկամդ:

— Գաղղիերէն քանի մը բառ դիտեն, որ Հայերէնի մէջ  
խառնելով կը խօսին, ըսաւ օրիորդ Սննիկ. այսու ամենայնիւ,

յաւելցուց, ի՞նչ կըսես հայրս շատ կը հաւնի այդ Պ. Թաղէս-  
սին. կը պնդէ որ կատարեալ քաղաքավար երիտասարդ մ'է:

— Ներեցէք օրիորդ, ըսաւ Գրիգոր դժկամակելով, հայ-  
րերնիդ աղէկ ճանաչողութիւն ունի եղեր:

— Հայրս մի՛ մեղադրեր. միամտութեամբ անոր կեղծաւո-  
րութեանցը խաբուած է:

— Թէ որ ամեն Եւրոպայ դատարանս ասանի . . . !



կուժիւն կառնեն , ըսաւ Միհրդատ , ամենեւին չեմ փափաքիր Եւրոպա ճանապարհորդել :

— Բայց քեզի ո՞վ ըսաւ որ Եւրոպա գացած է , ըսաւ Գրիգոր , երեք հարիւր զուրուշ ամսականով վաճառականի մը հետ մինչև Բէշթա գնաց . և հոն խոշորացոյց գիտակներու մէջէ փարիզը տեսեր է . թէ որ կուզես հոս ալ կայ . գնա՛ Սուլթան-Պայազիս , զուրուշ մը վճարելով բոլոր Եւրոպա կրնաս տեսնել :

— Շնորհակալ եմ բարեկամ , քու ընդարձակ տեղեկութիւններուդ , բայց ատենը կանցնի . եթէ կուզես ընտանեաց քով երթամք , որ մեր ուշանալը պիտի հարցնեն :

— Իրաւունք ունիս , ըսաւ Գրիգոր , և օրիորդ Աննիկին ձեռքը սեղմելէ վերջը , օրիորդ Սօֆի , վաղը գիշեր գքեղ փողոցին դուռը գանալու երջանկութիւնը պիտի ունենամ արդեօք , հարցուց :

— Պիտի գտնուիմ . պարոնը հետ պիտի գայ :

— Ո՛չ օրիորդ , պատասխանեց Միհրդատ , վաղը գիշեր Պօլիս պիտի կենամ :

— Ուրեմն Գրիգորիկ , ժամը երկուքին :

— Այո՛ ճիշդ ժամը երկուքին . մնաք բարեալ :

— Երթայք բարեալ , ըսաւ օրիորդ Աննիկ , և զատուեցան իրարմէ :

— Ժամանակին հասանք , ըսաւ օրիորդ Ատէլ , որ նոյն միջոցին , երխտասարդները հոն մօտեցեր էին , մենք ալ երթալու կը պատրաստուէինք . այնպէս չէ՞ տիկին Մաննիկ :

— Իրաւունք ունիք օրիորդ , ըսաւ տիկին Մաննիկ , տեսնողն ալ կըսէ որ Պարոններու ուղեկցութեամբ դուրս ելեր եմք աւանց գիտնալու՝ որ անոնք ամենեւին մեզ չեն ընկերանար :

— Ներեցէք տիկին , ըսաւ Գրիգոր , Պ. Միհրդատին ասկէ հեռանալուն պատճառը ես եմ . քանզի ես ստիպեցի զինքը քիչ մը պտըտելու , հետեւաբար դուք անշուշտ գոհ եղած պիտի ըլլաք , զձեզ Պ . ֆունջի հետ մինակ թողած ըլլալնուս :

— Աղէկ կը տեսնաք որ ըսածնադ պէս չէինք , ըսաւ տիկին Մաննիկ ժպտելով :



— Ձեզ խնդարու բան մը ցըցունեմ. տեսէք սա ծառին կռթնող պարոնը, որ դիմացի խմբեակին մէջէն մէկուն սիրահարական նշաններ կընէ, ըսաւ օրիորդ Ստէլ իւր քովը աթոռ մը ներկայացնելով Միհրդատին:

— Հա՛, հա՛, բարեւ տալու համար գլխու գտակը շտկած ատենը, անուշադրու թեամբ դետինը ձգեց:

— Կամաց զրուցէ եղբայր կը լսէ, ըսաւ օրիորդ Ստէլ:

Ուրիշ կողմ մը չորս հինգ երիտասարդ, դուխնին բաց նստեր տաքութեամբ կը վիճէին. թէպէտե դիշերուան հովը սոսկալի էր, կերելի որ ամենքն ալ մէկ կաննով կը վարուէին. վասն զի դրեթէ անուշադրաբար ամենուն աջ ոտքը ձախին վրայ՝ աջ թեւերնին մազերնուն մէջ, արմուկնին սեղանին կը շփընցուցած էին. հետզհետէ վիճաբանութիւննին կը տաքնար. քանզի այս անգամ խնդիրը պարզ բան մը չէր, ամենէն եռանդուտը կը պնդէր որ տասն երկու ամիսէ դուրսը ծախուած կաթնապուր կրնայ ուտել, սի՛ որ չհաւատար փորձը կրնայ ընել կըսէր:

— Սղէկ, ըսաւ դիմացէն կարճ հատակով երիտասարդ մը, պահ թէ տաք պիտի ուտես:

— Ասկէ ի՞նչ կելլայ, ըսաւ պնդողը:

— Ի՞նչ կելլայ ըսիր... բարեկամ կաթը զարմանալի յատկութիւն մը ունի, որ պաղը տաքցածէն աւելի կը խմուի:

— Ուրիշ մը խօսքի մէջ մտնելով, ատկէ բան մը չհետեւիր պարոն ըսաւ, կաթը ի՞նչ դիրքի մէջ ըլլայ, սի՛ր ալ ըլլայ դարձեալ կաթ է պարոնը իրաւունք ունի:

— Ինձ նայէ բարեկամ, գոչեց զուարճախօսերնին. կաթին և պարոնին մէջ տեղը պէտք էիր միջակէտ մը դնել:

— Անհող եղիր պարոն, պատասխանեց առաջինը, կաթը բարանթէզի մէջ կառնեմ, եթէ պարոնին նկատմամբ զրուցած ըլլամ:

Ս.յս միջոցին սեւ վերարկուի մէջ բաթառած մէկը ծառի մը ստուերին տակ նստելով, սկսաւ Տէրպէնաի ընտանիքը դիտել:



Ս.յս միջոցին երաժշտութիւնը դադարած էր և բազմութեան աղմուկը յաջորդեր էր :

— Ինձ նայէ՛ Նազիկ քիչ մը կամաց չե՞ս կրնար քալել, ըսաւ տարուօք կին մը, առջեւէն քալող սղտի աղջկանը :

— Հեղինէին հասնել կ'ուզէի մայր իմ, ըսաւ աղջիկը :

— Շատ մ'աճապարեր, ահա այն ալ մեր կողմը կուդայ, ըսաւ, և յիշաւ թիչ մը ետքը երկու սղտի օրիորդները դիրար բարեւեցին :

— Ժամէ մը 'ի վեր է, աչքս չորս կողմս դքեղ կը փնտռեմ, ո՞ր ծակն ևս մտեր, ըսաւ Նազիկ :

— Հօրս հետ էի, պատասխանեց Հեղինէ, հոն աղնուական պարոնի մը հետ կը խօսակցէր ամսականով անոր քով ծառայելու համար, ես ալ ստիպուեցայ կենալ :

— Գոնէ հաւանեցա՞նք աղնուականը, հայրդ իւր քովը առնելու :

— Բարերախտաբար այն և լեցուն ամսականով, վերջապէս երջանիկ պիտի ըլլամք. ի՞նչ շնորհալի երիտասարդ մ'էր տեսնայիր, գրեթէ քսան տարեկան. քեզի բան մը ըսեմ, անանկ կարծեցի որ ինձ անուշ նայուած քով մը կը նայէր. բայց ես խենդ եմ, ըսաւ ակամայ խնդալով մը :

— Ինչո՞ւ խենդ պիտի ըլլաս Հեղինէ, անհամեմատ դեղեցիկ ևս. թերեւս . . . .

— Ա՛հ, դոցենք այս խօսքերը, կուզե՞ս տեսնալ այն երիտասարդը :

— Անչո՞ւ շտ . . հո՞ս է :

— Պարտեղին սա ծայրը ընտանիքի մը հետնատեր է. և կուհեան :

— Մայր իմ, հիմայ մենք կուգանք, ըսաւ Նազիկ, և Հեղինէին հետ Միհրդատին նստած կողմը յառաջացան :

Գառնանք պարոններուն, որ քիչ մը առաջ կաթնապուրի վրայ կը վիճէին :

— Է՛, հոս նստելով ի՞նչ կ'իմանամք, ելնեմք քիչ մը կանոնց մէջ ճեմենք, ըսաւ գրաւ դնել աղող երիտասարդը :



Ս. յս առաջարկութիւնը դրեթէ ամենուն ալ հաճելի էր. բայց չգիտցուիր ինչ ծածուկ պատճառներ կար, որ մէկը տեղէն ելնելու չէր համարձակեր :

— Բարեկամք, ըսաւ մէջերնէն ծաղրածունին կէս ժպիտով մը, սպասաւորը կանչենք, ըմպելեաց դիւնը վճարենք և ելնենք ասկէ. առտուն պիտի ընենք :

Վերջապէս, մէջերնուն և աւանդոտնին համարձակեցաւ սպասաւորը կանչել, ձեռքը գրպանը խօթելով :

— Թո՛ղ բարեկամ, ևս կը վճարեմ, ըսաւ մէկ ուրիշ մը, ինձ նայէ, քանի՞ զուրուշ է :

— Ի՞նչ խմեցիք տեարք խմ :

— Չորս քաղցրաւենի, մէկ սուրճ, շիշ մը գարեջուր :

— Շիշ մը գարեջուր տասը, չորս քաղցրաւենի ութը, տասն և ութը. վաթսուն փարա ալ սուրճ, որով ընդամենը կըլլայ տասներկնուկէս :

Սպասաւորին հաշուած ժամանակը, հարցընող պարոնը դրեթէ գոյնդգոյն կը կերպարանափոխէր. այսու ամենայնիւ վերջին ճիգը ՚ի դորձ դնելով, « Բարեկամ, ըսաւ, պէտք էիք առաջուց ըմպելեաց գոյն ցուցակ մը շինել. ինչ որ է, առէք տասը զուրուշը, իննուկէսն ալ ուրիշ անդամ :

— Պ. Ներսէս, ևս կուտամ իննուկէսը, ըսաւ երկրորդը :

— Չէ, բարեկամ չէ, թող ուղէ :

— Տեարք խմ, աւելի աղէկ կընէք եթէ վճարէք, ըսաւ սպասաւորը. քանզի խանութին տէրը ստակ մը ապառիկ չը ճանչնար :

Վերջապէս, երկու երեք բարեկամ ստակը ճարելով վճարեցին :

— Ի՞նչ կըսես ասոր սիրելիս, ըսաւ Պ. Նիկողոս երկրորդին :

— Ի՞նչ պիտի ըսեմ, կոպտութիւն, պատասխանեց :

Նոյն միջոցին բաղմութեան մէջ իրարանցում մը սկսաւ, ամենքն ալ խնդումերես մէկու մը կը նայէին :

— Հայրիկ, գոչեց կայտառ տղայ մը ձեռքերը իրար զարնելով, տես տէլի ճօրճին է . . .



Յիրաւի, բարձրահասակ խենդ մը, բաղմութեան մէջէն  
 ցատկելով կը յառաջանար, հին կապոյտ անդրաւարտիք մ'էր  
 հագեր, որ շատ տեղը ճերմակեր էր հնութենէն. պատուած  
 կարճ բաճկոնակ մ'ալ ունէր վրայէն, ձեռքը նկանակ մը  
 բռնած միշտ ցատկելով, հա՛, դա՛, բա՛ր, բա՛ր, բա՛, ըս, դա՛,  
 բա՛ր, բա՛ր, բա՛, գոչելով մշնչե Տէրապէնտի խմբեակին առջին  
 յառաջացեր էր. այս միջոյին Մատթէոս Տէրապէնտի գոյնը նե-  
 տած էր, բայց դայն դիտող չկար. Միհրդատ ուղելով ստակ  
 տալ այս խեղճին, «Տէլի ճօրճի եկու, ըսաւ.

— Ի՞նչ պիտի ընես այդ խենդին հետ, գոչեց Տէրապէնտ,  
 ձգէ թող երթայ.

Ս.յս ձայնին, խենդը երեսը դարձուց, և մէկէն ՚ի մէկ  
 ահռելի ձայն մը հանելով կայնած տեղը քարէ արձանի մը  
 պէս մնաց.

Բաղմութեան զարմանքը նկարագրել անկարելի էր, Մատ-  
 թէոս Տէրապէնտի դէմքը կապարի գոյն զգեցաւ, և իւր ըն-  
 տանեաց աչք ընելով, ելաւ անկէ աներեւոյթ եղաւ. երկու  
 ժամ ետքը, մարդ չէր մնացեր հան:



**ԳՈՂ ՊԵՏԻԿԸ**

Յունիս ամսոյն կիզիչ արեւուն մնացորդ տաքութիւնը կը  
 տեսէր. գիշերը ժամը չորսը կար, Պէօյիւք-տէրէի մեծ ճե-  
 մավայրին բաղմութիւնը, գրեթէ ցրուեր էր. միայն մէկ քանի  
 սիրահարներ պատուհաններու ներքե, յուսակտուր կը ճեմէին.  
 ծովուն վրայ ձկնորսաց նաւակներ կը կենային, որ այն մթին  
 գիշերուան մէջ իրենց պղտի լապտերներէն կ'որոշուէր. Պար-  
 սից աստղաձուկերուն նման լապտերներուն այս աղօտ լոյսերը



հանդարտ ծովուն ամայի լռութեանը մէջ, մէկ կողմէն միւսը կը շրջադայէին. մերթ ընդ մերթ երկնից կամարէն ելեկտրականութիւնը, թռիչ աստղեր վար կը գլորէր. Ռուսիոյ դեռ պանի պաշտօնի շահերը, մի առ մի իրենց վերջին բոցի նշոյլը արձակելով սպառեցան. գիշերուան Աստուածուհին թողուց որ քիչ մը ատենուան համար իւր քոյրը թագաւորէ, հետեւ ւարար մարդոց համար ալ խորհելու ժամանակ մ'էր:

Մթութիւնը մտքին օժանդակն է. այս միջոցին հեռուէն շողենաւի մը անուոց ձայնը լսուեցաւ. Սրճարան Գաղղիոյ պանդոկին երկրորդ յարկը, ծովուն վրայի սենեակներէն մէկուն պատուհանը բացին. որով դուրս ցոլացած լոյսէն Սօֆեան պէյին դէմքը որոշ կերպով երեւաց.

— Արիֆէ, կարծեմ շողենաւը կուգայ, ըսաւ, և դեռ Միհրրդատը չերեւաց:

— Ժամը հինգին պիտի գար, պատասխանեց Արիֆէ, իսկ հիմայ ժամը հինգին քառորդ կայ:

— Իրաւունք ունիս, ըսաւ Սօֆեան պէյ սրտին մէջ հառաչանք մը խեղդելով, բայց յաւելցուց, չեմ դիտեր ի՞նչ զգացում մ'է որ կզգամ, ինչ ըսեմ, կուզեմ պահ մը յառաջ դքեզ հեռացնել քովէս, դքե՛զ որ աշխարհի մէջ, իմ միակ մխիթարութիւնս ես. ու աշխոյժով մը աղջկանը ձեռքէն բռնելով ո՛հ ըսաւ, թերեւս ես մեռնիմ, հեռու քեզնէ . . .

— Ա՛հ, հայր իմ, ըսաւ Արիֆէ հօրը բաղկացը մէջ նետուելով, որ այս միջոցին երկայն բիբերուն տակ պահուած, երկու կաթիլ արտասուք երեսէն սահեցան,

— Լռէ՛, Արիֆէ, ես արժանի չեմ դեռ այդ անուան, ըսաւ Սօֆեան պէյ գլուխը կուրծքին ծռելով, խեղճը անցեալին քօղին տակ նշմարած յիշատակներէն կը սոսկար:

Վայրկեան մը լռութիւն ակրեց սենեկին մէջ.

— Հայր, ըսաւ Արիֆէ նորէն խօսքի սկսելով, քեզ խընդիրք մը ունիմ:

— Զրուցէ՛, պատրաստ եմ կատարել:

— Յեղափոխականներուն մէջ կենացդ խնայէ, կամ ա՛հ,



եթէ կարելի է, զատուէ անսնայմէ, և ինծի հետ եկուր, այս  
զիշեր հեռանամք այս տեղերէն:

— Ա՛յ, այդ անկարելի է, պէտք է որ վրէժս լուծեմ, գոչ  
չեց զայրոյթով մը, և եթէ զատուիլ ալ ուզեմ, երդմանս պիւ  
տի դրժեմ, ըսաւ յուսակտուր ձայնով մը:

Այս միջոցին, թիակի մը շարժման ձայնը, ծովուն վրայ  
յաջորդեց, և փոսփորանման լոյս մը տեսնուեցաւ:

— Ահա Միհրդատը եկաւ ըսելով պատուհանը գոցեց  
Սօֆեան պէյ, միանգամայն հայր և աղջիկ սրտերնին մէկէն  
յուզման մէջ ինկաւ, և ոտքի ձայն առնելով, ելաւ սենեա  
կին դուռը կէս մը բացաւ, և Միհրդատ սեաւ թիկնոցի մը  
բաժտուած, ներս մտաւ սենեակէն:

— Ի՞նչ ըրիր, ըսաւ Սօֆեան պէյ, անոր քովը վաղելով  
անհանգիստ ձայնով մը:

— Ամեն բան ձեր հրամանին համեմատ պատրաստ է,  
Տէր իմ, պատասխանեց Միհրդատ:

— Շողենաւը եկած է, հիմայ շուտ ըրէ զրուցէ նաւաւա  
րիդ, երթայ խօսի որ մէկէն աւելի մակոյկ չբերեն, կարելի  
է մէկը տեսնէ և կասկածի:

Միհրդատ, գլուխը ծռելէ վերջը դուրս ելաւ:

Սօֆեան պէյ՝ պատին կռթնած դրասենեակին մօտենա  
լով, գաղտնի դարան մը բացաւ, և քանի մը կնքուած թղ  
թեր հանելով Արիֆէին տուաւ. « Աստիք Եւրոպիոյ դրամա  
տանց վրայ վարկեր է, ըսաւ, Գրէաի Մօպիլիէ և Միլիէսին  
յանձնարարական նամակներ են այս երկուքը: »

Աղջիկը անտարբերութեամբ առաւ թղթերը, և այս մի  
ջոցին դուռը երկու անգամ զարնուեցաւ. մէկէն կողմնակի  
դռնակէ մը Արիֆէ անյայտ եղաւ:

— Սօֆեան պէյ դուռը բացաւ, և իյնէկէօզը տեսնելով,  
« Ի՞նչ լուր, այս ատեն ի՞նչու եկար, հարցուց աշխուժով մը: »

— Տէր իմ, Պետիկը երէկ չէ առջի օրը, Գուճիգափու տուն  
մը գողութիւն ընելուն համար, հիմայ Ռատիկանութիւնը՝  
պառկած խուցը կօխելով բռնեց տարաւ:



Սօֆեան պէյ, առանց պատասխանելու դրասեղանին մօտեցաւ, նամակ մը գրեց, և Իյնէկէօղին տուաւ ըսելով.  
 « Ա՛ռ այս նամակը, և ձեռքովդ սատիկանու թեան պաշտօնէին տուր, որ Պետիկը պիտի թողու, զայն հետդ առնելով, հասակի այս ինչ փողոց թիւ 27 տունս բեր, ժամը տասնին պէտք է որ անպատճառ հոն գտնուիք, նայէ որ պարզ և ազէկ հագուեցնես »

— Գլխուս վրայ տէր իմ, սրիկային բաղդը բանեցաւ :

— Ա՛յ, Իյնէկէօղ, թերևս պատիժը պիտի ընդունի, ըսաւ տխուր ձայնով մը :

— Աւրեմն, ուրիշ հրաման մը ունի՞ք :

— Առայժմ ո՛չ, հա՛ մտացայ դրուցելու, մերոնց ըսէ որ շարաթ օրը ժամը առաւօտեան ութին, մեր ժողովատեղին սպասեն զիս :

— Շատ աղէկ, Տէր իմ :

— Գնա՛, ալ քեզի պէտք չունիմ :

Իյնէկէօղ, յարգանք մատուցանելէ վերջը դուրս ելաւ, մէկ մ'ալ Արիֆէ, տժգոյն դէմքով երեւցաւ. « Ա՛հ հայր իմ, ըսաւ, դարձեալ մահուան կը դիմես, անշուշտ այդչափ մարդոց մէջ մասնիչ մը կը գտնուի. ո՛հ կաղաչեմ, խնայէ ինքզինքիդ... »

— Ապրի՛լ, ապրի՛լ, Արիֆէ առանց վրէժս լուծելու, ըսաւ Սօֆեան պէյ խեղդուկ ձայնով մը, ո՛վ է այն մարդը, որ վրէժառուն այսպանէ, աւելի լաւ է թշնամուց մը սրովը մեռնիլ, քան թէ այսպէս յաղթահարուած ապրիլ :

— Գոնէ ինձ համար ապրէ հայր իմ, քու մի միայն աղջկանդ համար, զոր քեզնէ ուրիշ նեցուկ չունի :

— Ա՛հ Արիֆէ, դոչեց մէկէն Սօֆեան պէյ աղջկանը խօսքը ընդմիջելով, այդ բնութեան յօրինած քաղցրիկ անունն ալ վայելելու չթողուցին մեզ, որդիական սէրը չճանչնալով՝ սիրոյ զգացմունք կարծեցի, և այն եղեւնը զոր գործեցի մինչև դարդ զիս կը հալածէ, ամուսնացայ, ապերախտ գտնուեցայ, հազար անէծք բաղդին որ այսպէս տնօրինեց. ի՛նչ անուն



տամ քեզ աղջիկս թէ . . . հոս խօսքը յառաջ չկրցաւ տանել .  
 դու խը երկու ձեռացը մէջ առեր , յորդ արատաւք կը թա-  
 բէր հեծկլտանօք :

Միհրդատ կարապետին նաւակովը շողեհաւէն դառնա-  
 լէն յետոյ կարապետին պատուիրեց որ պատրաստ կենայ , և  
 Սօփեան պէյին քովը գնաց :

— Ի՛նչ ըրիր , հարցուց Սօփեան պէյ :

— Ամեն բան պատրաստ է տէր իմ :

— Գեռ ո՛չ , որդեակ , ըսաւ Սօփեան պէյ Միհրդատին ձեռ-  
 քէն բռնելով , քիչ մը ինձ եկուր , զոր քեզի խօսելիք ունիմ :

Գաղանի դռնէ մը ներս մտան , առանձին թողլով զՍրբիֆէ .  
 այս երկրորդ խուցը շքեղ զարդարուած էր , պատէն հրաշալի  
 նկարներ կախուած էին՝ բոլորն ալ համբաւաւոր վարպետնե-  
 րու . ջինական ոսկեթել կերպասներով արծաթապատ աթոռ-  
 ներ , գզրոցի մը վրայ երկու թակոյկ դրուած էր Սէրվի գոր-  
 ծարանին , վերջապէս մէկ կողմը ննջարան մը բոլոր Հնդիկ ցրվ-  
 սիով պատած էր . խուցէն որ ներս մտանք , Սօփեան պէյ ոս-  
 կեզօծ գրասեղանի մը մօտենալով դարան մը բացաւ , և մէջէն  
 մեծկակ թուղթ մը քաշելով , աթոռ մը ցրցուց ինձ որ նստիմ ,  
 միանգամայն ինքն ալ աթոռի մը վրայ նստաւ :

## ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆ

Սօփեան պէյ խօսքի սկսելով , « Միհրդատ , ըսաւ , ևս կա-  
 բելի է քիչ ատենէն իմ վրէժխնդրու թեանս զոհուիմ , այդ-  
 ամենեւին հողս չէ , միայն թէ կուղէի առաջարկու թիւն մը բնել ,  
 այսինքն աղջիկս քեզ կնու թեան տալ . թէեւ դ խտեմ որ  
 իրաւամբ չպիտի հաւնիս այնպիսի աղջիկ մը առնել , որ հօրը



հետ ամուսնացեր է՝ թէպէտև անդիտութեամբ, այսու ամե-  
նայնիս այս պատմութիւնը քեզնէ սերիշ միայն Սասունած գի-  
տէ. թէ որ ես մեռնիմ, կը հաճին աղջիկս կնութեան առնել,  
տասը միլիոն օժիտով . . .

Միհրդատ ինչ ըսելիքը չէր դիտեր, քանզի ամենեւին չէր  
ուզեր, բայց մերժելն ալ դիւրին բան չէր .

— Համարձակ պատասխանէ որդեակ, ըսաւ Սօֆեան պէյ,  
չեմ ուզեր որ ահամայ ինծի խօսք տաս, զրուցէ .

— Տէր իմ, պատասխանեց Միհրդատ, տասը միլիոն ոսկի  
օժիտով ամուսնութեան մը չհաւանողը խենդ ըլլալ պէտք է,  
միայն թէ աղջիկ մը սիրեցի, զոր երգում ըլլեր եմ զինքը  
չթողելու համար .

Սօֆեան պէյ քիչ մը մտածելէ վերջը Միհրդատին երեսը  
սկսաւ նայիլ. անոր մեծանձնութեանը վրայ կը դժայլէր. « Խեղճ  
պատանի, որչափ արժանի ես երջանիկ ըլլալու, ըսաւ, բայց  
թէ որ այն զքեզ մերժէ . . . »

— Այն ատեն ես ալ զինքը կատեմ, բայց այդ ըսածնիդ  
անկարելի է, զիս իւր կենացը չափ կը սիրէ .

— Քու խարուած ըլլալդ, ես պիտի ցուցնեմ .

— Ուրեմն այն ատեն, արժանի պիտի ըլլամ ձեր աղջկա-  
նը հետ ամուսնանալու .

— Կամ դոնէ անոր պաշտպանը պիտի ըլլաս .

— Պատուոյս վրայ կ'երդնում, որ եթէ հարկ ըլլայ, կեանքս  
ալ կը զոհեմ .

— Գոհ եմ քենէ որդեակ, միայն թէ խօսքդ պահես. հի-  
մայ ինձ մտիկ ըրէ, ես թէպէտ իմ հարստութիւնս պատմեցի  
քեզ, բայց ուր ըլլալը չզրուցեցի. աղջիկս ալ քովէս հեռա-  
ցրնելս զքեզ կը զարմացնէ. դիտես որ աղջիկս ատեն ատեն  
նորին վսեմութեան պալատը կերթար բարեկամուհեացը հետ  
տեսնուելու, որ մը դարձեալ տեսութեան դացած ատենը,  
երեւելի իշխան մը զինքը կը տեսնայ, ու գեղեցկութեանը  
զարնուելով, մարդ կը դնէ ետեւէն, ով ըլլալը դիտնալու համար .

Պալատէն վերադարձին իմ տունս կը սովորին, այն ատեն



եւ ալ Գատը գիւղ կը նստէի և նոյն իշխանն ալ հոն էր . որ մը տունս նստած ատեն , վերոյիշեալ իշխանը ինձ այցելու թեան եկաւ , մեծ պատուով ընդունեցի զինքը , քիչ մը խօսակցութենէ վերջը ինձ դառնալով , « Պէ՛յ էֆէնտի ըսաւ . ձեր կանանոցէն անցած օր գեղեցիկ աղջկան մը ելնելը տեսայ , որ նորին վսեմութեան պալատը կերթար . արդ եթէ ազատ է , կը խնդրեմ որ ինձ կնութեան տաք :

Նոյն միջոցին ինչ կերպով շփոթելու շեմ կրնար նկարագրել . բայց ինքզինքս զսպելով , ժպիտով մը պատասխանեցի . « Ձեր բարձրութիւնը պէտք է գիտնայ որ այն ֆրիստոնեայ է :

— Ինչպէ՞ս ըսաւ , ֆրիստոնեայ է՞ ըսիր :

— Այո՛ տէր իմ . . . .

— Բայց ես հարցուցի անդեկացայ , որ նորին վսեմութեան ազախիններէն է , ըսաւ , և բուն իսկ Տաճիկ . զոր դուք զիս խաբել կուղէք :

— Տէր , պատասխանեցի , ձեզ խաբելու պատճառ մը չունիմ . նոյն աղջիկը Հայ ծնած է , և մինչև տասը տարու ֆրիստոնեայ . վերջը զինքը առեւանգելով , ինչ կրօն որ ցըցուցեր են նոյնին յարեր է . բայց այսօր դարձեալ իւր մօրը ազանդէն է , այս սինքն ֆրիստոնեայ :

— Սակայն դուք անշուշտ գիտէք , ըսաւ , որ անհաւատներէն մեր սուրբ հաւատքը ընդունողը անկարելի է որ վերջէն ուրանայ :

— Այդ իրաւանց դէմ խնդիր մ'է , զոր չեմ ընդունիր , ըսի :

— Ի՞նչ , դուչեց , կը տեսնեմ որ դուք ալ անհաւատ զգացումներ ունիք :

— Իմ զգացումներս Աստուած միայն գիտէ , ազատ մարդուն սիրան ալ պէտք է ազատ ըլլայ , ինչ օրէնք որ ալ ըլլայ՝ զգացումը չկրնար իւր իշխանութեանը տակ առնել . աշխարհի մէջ որքան որ մարդ կայ , նոյնչափ ալ կարծիք կը գրանուի . է՛հ , ինչ ընենք , երկու համամիտ չգտնուիր :

— Կոյր ըլլալու է այն մարդը , որ չտեսնէ մեր սուրբ կրօնքին , տասն և վեց միլիոն հեռուողները :



— Ամեն դէն իւր հետեւողներն ունի, ասանց մէջ դարձեալ միտքերը կը զատուին. ասե՛նօք երբ աշխարհս դեռ բազմամարդ չէր, Աստուած իրեն հաւատարիմ ծառաներ կը գտնէր, մարդարէներ կը գտնէր, սուրբեր կը գտնէր, այն քիչ մը աշխարհացիներն. վերջապէս Աստուածութիւնը ժողովրդեան հետ կը խօսէր, անոնց մէջ կը բնակէր, իւր մարդարէներուն ձեռօքը հրաշքներ կը գործէր. մարդիկ ալ այն ատեն, ինչ հաւատոյ ծառայելին զխօսէին. բայց հիմայ ասոնց մէկն ալ չիկայ, հիմայ որ աշխարհացիները հաղարապատիկ բազմացան Աստուած արդեօք այս բազմութեան մէջէն իրեն մէկ սիրելի մը չկրցա՛ւ ընտրել, աղէկ մարդ չգտա՛ւ ըսենք, ո՛չ, միտքերը զատուեցան ամեն մարդ սկսաւ իւր չարը բարին մը տածել. և ի՞նչու զձեզ ձանձրացնեմ, վերջապէս տէր իմ, ամեն կրօնք իւր բարոյականը ունի, և ամեն օրէնք իրեն համար բարի է . . . .

— Այդ խօսքերը անհաւատութենէ յառաջ կու գան, ըսաւ իշխանը, ևս ասոնց մէկն ալ չեմ ընդունիր .

— Ես իրաւունք ունէի, որ ըսի միտքերը զատ են, ասա տեսէք, ձեր բարձրութեան հետ համամիտ չենք .

— Շատ աղէկ, ըսաւ բարկութեամբ ոտքի ելնելով, ուրիշ անգամ կը տեսնուինք .

— Շատ աղէկ ըսի կը տեսնուինք, և թողուց դնաց. բայց ևս դու շակեւում ասոր հետեւութիւնը, աղջիկս առանց մէկու մը գիտութեան նոյն գիշերը այս պանդոկը փոխադրեցի, ու հետեւեալ առաւօտը, անմիջապէս նորին վսեմութեան պալատը գացի, և իշխանին հետ ըրած խօսքերս բոլորը պատմեցի, նորին վսեմութիւնը ինձ յանձնարարական նամակ մը տուաւ որ իշխանին տանիմ, նամակը առի տուն դարձայ և հոն իմացայ որ զիս արդարութեան բարձր. նախագահը ուղեր է, անմիջապէս ելայ գացի, և ինձ ցուցուած բազմոցին վրայ նստայ. մեծաւորը խօսքի սկսելով, « Երէկ իշխանէն բան մը լսեցի զոր մեծ ցաւ եղաւ սրտիս, ըսաւ, այն է կանանոցիդ մէջ կին մը կայ զոր ֆրիստանէից դէնը ընդ ունիլ կուզէ եղեր, դու աղէկ գիտես,



որ այնպիսիներուն պատիժը մահ է . ուստի մահատարտ մը տունդ պահելովդ , դուն ալ անոր մեղսակից կը համարուիս . հիմայ պէտք է որ այն կիներ անմիջապէս հաս զրկես , որ բանտը դրուի և ջանանք զղջման բերել :

— Տէր իմ , պատասխանեցի , ես ալ կուզեմ որ այն անհատատը զղջման դայ , և եթէ չգայ իւր արիւնը իւր գլուխը . հըրաման ըրէք ձեր պաշտօնատարներէն մէկ քանիին , որ երթան ձերբակալեն զինքը . աւելի աղէկ կըլլայ որ ես հան չգըտնուիմ :

— Անունը ի՞նչ է , ըսաւ .

— Սրիֆէ է , պատասխանեցի :

— Շատ աղէկ , ըսաւ և իւր պաշտօնակալները կանչելով , հրամայեց որ իմ տունս երթան ու Սրիֆէ անուն կիներ բռնեն բերեն . ես ալ քիչ մը ատեն կենալէս վերջը դուրս ելայ :

Պաշտօնակալները տունս փնտուեր և Սրիֆէն չեն գտած . երկրորդ օրը նորէն ինձ հրաւեր գալով , նախագահին ներկայացայ որ նոյն իշխանը քովը նստած , և բոլոր ժողովին վրայ լռութիւն մը կը տիրէր . ասոնց մէջ դատը արդէն վճռուած էր , որ զիս յանցաւոր պիտի հրատարակէին . նախագահը գըլուխը վեր առաւ և ժողովականներուն դառնալով , եղբարք , ըսաւ , այս մարդը զոր կը տեսնէք մեր հաւատքին դէմ հայհոյեր է . Սուրբ հաւատքնուս ինչ ինչ մասերուն դէմ քարոզութիւններ կընէ . ասոնք անժխտելի վկայութիւններով հաստատուած են :

— Տէր իմ , ըսի այն ատեն , շնորհք ըրէք վկաները ատենան բերել տալ :

— Պէտք չկայ , ըսաւ , ես արդէն ստուգած եմ :

— Շատ աղէկ , բայց կուզէի դիտնալ թէ որ բանը ինձ յանցանք կը համարիք :

— Ուրացող մը տուններնիդ պահեցիք , վերջը արդարութիւնը փնտուած ատեն զայն փախուցիք :

— Տէր իմ անոր փախուստէն բան մը չեմ գիտեր . ես ալ ատենանէն դուրս ելնելէս վերջը իմացայ :



— Մինչև այն առնեն ուրացող մը տունդ պահելով պաշտպանեցիր :

— Զանաչի որ զինքը համոզեմ :

— Այո , այդպիսի անհաւատ զղացումներով , այնպէս չէ՞ , ըսաւ , և հրամայեց իւր պաշտօնատարներուն . բանալը տարէք սա մարդը :

— Այն առնեն ինքզինքս չկրնալով զս գել , բռնութիւն մի բանեցնէք տէր իմ , գոչեցի . ինչո՞ւ կը դատապարտէք զիս , կիս մը հաւատքը ուրացեր է . այդ ինձ վերաբերութիւն չունի . փնտռեցէք որ դանաք :

— Գեռ կը խօսեցնէք տա ստահակը , հրամայեց մեծաւորը :

Անմիջապէս զիս հրելով հրմշտկելով , սրահէն դուրս քաշեցին և միջին բանտ մը տարին նետեցին . հոն ալ բերնիս եկածը դուրս տուի , որ զինուորներուն ծիծաղը շարժելէ ուրիշ բանի չծառայեց . մէկէն միտքս եկաւ . նորին վսեմութեան նամակը . ծոցէս հանելով , զիս պատող զինուորներէն մէկուն ազաչեցի որ իշխանին տանի . առջի բերան խնդիրքս կատարել չուզեց . վերջը ոսկի մը զինքը համոզեց . նոյն գիշեր առանց պատասխանի անցուցի . երկրորդ առաւօտուն , իշխանին քարտուղարը գալով , խմացուց որ մինչև փախստական կնոջ ուր ըլլալը չխմացնեմ , աղատութեան յոյս չկայ . ուստի պէտք եղաւ ուրիշ միջոցի ձեռք զարնել , և որովհետեւ թոյլտուութիւն չկար որ և է նամակ , կամ թէ որ և է գրութեամբ մէկու մը հետ բանակցիլ , ինձ անկարելի կըլլար նորին վսեմութեան միջամտութիւնը խնդրել . յուսահատութիւնը պատեց զիս , ինչ ընելիքս չէի գիտեր . գիշեր եղաւ՝ քնանալ անկարելի էր , ո՛չ անկողին կար և ո՛չ աթոռ , ուստի քարայատակին մէկ անկիւնը քաշուելով նստայ . ինձ թողուցած քիչ մը սեւ հացերնին գետինը կը կենար , աղատութենէ յոյս չունենալուս , սկսայ վրէժխնդրութիւն նիւթել . յիշաւի մարդուս կիրքերը ինչ անհամեմատ են , ով հողազանդ էակներ , նմաննուդ չարութիւն հասցնելով միթէ ձեզի բարիք կը յուսաք . կտրեցէք ծառը , որ շուքէն զրկուիք , մի՛ ջրէք հողը որ անկէ բան մը չընդունիք :



# Փ Ա Խ Ո Ւ Ս Տ

Երբ այսպիսի խորհուրդներով միաքն զբաղած էր, աչքերս ծանրանալ սկսան, չեմ գիտեր որչափ ատեն քունս տարաւ, մէկ մ'ալ զգացի որ զիս կը սարսէին. աչքս որ բացի խոր մթութեան մէջ դէմս երկու հողի կանգնած տեսայ, մէկէն 'ի մէկ կարծելով որ սատիկանու թեան պաշտօնեաներ են ու զիս շղթայելու եկեր են, տեղէս ցատկելով պաշտպանողական գիրք մը բռնեցի:

— Տէր իմ ի՞նչ կընէք, ըսաւ ցած ձայնով առաջինը, ես Պրչագճըն եմ քու բարեկամդ. շուտ բրէ հեռանամք. պահապան դինուորը հիմայ վրայ կուգայ: Իսկ երկրորդը ականջը դրանը տալով դուրսը մտիկ կընէր. թէպէտ ես այս խօսքերէն բան մը չհասկցայ, բայց կռահեցի որ ասի փախուստ մ'էր. ուստի առանց պատասխանելու առաջ անցայ և այն ժամանակը տեսայ որ բանտին քարայատակէն գեանափոր մը բացեր էին պարսպաշէն պատը ծակելով. արդ սողալով այն նեղ ճամբէն դուրս ելայ. դեռ երկրորդը այն նեղ անցքէն դուրս չէր ելած:

— Տէր իմ, ըսաւ առաջինը, դուք հեծէք այս ձիուն վրայ և պարսպին ծայրը մեր ընկերները պիտի դտնաք որ ձեզ մինչև մեր բնակարանը պիտի տանին:

Առանց պատասխանելու դէպի ցուցրցած կողմը ուղղեցի ձիուս գլուխը. անմիջապէս երեք զինեալ ինձ ուղեւորեցան և էէտի գուլէ գինեպանի մը տունը տարին. այս տանը դըռնէն որ ներս մտայ սոսկացի. նեղ և մութ անցքէ մը տանը բակը իջանք և ձախ կողմի սանդուխէն տանը առաջին յարկը խուց մը մտանք որն որ ճշմարիտ գինատուն մ'էր. պատերէն վար կախուած կային լայնաբերան հրացաններ, Մատրիտի ատրըճանակներ, Անգղիոյ դաշոյններ և թէքէ ըսուած Տաճկական երկայն դանակներ. ասոնց մէջ նաև կային քանի մը նկարներ, օրինակի համար ձիապալիին հրդեհը, Ռուսիոյ կայսեր թագաւոր



դրութեան հանդէսը և մեծին հաբուլէօնի կենդանագիրը , այս նկարները մատիտով գծուած ու վերջէն ներկուած էին , տասը վայրկեան վերջը Պրչագճը մականուանեալը այս խուցէն ներս մտաւ և դիտ տեսներուն ահամայ դարմացման ձայն մը հանեց , « կը տեսնեմ որ սխալմունք մ'եղած է , ըսի :

— Այ չար սատանայ , դոչեց , յոյսերնիս 'ի թերեւ ելաւ մեր աէրը չէ այս մարդը :

Այս խօսքին վրայ բոլոր ընկերները կայծակէ զարնուածի պէս մնացին :

Մէջերնուն տախարակ քիթով մէկը , չըլլայ որ մասնուինք , ըսաւ . այս խօսքին վրայ զայրոյթը տիրեց ամենուն վրայ և քանի մը դաշոյններ ալ պատեանէն մերկացեր էին :

— Դու սիլ ես պարոն , պէտք է որ ինքզինքդ մեզ ճանչցունես , դոչեց մէկը :

— Բարեկամներ , ըսի , սրտերնիդ թող հանդարտի . ես ձեզի չիտասելէս 'ի զատ ամենքդ ալ վարձքերնիդ պիտի ընդունիք :

— Զմեզ դիտարոտութեան դատապարտելով այնպէս չէ :

— Ատկէ ի՞նչ շահ կը յուսաս ինձ . . . պատուոյս վրայ կերդնում որ ձեռքէս եկածը պիտի ընեմ ձեզ հաճոյանալու համար :

— Ուրեմն միացիր մեզի հետ :

— Ի՞նչ գործի մէջ :

— Հարուսաներէն մեր պիտոյքը հոգալու համար , այսինքն արդիլեալ և միանդամայն շահաւոր , բաց ըսեմ դողութեան մասին , մտիկ ըրէ , մենք քսան ընկեր ենք դիխաւորնիս Սարաֆօղլու կը դոչուի , որ Սլպանիոյ մէջ բռնեցին զայն , քանզի աւանց մեր դիտութեան քարայրի մը մէջ ծեր մը սպաններ և դրանը սեամին տակ թաղեր է եղեր . թէպէտև դեռ չըխոսատիանեցաւ՝ բայց եթէ ճշմարտիւ սպաննած ալ է , իրաւունք ունի , քանզի այն չար ծերը մեր տիրոջը կնկանը մայրը և եղբայրը սպաննած էր :

Այս միջոցին աճապարանօք մէկը խուցէն ներս մտնելով « Ընկերներ , դոչեց մեծաւորին կինը փախեր է :

— Ի՞նչ կըսես :



— Այս, հիմայ սենեակը գացի աւեաելու՝ թէ Տէրերնիս աղատած է բայց մարդ չիգար, և դուրս ելած առնա տեսայ որ դռանը վրայ սապէս դրուած էր. գղրոցին վրայ նամակ մը կայ բայ կարդայ. ուստի դառնալով՝ գղրոցին վրայէն նամակը գտայ, ահա՛ առ կարդայ:

— Տեսնենք, ըսաւ Պրչագճին, և աճապարանօք նամակը բացաւ որ այսպէս դրուած էր:

« Մինչեւ հիմայ դողերու հետ կենակցիլս Պատուած ալ դիտէ՛ որ իմ ուղելովս չէր, խիղճս ամեն օր դիս կը տանջէր. յամիշտակութեամբ ստացած արիւնաներկ հարստութեան մէջ այրիին արցունքովը թրջուած հացը չեմ ուտեր, Ստուծոյ օգնականութեամբը ամեն օր ձեր արիւնաթաթաւ երեսը տեսնելէ աղատեցայ. ես հիմայ իմ հայրենիքս կերթամ. խիղճս հանդարտ է, քանզի Սարաֆօղլույին հետ պսակեալ չէի »:

ԼԻՆԻԼ

— Ա՛հ, դուչեց Պրչագճը, պիտի զղջաս դու փոքրիկ սատանայ, ինչ որ է. բայց դիտցած եղիք որ մեծաւորը աղատած չէ:

— Ի՞նչ կըսես:

— Այս, սխալ որոշեր եմք. մեծաւորին բանտը չկրցինք գտնալ և այս սրարոնին բանտը ելանք:

Ես այս միջոցին կը մտածէի որ արդեօք Լիուլ ըսածնին ի վանին քոյրն էր, շատ կը փափաքէի դիտնալ, բայց զգուշացայ հարցընելու կասկածանաց տեղի չտալու համար. վասն զի վերջէն կրնայի իմանալ ինչպէս որ իմացայ խվանին քոյրն է եղեր. մէկ մ'ալ դուռը երեք անգամ բաղխեցին և ամեն մէկ զարնուած քին դիտմամբ կենալով:

— Բացէք, ըսաւ Պրչագճին, բարեկամ է. դուռը բացինք թիչ մը ետքը իյնէկէօղ մականուանեալը խուցէն ներս մտաւ և դիս հոն տեսնելով աչքովը հարցում մը ըրաւ Պրչագճին. է՛ բարեկամ, ըսաւ Պրչագճին, մեր տիրոջը տեղ սխալմամբ այս սրարոնը աղատեր ենք:



— Ուրեմն մատնուած ենք, ըստ, Նորեկը քանզի ոստիկանութիւնը իմացած է և մեր ետեւէն կուգան. պարսպին դռնէն ներս մտած ատենս բազմաթիւ ձիաւորներ ածապարանօք դէպի այս կողմը կուգային:

— Ուստի իմ սիրելի պարոնս, պէտք է որ դու ալ մեռնիս, ըստ Պըչագճի դանակը պատեանէն հանելով:

— Զուր տեղը արիւն մի թափեր, ըսի. թէ որ զիս մտիկ ընես, պիտի իմանաս որ ես ամենեւին բանէ մը տեղեկութիւն չունիմ, վասն զի դուք էիք որ զիս աղատեցիք. խօսէ՛ միթէ զիս բանտարկուած չգտա՞ք. թէ որ ես ոստիկանութեան գաղտնի պաշտօնեաներէն մէկն ըլլայի, ի՞նչ հարկ կար այսպիսի միջոցով զձեզ ձերբակալել. զինուորներ կը դարանէի և ձեզ ամենքդ ալ միատեղ կը բռնէի:

— Իրաւունք ունի, ըստ Իյնէկէօղ, այս պարոնը յանցանք չունի և պէտք է որ զինքը աղատենք, քանզի բազում այսպէս բերաւ, արդ՝ ածապարեցէք ատեն չկայ. հիմայ ձիաւորները ուր որ են հոս կը հասնին, զէնքերը պատերէն վար առէք, չըլլայ որ վրանիդ զէնք գտնուի և վարի թակոյկներուն մէջ մտէք, այս պարոնն ալ թակոյկի մը մէջ գրէք:

Մէկէն հրամանները կատարուեցան և զիս բակը տանելով մինչեւ կէսը հողի մէջ թաղուած մեծ թակոյկի մը քով կեցուցին. այս թակոյկը երկու կտորէ շինուած էր, որ ուղած ատեննին կէսէն կը բացուէր. ուստի թակոյկին կէսը մէկդի աններով ինձ հրամայեցին որ մէջը մտնամ և մտնալէս վերջը ձեռքս կոնք մը տուին որ մէջը գինի լեցուցեր էին. պատուիրեցին որ զայն գլխուս վրայ բռնեմ տաանց շարժելու և դարձեալ այն կէս բացուած թակոյկը վրայէս դոցեցին և քառորդի մը չափ ձայն մը չկրցի լսելու. մէկ մ'ալ ուժգնութեամբ տանը դուռը բացուեցաւ և սկսաւ զինուոց շառաչման հետ ձիերու ոտքի տրոփներ լսուիլ:



## ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

— Ի՞նչ կուզէք պարօն հարիւրապետ, ըսաւ Իյնէկէօղ :

— Յանուն օրինաց եկեր եմ հոս փախստական մը փնտրուելու, որ այս դիշեր բանտին քարայտակէն գետնափոր մը բանալով փախեր է և այս տունը մտնալը տեսեր են :

— Պարօն հարիւրապետ, այս տունը ինձմէ և եղբօրմէս ուրիշ մէկը չկայ :

— Եղբայրդ ո՞ւր է :

— Վերը կը քնանայ :

— Պէտք է տեսնեմ զինքը :

— Շատ աղէկ, երթամ արթնցընեմ :

— Ոչ, ես պէտք է որ բոլոր տունը անձամբ փնտռեմ, ըսաւ հարիւրապետը : Ես, ա՛լ ձայն չլսեցի, կերեւի որ հետազօտութիւնը սկսեր էր տանը չորս կողմը. քիչ մը վերջը հարիւրապետին ձայնը առի՞ որ սանդուղէն վար իջած տանը՝ տղաք, սա թակոյկներուն մէջը նայեցէք, գոչեց. պաղ քրքրտինք մը ճակտէս վար հոսիլը գգացի. մէկէն թակոյկներուն բերանները բացին, բայց ամենուն մէջն ալ դինի կար. վասն զի ինձի պէս ամենքն ալ կոնքերով գլուխնուն վրայ դինի բրանած էին՝ որ դինուորները թակոյկներուն մէջ դինիէ ուրիշ բան չէին տեսներ :

— Պարօն հարիւրապետ, ըսաւ Իյնէկէօղ, կը տեսնաք որ մարդ չկայ :

— Այո՛ պարօն, բայց պաշտօնս այնպէս կը պահանջէ, ամենեւին զանցառութիւն չեմ կրնար ընել, քանզի փախստականը աղքատ մէկը չէր. Տէրութեան վնասակար և ոսկեհանքի չափ հարուստ Պէյ մ'էր. բայց կը յուսամ որ ձեռք կանցընեմ, քանզի պարսպին գունէն ելած ատեննին չորս ձիաւոր են եղեր. անշուշտ եմ որ շատ հեռուները չեն, ուստի պէտք է որ անձապարեմ. մնաք բարով պարօն, ներումն կը խնդրեմ :



— Յաջողութիւն կը մտադրեմ, ըսաւ Իյնէկէօղ և տանը դուռը փոցուեցաւ . երբ որ ձայները կտրեցան, քիչ մը վերջը թակոցկիս կախարիչը վերուցին ու ես դուրս ելայ, և զարմանօք տեսայ որ այն վայրագ խումբը ինձ հետ ակնածութեամբ կը վարուէին : Առանց խօսելու թողած սենեակնիս վերագարձանք :

— Պարոն, ըսաւ Իյնէկէօղ խօսքի սկսելով . ինչո՞ւ համար զձեզ բանտարկեցին :

Այն ատեն ամեն բան տեղն 'ի տեղը պատմեցի . պատմութեանս մէջ այնպէս կեղծեցի՝ որ Արիֆէն Պօլիսէն հեռացուցած եմ :

— Շատ աղէկ ես ըրեր, ըսաւ Պրչագճին և Իյնէկէօղին հետ քիչ մը խօսելէ վերջը ինձ աչք ըրաւ որ հետը երթամ . և զիս առանձին սենեակ մը տարաւ ու դուռը դոցելէ ետքը,

— Տէր, ըսաւ, քեզի խնդիրք մ'ունիմ :

— Խօսէ, ըսի :

— Մենք՝ ինչպէս որ գիտես, գողութիւն կրնէինք, բայց հիմայ մեր մեծաւորը բանտարկուեցաւ և բոլոր մեր վաղեմի ընկերները կայսերական ձիաւոր խումբի մը հետ զարնուելով մտան . ես և Իյնէկէօղ միայն ազատեցանք . թէպէտեւ նոր խումբ մը կազմելու յաջողեցանք, բայց դործը յուսացածնուս պէս չեղաւ . հիմայ նպատակնիս այս խումբը ցրուել է, վասն զի քանի որ մեծաւորնիս բանտարկեալ մնայ, հարկաւ իւր ընկերներուն անունը պիտի խոստովանի . այն ատեն զմեզ ալ բռններու պիտի աշխատին . արդ՝ մենք զքեզ ազատելու ամեն ճիգ պիտի թափենք, ուստի կը խնդրենք որ դու ալ մեզ ազատես վերջը . քանզի դու հարուստ ես և ոսկին մեծ ազդեցութիւն ունի :

— Իրաւունք ունիս բարեկամ ըսի, պատուոյս վրայ կերդնում որ զձեզ պիտի ազատեմ, միայն ինձի նորին վսեմութեան պալատը տարէք և մնացածը ինձ թողէք :

— Շատ աղէկ, ըսաւ Պրչագճին ու նորէն առաջին սենեակը գացինք, որ ընկերները կանչելով այսպէս խօսեցաւ .



« Ընկերք , արդէն ձեզ յայտնի է մեր տիրոջ բանտարկուիլը , հետեւաբար անուրանալի ճշմարտութիւն մ'ալ է այնպիսի անձի մը որ բոլոր կեանքը գրեթէ մարդասպանութեամբ և անլուր սճիրներով անցուցած է՝ մինչև որ գլուխը ուսէն վարչառնուի՝ ազատութիւնը անկարելի է , և հաւանական ալ է որ խոստովանութեան ատեն զմեզ մասնէ . ուստի քանի որ մեր մեծաւորը բանտարկեալ է , ըսել է մեր Բարեպաշտ ընկերութիւնը անգլուխ մարմին մ'է . և ինչպէս որ առանց զեկի նու մը անկարելի է իւր ճամբան շարունակել , այնպէս ալ մեր ընկերութիւնը . և որովհետև մինչև հիմայ մէկը չկրցանք ընտրել՝ որ անկախ անօրէնութեամբ կառավարէ զմեզ , այսօրու ընէ պէտք է ցրուենք այս ընկերութիւնը և ամեն մէկերնիս մեր գլխուն ճարը աւաններք . և եթէ պէտք ըլլայ Աստուծով մէկզմէկ գանելու բաղդաւորութիւնը դարձեալ կռնենանք » :

Բոլոր խումբը այս տարօրինակ ատենախօսութիւնը դժկամակութեամբ լսելէ վերջը , մի առ մի իրենց հրաժարականը տալով մեկնեցան և սենեակին մէջ Պըչագճին , Իյնէկէօղը և « ս մնայինք . Անմիջապէս ինծի ձեռք մը պարտիզպանի հազուատ բերին , և երկու կողով ընդ կողէն ճարեցին ձիոյ մը բռնաւորելով ինձ յանձնեցին , իրենք ալ 'ի հեռուստ ինձ հետեւելով պարտպէն անցանք :

Ամեն ըսպէ պատրաստ էին որ և է վտանգէ զիս ազատելու . բարեբաղդաբար մէկու մը կասկած չտալով Ն . Վսեմութեան պալատէն ներս մտայ :

Բոլոր պատահածները նորին Վսեմութեան պատմեցի որ անմիջապէս Օգոստափառ կայսեր ներկայանալով իմ ազատութեան համար հրովարտակ մը հանել տուաւ . հրովարտակը առի ու Ռատիկանութեան պաշտօնէին ներկայացայ , հրովարտակը տեսնելուն անմիջապէս ինձ արտօնադիր մը տըւաւ որ ամենեւին մէկը չդպչի թէ ինձ և թէ իմ՝ մարդ իկնելուս . այսու ամենայնիւ ոչ հրովարտակին և ոչ արտօնագրոյն մէջ Արիֆէի անունը կար , ուստի պէտք եղաւ Արիֆէն գաղտնաբար հեռացնել , Իշխանը լսելով , որ Ն . Վսեմութեան միջ-



նորդութեամբը ազատեր եմ, խորհեցաւ կայսեր և Ն. վսեմութեան մէջ դժտութիւն ձգել որ վերջէն առանց արդելքի ինձմէ վրէժը լուծելու կարող ըլլայ, և յաջողեցաւ ալ հետեւեալ կերպով:

Գիշեր մը կայսրը ժամը հինգին ատենները ետըր Քէօշկիւէն նաւ մտնալով դէպի Տօլմա Պահճէ պալատը կերթար, այս միջոցին Անգղիական շողենաւ մը կայսերական նաւուն վրայ կը յառաջանար այնպէս որ եթէ կայսերանիտ նաւուն թիաւարները բռուն զօրութեամբ չը ջանային նաւը յառաջ մղել, մազ մնայած էր որ կայսերական նաւը խորատուղէր. այս սուկալի վտանգէն՝ Նախախնամութեան յատուկ կայսերական ընտանեաց վրայ ունեցած շնորհիւ ազատելէն վերջը, երբոր կայսրը պալատը դարձաւ, և իւր շնորհակալութիւնը Նախախնամութեան մատուցանելէն անմիջապէս ետքը, իշխանները կանչել աուաւ, արկածը պատմելով խստիւ հրամայեց որ ամեն կողմ մանրաքննին խուզարկութիւններ ըլլան և հասկնան թէ պատահմունք էր թէ դաւադրութիւն, և ուստի՞ թելադրութեալ, իմանան, և յանցաւորները դատապարտուին. իսկ եթէ պատահմունք, ներումն շնորհուի:

— Կը տեսնես Միհրդատ, ըսաւ, ի՞նչ աստիճան ներողամտութիւն որ երկնապարզ և ձիրք մ'է Օսմանեան Ազգին, այս ժողովին մէջ էր նաև իմ պատճառաւ Ն. վսեմութեան հետ թշնամացած իշխանը: Այս առիթէն քաջալերուելով, վրէժխնդրութենէն սկսաւ խօսիլ այսպէս:

— Ով իմ վեհապետս, Ձեր մեծափառութեան հանդիպած դժբաղդութիւնը ակն յանդիման յայտնի կերելի որ դաւադրութիւն մ'է թէ՛ Ձեր անգին կենաց և թէ՛ Օսմանեան կայսրութեան բարձր դահուն և ո՛չ թէ պատահմունք. քաջայոյս լեր Տէրդ Տէրանց, ես կը վստահացնեմ Ձեր վեհափառութիւնը որ պիտի գտնամ այս դաւադիրները:

— Լաւ, ըսաւ կայսրը, և հրամայեց իշխանին թէ անմիջապէս խուզարկութիւնն սկսի:

Հոս յաղթութիւնը ստացաւ Ն. վսեմութեան հակառակ




կորդը, վասնզի այս խուղարկութիւնն իրեն յաճնուեցաւ, և քիչ մը ետքը Ն. վսեմութեանը հետ տեսնուիլը անկարելի եղաւ:

— Կիմանան Միհրդատ, ինձ հետ թշնամանալ, և տիրոջ մէս վրէժ տունել, ա՛հ ողիղ թշնամութեան, գիտեմ որ Պարսիկ դաշոյնի նման երկկողմնակի կը դառես, որ եթէ մէկուն դէպքը անյաջող համարուի, միւսին յաջողութեանը վրայ վրաստահ ըլլաս, բաւական համարելով միայն կիրքդ յագեցնել. բայց եթէ անմեղ և թէ մեղապարտ . . . : Հոս խօսքը վերջացնելով տխրութեամբ գլուխը կուրծքին իջեցուց, քիչ մը ատեն խորին լռութիւն մը տիրեց . . . և սկսաւ դարձեալ խօսիլ. Միհրդատ, Միհրդատ, աղջկանս կեանքը ապահովուած է. հիմայ կը մնայ Ն. վսեմութիւնը տեսնել, որուն համար ամեն ճիգ պիտի թափեմ որ ապերախտ չըդտնուիմ:

Իսկ գանձին գալով թէ որ ես բռնուելու ըլլամ, քեզ նամակ մը պիտի գայ Վասիլ ստորագրութեամբ զոր գանձին ուր պահուած ըլլալը պիտի յայտնէ. իսկ թէ որ այս նամակը չհասնի քեզ, այն ատեն իմ գերեզմանս բանալով դիակիս վրայ պիտի գտնաս գանձին վերաբերեալ ծանօթութիւնը և իմ կամքս: Մէկ մ'ալ սուր հնչիւնով մը ժամը վեցը հնչեց. Սօֆեան պէյ մէկէն 'ի մէկ սթափելով, Ե՛լ ըսաւ Միհրդատին, ատենը եկաւ. և միատեղ Արիֆէին գտնուած խուցը անցան:

Արիֆէ սեւ թիկնոցի մը բաթաուեր էր գլուխն ալ ցփսի մէջ բոլորովին պահած, պատրաստ կսպասէր. երեքը միատեղ սենեկէն դուրս ելան, պանդոկին դուռը նաւամատոյցին վրայ Մարդար ծառայէն ուրիշ բարձրահասակ մէկը կեցեր էր, որուն ո՛վ ըլլալը Սօֆեան պէյին հարցուց Միհրդատն ալ պատասխանեց որ իւր հաւատարիմ ծառաներէն մէկն է:





## Հ Ա Յ Ր ՈՒ Տ Ղ Ա Յ

Գիշերը մութ էր, փաստայք օդին մէջ մերթ ընդ մերթ պղտի լլցսեր ցողացնելով կըթռչաէին, ստից արտիւնէն պանդակին ծխնելոյղին վրայ դարած բու մը տխրալուր կուի մը հանելով օդոյն մէջ աներեւոյթ եղաւ. Սօֆեան պէյ սարսուայ, Արիֆէ վախցաւ, իսկ Միհրդատ յառաջ վարած քայլը նոյն միջոցին կեցուց. Արիֆէ Միհրդատին երեսը նայեցաւ, անմիջապէս Միհրդատին միտքը եկաւ. հոն ինչ բանի համար դալը, Արիֆէն նաւակը մտցուց ու ինքն ալ նաւակը մանելով կարապետին հրամայեց որ դէպի շոգենաւը թիաւարէ, առանց մտածելու որ Սօֆեան պէյ ալ հայրը ըլլալուն պէտք էր իւր աղջկան նաւակին մէջ դանուի. իսկ նաւամատոյցին վրայ գլտնուողները մեքենարար կարատիները տանելու համար շոգենաւէն խրկուած քառաձի մակոյկը մտան. ՚ի հարկէ քառաձի մակոյկը նաւակէն յառաջ շոգենաւին պիտի հասնէր:

Արդ՝ մակոյկը նաւակին քովէն անցած ատեն, « Միհրդատ, ըսաւ, Սօֆեան պէյ նաւավարիդ չմտնաս ըսելու, որ մեզ պիտի սպասէ:

— Այո՛, պատասխանեց Միհրդատ. նաւավարը թիերը թողուց այս միջոցին:

— Բայց ինչո՞ւ կեցեր ես, հարցուց Միհրդատ:

— Ոչի՛նչ, պատասխանեց կարատեա խեղդուկ ձայնով մը. այն պարոնին անունը կը փափաքէի դիտնալ. այն մարդուն ա նունն ի՞նչ է:

Մէկէն ՚ի մէկ Միհրդատին միտքը տխուր պատմութիւն մը եկաւ, և կտրապետին դառնալով « Սօֆեան պէյ է անունը, պատասխանեց:

— Իւր բուն անունը Սօֆեան պէյ է կըսես, այս պարոնը ամենեւին ուրիշ անուն չունի՞ կամ ունեցած չէ՞:

— Համբերութիւնս կը հատցնես, մարդ քանի՞ անուն կունենայ, դո՛ւնց Միհրդատ խոտութեամբ:



— Իրաւունք ունիս Տէր, մրմնջեց նաւաւարը և ալ անկէ վերջը ձայն չհանեց. մահոյկը նաւակէն առաջ շողենաւին հասնելով Սօփեան պէյ սանդուխին վրայ կապասէր, Պրչագճին ալ իւր քովը կեցեր լսալտեր մը կը բռնէր, մէկ մ'ալ նաւակը նաւէն կախուած սանդուխին քով կեցաւ :

Սօփեան պէյ սանդուխին վերջին աստիճանը իջեր էր իւր աղջկան նաւակէն ելլելուն օգնելու համար. նաւակին քով ծռելով « Արիֆէ ձեռքդ ինձ տուր, թերևս այս վերջին անդամն է զոր ձեռքդ պիտի բռնեմ, ըսաւ. բայց դեռ խօսքը չէր լինցուցած՝ երբ կարապետ փայլակի արագութեամբ տեղէն ցատկելն և Սօփեան պէյին կոկորդէն բռնելը մէկ եղաւ. Արիֆէ ճիչ մը արձակեց, իսկ Պրչագճի անմիջապէս հասնելով հազիւ ազատեց Պէյը նաւաւարին ձեռքէն, ու Միհրդատի օգնութեամբը նաւուն վրայ հանելով նաւաստիներուն յանձնեց :

Ամենքն ալ նաւուն վրայ ելեր էին, այս ամենը վայրկեան մը միջոց չքշեց. Միհրդատ նաւաւարին մօտենալով՝ « Ո՞նրդդ ամ, դոչեց, այսպէս կը հատուցանես բարերարութիւն մը :

— Դուք անդդամներ, պօռաց նաւաւարը, դուք՝ ձեր հաճոյական կրիցը համար բարիք կ'ընէք, որ վերջէն ձեր եղբռնադորժութիւնները մարդ երեսնիդ տալու ակնածի :

— Լուեցուցէ՛ք սա շունը, ըսաւ Սօփեան պէյ :

Պրչագճի մօտեցաւ Սօփեան պէյին հրամանը կատարելու :

— Յիրաւի անդդամ, դոչեց նաւաւարը, քու արիւնէդ եղողը շունէն ալ ցած կըլլայ :

— Կեցիր, պօռաց Պէյը Պրչագճիին որ արդէն կարապետը բռնէր կը քաշէր անկէց հեռացնելու համար. ուստի թողուց զայն. Սօփեան պէյ անոր քովը վաղելով՝ « Ո՞վ ես դու, անունդ ի՞նչ է, հարցուց աշխուժով մը :

— Չճանչցա՞ր զիս Վանսիլ, արդեօք ի՞նչ նոր եղբռնադորժութիւն կայ այդ Պէյ ձեւանալուդ տակը :

— Բայց ո՞վ ես դու վերջապէս, պօռաց, որ անունս ալ դիտես :

— Ես այն խեղճ Մագթաղինէին անհարազատ զաւակն եմ :



որ քու ցանկու թեանդ մէկ զոհն եղաւ . ա՛հ , ինչո՞ւ անխոհեմութեամբ քու ճիրաններուդ մէջ ինկայ , որ հիմայ կապուած վրէժս լուծելու անզօր մնացի :

— Զօրութիւն չունեցողը գթութիւնը իրեն պաշտպան ունի , ըսաւ խնդումով մը Սօֆեան պէյ . որդեակ իմ , բաղկացս մէջ եկուր , վերջապէս զքեզ գասայ , ըսաւ թեւերը բանալով :

— Ես քու բաղկացդ մէջ դամ , այն բաղկաց մէջ որ սպանութիւններով զօրացած են , ես քու գրկացդ մէջ այն ատեն պիտի միայն նետու իմ , երբ սրտիդ դաշոյն մը մխելու բարեպատեհ առիթը ձեռքս անցնի :

— Ո՛հ , որդեակ , ներէ՛ քու խեղճ հօրդ , կերդնում առաջի երկնից որ գործած յանցանքներս առանց գիտութեան էր :

— Մ'նզգամ , դեռ կը համարձակիս զիս քու զուակդ կանչելու . . . ամուսնութեան սրբազան կապը վատութեամբ արհամարհեցիր . . . մայրս , այն խեղճ կինը վշտերու տակ մեռցուցիր . . . քոյրս մօրս գրկացը մէջէն յափշտակելով՝ անխիղճ հայր , թուրքերու ծախեցիր :

Մէկէն 'ի մէկ Ս. րիֆէ կարապետին վրայ վազելով՝ « Ո՛հ , եղբայր իմ , սխալ է կարծիքդ , զքեզ խաբեր են , ըսաւ :

կարապետ արձանացեալ կենալով՝ « Քոյրս , Սաթինիկը մեր մընջեց . . . » Սօֆեան պէյ կուլար , Միհրդատ զայն կը մխիթարէր իսկ Պըչազ ճին ապշած կեցեր էր :

վայրկեան մը խոր լուութիւն տիրելէ վերջը . . . « Քոյր իմ Սաթինիկ , ըսաւ կարապետ , դեռ այս մարդուն ինչ հրէշ ըլլալը չես գիտեր . ի՞նչ ըսեմ՝ թերեւս քու գեղեցկութեանդ զարնուելով զքեզ խաբած է :

Այս խօսքերուն Ս. րիֆէ սկսաւ յորդ արտասուք թափել :

— Ո՛հ , ուրեմն իրողութեան մը տխուր դուշակութիւնն էր ըսածս , ըսաւ կարապետ :

— Լռէ՛ եղբայր կաղաչեմ , պօռաց Ս. րիֆէ :

կատաղի աչքերը Սօֆեան պէյի վրայ դարձուց կարապետ , ու երկու բուռերը սեղմելով՝ « Մ'նձր գազան , մարդկութեան ամօթ , գոչեց խեղդուկ ձայնով մը և սկսաւ տղու



մը պէս լալ . քիչ մը ատեն միայն հեծ կլտալու ձայներ կը լըսուէր . վերջապէս Միհրդատ լուծիւնը խղերով՝ « Տէր իմ , ըսաւ Սօֆեան պէյին , ասոնք քոյր և եղբայր են , արդէն Սաթիւնիկը պիտի երթայ՝ կարապետն ալ հետը խրկենք և անշուշտ բարկութիւնը անցնելով իւր քրոջը խօսքերուն պիտի դիմանի :

— Շատ աղէկ ըսիր , բայց Մարդարին ապսպրէ որ ամենեւ ին ստակ չտայ ձեռքը . Ետքը կարապետին դառնալով՝ « Որդեակ , ըսաւ , քոյրդ Եւրոպա պիտի երթայ , պէտք է որ դու ալ միատեղ երթաս և փափաքածիդ պէս ինձմէ հեռու կըլլաս :

Կարապետ խենդի մը պէս տեղէն ցատկերով՝ « Սատուծոյ սիրուն , պօռայ , ես հոս աղջիկ մը ունիմ , դիս մի՛ դրկէք իմ դաւկէս :

— Դու զաւակ ունիս , հարցուց Սօֆեան պէյ :

— Մնչո՛ւշտ . ո՛հ , կաղաչեմ , դագրէ մեղի չարիք հասցունելէ , թո՛ղ տուր դիս իմ աղջկանս քովը մնամ . ես թէ որ այս գիշեր չերթամ , ա՛հ զաւակս ցաւէն կը մեռնի :

— Բայց ես գիտեմ ուր է աղջիկդ , քու ետեւէդ այն ալ կը դրկեմ , ըսաւ Միհրդատ և Սօֆեան պէյին մօտենալով՝ շուտ ըրէ տէր իմ , առաւօտը մօտ է ըսաւ . Սօֆեան պէյ վերջին անգամ մ'ալ Սաթիւնիկին փարելով՝ իմ անմեղ ըլլալս հասկըցուր եղբօրդ , ըսաւ և արտասուելով նաւուն սանդուխէն սկըսաւ վար իջնալ Միհրդատին և Պրչագ ճիւն հետ . այս միջոցին կարապետին գոռում գոչումները նկարագրել անկարելի էր . վերջապէս երեքը միատեղ կարապետին նաւակը մտան . Պրչագ ճին սկսաւ թիալարել , շոգ ենաւուն անիւներն ալ դառնալով սկսաւ իւր ճամբան շարունակել . Սօֆեան պէյ կուլար և աչքը շոգ ենաւէն չէր զատեր , Միհրդատ ալ կաշխատէր զանի միտիթարելու , Տասը վայրկեան վերջը ամեն բան անցայտ եղաւ :





# ՊԵՏՐՈՍ ՆԱԶԱՐՈՅ

Այս անցքերը անցնելէն քանի մը օր վերջը Պէոյիւ քառ-  
բէի շրջալայրին վրայ գտնուած տուներէն մէկը Պետրոս Նա-  
զարօֆ անուն Ռուսիացի հարուստ հայ մը վարձեր էր . այս  
Նազարօֆին հաշատութեան վրայ ամեն մարդ հիանալով կը  
խօսէր . Ո՞վ էր , մարդ չէր գիտեր . կ'ըսէին թէ Սրեւելեան  
պատերազմին ժամանակ Անդղիացւոց բանակին պաշարը տուեր  
է , ոմանք ալ կը սնդէին որ Մէնչիքօֆ իշխանին մտերիմ բա-  
րեկամը ըլլալուն բանակին գիրքը ծածկաբար կլմացնէ եղեր  
Ռէլիսիէ մարաշախտին . բայց այս կարծիքը ընողներուն գրե-  
թէ ամենքն ալ Ռուսիան անյաղթելի սեպողներն էին . իրիկ-  
ուան ժամը տան և մէկը կար , շրջալայրին վրայ մատաղ օրի-  
որդները սկսեր էին իրենց սիրահարութեան դասերուն . խըն-  
դումերես սպասաւորներ դռներնուն առջին կը շրջէին դեր և  
առօյդ սպասուհեաց ու մանկածուներու կատակներ ընելով .  
Նազարօֆին դրան առջեւ զոյգ մը սեաւ ձիեր լծուած շքեղ  
կառք մը կեցաւ . կառքին ետին երկու սպասաւոր ձիերը հե-  
ծած՝ մէկուն ձեռքը երկայն ծխափայտ մը թաւշեայ պատեանի  
մէջ առնուած , իսկ երկրորդը մէկ քովին կաշիէ պայուսակ  
մ'էր կախէր՝ որուն շուրջը ոսկեթել բանուած էր . հետա-  
քրքիր մարդկանց բազմութիւն մը ծովուն եզրը ծառերուն  
տակ շարուեցան . տասը վայրկեան վերջը երկու ծառայ վա-  
ղելով եկան , Պէյը կուգայ կանչեցին և մէկը տանը դրան մէկ  
կողմը կեցաւ մէկն ալ միւս կողմը . կառավարը նստած տեղը  
ոտքի վրայ ելաւ , ձիերը անհամբեր ոտքերնին դետին կը  
զարնէին . մէկ մ'ալ Պետրոս Նազարօֆ ճեմագաթին մէջ  
տեսնուեցաւ սր դէպի կառքը կը յառաջանար , շնորհալի ե-  
րիտասարդ մ'էր թուի դիմօք , միանգամայն կնոջ մը չափ  
գեղեցիկ . սեաւ և շեկ մազերուն աղւոր ձև մ'էր տուէր ,  
այսու ամենայնիւ աչքերը գեղին և սովալլուկ կենդանեաց



պէս աղօտ կերպիւ կը փայլիլէր . իւր ձեւաւոր պիկները՝ պրզ-  
ախ բերանը անտեսանելի կընէր , և դէմքէն հազիւ քսան  
տարեկան կը կարծուէր . կուրծքը դոց սեռու բաճկոն մը հա-  
դեր էր որ ճերմակ սունազգեւատին մինչև սրունքը կը դոցէր .  
Ծնօտին տակ խորունկ սպի մը կը նշմարուէր որ հետաքրքիր  
մարդոց սրտին կրնար կասկած յարուցանել , վերջապէս՝ կառ-  
քին մօտենալուն , ձեռքը բուստէ համրիչ մը բռնած կառա-  
պանին , Օրթա-չէշմէ , ըսաւ , և թերթիւ մը ցատկեց մէջը : կառ-  
քը իւր ճամբան շարունակեց , անկէ վերջը կեցողները ցրուե-  
ցան : Մենք ալ կառքին հետ ընթերցողնիս Օրթա-չէշմէ կը  
հրաւիրենք : Ֆէստանէ սուի ու միւս ջուրերէն ամեն դար-  
ցողները հոս ժողովեր էին , բազմութեան նստելու ակնու չէր  
բաւեր , շատ մարդ ոտքի վրայ կեցեր էր ակնու չգտնուելուն  
պատճառաւ . ոմանք ալ իրենց ակնուը կանանց տուեր էին՝  
իրենք ոտքի վրայ մնալով , որն որ սուտ կը հանէին Եւրոպա-  
ցւոց այն խօսքը թէ Սրբեւելցիք կիները չեն յարդեր . ասոնց  
մէջ էր նաև Միհրդատ որ իւր ակնուը օրիորդ Ատէլին տա-  
լով ինքը ոտքի վրայ մնացեր էր . Սօֆեան պէյ ալ այս անդամ  
հոն էր պարզ հաղուած , և Տէրպէնախ ընտանիքէն քիչ մը  
հեռու նստեր Միհրդատը կը դիտէր . Միհրդատին քոյրը ախ-  
կին փունջ չէր եկած . մէկ մ'ալ Նազարօֆին կառքը սրճա-  
րանին առաջը կեցաւ . սեռու ձիերուն բերանը ճերմակ փրբ-  
փուրը պատեր էր , քթերնուն խինջանօք ջուրի կակիլներ  
կը ցատկեցնէին , Նազարօֆ կառքէն ծանրութեամբ վար ի-  
ջաւ , ամենուն աչքը այս նորեկին վրայ դարձան , սպասաւոր-  
ները անմիջապէս ձիերնուն վար ցատկելով տիրոջնուն հե-  
տեւեցան . Նազարօֆ աչքը չորս դին պտըտցնելէ յետոյ Մատ-  
թէոս Տէրպէնար տեսնելով բարեւեց զայն ու վերջը Սօֆեան  
պէյը տեսաւ ու ակնածութեամբ քոյրը դնաց նստաւ :

— Հայր իմ , ըսաւ օրիորդ Ատէլ , ով է այն երիտասարդը :

— Աղջիկ , անմեկնելի հարուստ Ռուսիացի մ'է որ ինձի  
մեծ բարիքներ ընել խոստացաւ :

— Աղնիւ երիտասարդի մը կը նմանի , ըսաւ օրիորդ Ատէլ :



Միհրդատ որ տիկին Տէրպէնտի հետ խօսքի բռնուեր էր , այս խօսքը լսելով , « Ո՛վ է այդ երիտասարդը , հարցուց Ատէլին :

— Ահա սա մեր ետին անկիւնը ծերին քովը նստողն է , որ սպասաւորը ծխափայտ կը ներկայայնէ :

Միհրդատ շատ զարմացաւ երբ տեսաւ որ օրիորդ Ատէլի նկարագրած հարուստ երիտասարդը Սօֆեան Պէյի քովը նըստեր էր . անվիշտապէս քովիններէն ներու մն խնդրելէն վերջը , դէպի Սօֆեան Պէյ յաւաջացաւ . Սօֆեան Պէյ խնդումերեսս զինքն ընդունեց , իսկ երիտասարդը խրօխս կերպով մը բարեւեց :

— Ո՛վ էին անոնք որ քովերնին նստեր էիր , հարցուց Սօֆեան Պէյ :

— Մատթէս Տէրպէնտ վաճառականին ընտանիքը :

— Եւ ո՛վ է այն աղջիկը :

— Վաճառականին դուստրը :

— Ես ալ կը ճանչեմ զինքը , ըսաւ Նաղարօֆ , աղնիւ բարեկամներէս մէկն է :

Միհրդատ ատելութեամբ դիտելով զՆաղարօֆ , « Պահօն , 'ի վաղուց կը ճանչէք զինքը , հարցուց պաղութեամբ :

— Ո՛չ , գրեթէ երկու օր է որ տեսնուեցանք . այսու ա մենայնիւ հինաւուրց բարեկամի մը պէս ընտանեցանք , և այս գիշեր իւր տունը պիտի ընթրեմ :

Միհրդատ չպատասխանեց , միայն Սօֆեան պէյի դառնալով աչօք հարցման նշան մը ըրաւ :

Սօֆեան պէյ աչքերը դոցեց , կը հասկցնեմ ըսել ուղելով . վերջը Միհրդատին ականջէն « Ի՞նչ ըրիր , ըսաւ , աղջիկը դամբ :

— Սնկարելի եղաւ անոր վրայ տեղեկութիւն մը ստանալ . հօրը Եւրոպա դացած գիշերը տուն դացի մարդ չգտայ . քանի մը հոգի ըսին որ առջի օրը հօրը հետ Պօլիս է իջեր , բայց մարդ չգիտեր ուր երթալնին . քանի մը օր սպասեցի որ անշուշտ դացած տեղէն պիտի դառնար , բայց այս յոյս ալ



պարապը ելաւ . վերջապէս միայն մէկ յոյս մը մնացեր էր հար-  
ցընել թէ ազգական կամ թէ բարեկամնն ո՞վ էր , 'ի հարկէ  
անոնց քովը պիտի ըլլայ աղջիկը . բայց 'ի զուր , ոչ բարեկամ  
ունին եղեր ոչ ազգական , միայն իր դրացներէն մէկը ըսաւ  
թէ , Բող-Տանտան անունով բարեկամուհի մը ունի բայց չը  
գիտեր ո՞ր կը նստի :

— Մինչդեռ նայէ որ այս անգամ ալ յոյսերնիս պարապը  
չելլայ . ո՞ր գիտէ թերեւս ինչ խեղճութեան մէջ է . ո՞նչ բոլոր  
վրասահութիւնս քու վրաս է :

— Պիտի աշխատիմ և ամեն ճիգ պիտի թափեմ զինքը դըր-  
նելու . բայց Տէր իմ կը խնդրեմ զրուցէիք ո՞վ է այս երիտա-  
սարգը :

— Պետրոս Նաղարօֆ է անունը , այսչափը բաւական է քեզ  
գիտնալ . չեմ ուզեր որ հետը բարեկամութիւն ունենաս :

Այս միջոցին Սօֆեան պէյլին մէկ նշանովը Նաղարօֆ  
ոտքի ելաւ ու ներումն խնդրելէ վերջը Տէրպէնտի ընտանեաց  
կողմը յառաջացաւ . Մատթէոս Տէրպէնտ Նաղարօֆին իւր կողմը  
դ՛նալը տեսնելուն անմիջապէս ոտքի ելլելով իւր ամուսնացեալ  
ներկայացուց :

— Ի՞նչ կընէք պարոն , անկարելի է որ ընդունիմ , ըսաւ  
Նաղարօֆ :

— Ինձի կը բերեն պէյս , կաղաչեմ նստէք :

— Արդէն ես ալ Տիկինին և Օրիորդին յարգանքս մատու-  
ցանել եկայ . ոտքի վրայ ալ իմ պաշտօնս կրնամ կատարել ,  
ըսաւ զլուխը ծռելով :





## Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ

Տիկին Մարիամ համակրական ժպտով մը պատասխանեց .  
Օրիորդը իրեն ուղղուած ձեռքը բռնած ատեն զղաց որ իւր  
ձեռքը մեղմիկ մը սեղմուեցաւ . նոյն միջոցին սպասաւորները  
ուրիշ աթոռ մը բերեր էին , ուստի Օրիորդին քովը նստաւ  
Նաղարօֆ :

— Կենդանի է տէր , ըսաւ , այսպէս բաղմուտ թիւն դեռ տե-  
սած չէի :

— Այսօրուան տաքը դամենը տներնուն դուրս է թափեր ,  
ըսաւ աիկին Մարիամ :

— Իրաւունք ունիք Տիկին , պատասխանեց Նաղարօֆ , բայց  
ամենուն պատճառը կարծեմ այդ չէ , կան անանկներ ալ որ  
իրենց սիրելւոյն ժամադիր են հոս :

Ատէլ Նաղարօֆին աչքերուն մէջ նայիլ սկսաւ թէ արդեօք  
ի՞նչ ըսել կուզէ , բայց անոր դէմքէն բան մը չկրցաւ հասկնալ :

— Պետրոսիկ պէյ , արդեօք ո՞ր երջանիկ անձը ձեզ ժա-  
մադիր է , ըսաւ Տէրպէնտ :

— Ո՞հ պարոն , այդ մասին շատ անբաղդ եմ :

— Պետրոսիկ պէյը պիտի դժկամակի՞ արդեօք երբ այս  
անդամ երկմտիմք իւր խօսքին , ըսաւ օրիորդ Ստէլ :

— Օրիորդ , երկմտելու պէտք չունիք , քանի որ ինձմէ ա-  
ղէկ դիտեք օրիորդաց անթափանցելի ս'րտերը :

— Տէր Աստուած , ի՞նչ ընեն խեղճերը՝ երբ իրենց սրտին  
թափանցիկ ըլլալը յայտնելու անկարող են :

— Այդ մասին աղջիկս իրաւունք ունի պէյ , ըսաւ խօսքին  
մէջ մանելով Տէրպէնտ , աղջիկները բնականաբար ամէկոտ կըլլան :

— Այդ իրաւ է , պատասխանեց Նաղարօֆ , միայն թէ ի-  
րենց եղած յարգանքները արհամարհանօք կընդունին , և երի-  
տասարդաց յօրինած անտ շխօսքերը պաղու թեամբ մտիկ կընեն :



— Ներեցէք պէյ, զձեզ օրիորդաց աւելի կուսակից կը կարծէի, ըսաւ Ատէլ: Մէկ մ'ալ այս միջոցին հասակաւոր կը նոջ մը հետ նաւախար կարապետին աղջիկը Հեղինէ եկաւ Տէրպէնտի ընտանիքին մօտ նստաւ, բայց որչափ փոխուեր էր . . . երեսները դեղներ էին, մեռեալ կարմրութիւն մը միայն մնացեր էր. մեծ և սեւ աչքերը փայլունութիւնին մերկացեր էին, ճերմակ ձեռքերուն մատները սոյնպէս նիհարցեր էին որ գըրէթէ միս չգար վրանին. այսու ամենայնիւ դարձեալ գեղեցիկ էր . . . Ատէլ՝ օրիորդը տեսնելուն, ո՛հ, գոչեց, այս խեղճ աղջիկը որչափ նիհարցեր է. մայր իմ, պարոն Միհրդատը հոս պէտք էր, յաւելցուց:

— Յիրաւի գեղեցիկ աղջիկ է, ըսաւ Նազարօֆ:

Նոյն միջոցին ալ Միհրդատ ասանց մօտեցաւ:

— Ո՛հ, ըսաւ Օրիորդ Ատէլ, մենք ալ հիմայ քու վրադ կը խօսէինք. դարձեալ այն գեղեցիկ աղջիկը տեսայ, բայց խեղճը շատ նիհարցեր էր:

— Իրան կըսես, գոչեց Միհրդատ աշխուժով մը Օրիորդին խօսքը կարելով. ո՛ր տեսար, մինանկ էր:

— Պարոն, այդչափին մէկէն պատասխան տալը դ խրին բան չէ, պատասխանեց օրիորդը հեզնութեամբ:

— Կատակը թողուցէք Օրիորդ, պէտք է գտնամ զինքը: Օրիորդ Ատէլ այս պատասխանին վրայ շրթունքը խաժաւ. թէպէտ շատ բարկացեր էր, բայց ինքզինքը բռնեց և արհամարհօտ կերպով մը, պարոն ահա հոն նստեր են, ըսել բաւա կանայաւ:

Միհրդատ անմիջապէս Տէրպէնտի ընտանիքը թողուց (օրիորդ Ատէլին առանց ուշադրութիւն ընելու որ երեսը կախեր էր) Հեղինէին քովը դնաց, և « Օրիորդ հեղինէ, ըսաւ, ձեզի կարեւոր խօսելիք մ'ունիմ. պէտք է առանձին տեսնուիմ ձեզի հետ:

— Ի՞նչ նիւթի վրայ պարոն, միթէ հայրս . . . :

— Այո, հօրդ համար պիտի խօսիմ:

— Ո՛հ խօսեցէք միթէ դժբաղդութիւն մը եկաւ գլուխը,



տաւ այնպիսի արտասանութեամբ որ իբր թէ Միհրդատին տալիք պատասխանը արդէն դու շահեր էր :

— Հանդարտեցէք օրիորդ, պատահած դժբաղդու թիւն չկայ :

— Ո՛հ, կաղաչեմ տարէք զիս հօրս քովը կուզեմ աչօք տեսնել զայն, կուզեմ իւր բազկացը մէջ նետուիլ, ա՛հ կը պաղատիմ պարօն մի՛ զլանաք այս շնորհքը ինձմէ :

— Օրիորդ Հեղինէ, պատուոյս վրայ կերդնում որ ամենեւին դժբաղդու թիւն պատահած չէ ձեր հօրը, բայց զինքը չէք կրնար տեսնել :

— Ո՛րքեմն ինչո՞ւ չէք ուզեր պատճառը զրուցել :

— Ինչպէ՞ս չեմ ուզեր, արդէն ձեզ հետ մինակ տեսնուիլ ուզելս ալ անոր համար է :

— Մեր տունին ճամբան նկարողքե՞մ ձեզ :

— Պէտք չկայ ես արդէն զիտեմ :

— Ո՛րքեմն վաղը առաւօտ կամ եթէ կարելի է այս գիշեր կրսպատեմ զձեզ պարօն :

— Մ.յս գիշեր չեմ կրնալ զալ, բայց վաղը առաւօտ կանուխ կուգամ :

— Կաղաչեմ պարօն, եթէ չդալու անգթութիւնն ընէք, զիս անհնարին ցաւոյ կը մտանէք. բաղդը արդէն իւր խաղը խաղաց բաւական :

— Մեհրդ էրիք օրիորդ, այսուհետեւ բաշդը պիտի ժլգտի ձեզ :

— Ստուած պահէ զձեզ պարօն, կեանքս կը շնորհէք ինձ :

— Հող մի՛ ընէք օրիորդ, մնաք բարեւաւ, վաղն առաւօտ կուգամ :

— Երթաք բարեւաւ, ըսաւ Հեղինէ ու Միհրդատը հեռանալէ վերջը քովի կնոջը դառնալով, տիկին Բօղա, ըսաւ, այս երիտասարդը առաջին անգամ տեսնելուս վրան մեծ համարում ունեցայ, և հիմայ կենացս չափ կը սիրեմ զինքը, իրեն պիտի աղաչեմ որ ինձի եղբայր ըլլայ և հաւաստի եմ որ աղաչանացս պիտի զիջանի. ուրքեմն երթանք, չեմ զիտեր այս գիշեր ի՞նչպէս պիտի լուսընեմ :



— Հանդարտէ աղջիկս, ըսաւ աիկինն Բօզա, վաղը ըսած գ-  
 շուտով կը հասնի: Եւ գէտ ՚ի Սարը ետը ճամբայ ելան ու Հե-  
 ղինէ Միհրդատին քովէն անցած ժամանակը ժպտելով մը բա-  
 րեւեց զայն: Օրիորդ Սաէլ այս ժպտը տեսնելուն իր կաս-  
 կածներուն ամենքն ալ իրական կերպ մը առին, կարհամար-  
 հէր զՄիհրդատ իւր մտքէն. ա՛լ այնուհետեւ սէր չէր զգար  
 անոր վերայ: Միհրդատին իրմէն պաղելու պատճառը Հեղի-  
 նէն կը կարծէր, ուստի միտքը դրաւ իւր հակառակօրդէն վը-  
 ռէժը լուծել: Կանայք այսպիսի իրենց տարփաւորը յանցաւոր  
 կը հրատարակեն երբ զայն ձգել ուղեն, յայտնի էր որ Միհրդ-  
 տատ այս մասին յանցանք չունէր, միայն թէ վաճառականին  
 աղջիկը ու ըիչ երիտասարդ մ'էր տեսեր, նորը միշտ յարդի է  
 կանանց առջեւ, և ինքզինքը անմեղադիր ընելու համար խեղճ  
 և անզօր Հեղինէն վրէժ լուծել կը նիւթէր. ո՛ր կանայք, թէ-  
 պէտ շատ հաղուաղ իւտ է ձեր մէջը առաքինին՝ բայց և այն-  
 պէս այն առաքինութեան տարտական է մարդկութիւնը: Հե-  
 ղինէին անցնելէն վերջը Պետրոս Նաղարօֆ ոտքի ելաւ երթա-  
 լու համար:

— Պետրոսիկ պէյ, ըսաւ օրիորդ Սաէլ. կեցէք միասեղ  
 կերթանք. արդէն այս գիշեր մեզի խօսք տուիք որ մեզ հետ  
 ընթրէք:

— Իրաւունք ունի, ըսաւ Տէրպէնտ. սպասաւորին ըսենք  
 որ ճաշի չպիտի երթառ:

— Այո՛, բայց պէտք է ես զրուցեմ, ըսաւ ու գառնալով,  
 Գասպար, կանչեց. անմիջապէս մաքուր հագուած երիտա-  
 սարդ սպասաւոր մը եկաւ. զրուցէ որ ես ճաշի չեմ զար,  
 կառքը և գիշերուան մուշտակս պարսնին տունը լծող բե-  
 րեն:

— Շատ սղէկ, տէր իմ, ու ըիչ հրաման մը ունիք:

— Ո՛չ... կեցի. զրազ ըիս զրուցեցէք որ պէյին նամակ մը  
 գրէ և ըսէ թէ գործին յաջողութեանը կրնայ յուսալ... այս-  
 չափ: Սպասաւորը հեռացաւ:

— Ուրեմն եթէ կը հաճիք. կամայ կամայ մենք ալ ճամբ-



բայ ելլանք, ըստ Տէրպէնտ, և ամենքն ալ ստքի ելան. Միհրրդատ գեռ ստքի չելած, մնաս բարով պարոն, ըստ օրիորդ Սատէլ, և Նաղարօֆին թեւը մտնելով միւսներուն հետ մեկնեցաւ անկէ:

### ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Միհրրդատ նստած տեղը քար կարեցաւ. Սատէլին վարսունքին ամենեւին մեկնու թիւն մը չէր կրնար տալ. ինչ խորհելիքը ինքն ալ չէր դիտեր. արդեօք, կրտէր, ինձի համար բա՞ն մը դրուցեցին. բայց ի՞նչ կրնան դրուցել ինձ համար. այսու ամենայնիւ պաղ կերպով մը զինքը թողուցեր ու հետս մի գար ըսելու կերպով մը ելեր դացեր էր՝ այն որ մինչեւ վերջը զինքը փրեւլու երդում էր ըրեր. մտքին մէջ բան մը միայն կը պտըտէր. ո՞վ էր այն Պեարսս Նաղարօֆը, ո՞րկէ տեղեկութիւն առնէր անոր վրայ, Մէկէն խորհուրդ մը զինքը լուսաւորեց. Սօֆեան պէյը կը ճանչնար զայն, Անմիջապէս հոնկէ ելաւ և դէպ ՚ի Պէօյիւ ք-տէրէ ուղղեց քայլերը աճապարանօք, այնպէս որ տեսնողը վախկոտ վախստական մը կը կարծէր՝ քան թէ հետադօտ պարոն մը. երբ գետակին ծայրի կամրջին գլուխը հասաւ, Տէրպէնտի սպասուհին տեսաւ որ Պէօյիւ ք-տէրէի կողմէն կուգար. մէկէն սիրար յուզման մը մէջ ինկաւ. գըրեթէ ամեն սիրահար՝ երբ իրենց սիրելւոյն կողմէն մէկը տեսնեն, մեծ տրախութիւն կզգան. այսպէս նաեւ Միհրրդատ ուրախութեամբ՝ ուսկից կուգաս օրիորդ Աղաւնի, հարցուց.

— Տէր իմ, հօրաքոյրս գտնալու յուսով Պէօյիւ ք-տէրէ գացի, պատասխանեց:

— Աղաւնի, կուզեմ քեզի հետ քիչ մը խօսիլ և կուզեմ



քեզի ալ բարութիւն մ'ընել, զրուցէ, ի՞նչ կրնամ ընել զքեզ գոհ ընելու համար:

— Տէր իմ, բանի մը պէտք չունիմ, այսու ամենայնիւ պատրաստ եմ ձեզ ծառայել:

— Գոնէ այս փոքր նուէրը ընդունէ, ըսաւ, անոր ձեռքը քսակ մը դնելով:

— Ո՛հ, տէր իմ, ըսաւ քսակը առնելով, մէկ անդամով զիս ձեր անձնուէրը կընէք:

— Մտիկ ըրէ, Աղաւնի, գուռ ու շիւմ աղջիկ մընեւ:

— Թէ որ զիս գոհ ընեւ... միտքս կը հասկընամ, ըսաւ նշանացի կերպով մը:

— Ամենակատարեալ կերպիւ... վերջը:

— Վերջը օրիորդ տիրուհիիդ հետ այս գիշեր ծովուն եզրը տեսնուիլ կուզեմ:

— Առանձի՞ն:

— Անշուշտ:

— Անկարելի է այդ. վասն զի գործին սկզբնաւորութեանը հետ կատարումը կը պահանջէք:

— Սկզբնաւորութիւնը եղած է արդէն:

— Օ՛հօ, ուրեմն ժամը երկուքին տանը առջեւի շրջափայլը եկուր:

— Շատ աղէկ, ժամը երկուքին, երթաւ բարով:

— Չմոռնաս ժամադրութիւնդ:

— Ո՛չ:

Բանի մը քայլ առնելէ վերջը Աղաւնի կենալով, «Պարան Միհրդատ, կանչեց. Միհրդատ դարձաւ:

— Հոն եկած ատեննիդ սեւ զգեստներ հագէք:

— Ի՞նչ բանի համար:

— Մութ ատեն սեւը չտեսնուիր. կարելի է մէկը գիտէ զձեզ:

— Իրաւունք ունիս, ըսածիդ պէս կընեմ, ժամը երկուքին պիտի գտնուիմ:



— Այն, ժամը երկու քին, ըսաւ և զասուեցան մէկմէկէ,

Միհրդատ շխտակ Սօփեան պէյին պանդակը գնաց: Սօփեան պէյ մինակ նստեր էր, Միհրդատը տեսնելուն՝ «կարծեմ, ըսաւ, դիշերուան ճաշը ինձի հետ ընել պիտի բարեհաճիք վերջապէս»:

— Մեծ պատիւ է ինձի այդ տէր իմ, բայց ես աւելի ուրախացուցիչ լուր մը տալու համար եկայ. թուներնիս գրտնուեցաւ:

— Օրհնեալ է Աստուած, ըսաւ ուրախութեամբ Սօփեան պէյ. բայց ո՞ր է, ինչո՞ւ զինքը չեմ տեսներ:

— Տէր իմ, մէկէն ՚ի մէկ ի՞նչպէս ճանչնայ զձեզ որ իւր հաւն էք, հետեւաբար հայրն ալ հոս չէ. ուստի թողուցէք ինձ՝ ես ամեն բան կը կատարեմ:

— Բոլոր յոյսս քու վրայ է Միհրդատ, զիս քու երախտապարտդ ըրիր:

— Տէր իմ, միայն սրտաքս կատարեցի և ինձի համար ալ մեծ հողնութիւն մը չեղաւ դայն զտնալը. վասն զի ինքնին Օրթա-չէչմէ եկեր էր և ես զինքը բարերախտաբար հոն տեսայ . . . : Հիմայ տէր իմ ես ալ ձենէ խնդիրք մը ունիմ, բայց առաջին անգամ ձենէ խնդրելուս ժխտական պատասխանը ընգտնեցի. արդ կը յուսամ որ ձեր մեծութիւնը թախանձանացս պիտի գիջանի:

— Որդեակ, առանց քաշուելու զրույց ի՞նչ է խնդիրքդ. ամենեւ ին միտքս չդար որ ես քեզի մերժում մը ըրած ըլլամ:

— Տէր իմ, գիտնալ կը փափաքէի որ Պետրոս Նաղարօֆ ո՞վ է, ո՞ւ սկից կուդայ, ի՞նչ դորժ կընէ, ի՞նչ ազդ է:

Սօփեան պէյ յօնքը կնճռեց և քիչ մը մտածելէ վերջը, «Որդեակ, ըսաւ, աղէկ տըզիր ըսածներուս, երբ ես զքեզ առաջին անգամ տեսայ, քու ո՞վ ըլլալդ ես քենէ աղէկ գիտէի. և յայտնի է որ առանց իմ գողանիքներս քեզ հաղորդելու կարող էի մտքիս գրածը կատարել, այնպէս չէ»:

Միհրդատ գլխովը հաստատական նշան մ'ըրաւ:

— Իսկ ես չէ թէ միայն իմ ո՞վ ըլլալս քեզ յայտնեցի, այլ



և աղջկանս դժնդակ պատահարն ալ քեզ խստութանելով առաջարկեցի որ ամուսնանաս . թէ որ ուզէի՝ առանց քեզի բան մը զխոցընելու կրնայի զքեզ ամուսնացընել . բայց ես այդպիսի վատու թիւն մը մտքէս անդամ չանցուցի , որովհետեւ մարդոց մէջ դանուած հաղուադիւտ առաքինու թիւն մը վարձատրել էր միտքս . արդ՝ Պետրոս Նաղարօֆին գալով այս մարդը աննշան մէկն է , որուն ձեռօք դործ մը ունիմ կատարելիք . ուստի կը խնդրեմ քեզի որ աւելի տեղեկութիւն չը պահանջես ինձմէ , զքեզ կապահովեմ որ քու բարութեանդ նպաստող դործիք մ'է այն երիտասարդը և ոչ ուրիշ բան :

Միհրդատ քիչ մը մտածելէ վերջը աշխուժով մը Սօֆեան պէյին դառնալով , « Տէր իմ , ըսաւ , իմ հարցուցածս անոր ինչ սերունդէ ըլլալը կամ իւր հարստութեան աղբիւրը ուսկից ըլլալը կամ թէ բարքը չէ , այլ կուզեմ զխոնալ թէ արդեօք ինձ հակառակորդ մը ստացայ . ո՛հ , ինչ պահեմ , կը սիրեմ , այն՝ կը սիրեմ ես Տէրպէնտի աղջիկը և ինքը զիս կը պաշտէր . բայց այս երիտասարդին ներկայութեանը ուրիշ վարմունքով տեսայ զայն , որով կասկած մտաւ սիրտս և հիմայ կը վախնամ որ երջանկութեանս խոչնդոտ պիտի ըլլայ այն մարդը :

— Արդեակ , միտքս զքեզ մեղադրել չէ , այլ կապահովեմ զքեզ որ այս անգամ խաբուեր ես , քանզի այն սերունդը անիծեալ սերունդ մ'է , զոր դուն սիրոյ կապով մտերմանալու դժբախտութիւնը ունեցեր ես . այս Տէրպէնտը այն Մարաիբոսին եղբայրն է , այն եղեռնագործին՝ որ կինս դժնդակ ցաւերով սպաննեց , աղջիկս իբրեւ գերի ծուխեց , և վերջապէս այս այն մարդն է՝ որ Միդրօն սպաննեց . . . :

— Ա՛հ . . . հերիք է , ըսաւ Միհրդատ դեղնելով և իւր ձեռքերովը երեսը կը դոյէր , կիմանամ , մրմնջեց . մարդասպանի մը աղջկան սուեր եմ սիրտս . . . : Եւ վայրկեան մը լռութիւն ալրելէ վերջը նորէն խօսքի սկսելով , բայց իւր աղջիկը այս եղեռնագործութեան մէջ ի՛նչ մաս ունի . միթէ իրաւունք է որ մէկը յանցանք գործէ և ուրիշ մը պատիժը կրէ . միթէ իրաւունք է որ հօր մը կամ թէ մօր մը պատուոյն արատը խրեանց որդին



Ժառանգ է, քանի որ ինքը իւր պատիւը կը պահէ, եւ իմ մօրս արդանդին մէջ չէի կրնար դիտնալ որ եղեռնագործի մը որդի՞ն պիտի ծնիմ, թէ պատուաւոր մէկու մը զաւակ, թէ որ առաջուց գիտցուէր՝ նոյն ատեն ամեն մարդ լաւագոյնը պիտի ընտրէր, որ չարերն ալ անորդի մնալով հարկաւ աշխարհի եղեռնագործութիւնները հետզհետէ պիտի դադրէին, որով ընդհանուրին կարծիքը պիտի միանար:

Միհրդատին տաքութեամբ խօսած ատենը Սօփեան պէյ փափաքով մտիկ կրնէր զայն, ամենեւին անոր խօսքը կտրել չէր մտածեր, և կը հիանար այն անխորձ հանճարին: Ուստի երբ Միհրդատ յաղթանակաւ խօսքը վերջացուց, « Սրդեակ, մարդս ՚ի բնէ բարի ստեղծուեցաւ այն Արարչէն, որ պիտոյքը յօրինեց. ա՛հ, այն պիտոյքը... սկզբնապատճառ ամենայն չարեաց հետեւաբար քիչ անգամ բարեաց. որդեակ, ամեն բան պատճառ մը ունի եղած ըլլալու համար, թէ՛ չար և թէ՛ բարի, ամենիմաստ Արարչէն անգամ պատճառ մը ունէր աշխարհը ստեղծելու՝ քանզի ուզեց և ստեղծեց: Օրէնք պէտք է. պատճառ, մարդոց պիտոյքէն յառաջ դալիք չարիքը սանձելու, և իրաւունք ըսուածը ոտքի տակ չառնելու համար. ընդհանուրին ընդունածը թէ՛ աղէկ թէ՛ գէշ պէտք է որ դու ալ ընդունիս. ինչու որ ընդհանուրը կազմող մէկ մասն ալ դու ես, այսօր ընդհանուրը կը կարծէ որ անուանարկ ընտանիքի մը հետ խնամութիւն ընելը անպատուութիւն է, պէտք է որ դու ալ այնպէս մտածես քանի որ այն բազմութեան մէջ ապրելու դատապարտուած ես... Եւ տեսնելով որ Միհրդատ հետզհետէ կը վհատէր, այսու ամենայնիւ, յաւելցուց, դքեզ կապահովեմ որ Պետրոս Նազարօֆ ամուսնացած է. թէպէտեւ իւր կնոջը հետ դժտելով թողուց՝ բայց իւր կինը դեռ կենդանի է, կը տեսնես որ վախնալու տեղ մը շունիս այդ մասին:

Սյա խօսքերուն վրայ քիչ մը շունչ առաւ Միհրդատ և նորէն հողի առնելով՝ « Տէր իմ, պատասխանեց, քանի որ ընդհանուրին հետեւիլ պէտք է, կը խոստանամ որ ես ալ պիտի



հետեւիմ, եւ միանգամայն յուսալի եռանդեամբ միտքը դըրաւ՝ որ Նաղարօֆին ամուսնացած ըլլալը Ատէլին իմացընէ:

— Շատ գոհ եմ, Միհրդատ, կրկնեց Սօֆեան պէյ, ակընկալութիւններս մի առ մի կը կատարես. ուստի չեմ ուզեր որ դքեզ հոս զբաղեցնեմ, դնա՛ սրդեակ և վաղը մի՛ մտնար զիս երջանկացընելու. անշուշտ Հեղինէն հետ պիտի բերես:

— կը յուսամ, պատասխանեց Միհրդատ և աճապարանօք գուրս ելաւ:

ՍԻՐՈՅ ՏԱԳՆԱՊ

Գիշերը ամպամած էր. մերթ ընդ մերթ լուսինը ամպերուն թանձրութիւնը նուազած կողմերէն իւր մէկ աղօտ ճառագայթը կը ցոլացընէր երկրի վրայ. քիչ անգամ ալ խտացեալ ամպերէն ատեն գտնալով վրդովեալ ալեաց գազաթներուն ճերմակ փրփուրը ոսկեգոյն կը ներկէր, և այս գեղեցիկ տեսարանը չարաշուկ շամանդաղի մը վրայ հասնելովը կանհետանար, արեւելեան հողմը սաստկաբար կը մռնչէր, եզրը բաղխող ալիքներուն ձայները կարծես թէ մօտալուտ վտանգի մը գուժատուններն էին. փողոցի շներուն ոռնալով հաչելը հեռուէն եկող խուլ որոտմանց ձայնին խառնուելով վշտահար սրտերուն սարսափը կաւելցընէին. Տէրպէնտի տունը ճրագներով լուսաւորուած էր, ծառաները սանդուխներէն կերնէին ու կիշնէին, կարծես թէ բնութիւնը տարերաց փոթորկին մէկ մասնալ այս տանը մէջ ձգած էր. տանը առջեւի ճեմավայրը սեւ թիկնոցով մէկը միշտ պատուհանները դիտելով կը շրջագայէր, ատեն ատեն ալ անհամբերութեան նշաններ ցուցընելով տանը դրանը կը մօտենար՝ ներսի ձայները մտիկ ընելու. թէպէտեւ



չխոթ աղաղակներ կը լսէր , բայց ոչ իրեն ծանօթ . ու սաի դարձեալ կսկսէր տանը երկայնքին ճեմել : Միհրդատն էր այս՝ զբն Ատէլ օրիորդին անհամբեր կսպասէր . որքան զգայուն կըլլայ տարիսս օրի մը սիրտը այսպիսի պարագաներու մէջ . Ատէլ օրիորդին հետ ինչպէս խօսակցելիքը առաջուց մտքին մէջ բովանդակեր էր , բայց արդեօք զինքը տեսած ատենը պիտի կարենա՞ր խօսք մը արտասանելու , պարտիզին պատէն դուրս ցցուած քարի մը վրայ նստաւ՝ չէ թէ հոգնած էր , այլ իրեն այնպէս եկաւ որ նստել հարկ է : Ատենն անցաւ , միմնջեց ինքնիրեն , արդեօք Աղաւնին չկրցա՞ւ համոզել , այսու ամենայնիւ ինչո՞ւ ինձ հետ տեսու թիւն ընել չուղէ . միթէ ինքը չէ՞ր առաջին անգամ զիս մինչեւ կենացը վերջը սիրելու երդու ընցողը . այն , ինքն էր որ ուխտեց ինձմէ ուրիշը չսիրել , միթէ ասոնց ամենքն ալ սուս էին . . . ա՛հ , ո՛չ ո՛չ , անկարելի է , թերեւս պատճառ մը ունի իւր ու շանալուն , անկարելի նաեւ որ ինձմէ ուրիշ մը սիրէ . կը ճանչնամ ես անոր սիրտը , ինձ ունեցած սէրը չմոռնար՝ եթէ բռնաբարի իսկ ալ . ահա՛ դրան կողմէն ձայն կուգայ , կարծեմ ինքն է , ըսելով ոտքի ելաւ , և յիրաւի տանը դուռը կխտով չափ բացուելով , կին մը դուրս ելաւ և չորս կողմը դիտելէն վերջը , պատին տակէն սպրդելով դէպ ՚ի Միհրդատ յառաջացաւ . այս միջոցին Միհրդատին զգացածը նկարագրել անկարելի էր . կարծեց թէ Ատէլ օրիորդն էր իրեն մօտեցողը , սիրտը սաստիկ կը զարնէր և երկու քայլ դէպ ՚ի յառաջ երթալով՝ « Ա՛հ սիրելիս , ըսաւ , վերջապէս եկա՞ր :

Մուր ծիծաղ մը պատասխանեց իրեն . « Ես եմ տէր իմ , կը սխալիս , ըսաւ Աղաւնի :

— Ա՛ր է օրիորդ Ատէլ :

— Մեծադատիւ Պետրոս պէյը այս դիշեր մեր տունը ընթրեց . զայն չկրնայ թողելուն համար ինձ պատու իրեց որ ձեզ աղաչեմ ժամ մը եւս սպասել :

— Դարձեալ այս մարդը , միմնջեց Միհրդատ . վերջը խօսքը սպասու հւոյն դարձնելով , Աղաւնի , ի՞նչպէս կը վարուէր օրիորդը պէյին հետ :



— Ամենայն քաղաքաւարութեամբ աէր իմ, պատասխանեց  
Սղաւնի Միհրդատին՝ այս հարցմանը վրայ զարմացած :

— Եւ ի՞նչ բանի վրայ կը խօսէին :

— Իւսկիս տարու սրճարանին մէջ եղողներուն վրայ, բնու-  
թեան դեղեցկութեանը, վերջապէս այսօրուան օդին դեղեց-  
կութիւնը նաեւ չմտացան :

— Ահա ճիշդ այդպէս կսկսի սիրահարու թիւնը, դո՛ւնեց Մի-  
հրդատ :

— Ի՞նչ կընես պարոն, այդպէս պօռալով զիս մասնեւոր  
միտք ունիս :

— Ա՛յ ո՛չ, կեցի իրաւունք ունիս ու շաղրու թիւն չըրի. կը-  
սէիր թէ անոյշ նայուած քներ կուղղէր պէյին :

— Այ, տէր իմ, ես այդպիսի բան մը չըսի, կրկնեց Սղաւ-  
նի սոսկումով :

— Այո՛ դու չըսիր, բայց ես գիտեմ. կեցի Սղաւնի կու-  
ղէս որ հարստանաս :

— Անչու՛շտ :

— Աւրեմն ըսէ ինձի, միթէ նամակ մը չտեսա՞ր, որ այն  
մարդը յարմար առթիւ մը օրիորդին տայ :

— Բայց տէր իմ :

— Վարանել պէտք չէ, ա՛ն այս քսակը :

Սպասուհւոյն ընչասիրու թիւնը բորբոքեցաւ և միտքը ամ-  
փովելէ վերջը, « Այո, պատասխանեց, նամակ մը տուաւ և  
մէջը գրուած էր :

— Այո՛ մէջը գրուած էր, անուշիկ հոգիս :

— Հա՛, հա, միտքս կուղայ, անուշիկ հոգիս :

— Բայց դու ի՞նչպէս գիտես նամակին պարունակութիւնը :

— Այո՛, չեմ գիտեր :

— Աւրեմն ոչինչ պատասխաններ էր տուածդ :

— Անչու՛շտ ոչինչ :

— Ձիս կը ծաղրես թշուառական :

— Ներեցէք տէր իմ, հրաման ըրէք որ պատասխանեմ :

— Գնա՛ բանդ անպիտան, դո՛ւնեց Միհրդատ զայն հրելով :



Աղաւնի այն դօրաւ որ միւսմէն քայլ մը ետ երթալով՝ ճիշ մը հանեց և դէպ ՚ի ասանը դուռը յառաջացաւ . Միհրդատ ետեւէն հասնելով բռնեց զայն և ուժով մը ցնցելով , կեցի , դռչեց :

— Ա՛հ , թողուցէք զիս պարօն , ես յանցանք չունիմ :

— Կեցի և պատասխանէ , կրկնեց Միհրդատ , որուն բարկութիւնը այս միջոցին դրեթէ կատաղութեան փոխուեր էր :

Աղաւնի տեսաւ որ անոր ձեռքէն աղատելիք չունի , մտածեց որ վարպետութեամբ փախչի :

— Այն մարդը վերն է ըսիր , այնպէս չէ՛ , հարցուց Միհրդատ :

— Չեմ դիտեր :

— Այո՛ վերն է :

— Հրամաներ էք պարօն , վերն է :

— Շուտ դնա իրեն զրուցէ որ՝ եթէ պատիւ ունի վար թող դայ . զրուցէ որ ես իւր հակառակորդն եմ :

Աղաւնի այս բարեպատեհ առիթը ձեռքէ չհանելու համար , անմիջապէս երթամ դրուցեմ , ըսելով դռնէն ներս սրայրդեցաւ :

## ԿԵՂԾԱԻՈՐ ՍԻՐՈՒՀԻՆ

Միհրդատ մինակ մնալով սկսաւ ճեմել . քառորդի մը չափ ձայն չէր ելներ . քիչ քիչ Միհրդատին համբերութիւնը սկսաւ սպառիլ , այս միջոցին յուշիկ կերպով շրջազգեստի մը շննջիւնը լսուեցաւ . Միհրդատ մէկէն ոտքի ելնելով քովը վազեց և դողդղալով մը ձեռքն անոր երկնցուց :

— Ա՛հ օրիորդ , ըսաւ , հաղար և մէկ խօսելիք ունիմ ձեզ , և յուսամ թէ մարդասիրաբար պիտի լսէք ինձ :



— Միհրդատ, պատասխանեց Ստէլ, զիս կ'ստիպես որ  
զղջամ:

Միհրդատ յուշիկ մը օրիորդը իւր թեւն առնելով սկսան  
ճեմել:

— Օրիորդ, կրկնեց Միհրդատ, ձեր մէկ խօսքը այս ժա-  
մուս բաւական է ինձ կեանք պարզ եւել կամ զայն ինձմէն կոր-  
զել, ս'վ իմ սիրուհիս, կը փափաքիմ քու կողմը ըլլալ: որևէ ժըխ-  
տողական պատասխան մը կարող է զիս մեռցնել . . . :

— Ա'վ կարդիլէ զձեզ:

— Նախանձը . . . :

— Ա'հ, անհաւատալի բան, և ի՞նչ պատճառ առի ձեզ  
նախանձելու, ըսաւ ժպտելով:

— Սյդչափ խիտ մ'ըլլաք իմ զգացմանցս վրայ խնդա-  
լով, այն մարդը այն նազարօֆը կարելի է ձեր վրայ մեծ ազ-  
դեցութիւն մը պիտի ունենայ:

— Պարոն, պատասխանեց ծանրութեամբ Ստէլ, և կեղծ  
բարկութիւն մը ցուցնելով, քանի որ պէտք եղաւ խօսիլ, կի-  
մացնեմ ձեզ որ դեռ մտքած չեմ այն օրիորդը որ համակրու-  
թիւննիդ ստանալու համար ինձմէ աւելի երջանիկ աեսայ,  
այն պէտք եմ գիտնալ նաև որ պարոն Միհրդատ ի՞նչ յարա-  
բերութիւն ունի նաւաւարին ազջկանը հետ:

Միհրդատ քար կարածի պէս անոր երեսը կը նայէր քան  
զի այս խօսուած քէն յայտնի կը տեսնար օրիորդ Ստէլի ան-  
տարբերութիւնը ուստի խոտու թեամբ, « Աչինչ, պատասխանեց:

— Աչինչ կըսէք, հարցուց այլայլելով Ստէլ, քանզի ինքն  
այ իմացաւ որ ազդեցութիւնը չպիտի կարենայ բանեցնել  
Միհրդատին վրայ, արդ Վերջին յուսոյ մը կը թնելով որ կա-  
նանց մի միակ զէնքն է, սկսաւ աչքերէն արտասուք թափել  
և աղեկէզ ձայնով մը, կը ներեմ քեզ Միհրդատ, ըսաւ, վասն  
զի կը տեսնամ որ սխալմամբ ինքզինքս այս տառապանաց վը-  
հին մէջ ձգեր եմ, հոգ չէ դարձեալ կըսեմ, կը ներեմ քեզ  
Միհրդատ, եւ դէպի տանը դուռը յառաջացաւ:

Սյս խօսքերուն մտգական զօրութիւնը ամենակատարեալ



կերպով աղբեց, Միհրդատին նախանձնու կասկածը այս թիւ-  
դական խօսքերով ջախջախեցան և մէկէն ի մէկ թմբբութեանէ  
երլլելով, « Աստուծոյ սիրոյն, կեցի, դոչեց զայն բռնելով, նե-  
րէ ինձ կաղաչեմ, ներէ Ատէլ, քանի որ գիտցար նախանձը,  
զրուցէ միթէ արժանի չեմ գթութեան: »

Ա՛հ Միհրդատ անիրաւ մի՛ ըլլաք. գիտես քանի՞ վտանգ  
աչքս առի ձեր վախաքանայ համեմատ հոս գալու համար,  
թէսկտեալ պէտք չէր որ դայի, յաւելցուց կեղծ ժպտով մը  
գլուխը երեւցնելով:

— Ա՛հ, որքա՛ն սիրուն ես, ըսաւ, Ատէլին ձեռքը սեղ-  
մելով:

— Իրա՞ն, թէսկտեալ նաւավարին աղջկանը չափ գեղեցկու-  
թիւն չունիմ:

— Ա՛հ Ատէլ, Ատէլ, կաղաչեմ մոռցիր:

— Շատ աղէկ, ալ ասոր վրայ չխօսինք, երէկ Մակար եղ-  
բօրմէս նամակ առինք, այսօր կամ վաղը պիտի գայ զոր բա-  
րեկամ մ'ալ աւելի պիտի ունենաս:

— Թէսկտեալ ունեցածներս ալ արդէն շատ են, այսու՞ամե-  
նայնիւ ձեր մեծ եղբօրը հետ բարեկամութիւն հաստատելս,  
ա՛հ, չես գիտեր որչափ վախաքելի է ինձ համար:

— Միհրդատ, այս գիշեր քեզի գաղտնիք մը պիտի յայտ-  
նեմ, միայն թէ զրուցածներուս յայտնուիլը ինձ մահ կը պատ-  
ճառէ:

— Օրիորդ, ուրախ եմ որ իմ հաւատարմութեանս վրայ  
օրինակ մը տալու առիթը ձեզմէ պիտի ստանամ:

Օրիորդ Ատէլ խեղճութեամբ վախու կերպարանք մը առ-  
նելով, « հայրս երէկ ինձ կանչեց ու զրուցեց որ զիս Պետրոս  
Նաղարօֆին պիտի նշանէ, ա՛հ չես գիտեր Միհրդատ նայն  
վայրկենին զգացածս: »

Միհրդատին գլխուն կայծակ իջածի պէս մնաց, վերջը մէ-  
կէն սթափելով, « բայց պէտք է գիտնաս, կրկնեց, որ Նա-  
ղարօֆ ամուսնացած է: »

— Ի՞նչ կրտես, հարցուց զարմանալով, ուրեմն հայրս չը գիտեր:



— Անշուշտ չգիտէր, որովհետեւ Նազարօֆին առաջարկութիւնը պիտի մերժէր, եթէ գիտնար:

Ատէլ օրիորդն ինքզինքը զսպեց որ սրտին այլայլութիւնը չյայտնէ, բայց և այնպէս երեւին գոյնը այլակերպեցաւ:

Միհրդատ նորէն սկսելով «Նաեւ գիտնաս որ աննշան մէկն է և իւր ուր սեղացի ըլլալը չգիտցուիր»:

— Կը հասկնամ, բաւ է, ըսաւ օրիորդը, և քայլ մը առաւ դէպ ՚ի տան կողմը:

— Ո՞ւր կերթաս, հարցուց Միհրդատ:

— Հոս եմ տեղ չեմ երթար, կարծեցի որ մէկը կու գայ՝ ո՛հ, զրուցէ, ինձ պաշտպան պիտի ըլլամ:

— Եթէ արիւնս ալ թափել պէտք ըլլայ, քու ամենափոքր մէկ հրամանդ կատարելու համար դիւ պատրաստ պիտի տեսնաս:

— Ուրեմն կուզեմ որ Նազարօֆին հետ ամենեւին յարաբերութիւն չունենաս և դիւ քեզ համար հօրմէս հարսնութեան խնդրես, զրուցէ Միհրդատ կը խոստանան այս խնդիրքս կատարել:

— Ո՛հ Ատէլ, արդէն իմ սրտէս կը խօսիս, միայն հրամայէ և ես կը կատարեմ:

Ատէլ օրիորդը աղէկ գիտէր որ հայրը չպիտի հաւանի այս ամուսնութեան, ուստի գիտէր նաեւ որ Միհրդատ մերժուելով իւր կրիցը ծառայ պիտի ըլլար, ուստի գործն ալ ուզածին պէս պիտի դարձնէր, միայն թէ մէկ պատուար մը կար այն է Միհրդատին քոյրը, զոր մեծ ազդեցութիւն ունէր իւր եղբօրը վրայ, ուստի իւր սիրոյն Միհրդատայ վրայ ունեցած ազդեցութիւնը փորձելու համար դու իսը Միհրդատին կուրծքին վրայ դնելով, ո՛հ, կրկնեց, մէկ վախ մ'ունիմ զոր կարի իսկ իրաւացի է:

— Որմէ՞ է վախդ իմ սիրելիս, ո՞վ կարող է մեզի դէմ կենալ, եթէ աշխարհի զօրութիւնը միանայ զմեզ զատելու համար՝ կենդանի է տէր բոլոր աշխարհի հետ կը կուռիմ քանի որ մրցանակ դու ես ինձի. քու սերունդդ սերագործութեանց



չարք մ'է որ դու չդիտես . իսկ թէ որ ուրիշներու գործած չարութիւնը դքեղ անուանարկ պիտի ընէ՝ ես ալ անուն չեմ ուղեր , մեր ունեցած պատուաւոր անունին տեղ թող զմեզ ոճրագործ անուանեն , միայն թէ դու իմն եղիր : Այս ըսելով Ատէլի ձեռքը իւր երկու ձեռացը մէջ առած անընդհատ կը համարուէր :

— Ո՛հ , ուրեմն դիս չարագործի մը դու տարը կը համարես , ինչպէս որ ձեր Տիկին քոյրն ալ նոյն կարծիքն ունի իմ վրաս :

— Ո՛հ կը սխալիս , քոյրս դքեղ միշտ կը յարդէ բայց և այնպէս ես իմ սրտիս զգացմանցը միայն կը հետեւիմ . ամենեւին զօրութիւն մը չեմ ճանչնար որ կարող ըլլայ դիս քեզմէ զատելու :

— Բայց ըսէ , միթէ իմ հայրս չարագործ մ'է :

— Այո՛ Ատէլ , մարդասպան մ'է :

— Ա՛հ . . . .

— Նաեւ դիտնաս որ Մակարը քու եղբայրդ չէ :

— Բայց սէսկից դիտես դու ասոնց ամենը :

— Այո՛ , դիտեմ , նաեւ կը խրատեմ դքեղ որ ամենեւին բան մը չը յայտնես հօրդ կամ թէ եղբօրդ . քանզի եղբայրդ Մակար՝ թէ որ դիտնալու ըլլայ իւր հօրը անհարազատ ըլլալը բոլոր հարստութիւնը կը կորսնցնէ քու հայրդ :

Օրիորդը լաւաներուն չէր ուղեր հաւատալ . ուստի միտքը դրաւ որ ասոնց ամենը իւր հօրը պատմէ :

— Ո՛հ , ըսաւ , ուրեմն գաղտնիքներուն իմացուիլը մեր կործանման պատճառ պիտի ըլլայ այնպէս չէ :

— Ա՛լ կրնաք մակարեբել , ուստի կը խրատեմ դարձեալ ըզ ձեզ որ մէկու մը չը յայտնէք . նաեւ ձեր հօրն անգամ :

— Հայրս մարդասպան մը . . . բայց անկարելի է . . . .

— Կը յիշես Ատէլ այն գիշերը , զոր Ձիֆթ-սույի զբօսաւայրը նստած ատեննիս Տէլի ճօրճին անցաւ և քու հայրդ այնչափ շիտթեցուց :

— Այո՛ , այո՛ , կը յիշեմ , որ այն գիշերը ամենեւին չը քնացաւ հայրս և միշտ կը զառանցէր՝ Միթքօ անուան մը արտասանութեամբ :



— Ահա՛ ճիշդ այդ Միթրոն սպաննած է ու բիշի մը թեյա-  
դրութեամբ, և այն ճօրճին ալ գիտէ որ հայրդ է սպաննիչը,  
բայց խենդ ըլլալուն մէկը չը հաւատար անօր:

— Հիմայ կիմանամ այն դիշերուան անցքին ինչ ըլլալը բայց  
ով դրուցեց ատնք քեզի:

— Գեռ ատենը չէ քեզ յայտնելու. երբ քու ընտանեացդ  
մէջէն դքեզ աղատեմ, այն ատեն ամեն բան տեղն 'ի տեղը կը  
պատմեմ քեզ:

Այս խօսակցութիւնը ծովու վրայ շինուած պատշգամի մը  
պատուհանին տակ կը խօսէին, պատշգամը մարդ չէր բնակեր,  
ուստի Միհրդատ ալ անկասկած այս դաղտնիքը Ատէլին կը  
յայտնէր, բայց անյուսալի մէկը այս ամենը իմացեր էր զոր  
ետքը պիտի իմանամք: Այս միջոցին Ատէլ օրիորդը իւր սրտին  
վրդովմունքը չէր կրնար զսպել. Միհրդատ ընտանեացը դաղտ-  
նիքը իրմէ աղէկ գիտէր, և մտքին դրած դաւը արդեօք պի-  
տի կարենար յառաջ տանիլ. ուստի չուզելով այս դիրքին մէջ  
մնալ, «Ո՛հ, ըսաւ, ի՞նչ սոսկալի է օդը այս դիշեր, և յիրաւի  
հողմը հետդհետէ կը սաստկանար:

— Այո՛, պատասխանեց Միհրդատ, այս դիշերուան ալե-  
կածութիւնը սոսկալի է. և Ատէլի ձեռքը բռնելով, «՛հ, կըրկ-  
նեց, այս սրչափ մներ ես սա վերարկուս վրադ ա՛ն:

— Շնորհակալ եմ չեմ ուզեր. արդէն քու սէրդ կը զօրա-  
յրնէ զիս, ել քիչ մը ճեմենք: Այս ըսելով՝ սկսան թև թևի  
չըջագայել, մէկ մ'ալ ստուէր մը տեսնուեցաւ որ Տէրպէնտի  
դռնէն ներս մտնելով դուռը ուժով մը գոցեց:

— Ա՛հ մատնուեցանք, ըսաւ Ատէլ, շուտ հեռացիր ըսե-  
լով՝ թողուց Միհրդատը և պարտիզին փոքր դռնէն ներս  
մտնելով անյայտ եղաւ:


Միհրդատ ալ իւր վերարկուին մէջ փաթտուելով արագա-  
քայլ դէպի իւր քրոջը տանը ճամբան բռնեց:

Այս միջոցին պատշգամին դռնէն ստուեր մը ելլելով, Մի-  
հրդատ, Միհրդատ, կանչեց, բայց սաստկաշունչ մըրիկը ան-  
լսելի ըրաւ այս ձայնը, և Միհրդատ քրոջը տանը դռնէն



ներս մաներով ամեն բան լմնցաւ, միայն ծովեզրը բաղխող ահա  
ուելի ալեաց ձայնը կար:

Այս միջոցին լուսինը խտացեալ ամպերէն աղատելով այն  
պատշգամբն դռնէն դուրս ելլող սառերին դէմքը լուսաւո-  
րեց, որ նոր գեղանի կին մ'էր, ուստի տեսնելով որ Միհրդատ  
իր ձայնը չիմացաւ, ինքն ալ սրտին խորէն հառաչանք մը հա-  
նելով դարձեալ պատշգամբն դռնէն ներս մտաւ:



### ԱԹԼԱՄԱՅԻՆ-ՔԱՐԸ

Վստիարի ներուցէն դուրս գրեթէ կէս ժամ հեռաւորու-  
թեամբ կիւմիւշ-Նալչա լսուած ծովափնին մօտ ծովեզրէն քիչ  
հեռու ջրին մէջէն դուրս ցցուած ժայռ մը կայ, որ Աթլա-  
մայի-քար կանուանի, և բոլոր նաւապետներու մէջ նշանաւոր է:  
Միհրդատ Ատէլի հետ տեսնուած դիչերը հոս ալ քանի մը  
մահկանացու մահուան հետ կը կռուէին, հողմը միօրինակ և  
սաստիկ կը սուլէր ահագին մռնջմամբ, եզրը դանուած թխա-  
գոյն ապառաժներուն մինչեւ կէս մէջքերնին ալեաց փրփուրը  
պատեր էր իրբեւ դօտի, զոր վտանգի մէջ դանուողը այս ճեր-  
մակ դիժը տեսնելով յոյսը կըրպառէր. լեռնաչափ ալեաց մէկ  
մէկու հոլովուելով, բարձրացած ժամուն անկարելի կըլլար  
դիմացի եզրը տեսնելը. նայն միջոցին Աթլամային քարը փր-  
փուրներու մէջ անհետանալով ձիւնապատ լեռան մը պէս  
կանդնած էր. մէկ մ'ալ լուսինը թանձրախիտ ամպերէն աղա-  
տելով շրջանակի մէջ տեսնուող սիրուհւոյ մը պատկերին պէս բը-  
նութիւնը երեւցաւ. յիրաւի զարմանալի տեսարան մ'էր, մէկ  
մանրերորդի մէջ բոլոր ալեաց դադաթները ոսկեզոծուեցաւ  
կամ թէ բոլոր ծովուն վառիլը հողաղանք էակ մը տեսնալու



համար բնութեան պատրաստում թատրոն մ'էր ասի՞ որ գերբնական մտքեր յօրինած էին . մարդս աւելի սոսկումով կը դարձանար երբ այս լուսաւորութեան մէջ երկզոյց թի նաւակի մը մերթ մինչեւ ալեաց գագաթները բարձրանալով մերթ ծովուն խորութեանը մէջ անհետանալը կը տեսնէր :

Գարձեալ նաւակը ալեաց մղումովը բարձրացաւ , և այս անգամ աւելի որոշ տեսնուեցաւ . մէջը երեք հոգի ըլլալը , « րանց գիրքը սարսափ կ'ազդէր տեսնողին . բոլոր ջանքով կ'աշխատէին ափունքէն հեռանալ , որն որ ալիքները շարունակ կը մղէին . դեղացիները՝ հնհնուքով և սոսկմամբ կը դիտէին այս նաւակը առանց կարենալ օգնելու . երբեմն նաւակէն խեղդուկ ձայներով օգնութիւն կը խնդրէին բայց հողմին մանջող ձայնը նաւակին մէջի խեղճերուն ձայնը կը խաբանէր , մէկ մ'ալ ամեն բան սարսափելի մթութեան մէջ թաղուեցաւ , միայն մերթ ընդ մերթ փայլակի մը լուսաւորութեամբ այն սեւ հորիզոնը կարմիրի մօտ կապոյտ գոյն մը կ'զդեհուէր , նաւակը հեռոզհեռէ ժայռերուն կը մօտենար , մահը՝ այն անողորքելի մանգաղը այս լայնատարր ծովուն մէջ իբրեւ բիծ երեւցող նոյն նաւակը իւր ճիրաններուն մէջ սեղմեր էր , և չիկար այնպէս զօրութիւն մը , որ կարենար կորզել անոր ճիրաններէն այս երեք մահկանացուները , միայն Նախախնամութիւնը կարող էր , այն ալ կը զլանար իւր օգնութիւնը թերեւս , իւր մէկ անօրէնութեան կատարմանը համար . մէկ մ'ալ տխուր շառաջման ձայն մը լսուեցաւ . Յայն դիւղացիներէն դերուկ մէկը Հայր Յովհաննէս , ըսաւ , « կարճեմ նաւակը խորտակեցաւ :

— Յ,յո , պատասխանեց երկրորդը , է՛հ այս ալեկոծութեան մէջ կը կարճեա որ Հողին Սուրբին շնորքը՝ պիտի ինջնար այդ նաւակին վրայ :

— Գեռ եւս Յոյն էին , ըսաւ նորաստի երիտասարդ մը ցաւելով :

— Յոյն կամ Հրեայ ամենքն ալ մարդ են . որդեակ թէ որքա՞ն օգնութեանդ կարօտ ըլլային՝ պիտի զլանայիր Հրեայ ըլլալնուն համար :



— Քառ լիցի՛, սրատասխանեց երիտասարդը ամաչելով, այս միջոցին գրեթէ ալեաց և մանջող հողմին ձայնը վերջին աստիճանի հասած էր, գիւղացիները սեանելով որ խրեանց օգնութիւնը չը պիտի կարենան հասցնել վտանգեալներուն՝ մի առ մի ցրուեցան, հեաղհեաէ ամազերը վտարասեցան, ու լուսնոյ ճառագայթները վրդովեալ ալեաց գաղաթները դարձեալ դըրբաւեցին. Աթլամայի-քարի վրիտուններուն մէջ մարդու մը դըլուխ սեանուեցաւ, որ անզօր ձեռքերով սահուն ապառաժէն կենաց ապաստան դտնելու կը ճգնէր, անողոքելի քարը միշտ կը մերժէր այս իրեն երկնցած ձեռքերը. և ալեաց մրդման համեմատ կը ծփար խեղճը ծովուն մէջ, ամեն վայրկեան քարին դարնուելով ջախջախելու վտանգը գէմը ունենալով, անհրաժեշտ պիտի մեռնէր այս մարդը՝ եթէ Նախախնամութեան գործակատարը, այն է բաղդը թշուառին օգնութեան չը հասնէր. մէկէն ՚ի մէկ լեռնաչափ ալիք մը քարին վրայէն անդիլի կողմն անցաւ, հետը անցընելով նաեւ խղղուելու մօտ վտանգեալը և ջուրերուն ետ դառնալու ժամանակը դինքն ալ քարին ետեւը խռուչի մը մէջ նեւեց.

## Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆ

Անմիջապէս քարին ցցուած սեղէն բռնեց և խռուչին ետեւի կողմն անցաւ, որ ջուրը հոն չէր դարներ... գողգողուն ձեռքերով անշնջացեալ երկրորդ գիակ մը քաշեց ջուրէն դուրս և քարին վրայ երկնցուց ու սկսաւ սեղմուած բերանը բանալու ճգնել, խեղճը մեռած է մրմնջեց ինքնիրեն. ամեն մարդ իրեն մահուանը համար սեղ և ժամանակ ունի, ահա այս ալ հաս... սի տխուր բաղդ, չը պիտի ժպտիս օր մը ինձի.



ալ, բայց ես արդեօք աղատեցայ . . . ան՝ ծաղրելի աղատու-  
թիւն, թերեւս հոս անօթութենէ պիտի մեռնիմ . . . ան՝ Հե-  
ղինէ, արդեօք անագորոյն բաղդը զքեզ ո՞ր ձեռքերու մատ-  
նեց, արդեօք վասիլը այն գաղանը պիտի խնայէ՞ իմ աղջը-  
կանս . . . վայրկեան մը լուռ կենալէ վերջը, ո՞ գիտէ ի՞նչ մը-  
տածութիւնով սկսաւ յորդ արտասուք թափել. Սատուած իմ  
Սատուած իմ, գոչեց, կամ աղջիկս աղատէ կամ զիս, որ կա-  
րենամ օգնել անոր. ետքը զլուխը կուրծքին կախելով քարին  
վրայ կռթնեցաւ աչքերը գիակին վրայ յարելով, մէկ մ'ալ  
մեռած կարծած մարդը երկայն հառաչանք մը հանեց, աչ-  
քերէն ուրախութեան ազօտ վայլակ մը ցայտեց, իսկոյն գլու-  
խը վեր առաւ, ու սկսաւ քունքը շիւթել:

— Ուր եմ ես, հարցուց հազիւ լսելի ձայնով մը:

— Հոս ես, Մակար, քու բարեկամիդ գրկացը մէջ:

— Ո՞հ կարապետ, կեանքս քեզի կը պարտիմ քաջդ բարե-  
կամ, շնորհակալ եմ աւելի խօսք մը չեմ գտնար զրուցելու,  
բայց ըսէ ո՞ւր եմք մենք:

— Ժայռի մը խոռոչի մէջ:

— Ս՞հ ուրեմն դեռ աղատած չեմք:

— Հոգ մի՛ ըներ, կարծեմ եղրը մօտ է, օդը իջած ատեն  
լողալով ցամաքը կրնամք ելլալ:

— Ս՞հ բարեկամ, ինձի համար անկարելի է այդ, քանզի  
անդամներուս մէկն ալ շարժելու կարողութիւն չունիմ:

— Ես զքեզ կռնակս կառնեմ:

— Սնգին բարեկամ, բայց ո՞ւր է Սամուէլը:

— Է՞հ, իւր որրանին մէջ. թերեւս աղատեցաւ:

— Ուրեմն մեռան խեղճը:

— Սմենակատարեալ կերպով:

— Գիտե՞ս բարեկամ որ մենք եղանք պատճառ, քանզի  
ութը օր շապատելու համար նաւակով ֆէօսթէնճէէն Պօլիս  
գալը խենդութիւն է:

— Կը հասկընամ, ըսել կուզես որ միմիակ ես պատճառ  
եղայ, քանզի ես զձեզ ստիպեցի:



— Բայց և այնպէս մենք ալ ուղեցինք, միայն թէ ալեկո՞ծ ութիւնը մեր հաշուէն դուրս թողած էինք:

— Այո՛, և որ ամենէն աւելի հաշուի առնելու դարձերնիս ալ այն էր այնպէս չէ՞:

— Բայց բարեկամ արդեօք ո՞ւր կը գտնուինք, դու կըսէիր որ ներդուցին մօտ եմք:

— Այո՛, կարծեմ կիւմիւշ-նալչա ըսուած տեղին մօտ եմք, որչափ ալ շուտ կը յառաջանայինք հողմին մղումէն, ա՛հ, չար սասանայ եթէ կէս ժամ եւս առադաստին կայմը չկտորէր, հիմայ մենք ողջ առողջ ներդուցը անցեր էինք:

— Այո՛, և խեղճ Յամուէլը չէր մեռներ:

— Ա՞՞ դիտէ դուցէ անոր ճակատադրին կատարմանը համար մենք ալ այս վտանգին ենթարկուեցանք:

— Ինչէ՞ր կը խօսիս կարապետ, ո՞վ դիտէր որ ես զքեզ քէօսթէնճէ պիտի գտնամ և դու իմ կեանքս պիտի ազատես:

— Ճակատադիրը:

— Ճակատադիրը կըսես, ես ճակատի վրայ ամենեւին դիր տեսած չունիմ:

— Հա՛հ, հա՛... Դանիէլ մը պէտք է այն գիրը կարդալու համար:

— Սրդեօք ժամը քանի՞ն է:

— Կարծեմ առտուան մօտ եմք, քիչ քիչ ալեկո՞ծ ութիւնն ալ հանդարտելու վրայ է, ա՛հ մէկ մը արդեօք Սարը-եար պիտի հասնիմ:

— Ինչպէս, Սարը-եար կը բնակիս դու:

— Այո՛:

— Աւրեմն մեր ընտանիքը կը ճանչնան:

— Ի՞նչպէս կանուանի ձեր ընտանիքը:

— Մատթէոս Տէրպէ՛նտ կը կոչուի հայրս:

— Մատթէոս Տէրպէ՛նտ, այո՛, կը ճանչնամ իրենց նաւավարն եմ, քոյրդ և մայրդ միշտ իմ նաւակս կը նստին:

— Աւրեմն դու նաւավար ես:

— Է՛հ, այո՛, բայց բաղդը այն ալ շատ տեսաւ ինձ, իմ



աճապարելուս պատճառը աղջկանս օգնութեան փութայն էր  
քանզի անագորոյն մէկու մը ճիրաններուն մէջ է թերեւս  
այս ժամուս :

— Անհոգ եղիր բարեկամ, եթէ ազատինք, պիտի օգնեմ  
քեզ և կրնաս վստահել Մակար Տէրպէնտին :

— Ո՛հ, պարոն, կեանքս պիտի շնորհես դուցէ աւելին :

— Կուղեմ որ դիս միշտ քու բարեկամդ կոչես :

— Նաեւ եղբայրս եթէ զիջանիս :

— Կաղաչեմ այդպիսի խօսք մի՛ ըներ :

— Շատ աղէկ, շատ աղէկ, հիմակու հիմայ մեր ազատու  
թիւնը մտածենք, կարծեմ եզրը կը տեսնամ, արշալոյսը ըս-  
կըսած պիտի ըլլայ . . . այո՛ այո՛ չեմ սխալիր, եզրին շատ մօտ  
եմք, զ՛ն բարեկամ վրաս ե՛լ ու դիս ամուր բռնէ :

— Սպասէ քիչ մը, դու ալ դեռ հոգնութիւնդ առած չես :

— Ո՛հ, սրտիս բարախումը փարսախս մը հեռաւորութիւն  
լողալու ոյժ կուտայ ինձ, զ՛ն ել կըսեմ :

— Բայց անկարելի է որ ոտքի վրայ կարենամ ելլել :

— Դու թեւդ ինձ տուր, ըսելով գետին պառկեցաւ, Մա-  
կարը մեղմով կռնակը առնելով՝ քեզ տեսնեմ, պինդ բռնէ  
դիս, ըսաւ և ծովուն մէջ սուղելով դէպ ՚ի եզրը սկաւ լողալ  
և քիչ ատենէն ցամաքը ելան :

— Ո՛հ ալ ազատեցանք, գոչեց կարասկետ, ինձ նայէ բա-  
րեկամ, պատասպարան մը արդեօք պիտի կարենանք գտնել :

— Անշնչտ, Ֆէնէր գիւղին ստորոտը կը գտնուիմք :

— Փանք երկնից, աճապարենք բարեկամ, ցուրտը դիս  
սաստիկ կը նեղէ :

— Պիտի կարենանք քալել :

— Ս,յո՛, կամաց կամաց պիտի քալեմ թեւդ ինձ տուր :



## ՊԱՐՈՆ ԹԷՕԻԱՐ

— Այս կողմէն աւելի մօտ է կարծեմ, ըսաւ կարապետ դէպի գիւղը յառաջանալով, նոյն միջոցին Յունաց Եկեղեցւոյն փայտեայ կոշնակները մանր տղոց ձեռքը փողոցները դեռ նոր կը շրջագայէր. ծեր մարդ մը իւր սրճարանին բեղկերը վար առնելու դբաղած էր և փողոցը դեռ ամայի էր, երբ կարապետ և Մակար այս ծերունւոյն մօտեցան. « Հայր, ըսաւ կարապետ, օգնէ երկու խեղճերու որ Աստուծոյ օգնութեամբ, մահուրնէ ազատելով քեզ կը դիմեն ».

— Ներս մտէք բարեկամք, պատասխանեց ծերունին.

Այս խօսքը կրկնել չտալով երկու քն ալ սրճարանէն ներս մտան.

— Այսպէս թրջած ուսկից կուգաք, հարցուց ծերը.

— Գիշերուան ալեկոծու թիւնը նաւակնիս խորտակեց, մենք ալ Աթլամայի-քարին խոռոչը գրեթէ ջրի մէջ ապաստանեցանք.

— Կը հասկնամ աղէկ ատեն չէք անցուցած այս գիշեր, ու Մակարին դառնալով որ այս միջոցին վառարանին քովը բաճկոնը չորցընելու դբաղած էր, ինձ նայէ բարեկամ, առաջ շապիկդ չորցուր և մինչեւ որ չորնայ, սա վերարկուն վրադ ա՛ռ, ըսաւ, ցնցոտի վերարկու մը նետելով դէպ 'ի Մակար, կարապետան ալ այս միջոցին ծերունւոյն տուած մէկ անդրավարտի կը հաղնելու դբաղած էր.

— Ո՛ւր տեղացի էք Պարոններ, կրկնեց ծերունին.

— Հիմակու հիմայ Սարը-եար կը բնակիմք, պատասխանեց կարապետ.

— Սարը-եար, արդեօք նաւաւար կարապետ անունով մէկը կը ճանչնաս.

— Գրեթէ իմ մտերիմ բարեկամներէս մին է այդ ըսած մարդդ, պատասխանեց կարապետ, միանգամայն ծերունւոյն հարցմանը զարմանալով.



— Կարծեմ Բողա-Տանտան անունով կին մը անոր տունը միշտ կը յաճախէր :

— Կարելի է, բայց չեմ գիտեր, կը ներէք Հայր իմ, յաւելցուց կարաստ, անուննիդ արդեօք կրնամ գիտնալ :

— Անունս, սյո՛ ինչո՞ւ չէ . Թէօխար կը կոչեն զիս, բայց ըսէք ճամբայ ելլելու միտք ունի՞ք :

— Էթերնիս շորնալէն գրեթէ անմիջապէս ետքը :

— Ուրեմն քառորդէ մը ճամբայ պիտի ելնէք, կը ցաւ իմ որ աւելի ընդարձակօրէն չպիտի կարենամք խօսակցիլ :

— Հոգ չէ, երբ Սարը-եար դալու ըլլաք աւելի ատեն կու նենամք տեսակցելու . հոս առայժմ մեր շնորհակալութենէն ուրիշ բան մը չեմք կարող մտարել . քանզի ստակ մը չունինք վրանիս բայց եթէ Սարը-եար տեսնուելու ըլլամք այն ատեն լիովին վարձքդ կընդունիս :

— Այո՛ . Սարը-եար պիտի գամ, չէ թէ ստակ ուղերու այլ գուցէ բարեկամութիւննիդ ստանալու :

— Եւ հաւաստի եղիք, որ ձեր պատրաստական բարեկամքս պիտի գտնուինք :

— Եւ ես շնորհակալ պիտի ըլլամ ձեզ, հիմայ զձեզ կը թողում երկու ձի բերելու համար, քանզի կը տեսնամ որ բարեկամդ անկարող մի՞ճակի մէջ է, քալելով Սարը-եար երթալու համար :

— Ա՛հ Պարոն ալ աղնուութեան չափը կանցնէք :

— Բան մը չէ, ստոր համար ինձ շնորհակալ ըլլալու պէտք չունիք, ինչու որ իրիկուան պիտի խաւրէի ձիերը, հիմակուց գուք կը տանիք և գիւղը մտավաճառ խալիբօյին կը յանձնէք ըսելով ծերունին դուրս ելալ :

Երբ երկու վտանգեալները մինակ մնացին, կարաստ Մակարին գառնալով, « Ի՞նչ կըսես բարեկամ, այս մարդը անունս գիտէ ու զիս չճանչնար :

— Կամ թէ չճանչնալ կը ձեւացնէ, յաւելցուց Մակար :

— Իրաւունք ունիս . պատասխանեց կարաստ ու քիչ մը մտածելէ վերջը, սյո՛, կրկնեց, խիտ հաւանական է, որովհետեւ



այն Բողա-Տանտան ըսած կինը յիրաւի իմ տանս միմիակ բարեկամուհին է, շատ բան, արդեօք ուսկից կը ճանչնայ զայն:

— Այդ ալ մտածելու բան է, գրեզ ճանչցողը 'ի հարկէ բարեկամուհիդ ալ պիտի ճանչնայ:

— Բայց այս մարդը տեղ մը տեսնելս բնաւ չեմ յիշեր:

— Չուր տեղը ի՞նչ մտածեմք, Սարը-եար չպիտի գայ:

— Իրաւունք ունիս, բայց եթէ թշնամութիւն մը ունի:

— Այլէկ կը տեսնես որ դորժով բարեկամ է:

— Իրաւունք ունիս, ալ գողենք այս խօսքը բայց այս մարդը ու շացաւ:

— Ի՞նչ ունիս որ այսչափ կ'աճապարես:

— Կարճ խօսքով պատմեմ քեզ ամեն բան, մայրս Վասիլ անուն Յոյնի մը սէր տալով, հետը ամուսնանալու դժբաղդու թիւնը ունեցեր է և ես այս հիմենեան հանդիտին երկրորդ պտուղն եմ. Վասիլ ուղեր է մօրաքոյրս սպաննել՝ մայրենի ժառանգութիւնը միայն մօրս սեպհականելով իւր ձեռքը անցընելու մտօք. բարեբաղդարար չէ յաջողեր և ստիպուեր է անմիջապէս դուրս փախչիլ միանգամայն ու թը տարեկան Սթամբուլի անուն քոյրս գողցեր իւր շնական կրիցը զոհելու համար, ինչպէս որ իւր գաղանական եղեռնագործութիւնը 'ի դորժ գնելը նոր իմացայ. պէտք ես գիտնալ որ ես աղջիկ մը ունիմ Հեղինէ անուն, որ մը գիշերուան ժամը մէկը անցեր էր և ես Պէօյիւք-տէրէյի նաւամատոյցին առաջը կեցած նաւակովս կը մտածէի Սարը-եար դառնալ, երբ երիտասարդ մը գալով նաւավար, ըսաւ, զիս Սարը-եար տար, ուստի այս երիտասարդը նաւակս տունելով Սարը-եար տարի, երբ ձեր տանն առջին հասանք դաշնամուր կը զարնէին. այս երիտասարդը ձեր ընտանեաց վրայ շատ մը հարցմունքներ ըրաւ ինձ:

— Ի՞նչ էր հարցուցածը, ըսաւ անձկանօք Մակար:

— Չեմ յիշեր բայց կարծեմ ոչինչ բաներ էին, ինձ հըրամայեց որ ձեր տանը առջին հանեմ զինքը ու ինձի փոխարէն ոսկի մը տուաւ, և հարցուց որ ամուսնացեա՞լ եմ և թէ զուտկ ունի՞մ, անունն ի՞նչ է, ես ալ առանց քաշուելու ման-



բանաստեղծարար պատասխանեցի ու ինքը զիս բարեւելէ վերջը  
եղաւ դնաց . քանի մը օր վերջը զիշեր մը Զիֆիթ-սույի ըզ-  
բօսավայրը զիս տեսնելով քովս մօտեցաւ .

— Բարեկամ, ըսաւ, կուզե՞ս որ ամսականով ինձ նաւավա-  
րութիւն ընես .

— Մեծ հաճութեամբ Տէր իմ, պատասխանեցի .

— Ի՞նչ ամսական կուզես, հարցուց .

— Ինչ որ կը հաճիք, ըսի .

— Հինգ հարիւր զուրուշ կը բաւէ, կարծեմ .

— Տէր իմ ինձի պէս մէկուն հինգ հարիւր զուրուշ ամսա-  
կանը Աղէքսանդրիոյ կուսակալութեան պէս բան մ'է, ըսի .

— Ուրեմն, պատասխանեց, վաղու ընէ սկսելով ամսականդ  
պիտի բանի .

Շնորհակալութեամբ ու բախտ թիւնս յայտնեցի .

— Առայժմ գնա, ըսաւ և վաղը տունս եկուր որ հրա-  
մաններս ընդունիս .

— Շատ աղէկ Տէր իմ, ըսի ու զատուեցանք, հետեւեալ  
առաւօտուն այս երիտասարդին տունը դացի որ ինքն ալ բա-  
կին դրանը մէջ ծովուն դէմը նստեր էր .

— Եկա՞ր, հարցուց ինձ դառնալով .

— Ձեր հրամանին կսպասեմ Տէր իմ, ըսի .

— Դու բարի մարդ մ'ես, ըսաւ ինձ, կը յուսամ որ դոր-  
ծովդ ակնկալութիւնս չես խաբեր .

Այն ատեն պիտի խօսէի բայց ինքը խօսքս կարելով,

— Ես արդէն զքեզ կը ճանչնամ, ըսաւ, հիմայ դադանիք մը  
պիտի յայտնեմ քեզ, որ սրտիդ մէջ պէտք է թաղեալ մնայ .

— Հաւատի եղիք որ մինչեւ դերեզման հետս պիտի տա-  
նիմ, ըսի .

— Շատ աղէկ, պատասխանեց, վաղը զիշեր ժամը չորսին  
զիս Պէօյիւք-տէրէ պիտի տանիս և հոն ընելիքդ քեզ կը  
զրուցեմ, հիմայ գնա՛ ըսելով խօսքը վերջացուց .

Ես այս երիտասարդին յայտնելիքը սիրահարական դադա-  
նիք մը կարծեցի, բայց որչափ սխալեր եմ, հետեւեալ զիշեր



ըր ժամը չորսին պատրաստ կը կենայի երբ Միհրդատս եկաւ  
 (այս է երխտասարդին անունը) Պէոյիս ք-տէրէ սրճարան Գաղղիոյ  
 ըստած պանդոկին նաւամատոյցը ելաւ, պատուիրելով որ իւր  
 հրամանին սպասեմ, ու ինքը պանդոկէն ներս մտաւ. այս մի-  
 ջոցին ծովուն բացը շողենաւ մը կեցեր էր, դիշերը մութ էր.  
 կէս ժամ ետքը նորէն գալով ինձ հրամայեց որ շողենաւը եր-  
 թալով դրուցեմ որ եզրը մակոյկ մը խաւ բեն ու ինքը գարձեալ  
 պանդոկը մտաւ. ասանցմէ բան մը չէի հասկնար, բայց հրա-  
 մանը 'ի գործ դրի և մակոյկը եզրը եկաւ, թէպէտ երկուս  
 չէի բայց բնազդումս մտալուս վաանդէ մը զիս կը դողացնէր,  
 քիչ մը վերջը սեւ քողով բաժտուած կնոջ մը հետ դարձաւ,  
 ետեւէն երեք ալ էրիկ մարդ կային, կնոջ հետը նաւակս մըս-  
 նելով դէպ 'ի շողենաւը թիալարել հրամայեց, երեք մարդիկը  
 մակոյկը մտան, ասանց մէջէն մէկուն ձայնը ահուելի յիշատակ  
 մը միտքս ձգեց, բայց դիշերը մութ էր չէի կրնար անոր դէմ-  
 քը տեսնալ, վերջապէս մակոյկը քառաթի ըլլալուն մեզմէ  
 առաջ հասեր էր շողենաւին, պզտի լապտերով մը երկու հողի  
 մեզ դիմաւորել կրտապսէին, բայց երբ շողենաւին սանդու-  
 դին քով հասանք՝ ինչ տեսնեմ, այն եղեւնագործը կեցեր էր.  
 այն վասիլը որ մայրս տառապանաց մէջ սպաննեց և քոյրս իւր  
 դաղանական կրիցը զոհ ըրաւ, անմիջապէս ցատկեցի վրան,  
 բայց իւր մարդիկը հասնելով զիս բռնեցին ու շողենաւին  
 վրայ հանեցին. այն ատեն իմացայ որ այն կինը իմ քոյրս Սա-  
 թինիկն է եղեր, վերջապէս մէջերնին քիչ մը խօսելէ վերջը  
 զիս Սաթինիկին հետ Երոսպա խաւրել վճռեցին, այս լուրը  
 իրրեւ կայծակ զլխուս իջաւ, աղաչեցի, պաղատեցայ աղջի-  
 կանս խնայեցէք կը դոչէի, բայց ինձ մտիկ ընող չեղաւ, ըսին  
 թէ մենք քու աղջիկդ ետեւէդ կը խաւրենք, բայց ես բարե-  
 բազդաբար աղջիկս առջի օրուրնէ Բողա-Տանտան բարեկա-  
 մուհւոյս տունը տարեր էի, քանի մը օր կենալու համար.  
 և մինչեւ հիսա եթէ գտած չեն աղջիկս աղատած է, իսկ թէ  
 որ գտած են կորսուած է. վերջապէս հետեւեալ օրը շողե-  
 նաւը Գէօսթէնձէի նաւամատոյցը հասաւ, ինձի համար վա-



խուսափ միմիակ միջոցն էր ասի, բայց ստակ չունէի և մեզ ուղեկցող ծեր ծառան ինձ ստակ տալ չուղեց և եթէ դառնայի ինքն ալ պիտի դար իմացնելու այն դազանին. ուրեմն մը տածեցի լոյս ընկերութեան շողենաւը չեկած նաւակով մը Պոլիս դառնամ. ուստի ծովը նետուելով ցամաքը ելայ և որ զձեզ հոն դասոյ. հիմայ անոր համար կաճապարեմ որ եթէ աղջիկս դտած չեն, ազատեմ զինքը այն շարագործներուն ձեռքէն:

— Գու հոգ մ'ըներ բարեկամ, եթէ Եւրոպա ալ խաւրած ըլլան ես կարող եմ զինքը ետ բերել տալ:

— Աղնիւ Պարոն, կեանքս պիտի շնորհես ինձ, ա՛հ աղջիկս Պարոն ինձ պիտի դարձնես աղջիկս այնպէս չէ:

— Անշուշտ, եղիբ, որ մինչեւ հիմայ դտած ալ ըլլան, տաւր օրէն քովդ պիտի ունենաս քու դուստրդ, բայց լռէ ահա ծերունին կուգայ. Մէկէն խօսակցութիւնը դադրեցաւ և ծերունին երկու ձիերու սանձերէն բռնած սրճարանին դրան սեմոցը վրայ տեսնուեցաւ:

— Պարոններ, ըսաւ, ձիերը պատրաստ են, մեկնելու համար:

— Շնորհակալ եմ հայր իմ, ըսաւ կարապետ ձիուն սանձը ծերունւոյն ձեռքէն առնելով:

— Որո՞ւ ձգենք ըսիբ, ձիերը, հարցուց Մակար դամբին վրայ ցատկելով:

— Մասլաճառ Խապիրոյին խանութը թողուցէք:

— Շատ աղէկ մասլաճառ Խապիրոյին. մնաս բարեաւ հայր իմ:

— Երթաք բարեաւ որդեակք, նորէն տեսնուինք:

— Այո՛, նորէն տեսնուինք ըսին երկու բարեկամները ու սրարչաւ դէպ 'ի Սարը-եար մտրտիւցին:



## ՀԵՂԻՆԷ ԵՒ ՄԻ ՀՐԳԱՏ

Մեր երկու բարեկամները ճամբայ ելած ատեննին դեռ արեւը չէր ծագեր . Միհրդատ խրանկողինէն ելլելով, ածապարանօք հագուեցաւ, և դէպի նաւավարին տանը ճամբան բռնեց .

Հեղինէն ալ արշալոյսը չժագած արթնցեր էր . այս միջոցին Բօղա-Տանտան տիկինը վառարանը ձեռքը խուցէն ներս մտաւ .

— Ո՛հ, ըսաւ Հեղինէ արթնցելէս, կը կարծէի որ դեռ անկողինէդ ելած չես .

— Այո՛ Հեղինէ, պատասխանեց, թէ և յու շկասարիկի թեթեւութեամբ կոխելով ելար խուցէն, բայց ես արթուն էի .

— Այո՛, անշուշտ եմ որ, դու ալ ինձի պէս չես քնացած, հաւանականաբար մի և նոյն զգացմամբ .

— Իրաւունք ունիս պէտք է յուսանք աղջիկս, հիմայ պարան Միհրդատ ուր որ է կուգայ, և ստոյգ տեղեկութիւններ կ'ստանամք, ըսաւ վառարանին վրայ պզտի ամանով մը ջուր դնելով որ տաքնայ .

Այս Բօղա-Տանտան մականաւանեալ կինը, քառասունը անցուկ կին մ'էր . դէմքը ըստ բաւականին հաճելի . դեղին մազերուն խոպոպիքները, խրտարիքին իբրեւ ծածկոյթ, մանկամարդ կերելոցնէր գինքը .

— Տիկին Բօղա, ըսաւ Հեղինէ, կարծեմ երէկ գիշեր կրսէինք թէ ամուսինդ քէնէր գիւղը տեսնող եղեր է .

— Ո՛հ, դժբաղդաբար, այո՛ պատասխանեց, բայց կարծեմ ասի պարզապէս սուտ մ'է, քանզի, այն ատենուան ստացած տեղեկութեանս նայելով, բանտին մէջը մեռեր է .

— Անցած օր Պէօյիւք-տէրէյի շուկան այն եղեւնադործին երկրորդը տեսայ, որ Իյնէկէօզ կը կոչուի . նոյն օրը, անոր յայտնուելէ վախցայ . բայց վերջը իմացոյ որ պատուաւոր



մարդ ու մը քով մտեր է խոր սրիկայու թիւնը թողլով . ուստի հիմայ միտքս դրի որ երթամ անկէ տեղեկանամ, 'ի հարկէ այն շարագ որ ծինն ի՞նչ ըլլալը գիտէ . խօսքը վերջացնելէ ետքը թաշկինակը հանեց, և աչքէն վաղած արտասուքները սրբեց .

— Խեղճ թողա, ըսաւ Հեղինէ . սիրտդ ամուր բռնէ, թշուառներուն պաշտպանը Աստուած է . վերջը լռելով, իրեն ալ մխիթարութեան պէտք ունենալը միտքն ինկաւ . աչքերը արտասուօք լցուեցան . և թեւերը թողային ճիտը նետելով, մ'հ, գոչեց . ինչո՞ւ արդեօք աշխարհ եկանք, աղքատութիւնը չբաւեր որ դժբաղդութեան օղակներէն մի առ մի անցնելու կը հարկադրէ զմեզ բազում . . . միթէ այս է ոչնչութիւն ըսածնին, զգացումը ի՞նչ բան ունի ոչնչութեան մէջ . . . անշուշտ եմ որ թշուառ ըլլալու համար կզգայ մարդ . . . .

— Կը հասկնամ, աղջիկս, կը հասկնամ . բայց յուսա՛ կրսեմ քեզ :

— Ա՛հ, յուսա կրսեա . և արդէն կը սիրէ այն . . . չլսեցիր . որ Տէրպէնտի աղջկանը հետ, երէկ գիշեր այն պատշգամին տակը իրարու մշտնջենական սէր ուխտեցին . . . չլսեցիր, նա և որ Ատէլ օրիորդը զիս իրեն նախանձորդը կը համարի . Վերջապէս չլսեցիր որ, ըսաւ, հօրմէս զիս ամուսնութեան խնդրէ ըսելը և Միհրդատի ալ խոստանալը :

— Ի՞նչու կը յուսահատիս քիչ մը առաջ դու ինձ կը մխիթարէիր ըսելով թէ Աստուած է թշուառներուն պաշտպանը ինչպէս շուտ մը մոռցար :

— Ա՛հ, Տիկին թողա ասոնք ականջովդ լսելէդ վերջը ի՞նչ պէս կրնաս յուսալ :

— Բայց լսեցի նաև որ Միհրդատին դէմ կը դաւակցին . և այս գաղտնիքը երբ լսելու ըլլայ Միհրդատ, անշուշտ զայրանալով պիտի մերժէ Ատէլ օրիորդին կեղծ սէրը :

— Ա՛հ կը կարծես որ հաւատայ, սէրը կոյր է կրսեն . այն մոլեկան հուրը գիւրաւ չը շիջանիր, ըսաւ Հեղինէ և այտերը կարմրելով առջին սկսաւ նայիլ . ու քիչ մը ետքը աչքերը մեղմով մը թօղա-ճանտանին վրայ յարեց, իրը թէ դժբաղդէն



պատասխան մը կը խնդրէր անկէց . բայց այն՝ սեղ նայուած քը  
չէր , զոր առնական երեւոյթ մը տալով , նազելի օրիորդները՝  
անտանելի կ'ընեն մարդոց աչքին . մարդս կանանցմէ հլու թիւն  
կը սրահանջէ , թէև կնոջ ծառայութեան ալ դատապարտուած  
ԸԼԼՄՅ :

— Յուսամ որ պիտի հաւատայ , ըսաւ Բօզա . Միհրդատ  
աղնիւ սիրտ մ'ունի , հետեւաբար դաւակցութեան մէջ կան  
անանկ մասեր , որ ինքն արդէն դիտէ .

— Ա՛հ որչափ կը վախաքիտ գինքը տեսնել , հօրս վրայ տե-  
ղեկութիւն ստանալու համար . եւս առաւել . . . մէ ներէ Բօ-  
զա , կուզէի որ իշ խօսքեր ալ ընել անոր հետ , բայց կարողու-  
թիւն չեմ գտար վրաս .

— Բայց աղջիկս չե՞ս մտածեր որ ես զքեզ պիտի օգնեմ :

— Հեղինէ դառնութեամբ ծիծաղելով , ո՛հ մեք խենդ եմք ,  
ըսաւ . որ կը յուսամք , թէ այնպիսի աղնուական մէկը՝ հաճի  
ինձ պէս աղքատ ռամկի աղջկան մը սէր տալ :

— Այսու ամենայնիւ , յարեց Բօզա , պէտք ենք զինքը ըզ-  
դու շացնել պատրաստուած վտանգէն .

— Իրաւունք ունիս , ըսաւ Հեղինէ , մենք մեր պարտքը  
կատարենք :

— Եւ պիտի տեսնաս որ քու չը յուսացածիդ պիտի յաջո-  
ղինք , յաւելցուց Բօզա :

— Ո՛հ դառանցանք , ըսաւ Հեղինէ լալու նման ձայնով մը ,  
վերջը աչքը պատուհանէն դուրս յարելով , դեռ պարոն Մի-  
հրդատը չեկաւ Տիկին Բօզա , ըսաւ , ո՛հ արդեօք չը պիտի դայ :

— Ստենը կանուխ է ուր որ է հարկաւ պիտի դայ , պա-  
տասխանեց . մէկ մ'ալ տանը դուռը բաղխեցին :

Հեղինէ անմիջապէս տեղէն ելլելով , « կարծեմ պարոն Մի-  
հրդատն է երթամ բանամ , ըսաւ .

Բօզա-Տանտան ալ այս միջոցին սենեակը կարդի դնելու  
դբաղած էր . Եկողը յիրաւի Միհրդատն էր :

Հեղինէ դուռը բացեր էր , և Միհրդատ ծանրութեամբ  
ոսանդ տխրէն վեր կելլէր Հեղինէին սա խօսքերը զլուցելով .



— Յուսամ թէ օրիորդ զձեզ շատ շապատցուցի :

— Ամենեւին պարոն, ըսաւ Հեղինէ. ընդ հակառակը մեք զձեզ անհանգիստ ըրինք, թէպէտև ակամայ. Այսպէս խօսակցելով սենեակէն ներս մտան, և Միհրդատ Բօղա-Տանտանը բարեւելով փայտեայ աթոռակի մը վրայ նստաւ :

— Կաղաչեմ բազմոցին վրայ հրամեցէք :

— Հոս աւելի հանգիստ կընեմ Տիկին, պատասխանեց Միհրդատ :

— Ինչպէս որ կը հաճիք :

— Շնորհք ընելով եթէ սուրճ մը եփէք հաճութեամբ կ'ընդունիմ. այս առաւօտ անկողնէս արթննալուս անմիջապէս դուրս ելայ, և օրիորդ Հեղինէի դառնալով, վասն զի, կըրկնեց, խնդիրը դեղանի օրիորդի մը սիրտը հանդարտեցնելու փափուկ պաշտօնին վրայ էր :

Հեղինէ առանց պատասխանելու աչքերը խօնարհեցուց :

— Բօղա-Տանտան պատասխանելով, յուսամ թէ պարոն, ըսաւ, օրիորդն ալ փոխարէն փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու բարեբաղդութիւնը պիտի ունենայ :

— Շնորհակալ եմ Տիկին, արդէն բերկրառիթ լուր մը իրեն հաղորդելու երջանկութիւնս զիս կը վարձատրէ. Հիմայ օրիորդ մտիկ ըրէք. ձեր հայրը Փարիզ գնաց :

— Փարիզ գնաց . . . գոչեցին երկուքը միատեղ . . . ո՞հ ի՞նչ դժբաղդութիւն, մրմնջեց Հեղինէ :

— Ինչո՞ւ կ'այլալլիք օրիորդ, վերջը մտիկ ըրէք. ձեր մեծ հայրը երեսուն տարիէ 'ի վեր իւր որդին կարապետը կորսընցուցեր էր ընտանեկան կռուի մը պատճառաւ որ վերջը քու հաւէդ պիտի խմանաս ամեն բան :

Հեղինէ ապշած Միհրդատին կը նայէր :

— Ուստի, կրկնեց Միհրդատ, ես առանց զխանալու որ ձեր հայրը Սօֆեան պէյլին որդին է, (այսպէս կը կոչուի հաւդ) և որ աւելի գէշն էր, ոխ պահած է եղեր Սօֆեան պէյլին, իւր մօրը թելադրութեամբ, Պէտք է զխանաք նաև որ ես Սօֆեան պէյլին անձնուէր բարեկամն եմ. Սրդ առաջին ան-



դամ որ Սարը-եար եկայ, պատահամբ ձեր հօրը նաւակը նստայ Պէօյիւք-տէրէէն որն որ աղնիւ մարդ մ'ըլլալուն մը տաժեցի որ քովս առնեմ:

Հեղինէ շնորհակալութեան թեթեւ շարժում մ'ըրաւ:

— Գուք հօրաքոյր մ'ունիք, շարունակեց Միհրդատ, որ տասը տարեկան հասակին մօրը գրկէն դողցուելով նորին վսեմութեան ծախուեր է իբրեւ գերի՝ Մարտիրոս Տէրպէնտ անուն մէկու մը ձեռօք:

— Մարտիրոս Տէրպէնտ ըսիք, հարցուց Բօղա-Տանտան զարմացմամբ:

— Այո՛, պատասխանեց Միհրդատ նոյնպէս զարմանալով, կը ճանչնամք զինքը:

— Մատթէոսին եղբայրը, ո՞հ հիմա կը հասկնամ, բայց շարունակեցէք պարոն:

— Ուտի ձեր հաւը՝ իւր վրայ ձգուած մէկ զրպարտութեան պատճառաւ ստիպուեր է իւր կնոջմէն դատուելով Սււպանիա երթալ:

— Կազաչեմ զրուցեցէք, ըսաւ Բօղա, այդ Սօֆեան պէյը ուրիշ անուն մ'ունէ՞ր:

— Ուրիշ անուն մը . . . այո՛, վասիլ կը կոչուէր:

— Ո՞հ կը ճանչնամ զինքը, Գոչինա գիւղը մեր տունը կեցաւ գիշեր մը և իւր պատահարը մեզ պատմեց:

— Ի՞նչպէս տիկին, դուք իման Պարէի քոյրը Վիոնն էք:

— Այո՛ պարոն ես եմ Վիուլը. ո՞հ զրուցեցէք ի՞նչ եղած է վասիլը, որ եղբօրս համար գեղ շինել տալու իշտիպ գնաց, և որ անկէ վերջը մէկ մ'ալ չտեսայ զինքը:



# ԼԻՈՒԼԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Օրհորդ Հեղինէ մէկ մը մէկին մէկ մը միւսին կը նայէր  
զարմանօք :

— Տիկին, պատասխանեց Միհրդատ, իշտիպի մօտ գողերու  
խումբի մը պատահելով զինքը վիրաւորեր ու ժայռէն վար են  
նետեր . և հրաշքով մը ազատելէն վերջը, երրորդ օրը Գոչի-  
նա դառնալով իվանը մեռած գտեր է և դուք հոն չէք եղեր .  
օր մը սպասելէ վերջը, մեռելը թաղել տալով ձեզ փնտռելու  
ելեր է . բայց ձեր վրայօք մէկէ մը տեղեկութիւն չստանալով,  
յուսակտուր Պօլիս վերադարձեր է :

— Ո՛հ, այո՛, իրաւունք ունէր . ես տունը հիւանդին հետ  
մինակ մնալէս վերջը, աչքս ճամբան էր որ պարոն վասիլ երբ  
պիտի վերադառնայ, ժամերը կանցնէին բայց դեռ մարդ չէր  
երևեր . հետզհետէ եղբօրս հիւանդութիւնը կը ծանրանար .  
դիշերուան ժամը երկուքին ատենները հիւանդին վրայ ան-  
դգայութիւն մը տիրեց . ալ վասիլին դառնալէն յոյսս կրտ-  
րեցի . անոր ուշանալուն վրայ մեկնութիւն մը չկրնալ տալուս,  
մտածեցի որ անձամբ իշտիպ երթամ . ուստի կանացի զգեստ-  
ներս հանելով եղբօրս զգեստները հագայ ու ճամբայ ելայ .  
Սուաուօտեան դէմ իշտիպի մօտեցեր էի . մէկ մ'ալ զինեալ  
աւաղակներ դէմս ելան . մէջերնէն մէկը լայնափող հրացանը  
ինձ ուղղելով, եթէ քայլ մ'ալ առնես կորսուած ես, գոչեց .  
իսկ ես սարսափով անշարժ մնացի . մէջերնէն երկուքը քովս  
մօտենալով, սկսան գրպաններս փնտռել բայց ես վրաս բան  
մը չունէի : Ո՛հ, ի՞նչ դժբաղդութիւն, գոչեց աւաղակը և ո՛չ  
թանկ մ'ունի վրան . նայն միջոցին գլխաւորնին ինձ մօտենա-  
լով, « Լիտի մաւրացիան, այս ատեն ո՞ր կերթայիր, հարցուց  
յայտնի դուցնելով որ վրաս ստակ չդանուելուն դժկամակեր էր :

— Տէր իմ, պատասխանեցի, իշտիպ կերթայի :

— Կին է եղեր մրմնջեց, այս ժամուս կին մը այս տեղու ա՛նքը



կին դու իշտիպ ի՞նչ գարծ ունէիր, հարցուց ձայնը մեղմելով:

— Տէր իմ, պատասխանեցի, մեռնելու մօտ եղբօրս համար դեղ շինել տալու համար իշտիպ կերթայի:

— Գոչինայի մէջ կարծեմ ժանտախտ կայ, ըսաւ խնդալով, այն ալ ասոր պէս կըսէր, յաւելցուց, և հրաման ըրաւ որ դիս ձերբակալեն:

— Երկու հուժկու աւաղակ դիս իրենց յաղթ բաղկացը վրան առնելով սոսկալի քարայր մը փոխադրեցին դրեթէ շընչասպառ. առաջին անգամ սթափելուս անոնց ահաւելի դէմքը տեսնելով նորէն նուաղեցայ, բայց մէջերնէն մէկը բժամատու այնպէս խածաւ որ ցաւէն սարսուելով արթնցայ, և անոնց ձեռքէն ազատելու յոյսս բոլորովին սպառած էր, ուստի սկսայ աղաչել բայց դրեթէ աղաչանացս ամենքն ալ ՚ի դերեւ ելան. մէ, եղբայրս, կըսէի, դանէ եղբօրս օգնեցէք, իսկ անոնք վրաս կը խնդային. մէջերնին մեծաւորին երկրորդը որ Պըչադըր կանուանէր, ինձ մօտենալով, պզտի թռչնիկս, ըսաւ, մենք ալ քու եղբայրներդ ևնք. միթէ սիրտդ կը քաշէ՞ որ զմեզ թողլով մեռնելու մօտ շնչին եղբօր մը քով երթաս:

— Գնք իմ եղբայրներս, թշուառական աւաղակներ, թողուցէք զիս, եթէ ոչ կը պօռամ, դոչեցի: Այս խօսքիս սուր ծիծաղ մը միայն պատասխան առի. Այն ատեն մեծաւորնին քովս մօտենալով, է՛, պօռայ ժպտելով, նայինք ձայնդ ալ քեզի նման դեղեցիկ է:

Իսկ ես տեսնելով որ աղաչանք և սպառնալիք անօգուտ է, սկսայ արտասուել. Մեծաւորնին նշան մը ընելով, բոլոր խումբը դանուած քարայրնուս դուրս ելան, և երբ երկուքս մնացինք, դարձանք ինձ մօտենալով, « խօսէ տեսնենք, կարգուած ես, ըսաւ:

Ափսոս, որ անդգամին ի՞նչ ըսել ուղեւը չը հասկնալով, ոչ պատասխանեցի եւ տեսնելով որ ինձ հետ անուշ կը վարուի, Ո՛հ, ըսի, ՚ի սէր Աստուծոյ, թողուցէք զիս, աշխարհի մէջ ես խեղճ աղջիկ մ'եմ, եղբայր մ'ունիմ որ իմ միակ պաշտպանս է սրն որ մահամերձ վիճակի մէջ թողուցի:



— Է՛հ, յարեց ժպտելով, այդ կողմէն անհող եղիւր, այսուհետեւ ես եմ քու պաշտպանդ և դու իմն պիտի ըլլաս, Գեռխօսքը շէր լմնցուցած, երբ աւազակներէն մէկը, աճապարանօք ներս մտնելով, Տէր իմ, ըսաւ, Ֆիլիպէէն դարձող Հայոց եպիսկոպոսը բռնեցինք:

— Շատ աղէկ, գոչեց, ահա զմեզ եպիսկոպոս պիտի պսակէ:

— Ի՞նչ ըսիր, քեզի հետ պսակու իմ, մտիկ ըրէ դու ատելի ես ինձ:

— Ես ինքզինքս քեզ կը սիրցընեմ, ըսաւ . . .

— Նողկալի մարդ, կաղաչեմ մի՛ բռնաբարեր զիս, ա՛հ եթէ քոյր մ՛ուռնիս և եթէ նոյնը ինձ նման բռնաբարուէր:

— Բայց, յաւելցուց խօսքս ընդմիջելով ես զքեզ չեմ բռնաբարեր, պիտի ամուսնանամ քեզի հետ և դու երջանիկ պիտի ըլլաս և կիսմայնեմ քեզ որ աւելի խօսք չեմ ուղեր. ու եկող մարդուն դառնալով՝ եպիսկոպոսը հոս բերէք, ըսել բաւականացաւ:

Աւազակը անմիջապէս հրամանը կատարել փութաց, այն ատեն հեծկլտանօք, «Ո՛վ եղեռնագործ, գոչեցի, բաղձանքիդ չը պիտի հասնիս, ինքզինքս ժայռէ մը վար պիտի նետեմ, քեզ հետ կենակցելէ աւելի լաւ է մեռնիլը:

— Հող մի՛ ըներ, պատասխանեց հեզնելով, կանխաւ ամեն բան մտածուած է, պսակէն վերջը պատիւ պիտի ունենանք ոտքերդ ու ձեռքերդ կապել մինչեւ որ խելքդ զըլուխդ դայ:

— Մարդասպաններ, աւելի աղէկ է որ զիս մեռցունէք:

— Խենդ, ըսաւ, ուսերը թոթուելով:

— Մնզգամ շուներ, գոչեցի:

— Քեզ կը խրատեմ որ աւելի ակնածութեամբ վարուիս քու ապառնի ամուսնոյդ հետ և ջանա՛ որ համակրութիւնս ստանաս:

Այս միջոցին եպիսկոպոսը ներս բերին:

— Մնունդ ի՞նչ է հայր Սրբազան, հարցուց աւազակապետը:

— Առաքինի որդեակ, պատասխանեց ջերմեռանդութեամբ, անունս Ս . . . է:



— Շատ աղէկ Ս . . . Սրբազան, կը ներէք հարցնելու, արդեօք որչափ դողցաք եկեղեցւոյն կալուածներէն որ ձեզ Պօլիս դարձնելու ամբարտաւանութիւնը ունեցեր են . . .

Ս.յս կատակին վրայ ամբողջ խումբը դիւական ծիծաղ մը բրցուց :

— Ո՛րդեակ կը սխալիս, պատասխանեց, ես աւելի մեծ փառքի մը հասնելու համար Պօլիս կերթամ :

— կը տեսնե՞ս ըստ այն առևն աւաղակապետը ինձ դատնալով, ամենափառաւոր եպիսկոպոս մը մեզ պիտի պսակէ :

— Այն ալ գետինն . . . դու ալ, պատասխանեցի :

— Ներեցէք Սրբազան, քիչ մը կոպիտ է բայց դեղեցիկ, յարեց աւաղակապետը :

— Ուրեմն ինձ պսակի մը համար ճամբէս դարձուցիք, ըստ, ու բախանալով եպիսկոպոսը :

— Այո՛, և ձեր մէկ մաղին անդամ չը պիտի դաշուի :

— Բայց միայն այս դիշեր հոս մնալու պիտի ստիպուիմ :

— Հոս մնալու պէտք չունիք, հիմա մեր ընկերաց մէջ դործը կը լմնցունենք :

Ս.յն առևն եպիսկոպոսը քովս մօտենալով, « Եկու տեսնեմ աղջիկս, ըստ, այդչափ ամչկոտ մի՛ ըլլար :

— Բայց, ըսի, ես այս մարդը չեմ ուզեր :

— Է՛հ, պատասխանեց, ի՞նչ ընեմք, այն դքեղ կուղէ :

— Քահանայ դու, ես ամուսնացած եմ, սրբասլո՞ծութիւն չէ՞ երկու մարդու հետ պսակուիլը :

— Սրդարեւ իրաւունք ունիս . . . բայց ՚ի հարկէ ստիպեալ տես ո՞ր կը դանուինք, և ես կաղօթեմ առ Ս.սաուած, որ բոլոր մեզքերուդ թողութիւն կուտայ, անցելոյն և այժմուս և յառաջակայն :

— Մնի՞ծ եալ ըլլան թշուառականները Ս.սաուած տեսնէ դատատաննին :

— Հող չէ, վերջասպէս կաղաչեմ որդեակ, դիս ճամբէս մի՛ արգիլեր տեսն չեմ կրնար կորսնցնել, ատեան հրամայէ :

— Եթէ միտս բղկակու ալ ըլլան չը պիտի դամ :



Նոյն միջոցին աւաղակապետը իմ քսիս դարով, հսն ուսքի վրայ ըլլալուն հոս նստած անդերնիս թող ըլլայ, ե՛կ օրհնէ զմեզ ըսաւ, և վերջապէս կրօնաւորը առանց խղճի մեր վրայ պսակի խորհուրդը կատարեց: Երկու տարի վերջը մանչ զաւակ մը ունեցայ, որ իմ միակ մխիթարութիւնս էր, հինգ տարեկան հասակին աւաղակապետը առանց իմ դիտութեանս տղաս իւր մէկ բարեկամին յանձնելով Պօլիս խաւրելը երբ լսեցի, ալ ինչ ընելն չէի գիտեր, ամուսինս զիս հաւատանց որ, խումբին մէջ մնալով Պետրոսիին ալ ՚ի հարկէ գող պիտի ըլլար, (այժպէս կը կոչուէր մեր զաւակը) և թէ Պօլիս կրթուելով, պատուաւոր մէկը կրնայ ըլլալ. և մենք ալ, կըսէր, քանի մը տարիէն այս խումբը կը ձգենք ու Պօլիս կը վերադառնանք: Վերջապէս քիչ օր վերջը ամուսինս զինեակիրներէ պաշարուելով, կալանաւոր Պօլիս փոխադրուեցաւ, ևս ալ տասն և չորս տարի վերջը խումբին երկու յառաջադէմները հետս, որոնք իրենց շարութիւններէն հրաժարեալ էին Պօլիս դարով Եէտի-դուլէի պարսպէն դուրս գինեպանի մը տունը բնակեցանք, անմիջապէս բանտը վաղեցի և ամուսնոյս՝ տղուս նկատմամբ շատ հարցմունքներ ըրի, բայց այն միշտ հեղներով կը պատասխանէր. հող մի ըներ դու, կըսէր, եթէ զաւկիդ դու խը փորձանք մը հանդիպի, ևս կը խոստանամ անոր դարմանը գտնել, և ևս կ'ստիպուէի լուել: Օր մը լսեցի որ ամուսնոյս ընկերները բանտին պատը ծակելով զայն ազատել կը խորհին. չէ թէ իրենց մեծաւորին աղէկութիւն մը ընելու համար՝ այլ կը վախնային որ նեղուելով իւր ընկերներուն անունը չը խոստովանի. վերջապէս, ևս ալ բոլորովին յուսահատեալ էի թէ ամուսնոյս բանտարգելութենէն և թէ՛ որդւոյս անյայտ ըլլալուն համար. ուստի գիշեր մը տան մէջ ամեն մարդ խոր քուն եղած ատեն, ելայ և շաթերս հագնելով նամակ մը գրեցի, որով փախուստս պիտի իմանային, և նոյն գիշերը տունէն մեկնեցայ ու պարսպին դրան պահապանին երթալով, կաղաչեմ բարեկամ, հիմայ անմիջապէս ինձ ոստիկանութեան պաշտօնէին պալատը տար, ըսի:

— Բայց այս ատեն ի՞նչ է պատճառը, ըսաւ:



— Պատճառը մի հարցներ, կը պահանջեմ որ տանիս, եթէ ոչ վերջը գլխուդ մեծ փորձանք կը բացուի:

Այս սպառնալիքէն յաղթուելով, պզտի լապտեր մը վառեց ու ճամբայ ելանք, քաղաքին մէջ որ մտանք առաջին ոստիկանութեան կայանէն, պահնորդը, ո՞վ է այն գոչեց:

— Բարեկամ, պատասխանեց դռնապանը:

— Սպասէ, հրամայեց պահնորդը, քիչ մը վերջը հարիւրապետը դուրս ելնելով, ո՞ր կերթաք այս ժամուս, հարցուց:

Այն ատեն ամեն բան տեղն 'ի տեղն պատմեցի, որ իսկոյն իւր ձին բերել տալով, ոստիկանութեան պաշտօնէին իմացնել փութաց, ես ալ նոյն գիշերը Սամաթիա, պահնորդին ինձ առաջնորդած տուն անցուցի, և հետեւեալ օրը զիս հարցաքննեցին և ես գիտցածս զրուցեցի, անկէ վերջը բնակութիւնս Սամաթիա հաստատելով զուակս փնտռել սկսայ, բայց ափսոս որ մինչեւ հիմայ լուր մը չառի անոր վրայ ո՞ր գիտէ թերեւս մեռած է, ըսաւ աչքերը արտասուօք լեցուելով:

Միհրդատ զարմանքէն ի՞նչ ըսելիքը չէր գիտեր:

Իսկ Հեղինէ որ առաջին անգամն էր այսպիսի պատմութիւն կը լսէր, ապշած լիուլի երեսը նայելէ չէր դադրէր:



## Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ      Պ Ա Տ Ա Հ Ո Ւ Մ

Միհրդատ իւր մտածմունքէն սթափելով, « Գիտցիք որ, ըսաւ, ձեր ամուսնոյն տեղը, բանտէն նոյն գիշերը պատահմամբ օրիորդին հաւը ազատեր է:

— Ի՞նչ կըսես, ըսին երկուքը միատեղ:

— Այո՛, բայց ինչ որ է, հիմայ օրիորդ ձեր հայրը, ինչ-



պէ՞ որ ըսի փարիզ է, և հաւդ կուզէ որ ձեզ ալ անոր քովը խաւրէ և ժամ առաջ զձեզ տեսնել կը տենջայ:

— Բայց, ըսաւ տարակուսելով Հեղինէ, կարելի չէ՞ որ հայրս Պօլիս վերագառնայ առանց իմ երթալուս:

— Այդ հարցմանդ պատասխան տալը իմ կարողութենէս վեր է ուստի թէ որ կուզես, մեծ հօրդ հետ խօսած ատենդ այդ ալ կը հարցնես:

— Ե՞րբ պիտի կարենամ խօսիլ հաւիս հետ:

— Հիմայ այս ժամուս երբ կը հաճիս:

— Բայց, Տիկին Լիուլն ալ մէկտեղ կառնենք:

— Այո՛, այո՛, ես ալ կընկերանամ, բայց այլայլութենէս կարելոր լուր մը հաղորդել մտայայ որ ձեր պատուոյն և միանգամայն կենացը կը նկատէ:

— Ի՞նչպէս, ինձ կը նկատէ՞ ըսիք:

— Այո՛, երէկ գիշեր ժամը երեքին ատենները Տէրպէն տին տանը առջևի շրջավայրին . . .

— Տէրպէնտի տանը, գոչեց մէկէն Միհրդատ այլայլելով. ետքը մէկէն ՚ի մէկ շրջավայրը ըսիք այնպէս չէ՞, ըսաւ:

— Այո՛, շրջավայրին վերի կողմը պատշգամին տակովը, Հեղինէ օրիորդին հետ պարտած ժամանակնիս երկու հոգի գէպի մեզ յառաջանալը տեսնելով պատշգամին մէկ անկիւնը քաշուիլ փութացինք:

— Բայց դուք այն ատեն ի՞նչ բան ունէիք, հարցուց Միհրդատ:

Լիուլ Հեղինէին երեսը նայեցաւ և ժպտելով մը, « Պարոն, պատասխանեց, եթէ մէկը գիմացինէն առանց սիրուելու, սիրած որ ըլլայ շատ բան կընէ:

— Կը հասկընամ, օրիորդը կը սիրէ . . .

— Այո՛, ինչպէս որ ըսի, կը սիրէ առանց գիմացինէն սիրուելու:

Օրիորդ Հեղինէին գլուխը վեր առնելու համար, Եղիա Մարգարէին վերացած ժամուն դգացած քաշողական զօրութիւնը պէտք էր:



— Արդեօք կրնամ գիտնալ, որ երջանիկ անձը օրհարդին համակրութիւնը ստանալու բաղդին արժանացեր է :

— Այո՛, ի՞նչու չէ :

Այս միջոցին Հեղինէ Տիկին Լիուլի երեսը նայեցաւ ժրպատասխան գիտնօք, և այս նայուածքը Միհրդատին աչքէն վերիսլած չէր :

— Ուրեմն խօսէ :

— Այո՛, պիտի զրուցեմ, բայց առաջ պէտք է որ դաւակցութիւնը յայտնեմ :

— Դաւակցութիւն ըսիր, հարցուց Միհրդատ զարմանօք :

— Այո՛. դաւակցութիւն, մտիկ ըրէք, գիշերը մութ էր. ուստի այս երկու անձերը զմեզ չէին կրնար տեսնել և մենք սարսափով սա խօսքերը լսեցինք որ իրարու կրսէին. « Ո՛հ եղբայր այս ինչ դուժ էր որ ինձ տուիր — Այո՛, Մատթէոս, պատասխանեց երկրորդը և այնպիսի հարստութիւն մը ձեռք ձըգած է հիմայ վասիլ որ գրեթէ բոլոր Արեւելքի մէջ առաջինն է բայց պէտք էիր անոր քայլերուն հետեւիլ :

— Է՛հ, պատասխանեց, դու Մարտիրոսը ի՞նչ կը կարծես, առանց երեւելու ոստիկանութեան կասկածը անոր վրայ յարուցի, իւր մարդոցը մին կաշառելով, իմացայ որ իւր հարստութիւնը Տէրութեան չգրաւուելու համար Քատրլը, Պէշ-թէքէլէր ըսուած տեղը քարայրի մը մէջ պահելու միտք ունի, ուստի վեց զինեալ մարդ սպասյուցի և յիրաւի նշանակուած օրը եկաւ, զինքը սպաննելու մօտ էինք. ալ կը նուազէր երբ նոյն միջոցին անիծեալ երիտասարդ օրսորդ մը վրայ հասաւ ու վազրի մը պէս ամենքս ալ ցիլուցան ընելով ազատեց վասիլը :

Միհրդատ զարմանքէն քար կտրածի պէս մնաց. « Բայց արդեօք, հարցուց, այդ Մատթէոս Տէրպէնտի հետ եղողը ո՞վ էր կրցա՞ք ճանչնալ :

— Եղբայրը Մարտիրոսն էր :

— Բայց ամեն մարդ զինքը մեռած կը կարծէ :

— Ո՛ր գիտէ թերեւս դեւը զինքը դժոխքէն դուրս է հաներ :



— Վերջը՝

— Վերջը Մատթէոս քիչ մը լուռ կենալով, եղբայր, հիմա ինչ որ պիտի ընեմք լաւ մտածեմք, ըսաւ:

— Այո՛, պատասխանեց Մարտիրոս, պէտք է մտածենք, եթէ զձեզ ճանչնայ կորսուած եմք, քանզի Նորին Վսեմութեան հոգւով շափ մտերմութիւնը ստացած է, ինչ որ ուղէ կարող է ընել, բարեբաղդաբար զձեզ ճանչնար բայց մարդ կուգայ եկնաւ սա պատշգամին մէջ մտնամք: Այս ըսելով դէպի մեզ յառաջանալ սկսան, հետեւաբար մենք ալ շտեմնուելու համար աւելի խոր անկիւն մը քաշուեցանք, նոյն միջոցին դուք Տէրպէնտի աղջկանը հետ պատշգամին մտեցաք:

— Ա՛հ, գոչեց Մատթէոս ցած ձայնով, աղջիկս է կեցցես, ահա մեզ արժանի համախոհ մը, շիտակը ամենեւին չէի յուսար որ այսչափ քիչ ատենի մէջ Միհրդատը հրապուրելու յաջողի:

— Բայց ո՞վ է այս Միհրդատ ըսածդ, հարցուց Մարտիրոս:

— Միհրդատ Արուեսը չե՞ս գիտեր:

— Ա՛. . . Նորին Վսեմութեան սեղանաւորը:

— Նոյն ինքն:

— Հասկցայ, շիտակը սքանչելի խորհուրդ, բայց Ատէլ օրհորդը թէ որ զինքը յիրաւի սիրէ, ան ատենը:

— Այդ անկարելի է, քանզի Պետրոս Նաղարօֆ անուն Ռուսիացի հարուստ Հայ մը կը սիրէ, ինքն իսկ խոստովանեցաւ, որ թէև առաջին անգամ Միհրդատը տեսնելուն՝ յիմարաբար սիրեր էր, բայց Նաղարօֆին հարստութիւնը, այս սէրը փճացուցեր էր, վասն զի պէտք է դիտնաս որ աղջիկս Միհրդատէն աւելի ոսկին կը սիրէ, կուզէ որ բաղմամբիւ ըստ պատանորներու հրամայէ և այս մեծութիւնն ալ Նաղարօֆին ոսկին այժմէն իրեն կը խոստանայ, ինչ երկայն ընեմ ինքը զրուցեց որ հայր իմ, եթէ Միհրդատ հրապուրելով ինձ ծառայեցնեմ, դիս Նաղարօֆին հետ կամուսնացնես. և ես խոստացայ:

— Եստ աղէկ հիմայ գործը կարգին է, աղէկ միտ դիւր



ըսած իս վաղը զիշեր դարձեալ Միհրդատայ հեա սեանուած  
ատեն, զիս Միհրդատին թող ներկայացնէ իբր իս հաւատա-  
րիմ խորհրդապահը և անկէ վերջը բանակցութիւննին նամա-  
կադ լու թեամբ ըլլայ և իմ ձեռք:

— վերջը:

— վերջը մնացածն ինձ թող, ես զայն դիւրութեամբ մէջ  
տեղէն անհետացնելով, Նորին վսեմութեան կը հաւատացնենք  
որ Սօֆեան պէյ իսր աղջիկը իրեն հարձ ըրած էր և թէ Մի-  
հրդատ Սօֆեան պէյի աղջկան սիրահարած ըլլալուն, Պէյը  
նախանձելով Միհրդատը սպաննեց կըսենք և որովհետև Սօֆեան  
պէյ Նորին վսեմութենէն ամենեւին զաղանիք չպահեր, իւր  
աղջկան պատմութեան մասին հարկաւ ճշմարիտը պիտի խոս-  
տովանի որուն այս խոստովանութիւնը Նորին վսեմութեան  
առջեւ Միհրդատի ալ սղաննութեան ստուգութիւն մ'է, այն  
ատեն ուրիշ կարծիք պիտի ունենայ Պէյին վրայ և ալ անոր  
յաղթելը դիւրին է:

— Աղէկ մտածեր ես, ըսաւ Մատթէոս, կրնայ ըլլալ որ այդ  
թակարթէն ազատի, ուստի պէտք է ուրիշ մ'ալ պատրաս-  
տել:

— Ատոնց ամենն ալ խորհած և ուրիշ յատակադիծեր ալ  
պատրաստած եմ որ մարդուս մտքէն անգամ չանցնիր: « կեց-  
ցես, ըսաւ Մատթէոս, ձեռքը եղբօրը ուսին վրայ դնելով:

— Այ, եղբունադործներ, դոչեց Միհրդատ ցասմամբ, շա-  
րունակեցէք Տիկին շարունակեցէք:

— Տիկին Լիուլ նորէն սկսելով, վերջէն երկու շարագործ-  
ները պատշգամին պզտի դռնէն ելնելով անյայտ եղան, նոյն  
միջոցին կարծեմ անոնց ոտքին շշուկը լսեցիք, քանզի աղ-  
ջիկը անմիջապէս ձենէ բաժնուելով տուն մտաւ դուք ալ ձեր  
քրոջը տունը կը յառաջանայիք և ես թէպէտև ետեւնուդ  
քանի մը անգամ կանչեցի բայց չլսեցիք, և օրիորդ Հեղինէ  
որ զձեզ կենացը չափ կը սիրէ՝ մինչեւ առաւօտ անձկութեամբ  
անցուց որ յառաջակայ վտանգէն զձեզ զգուշացնելու բա-  
րեքադդութիւնը ունենայ:



Հեղինէ շնորհակալութեան նայուածք մը արձակեց լիութի վրայ :

— Միհրդատ Հեղինէի դառնալով, օրիորդ, ըսաւ, հաւաստի եղիք որ ձեր այս բարութիւնը չպիտի մոռնամ, և պիտի ջանամ ձեր սիրոյն արժանի դանուիլ. հիմայ որ, յաւելցուց, անոնց ամեն մեքենայութիւնները գիտեմք թող սոսկան մենէ անօրէնները, անոնց բոլոր նիւթածնին իրենց գլխուն պիտի դարձունեմ :

— Ա՛հ, Պարոն, ըսաւ Հեղինէ, դդու շայիր այն եղեւնազործ վատերէն :

— Դու հող մի ըներ սիրելիս, հիմա որ դանոնք լու կը ճանչնամ, անոնցմէ չեմ վախնար, բայց երթանք, հաղ հիմայ անձկանօք մեզ կսպասէ :

— Հեղինէ Տիկին Բողայի դառնալով, ա՛հ որչափ բարի ես, ըսաւ, արդարեւ Աստուած ամեն տեղ թշուառները պաշտպանելը չղլանար եղեր :

— Բաւական է որ համբերել գիտնայ մարդ :

— Դուք ալ պիտի դաք հեռերնիս այնպէս չէ՞ :

— Հարկաւ, միթէ կանխաւ իմ հաճութիւնս չտուի՞ ձեզի :

— Ուրեմն պատրաստուէ :

— Արդէն ես պատրաստ եմ ըսելով՝ դուխէն վար սեւ դաշմիրով մը ծածկուեցաւ :

— Ուրեմն երթանք, ըսաւ Միհրդատ Հեղինէի :

— Շատ աղէկ երթանք, պատասխանեց և ան ալ պահանջին մէջէն սեւ ու հին գաշմիր մը հանելով, դուխը առաւ և երեքը միատեղ տանը դռնէն դուրս ելան. դեռ երկու քայլ հաղիւ առած էին, երբ Հեղինէ մէկէն ՚ի մէկ ճիշ մը հանելով, թեւերը բաց սկսաւ կողմնակի մէկու մը վաղել. Միհրդատ նոյն կողմը դառնալով ինքն ալ զարմացման ձայն մը հանեց քանզի Հեղինէի հայրը իրմէ տասը քայլ անդին կեցեր էր :

— Հայր իմ, ըսելով Հեղինէ, կարապետին գիրկը նետուեցաւ :

— Կարապետ, միմեջեց Միհրդատ :




— Այս, խեղճ նաւաւար կարապետն է որ կը տեսնես, ըսաւ նաւաւարը Միհրդատին մօտենալով, և բարկութենէն դողդոջ զացող ձեռքերը բաճկոնակին մէջ դաշոյնի մը կոթը կը փընտըռէին:

— Հեղինէ հօրը դեղնելէն վախնալով, հայր իմ, դոչեց, այս Պարոնը մեր բարեկամն է, հաւս զայն մեր տունը խըրկած է:

— Հաւդ, դոչեց կարապետ, դու ինձմէ զատ մէկը չունիս աշխարհի մէջ, ասոնք երկու եղբռնագործեր են որ զուարճանալու համար միայն կապանեն:

— Թշուա՛ն մարդ, դոչեց Միհրդատ, լեզուդ քեզ ամփոփէ, վասն զի դու բարեկամ ճանչնալու դատողութիւնը չունիս:

— Ս'հ, դեռ կը յանդգնիս, բայց այս անգամ պէտք է որ դիակդ դետին բռուի, ըսելով եռանկիւնի դաշոյն մը հանեց, և դէպի Միհրդատին սիրտը պիտի մխէր, բայց Միհրդատ զարմանալի արագութեամբ անոր դատակէն բռնելով այնպիսի ուժով սեղմեց որ երկու ծնդացը վրայ ինկաւ դանակը ձեռքէն սահելով. անմիջապէս ոստիկանութեան դիւնւորներ վրայ հասան և կարապետը բռնեցին բանտ տարին. Հեղինէ փողոցին մէջ նուազած էր, Միհրդատ զայն վերցնել տալով սրճարան Գաղղիոյ պանդոկը փոխադրել տուաւ Բօղաճանտան Տիկնոջ հետ:





## ԳԻՊՈՒԱԾ ՄԸ

### ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅ ԿԸԼԼԱՅ

Ոստիկանութիւնը առժամանակեայ կերպով բանտարկեց կարապետը, մինչեւ որ իւր դատը սկսի. Բանտին մէջ դատան կերպով կը քայլէր. իւր կատաղութիւնը վերջին աստիճան հասած էր. խել մը բանտարկեալներ պարտաւոր կը խաղային անլուր հայհոյանքներ արձակելով իրարու, մէկ քանիներ ալ ինչ բանի համար բանտարկուելին կը պատմէին իրարու, մէկը անամօթութեամբ իւր մօրը սնտուկը ինչ ճարպիկութեամբ բանալը կը նկարագրէր, ուրիշ մը իւր մէկ բողին համար երկու հողի սպաննելը իրր քաջութիւն կը պարծենար, թէպէտեւ կը խոստովանէր որ յանկարծակիի բերելով զարկեր էր:

— Բայց դիտնաս որ այս հեղու քեզ պիտի ճօճեն անշուշտ կամուրջին գլուխը, ըսաւ ուրիշ մը:

— Պահ, եթէ խոստովանելու ըլլամ իրաւունք ունիս, բայց դու չես դիտեր զիս՝ որ բառ մ'անդամ չեն կրնար առնուլ բերնէս:

Անդին բարձր ծիծաղներու ձայն մը լսուեցաւ. բանտարկեալներէն մին կը պօռար.

— Բայց այս իրաւունք է եղբայրներ, կըսէր, կինս երէկ գիշեր հարուստ մէկու մը հետ մէկ անկողնոյ մէջ բռնեցի, բայց թշուառականը ինձմէ ուժեղ ըլլալուն զիս տիեց, և երբ բողոքեցի՝ անոր տեղը ես բանտարկուեցայ:

— Աւելի աղէկ ընկեր, գոչեց գողերէն մէկը, հիմայ գոնէ աչքովդ չես տեսնար ըրած անառակութիւննին:

— Հէ՛ հէ՛, ականջներդ կախէ պոչդ ձեռքերնին է:

— Այն պարօնը կարգ կանոն դիտէ եղեր, այսչափ ատեն քու կնիկդ էր, քիչ մ'ալ անորը, ս'ի՞նչ պիտի ըսէ:

— Բայց դու դիտես զիս, ես այն էրիկներուն չեմ նմանիր որ իրենց գլխուն վրայ հը. հը... կը բուսցընեն:



— Օ հօ՛, բան չբուսցընող Պարոնը տեսէք ըսելով ամենը սկսան բարձր ձայնով խնդալ:

Կարապետ որ այս աղմուկը լսեց հետաքրքրութեամբ դէսլ 'ի այն կողմը յառաջացաւ և տեսնելով որ խեղճը մէջերնին առեր կը քաշկուտեն, անոր քովը մօտենալով, « Բարեկամ, քիչ մը ինձ եկու, ըսաւ:

— Ա՛հ պարոն 'ի սէր Աստուծոյ դու ըսէ, իրաւունք է այս, հէ՛ իրաւունք է:

— Այս դատը պէտք է շիտակ կտրուի, գոչեցին գողերը բարձրաձայն խնդալով:

— Ինձ հետ եկու, ըսաւ Կարապետ զայն քաշելով, շէտ տեսնար որ այս մարդիկը դքեղ կը ծաղրեն:

— Բայց թո՛ղ ըսեն, այսպէս այլանդակ բան լսուած է երբէք:

Կարապետ տեսնելով որ այս մարդուն խօսք չպիտի կրնայ հասկցունել, թողուց ու մէկդի քաշուեցաւ, բայց գողերէն մին անոր մօտենալով,

— Է՛ ընկեր զրուցէ տեսնեմ, ի՞նչ յանցանքով հոս եկար, հարցուց:

Կարապետ այս ընկեր բառը լսելուն դէմքը խոժոռեցընելով չարատասխանեց:

Աւաղակը անոր այս բարկութիւնը նշմարելով աւելի զըրգուելու համար « Հէ՛, ընկեր, չը լսեցիր, քեզ խօսք կը հարցնեմ, չեմ կարծեր որ համր ըլլաս, քանզի երեսդ թթուեցնելէդ խուշ չըլլալդ հասկցայ:

— Այն որ չեմ ուզեր զրուցել բարեկամի մը, ի՞նչպէս կուզես որ պտտմեմ անձանօթի մը:

— Օ՛ հօ՛, տեսէք սա վսեմաշուք սրիկան, ինձի պէս պատուաւոր մէկու մը հետ այսպէս տմարդարար վարուի՛լ:

Կարապետ աչքերը անոր վրայ խոժոռեցնելով և ազդու ձայնով մը « Զիս հանգիստ թող և դնա՛ բանդ, ըսաւ կտրուկ կերպով մը:

Այս խօսակցութեան միջոցին բանտարկեալները ասոնց չորս



կողմը ժողովեր էին. Մէջերնին մէկը, « Ընկերներ, գոչեց, ասոր  
դաս մը տանք ».

— Ս,յո՛, այո՛, դաս մը պէտք է, գոչեցին միարեւրան.

— Եթէ աղէկ չսերտէ՝ այն ատեն կրկնու թիւն հէ՛. . .

— Հարկաւ.

— Օ՛ն տղաք կարկուտը սկսինք. Ս,յն կէտին պկսեր էին  
կարապետը նեղել, մէկ մ'ալ յիսուն տարեկանի մտա բան,  
տարկեալ մը հոն հասնելով, « Ձեռքերնիդ վար առէք, պո-  
ռաց որոտաքին ձայնով մը ».

Կարծես թէ աւազակները այս ձայնէն դիւթուելով ետ  
քաշուեցան, կարապետ եւս այս նորեկին նայեցաւ զարմանօք  
և ուրախութեամբ. « Ո՛հ պարոն թէօխար, դմք էք, գոչեց ».

— Ս,յո՛ ես եմ, բայց ի՞նչ պատճառաւ դուք հո՛ս.

— Ո՛հ բարեկամ, եկու անկիւն մը քաշուինք և պատմեմ  
քեզ ամեն բան. այս ըսելով բանտին մէկ անկիւնը քաշուեցան.

— Ձրուցէ տեսնեմ ի՞նչ պատահեցաւ, հարցուց Պ. թէօխար.

— Ս,յն օրը որ քու ազնուութեամբդ մեղի երկու ձի  
դտար, որոնցմով աճապարանօք Սարը-եար դայինք բայց ա-  
ռաջուց պէտք է դիտնաս որ ես աղջիկ մը ունիմ և զայն ձեռ-  
քէս յափշտակեցին, արդ երբ Սարը-եար տունս հասայ, մէկ  
մ'ալ ի՞նչ տեսնամ. իմ մահու չափ թշնամիներէս մին աղջիկս  
համուղելով որ իւր մեծ հայրը ուզեր է, առեր հետը չեմ գի-  
տեր ուր պիտի տանէր. բարեկամ մտած է մէկ մը, վերջապէս  
հայր եմ, ինքզինքս չկրնալ զսպելով խենդութեան մը դիմեցի.  
այսինքն պիտի զարնէի, բայց այն ինձմէ ճարպիկ դանուելով  
չկրցի նպատակիս հասնիլ.

— Է՛հ այդ հոգ ընելու բան չէ, ինձի շատ անգամ պա-  
տահած է, վերջը ասոր վրայ կը խօսակցինք. ներէ բարեկամ  
այն օրը Ֆէնէր հարցուցի բայց աղէկ պատասխան մը չառի.  
Նաւավար կարապետը կը ճանչնամ ըսիր այնպէս չէ՞.

— Ներէ սիրելիս որ այն օրը ղձեղ խարել ջանացի. նաւա-  
վար կարապետը ես եմ և այն Բողա-Տանտան տիկինը մեր տա-  
նը մտերիմ բարեկամուհին է.



— Ի՞նչ կրտես, դուչեց բանտարկեալը ու ըստ թեանք՝  
 ա՛հ բարեկամ քանի որ դիրար ճանչցանք պէտք է որ ես ալ  
 իմ գաղտնիքս քեզ յայանեմ, այս Բողա-Տանտան մականուն  
 եալը իմ կինս է և անունը Ղիուլ է, բանտէն ելլալուս անմի-  
 ջապէս զինքը պիտի դանամ:

— Հ՛օ, այս աղէկ. ահա հանդիպումն ալ ասոր կրտեն. է՛հ  
 որչափ կը փափաքէի բանտէն ելնելով այս ուրախալի լուրը ի-  
 ընն հաղորդել:

— Չեմ կարծեր որ այնչափ ուրախանար. ա՛հ, ի՞նչպէս հաս-  
 կըցնեմ, կանայք միշտ քինախնդիր են. երիտասարդութեանս  
 սխալման մը մէջ գտնուեցայ ուստի մինչեւ հիմայ չը մոռցաւ:

— Հ՛օ, ալ այդ քանը չափազանցութիւն է:

— Է՛հ, բարեկամ, ինչ ընեմ, ձայնս քաշեր նստեր եմ:

— Ես պիտի միջամտեմ այս դործին և կրնաս վստահիլ նա-  
 լաւար կարապետին, բայց մոռցայ հարցնելու քու բանտար-  
 կութեանդ պատճառն ի՞նչ է:

— Ա՛հ բարեկամ, ոչինչ, բոլորովին ոչինչ. խանութիս առ-  
 ջին նստած տտենս ոստիկանութեան զինուորներ գալով զիս  
 բռնեցին և հոս բերին առանց զիս զուրցնելու:

— Խեղճ բարեկամ:

— Է՛հ, հոգ չէ, տասն և հինգ օրուան ապաշխարանք մ'է  
 եղեր. բայց զարմանալի դէպք մը պատահեցաւ. երէկ չէ առ-  
 ջի օրը անժանօթ պարոն մը ներկայացաւ բանտը և զիս կան-  
 ջել տալով, իւր մէկ գործին համար խոստացաւ զիս ազատել,  
 իւր անունը հարցուցի. Մարտիրոս, պատասխանեց, բայց մա-  
 կանունը չուղեց զրուցել:

— Չարմանալի բան, և ի՞նչ էր իւր առաջարկած գործը:

— Ներէ բարեկամ որ չեմ գիտեր քանզի ինձի ալ բան մը  
 չը հասկցուց, իւր խոստմանը պայմանաժամը այսօր պիտի լրա-  
 նայ. ինձ այնպէս կուգայ որ զբարան շատախօս մ'էր՝ որ ե-  
 կաւ ինձի հետ ժամանակն անցունէ, կամ թէ ոստիկանու-  
 թեան կողմէն գաղտնի պաշտօնեայ մըն է:

Մէկ մ'ալ հաղիւ այս խօսքը լմնացուցեր էր դուրսէն ձայն



մը եկաւ որ կարապետին ընկերը կուզէր. հա եկայ, ըսելով  
ուտքի ելաւ:

— Ա՛հ, ըսաւ մէկէն թէօխար տեղէն ելնելով, անշուշտ  
բարերար մ'է երթամ:

— Գարձեալ տեսնուինք բարեկամ, պօռաց կարապետ:

— Այո՛, գարձեալ տեսնուինք, պատասխանեց գուռնէն  
գուրս ելնելով:

Կարապետ ինքնիրեն սկսաւ մտածել, այս մարդը՝ անունս  
թէօխար է կըսէր, հիմայ ուրիշ անուամբ կանուանեն զինքը...  
է՛հ խելքիս մեռնիմ անշուշտ իւր մականունը ըլլալու է. ա՛հ  
արդեօք պիտի ազատիմ այս տեղէն. գոնէ ժամ մը, այո՛, գոնէ  
ժամ մը սա թէօթարը ի՛նչ կըլլար իւր ազատչին ինձ համար  
ալ բարեխօսէր, թերեւս զիս ալ կազատէր. ի՛նչպէս մուցայ  
իրեն աղաչելու:

Երբ այսպէս յուսահատ կը մտածէր կարապետ, մէկ մ'ալ  
ոստիկանութեան պալատին մէջ վերէն վար աղմուկ մ'է բըր-  
դաւ. վազելով կանցնէին կը գառնային, ինչ եղեր էր գեռ-  
մարդ չէր գիտեր բանտարկեալներէն:

Ահա եղելութիւնը: Ոստիկանութեան պալատին ամենէն  
վերի յարկը կը նստի առաջին պաշտօնեան ինչպէս ամենուն  
յայտնի է, Նորին բարձրութիւնը ուղեր է որ պատուհաննե-  
րուն ապակիները մաքրուին. ուստի այս գործողութիւնը կա-  
տարող երկու հրեայ կը կանչեն:

Պօլսոյ մէջ ամենուն ծանօթ է որ այսպիսի զբաղմունքները  
հրէից սեպհականուած է:

Նոյն միջոցին Նորին բարձրութիւնը գրելու զբաղած է ե-  
ղեր երբ հրեայները կսկսին գործել:

Եւ որովհետեւ պատուհանները ազոյցաւոր շինուած էին,  
պէտք կըլլայ տեղերնուն հանել. և պատուհաններուն շրջա-  
նակները հանելու համար ալ պէտք է գուրսի կողմէն բեղկերը  
հանել, ուստի հրեայներէն մին տանիսին վրայ կելայ, չուանով  
մը վերի կողմէն քաշելով, զանոնք իրենց ծխնիներէն հանելու  
համար:



Արդ երբ տանիսի ծայրը կը հասնի Հրեայն պատահամբ  
ոտքը սահելով տանիսէն վար կը գլորի, բարեբաղդաբար ին-  
կած ատեն վարտիքը տանիսին ծայրէն դուրս ցցուած փայտի  
մը անցնելով գլխի վար կախուած մնայեր էր:

Խեղճը այն դիրքին մէջ տեսնողին սարսափ կազդէր, իսկ  
իւր խեղճուկ ձայնը մարդու սիրտը կտոր կտոր կընէին:

Վարէն մինչեւ այն բարձրութեանը սանդուղ երկնցնել ժա-  
մանակի կարօտ էր. իսկ վերէն շուանով մը անոր քովը իջնելը  
խիստ վտանգաւոր:

Մէկը կը պօռար, ուրիշ մը կը վազէր և վերջապէս մարդ-  
մարդու ըսածը չէր հասկնար:

Նորին բարձրութիւնն իսկ մեծ յուզման մէջ՝ ազատողին յի-  
սուն ոսկի կը խոստանար. բայց մէկը չէր համարձակեր քանզի  
դիւրին չէր. ուստի մէկէն հարիւրապետի մը հրամայեց որ բո-  
լոր բանտարկեալները հանէ:

Անմիջապէս հրամանները կատարուեցան և բոլոր յանցա-  
ւորները շէնքին վարի հրապարակը դիզուեցան:

Այն ատեն տեսաւ կարապետ որ մարդ մը ստուար բարձ-  
րութեան մէջ կը ճօճար, ամեն վայրկեան իյնալով ջախջախե-  
լու վտանգը դէմը ունենալով:

Բանտարկեալները այս որ տեսան, վլվլուկ մ'է փրցուցին,  
որը կը հեզնէր որը կը մեղքընար:

Չարմանալին այն էր որ վարի գտնուող Հրեայն վտանգեալէն  
աւելի կը պոռչըտէր:

Այս միջոցին Նորին բարձրութիւնը լռութիւն հրամայեց,  
Ուստի ամենքն ալ լռեցին:

— Տղաք, գոչեց, ձեր մէջէն ո՛վ որ սա խեղճը ազատէ յիս-  
սուն ոսկի կուտամ անոր:

Մարդ չը պատասխանեց:

— Բէ՛հ, ըսաւ բանտարկեալներէն մին, կարելի է կախա-  
ղանէն ազատիմ, ինչո՞ւ հիմակուընէ ինքզինքս մահուան վտան-  
գի ենթարկեմ:

Բանտապաննին՝ կարապետին հետ կուր ընողին մօտենա-



լով « Ծօթի, ըսաւ, ի՞նչ կեցեր ես յիսուն հաս շլացուցիչ ոսկի կայ քեզի »

— Շնորհակալ եմ, պատասխանեց Ծօթի շէնքին բարձրութիւնը աչքէ անցնելով. մինչեւ հոն չեմ կրնար ցատկել: Ս, յն ատեն նաւավար կարապետը դունատած բանտարկելոց կարգէն դուրս ելաւ, ես կրնամ ազատել, ըսելով:

Բաղմու թեանը մէջ շշուռնչ մ'է բրթաւ:

— Քեզ տեսնամ տղայ, թէ որ ազատես յիսունին վրայ տասը ոսկի ալ կաւելցնեմ, դոչեց Նորին բարձրութիւնը:

Անմիջապէս կարապետը տանիսին վրայ հանեցին:

Մէկ մ'ալ հաստ չուան մը տանիսէն վար երկնցաւ. նոյն պահուն նաւավարը չուանէն վար սահեցաւ, բաղմականները շունչերնին բռնեցին, որ մէկն ալ աչքը կը դոցէր որ չտեսնայ:

Կարապետ զարմանալի դիւրութեամբ չուանը իւր մէջքը անցունելով պինտ մը կապեց յետոյ սկսաւ օդին մէջ օրօրուիլ և վերջին տատանումին երբ Հրեային մօտեցաւ անմիջապէս զայն մէջքէն դրկեց և երկուքը միատեղ սկսան տատանիլ օդոյն մէջ, և հիմայ վտանգեալը երկուք էր:

Վարէն կեցցէներու աղաղակ մ'է սկսեց և վերէն սկսան կարապետը քաշել որով առանց վտանգի Հրեայն և նաւավարը տանիսին վրան ելան:

Անմիջապէս նաւավարը Ն. Բարձրութեան ներկայացուցին, իսկ Հրեայն վախէն նուազած ըլլալուն զայն դարմանել փութացին:

— Անունդ ի՞նչ է և ինչո՞ւ բանտարկուած ես, հարցուց պաշտօնեայն:

— Վսեմափայլ տէր, անունս կարապետ է, իսկ արհեստս նաւավար. գինովութեանս սյնպէս ըսին թէ դանակ քաշած ըլլամ մէկուն, որն որ ամենեւին չեմ գիտեր:

— Չեզի պէսներուն սովորական պատասխաններն սյսպէս է. բայց ինչ որ է գնա՛ իմ քարտուղարիս հետ որ քեզի վաթսուն ոսկի պիտի տրուի:

— Ես ստակ չեմ ընդունիր վսեմափայլ տէր, այլ եթէ ընդունելի ըլլայ ուրիշ է իմ խնդիրքս:



— Ի՞նչ է տեսնանք, անշուշտ աղատութիւնդ պիտի խրնդրես :

— Ա՛յ տէր իմ, երկու օր թողաւու թիւն ըլլայ ինձ և պատուոյս վրայ կերթնում՝ որ դարձեալ կուգամ. և եթէ ուզուի երաշխաւոր ալ կրնամ տալ :

— Երկու օրուան մէջ ի՞նչ ընելու միտք ունիս :

— Աղջիկ մը ունիմ՝ որ կրկին անգամ տեսնալ կը փափագիմ, ո՛հ ինձի բոլոր աշխարհի գանձերէն աւելի է :

— Ա՛յ պիտի ըլլայ քեզ երաշխաւոր :


— Մեր քեահեան, վսեմափայլ տէր :

— Շատ աղէկ կը հաւանիմ, ըսաւ և իւր մարդոցը դառնալով այս մարդը տարէք իւր ֆեահեանին եթէ երկու օրուան համար երաշխաւոր ըլլայ, թողուցէք զինքը :

Անմիջապէս կարապետը առնելով նաւաւարներուն ֆահեալին տարին որ երաշխաւորելով ազատեց կարապետը :

Կարապետ երբ ինքզինքը աղատած տեսաւ, է՛հ, մրմնջեց, հիմայ կարգը իմս է, ո՛ վրէժխնդրութիւն, վրէժխնդրութիւն, քեզմով պիտի հեշտանամ :

### ՎԵՐՁ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ





# Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Ց

	Երև
Պէլլէր-պէլի անուն շոգենաւը . . . . .	7
Նաւաւար Կարապետ . . . . .	17
Գիշերային այցելութիւն . . . . .	24
Սօֆեան պէլի պատահարները . . . . .	32
Ալէկոծութիւն . . . . .	36
Խարերայութիւն եւ բաժանում . . . . .	39
Իշտիպի գողերը . . . . .	68
Ալպանիոյ մէջ գանձ մը . . . . .	72
Թաղման հանդէս . . . . .	76
Հնդկաստանցի Բուբուլ խաթուն . . . . .	85
Մալթա նաւուն ղեկավարը . . . . .	100
Տէլի ճօրճի . . . . .	112
Գող Պեաիկը . . . . .	119
Բանտարկութիւն . . . . .	123
Փախուստ . . . . .	129
Հետադատութիւն . . . . .	133
Հայր ու տղայ . . . . .	138
Պետրոս Նազարօֆ . . . . .	142
Հանդիպում . . . . .	146
Ժամադրութիւն . . . . .	150
Սիրոյ տագնապ . . . . .	155
Կեղծաւոր սիրունին . . . . .	158
Աթլամային քարը . . . . .	164
Ալատութիւն . . . . .	166
Պարոն Թէօսար . . . . .	170
Հէղինէ եւ Մինդատ . . . . .	176
Լիուլին պատմութիւնը . . . . .	181
Անակ կալ պատահար . . . . .	186
Գիպուած մը ազատութեան միջոց կըլլայ . . . . .	193







11762

11763

2013



